



63
82-31

9-74

ՕՂԱԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ՓԱԽԵՐԻ ՑԵՎ ՎԵԿՓԵԼԳԵՑ

ԹԱՐՄԱՆ ԵԱՅ ՅԱՆԴԱԿԱՆԵՐ

ՊԵՐԱ ԹԵՎԱՅՈՒ Խ ԸՆՔՅՈՒԹ



Դ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԵՇԱ ՏԵՇԱ ԵՐԱԿԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ՊԵՐԱ ԿԱՐԱՎԱՐ ՅՈՒՆԵԱ ՀՅԱՅ



Դ

Տպարանի

ԾՐԸՆԵԱ ԸՆԿԵՐԱՆԹԵԱՆ

ԿԱՆԿԱՐԱ

1848

2004

V3
10039

82-31

4-77

3950

ԱԿ 512-664
ՕԼԻՎԵՐ ԳՈԼԴԻՄՈՒԹԵՐ

ՓՈԽԵՐԵՑ ԱԿԿՐԻՏԱՑՅՈ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ՅԱՆԴԱՏԱԿԱՆՔ

ՊԵՐԱՆ ԹԱԴԵԱԾ Խ ԸՆԵՑՈՒՄ



Դ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԻ ՏԵԱՌԻ ՆԵՐՍԻՆ ՀԱՆԴԵՐԱՐԴԻ

Ա.Զ.ԴԱՄԻՐ ԿԱԹԱԿԱՆՈՒԹ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

100
50



Տպարանի

ԵՐԵՎԱՆ ԸՆԿԵՐԱՒԹԵԱՆ

ԿԱՆԿԱԹԱ

1848

152

Ի ՅԻՇԱՑԱԿ

ՅՈՎՈԵՓԵՅ ՄԵՌՈՒԿԵԲՆ

Ն Ա Ի Ա Պ Ե Տ Ի

ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ Ի ՀԱՍՏԱԿԻ 47 ԱՄԱՅ

ԵւՅ շատ տարի . բայց տակաւին
Անջինջ ՚ի սիրտ ըս կաթողին
Ոերեցելոյդ կայ յիշատակ .
Որ ցըլաղձան կացցէ անքակ :

Եւ երբ եղէց ես անկենդան ,
Ծիմ անձկալին հասեալ ժաման ,
Եցէ՛ թէ գործս կացցէ յերկար ,
Օքոյդ յիշատակ պահել յամայր :

ԹՅ ԼՅ Ա :

Առ. Պատուելի՛ Ընթերցողս,

Յոսկեղէն զարու կենացս, ի ժամանակի անդ՝ երբ պարզմուտ-
թեամբ և առ անց հոգոց աշխարհականաց զմայլեալ վայելէի և
վայելի տալ անձկայի դամասպրտմ անուշունս զուարձալի ան-
դաստանաց բանաւոր մտաց, Փունքրէցն Վէկափառ. ԴԱՑ ևս եղեւ մին
ի զրօսալի պարապմանց թարգմանութեանցս ի Ռանզուն քաղաքի
Բարմաստանեայց. որ լոկ չնորհիւ յանձնարարութեան և բարեհաճ
կամաց բարեյիշատակ Քեռուուոյ իմոյ Նաւապետին Յուլսեփայ Մա-
նուկեան՝ * մնաց մի միայնն զերծեալ ի պատահարաց և ի ծախիչ
ժանեաց ժամանակի, Աւստի՛ եթէ բարիք ինչ ծագեցին ի հրա-
տարակութենէ աստի յայսամանէ երախտեաց վերոյիշեալ Բարեյշ-
շատակին օ՞ն վերագրեցին յաւէտ:

Խսոսեցուք արդ սակաւուուք և յաղագս կոչման և հանգամանաց
մատնիս, որ Վիկը աֆ Ուվիշիֆիլք կոչե Անզղելէն. Արդ
Վիկը ըստ ստուգաբանութեան նշանակէ զթոշակառուն թեմա-
կալի ուրուք՝ որ փոխանակ նորա կատարէ զպաշտօն քահանայական-
որոյ վասն և մեք յարմարեցաք զանունս Փոխերէց ի Հայերէնն:
Թարգմանութիւն սորա եղեւ բազմօք զկնի Պաւլոսին և Վիրգինեսյ-
և ջանացաք ըստ ամենայնի պահել զշիշտ եղանակ զրութեան և
իմաստից հանճարեղ հեղինակին. զնորին յաւէտ զճարտարութիւն
ուշ գնելով ցուցանել:

Այսպիսի զործք դիզուն որպէս և ենն ի միջի Անզղացւոց, տա-
կաւեն՝ իշխեմ ասել, չի՞ք և ոչ մի որ ի հաւասարութիւն զալ
կարիքէ կատարելութեանց սորին յամենայնի. Ասորժալուր վար-
դապետութեամբ սիրելի առնել նկրտիլով զբաւականութիւն, և
ցուցանել զինան ի չափաղանց բաղմանաց. հիմնելով զբարյա-
կանութիւնն ի վերայ երից զլխաւոր սեանց Սուրբ Կրօնի մերոյ՝
Հաւատոյ, Յոււսոյ և Սիրոյ.

Կորանոր օրինակք՝ որք զոզչի՛ր յամենայն ամի ի լոյս ընծային
Հետ զշետէ, բաւական վկայութիւն են վասն սիրոյն որու յարգի
զործու ի միջի Ազգին մինչեւ ցարդ. Որոյ եթէ և մեք արժանասցուք
մասին ի սիրելի Ազգէս մերմէ, բարեբազգ զանձն համար' սցուք
շատացեալ:

Այս Ամենա Մայիս 20.

1848.

Թաւրդանեալ

* Այս Ամենա Ամելի Ամենա յամի Տետրուն 1842 Յունիսի 18—30:

Ա. Զ. Դ.

ՀԱՐԻԿԻՄԱԿՈՐ ԹԵՐՈՒԹԻՒՆՔ գոն յայսմ, և զհարիւրաւոր բանս մարթ է ասել 'ի հաստատութիւն գեղեցկութեանց նոցին . այլ ՚ի զուր: Աւըեռոր է մատենի զուարձալի լինել անհամար վրիպակօք, կամ ճանճըալի յոյժ՝ առանց միոյ անհանձարութեան : Դիւցազն այսր գործոյ՝ միաւորէ յինքեան զերիս մեծագոյն հանգամանս ՚ի վերայ երկրի . երէց է, երկրագործ, և հայր գերդաստանի: «Ակարեալ՝ որպէս զպատրաստական յուսուցանել և պատրաստակամ 'ի հնաղանդել.—պարզակեաց 'ի փարթամութեան, և վեհանձն 'ի ճախորդութեան : Քայամ դարու ձոխութեան և արուեստակութեան, զ՞ ոք հաջեցուսցեն հանգամանք այսօրինակ պարզունակօք : Օ ակարեալքն զհետ շքեղութեանց՝ հրաժարեսցին արհամարհանօք 'ի պարզութենէ շինսական վաւարանի նորա . որք շփոթենն զապերասանութիւն ընդ կատակի՝ զուշմութիւն ոչ զտանիցին ՚ի խօսակցութեան նորին . և որք ուսանն հենգնել զկրօնիւ՝ ծիծաղեսցին զայնու՝ որոյ գլխաւոր մթերք միսիթարութեան ապագայիցն յառաջ դան :

ՕԼԻՎԵՐ ԳԱՅՆՄԱՐ

ՓԱԼԽԵՐԻԵՑՆ ՎԱԼԵԿԱԳԻՆԻ ԴԱՅԱ

ԴԱՅԱԽԵ

ՍՑՈՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ ՎԱԿԳԻՆԴԱՑ
ՅՈՐՈՒՄ ԸՐԵՆԱԿԻՑ ՆՄԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐԱՆԱՑ ԵԹԷ ՄՑԱՑ ԵՒ
ԹԷ ԱՆՁԱՆՑ .

ՎԻՇՏՈ ԿԱՐՈՒԵԲՆ ԵՐ ԹԵ
արդարասէր այրն՝ որ ՚ի ձեռն ամուսնութեան զարգացուցանէր զբազմաթիւ ընտանիս՝ առաւել ևս օգուտ գործէր, քան զնա՝ որ ամուրի կեայր և զբազմամարդութենէ միայն բարեառէր : Այսորիկ պատճառաւ հաղիւ թէ ամ մի անցաւ ձեռնադրութեանս զկնի, սկսայ սրտի մոռօք խորհել զամուսնութենէ . և ընտրեցի զամուսին իմ՝ որպէս և նա զիւր պատմուձանն հարսանեաց, ոչ վասն պատուական վայըլուն երեսին՝ այլ որպիսութեանցն քաջի տեականութեան : Իրաւն ասել՝ էր սա բարեբնոյթ և արժանի յիշատակութեան կին մի, և ՚ի հրահանգութեան մասին՝ ստկաւ շնեական տիկնայք առնովաւ պարծենալ կարէին : Աարէր ընթեռնուլ զուիցէ մատեանս առանց շատ անգամ վանդելոյ,

բայց՝ ՚ի համեմանց, քաղցրաւենեաց և խահարարութեան մասին, ոչ ոք զնովաւ գերազանցել ինչ կարէր: Պարձենայր և ևս ձարտար լինել ՚ի տընտեսութեան: Թէպէտ և ամենայն ձարտարութեամբ նորա ոչ իւիք առաւելաք ՚ի հարստութեան մերում:

Օ իւրդ և իցէ՝ կաթոգին էր սէր մեր, և մեր խանդաղատանք աճէին ընդ աւուրց մերոց: Ոչ գոյր ինչ իրաւի որ գժգմնեցուցանէր զմեզ ընդ աշխարհի կամ ընդ իրեարս: Լոր մեր տուն վայելուչ ՚ի չքնաղ դաշտավայրի, և ՚ի բարեբարոյ դրացութեան: Անցուցանէաք զտարին բարոյական կամ շնական զբօսանօք, այց ելանելով մերոց հարուստ գրացեաց, և օգնելով այնոցիկ՝ որ չքաւորքն էին: Ոչ գոյր խոռվութիւն ժողովրդեան որ զմեզ երկեցուցանէր, և ոչ աշխատանք որ վաստակեցուցանիցէր: ամենայն արկածք մեր առ վառարանաւն էին և ամենայն տեղափոխութիւնք՝ ՚ի կապոյտ անկողնոյ ՚ի թուին:

Բնակութիւն մեր առ ձանապարհան ելով, շատ անդամ անցորդք կամ օտարականք մնանէին առ ՚ի զհամ տեսանել գինոյ մերոյ սնձոյ, յոյր սակս յոյժ անուանի էաք, և անկեղծութեամբ պատմագրի արժան է ինձ խոստավանիլ՝ զի ոչ երբէք տեսի զմին ստղիւտ արկանել զնովաւ: ՚Եա՛ և ազգականք մեր՝ մինչև ցքառասուն պորտն խել, յիշէին ամենեքին զնամութիւն իւրեանց առանց իրեք հաստաղութեան ծննդաբանութեան: և ստէպ յահախէին առ մեզ, Ամանք ՚ի սոցանէ ոչ մեծ ինչպա-

տիւ գնէին մեզ՝ ի ձեռն սոյնգուհակ ազգականութեան . վասնզի կոյրք , հաշմատք և կաղք էին ՚ ի սոցին համարի : Բայց և այնպէս պնտէր յարաժամ ամսւածին իմ , թէ՝ որովհետեւ ՚ ի մի և ՚ ի նոյն Մարտու և յարեւէ էին , պէտք էր՝ զի ընդ մեզ ՚ ի միտաին բազմացին ՚ սեղան . և այսպէս մերձաւորք մեր՝ թէպէտ ոչ յոյժ փարթամք , բայց և այնպէս շատ ուրախոսիրտ էին . քանզի գիտողութիւնս այս ստուգերցի ՚ ի կեանս մարդոյ , թէ՝ որչափ առաւել կարօտաւոր կոչնականն իցէ , նոյնչափ առաւել հաճոյացեալ և կոչնատէրն եղիցի . և զոր օրինակ զմայլին ոմանք ՚ ի գեղ կակաչի , սոյն օրինակ և ես ՚ ի բնէ զմայլող էի ուրախ դիմաց մարդկան :

Օ իարդ և իցէ՝ յորժամ դէպ լինէր որ մին յընտանեաց մերոց լինէր անհաճոյ բնաւորութեան . կամ ձանձրացուցիչ կոչնական , և կամ այնպիսի ոք յորմէ փարատիլ կամէաք , փոյթ տանէի ՚ ի ժամ մեկնելոյն փոխ տալ նմա զվերաբկու իմ , կամ զզոյգս կօշկաց , և կամ զերիվար մի անարժան . և յամենայնում նուազի ուրախ լինէի չտեսանել զնոսադառնալ յետու՝ առ ՚ ի գարձուցանել զայնոսիկ : **Ա** յսու օրինակաւ թափէտք զտունն յայնպիսեաց՝ որք անհաճոյ լինէին մեզ . բայց ոչ երբէք ասացաւ զտանէն **Ա** էկֆիլդայ , եթէ հերքեաց երբէք ՚ ի դրանէն զՃանապարհորդ մի և կամ զկարօտ այցելու :

Օ այս օրինակ անցուցաք զբազում ամս լիս երջանկութեամբ . բայց ոչ առանց թեթեւ դժուարութեանց ինչ՝ զոր . **Ա** յախախնամութիւնն ածէր

՚ վերայ մեր երբեմն՝ առ ՚ի առաւելուլ զյարդ շնորհաց իւրօց որ առ մեզ : Պարտէզ իմ բազում անդամ կողոպտիւր յաշակերտաց գլորատան, և զկարկանդակիս ամուսնոյ իմոյ կատուք և մանկունք գողանային : Խորդայր ասպետն յազդուազոյն հատուածս քարոզի իմոյ, կամ տիկին նորա դարձուցանէր յեկեղեցւոջանդ զյարդանս ամուսնոյս բեկրեկ ծեքծեքանօք : Աակայն փութով յաղթէաք դժուարութեանցս՝ զոր այսոքիկ պատճառէին, և յաճախակի՛ երից կամ չորից աւուրց զկնի, հիացեալ զարմանայաք ընդ վշտազնութիւն մեր :

Վանկունք իմ՝ ծնունդք ժուժկալութեան, և զի զարդացուցանէի զնոսա առանց փափկութեան, վասն որոյ՝ բարեձև էին և քաջառոզք : Ուստերք կորովիք և զօրաւորք, և գստերքս գեղեցիկք և առցյգք : Խրբե կանդնէի ՚ի միջի փոքրիկ պարուս, որ յուսագրէր լինել զօրաւիզն ալեսորեալ աւուրց իմոց, ոչ կարէի զուսպ ունել յերկրորդելոյ զհըռչակաւորն այն պատմութիւն Կոմսին Հըընսըրգայ, որ՝ ՚ի խաղան Հէնրիկոսի Բ. ի ընդ Գաերմանիայ, այն ինչ այլ ամենայն պալատականք երթային ընդ յառաջ գանձիւք իւրեանց, եթեր սա զերեսուն և երկու մանկունս իւր և մատոյց իշխանի իւրում՝ որպէս զամենազուհարն ՚ի նուէրս քան զոր կարէր ընծայաբերել : Օ այս օրինակ և ես՝ թէպէտ միայն զվեց ունէի, համարէի զնոսա որպէս զպատուականագոյն նուէրն զոր մատուցանել կարէի հայրենեաց իմոց, զոր՝ և այսորիկ աղադաւ, պար-


տաւոր ինձ համարէի : Ոլրդին իմ անդրանիկ անուանեցաւ Գէորգ՝ ՚ի յիշատակ քեռւոյ իւրոյ , որ եթող մեզ զբիւր մի ստերլինաց : Եւ զերկրորդն՝ որ էր աղջիկ , կամ էր ինձ ըստ հօրաքեռ նորա անուանել Գրիսոէլ , սակայն ամուսին իմ՝ որ յընթացս յդութեանն ընթերցեալ էր զստեղծտրանութիւնս ինչ , պնդեաց կոչել զնա Օլիվիա : Դեռ ՚ի կատարած չհասեալ ամին՝ զմիւս մին ստացաք աղջիկ . և խկոյն հաստատեցի ՚ի մտի անուանել Գրիսոէլ . բայց մեծատուն աղջական ոմն հաճելով լինել կնքամայր , սա ևս՝ ըստ կամաց նորա , կոչեցաւ Առիխայ : որով և երկու մտացածին անուանք զտան յաղփականութեան մերում : սակայն՝ իրաւն ասեմ , իմ ձեռն չեր ՚ի միջի : Յետ սորա ծնաւ Մովսէս , և ՚ի միջոցի երկոտասան ամաց , երկու այլ որդիք յաւելան մեզ :

՚ի զուր է ինձ ուրանալ զխնդութիւնն իմ : յորժամ տեսանէի զմանեկունս շուրջ զինե . բայց Հպարտութիւն և բերկրութիւնն ամուսնոյ իմոյ առաւել ես էր քան զիմն : Իբրև այցելուք մեր ասէին , “Իրաւի՞ իմ արես՝ Տիկինն Ալիմրօզ , մանեկունք քոյ առաւել գեղեցիկք են քան զամենեսին՝ որ ՚ի շինի աստ : ”—“Այս գրացի , ” պատասխանէր , “որպէս արար զնոսա Բարձրեալն—գեղեցիկ են ըստ բաւականին , եթէ ըստ բաւականին բարի ևս եղիցին . քանզի՝ գեղեցիկ նա է որ գեղեցիկ առնէ : ” Եւ նոյն հետայն հրամայէր զտերացն բարձր ունել զպարանոց խրեանց . որ՝ առ ՚ի չգածկել ինչ , իրաւի հաւատա ,

յոյժ գեղեցիկք էին : Արտաքին կերպարան և եթ
այնպէս արհամարհ է յաջ իմ՝ զի յոյժ դժուարաւ
մարթ էր ինձ պահել ՚ի յուշի զյիշատակութիւնս
այս , եթէ չլինէր առարկայ հասարակաց զբուցաց
՚ի շինի անդ : (Օլիվիա՝ զարդիս ութ և տասն ամաց ,
ունէր զայն ամենայն լիութիւնս գեղեցկութեան՝
որով նկարիչք հասարակօրէն նկարեն զշիքէ .
յստակ , աշխոյժ և իշխանական : Տեսիլ դիմաց
Առփիայ չէր այնչափ սխրալի ՚ի սկզբան անդ ,
այլ՝ յաճախակի անվրէպ էր ՚ի ներգործութեանն .
քանզի դալար էր , պարկեշտ և հրապուրիչ : Մինն
յաղթահարէր միով և եթ հարուածով . իսկ միւսն՝
կրկնակի և յաջողակ ջանիւք :

Բնաւորութիւն կանանց ձեակերպի հասարա-
կօրէն ըստ վայելցութեան կերպարանաց իւրեանց .
գեթ այսպիսի էր դստերաց իմաց : (Օլիվիա ցանկոյը
ունել զբազում սիրելիս , Առփիա նկրտէր ապա-
հովել զմին : (Օլիվիա ՚ի մեծի անձկութեան հա-
ճայանալոյ , շատ անգամ կեղծաւորէր . այնինչ Առ-
փիա պակասեցուցանէր զիւր գերազանցութիւն՝ առ-
երկիւղի դառնացուցանելոյ : Մին զուարձացուցա-
նէր զիս աշխոյժութեամբ իւրով ՚ի զուարթութեանս ,
միւսն ուշիմութեամբ ՚ի դառնութեանս : Առկայն՝
որպիսութիւնքս այսոքիկ յաջ մին և ոչ ՚ի միւսն
անցանէին ըստ շափ . և շատ անգամ տեսեալ եմ
զնոսա փոփոխել զտարազս ընդ օրն ողջոյն : Այս մի
հանգերձից սգոյ փոխէր զարուհին ՚ի բարեպաշտուհի
ոք . և նորատեսակ իմն ժապաւէն ընծայէր կրտ-

սեր քեռ նորա առաւել քան զբնականն աշխուժ
ժութիւն։ Երէց որդին իմ Գևորգ գաստիարակեցաւ
ի համալսարանի Աքսֆօրդայ, զի առաջադրեալ
էի զնա ՚ի մին ՚ի գիտնական պարագմանց։ Երկրորդ
որդին իմ Առվակու զոր ՚ի մտի եղեալ էի կարգել
առ գործառնութիւնս արտաքինս, ընկալաւ զիսառն
գաստիարակութիւնս առտնին։ Աակայն աւելըրդ
իմն է ձեռնարկել ՚ի ստորագրութիւն յատուկ յա-
տուկ հանգամանաց գեռահասակ մանկանց, որք
յոյժ սակաւ փորձ առեալ էին աշխարհի, Հե-
րեք եղեցի ասեր, թէ արենակից նմանութիւն իմն
զօրանայր յամենեսին։ և միով բանիւ ասել՝ մի
քնութիւն էր ամենեցուն, այն է ամենեքին միօրի-
նակ առատասիրտք էին, գիւրահաւանք, միամիտք
և անինասարարք։



ԳԼՈՒԽ Բ:

ԱԴԵՏՔ ՏՆԱՑԻՆ : ԿՈՐՈՒՍՏ ՄԵՇՈՒԹԵԱՆ

ԱՐԲԱՆԵԿԻ ԵՏ ԵԹ ԱՃԵՑՈՒՑԱՆԵԼ

ԶՀՊԱՐԺՈՒԹԻՒՆ ԱՉՆՈՒՈՑՆ :

ԱԾԽԵՐՀԱՅԻՆ, գործառնութիւնք տան
մերոյ կախէին ըստ մեծի մասին զկառավարութենէ
ամուսնոյս։ իսկ հոգեռորականն՝ բոլորովին զտեսչու-
թենէ իսմի՛ : Օ որ միանգամ շահէի յիմոյս թու-
շակէ՝ որ հասանէր ցերեսուն և հինգ ստերլինս առ
տարին, ծախէի ՚ի պէտո որբոց և այրեաց եկեղեց-
ականաց վիճակի մերոյ։ քանզի՝ տէր լինելով

բաւտկան ստացուածոց, ոչինչ փոյթ տանէի ժամանակաւոր հարստութեանց . և ներսնային իմն հաճութիւն քաղցրացուցանէր ինձ ձրի կատարել զպաշտօն իմ , Հաստատեցի ևս ՚ի մտի իմում չըկարգել ինձ փոխանորդ , և Ճանօթանալ անցնիւր առն թեմի իմոյ , յորդորելով զամուսնացեալն 'ի ժուժկալութիւն , և զամուրիս ՚ի սրբութիւն ամուսնութեան . մինչ զի յետ սակաւ ամաց , հասարակց եղե առածն , թէ՝ երեք նորօրինակ պակասութիւնք զոյին ՚ի Ա էկֆիլք—երեց անհպարտ , պատանի անկին , և տուն գարեջրոյ անայցելու :

Ամուսնութիւնն էր ցանդ սիրելի ՚նիւթ ձեռնարկութեան իմոյ , և զբաղում ճառս զրեցի ՚ի հաստատութիւն երանութեան այնորիկ . սակայն զոյր ՚ի նոսա մասնաւոր իմն վարդապետութիւն , զոր ամենայն կարեօք ջանայի պաշտպանել . քանզի պնդէի ընդ Ա եստոնի , թէ չէր օրէն երիցու Ա նդզիական եկեղեցւոյ՝ զկնի մահուան առաջին կետին , կրկին անգամ ամուսնանալ . կամ մլով բանիւ ասել պարծանս դնէի ինձ զՃիշդ միակնութիւնն :

Անեխաւ իսկ կրթեցայ յայս կարեռը վիճաբանութիւն , յորոց վերայ այնքան տաժանելի մատեանք կան յօրինեալ . Այս զի՝ շարադրեցի ևս ըդ հատուածս ինչ յայս վաղձան , որք՝ այնու զիւ ոչ երեք վաճառեցան , միսիթարեմ զիս կարծեօքս՝ թէ սովորակ են երանէլին որք ընթերցանն : **Ո**մանք ՚ի բարեկամաց իմոց համարէին զայս տկար մասն անձին իմոյ , բայց՝ ավանս որ իմ պէս ընդ երկար ոչ խորհրդա-

Ճեալ էին ՚ի վերայ բանիս : Որչափ առաւել խորհեի ՚ի վերայ այսորիկ , այնչափ առաւել կարեոր երեւէր ինձ : «Ե՞ս զի՞ և քան զլ եստոն առաւել անցի , ՚ի ցուցանել զսկզբունս իմ . վասն զի նա փորագրել տուեալ էր ՚ի վերայ շիրմի ամուսնոյ իւրոյ , եթէ սա էր դան կին Ա իլիէմ Ա եստոնի , նոյնպէս և ես գրեցի զնոյնաննաման տապանագիր վասն ամուսնոյ իմոյ առ կենդանութեամբ նորին . յորում գովէի զխոհեմութիւն , կառավարութիւն և զհնազանութիւն նորուն մինչ ՚ի վաղձան կենացն . և գեղեցկապէս օրինակել տուեալ՝ զետեղեցի զայն վայելուչ կազմեալ որպէս զզարդ իմն ՚ի վառարանի . ուրանօր պիտոյանայր առ զանազան կարի հարկաւոր վաղձանս : Ազդ առնէր ամուսնոյս զպարտիս իւր առ իս , և զհաւատարմութիւն իմ առ ինքն . աղղեաց ՚ի նմա զհամբաւասիրութեան իմն եռանդ . և ՚ի վաղձանի՝ տայր նմա ՚ի մտի ունել զվաղձանն :

Թերես՝ այսպէս յաճախակի զդրուատ ամուսնութեան լսելովն էր , որ որդին իմ անդրանիկ՝ ընդ ելանելն ՚ի համալսարանէ , խանդաղատեցաւ ՚ի սէր դատեր դրակից երիցուն , որ աւագերէցն էր մերոյ վիճակի , և կարող էր օժտել զնա հարուատ բաժնօք . սակայն հարստութիւնն էր նուաստագոյնն ՚ի կատարելութեանց նորա : Օ օրիորդն Արաբէլայ Ա իլմօթ՝ ամմնեքին (բաց յիմոց երկուց դատերաց) ընդունէին լինել ամենելիմք չքնազ , Առուզութիւնն նորա , քաջողջութիւն և անմն զութիւնն առաւելուին և ևս յայնալիսի իմն պայծառ կերպարանաց և

զուարթամոռութենէ, մինչ զի և հասակ ծերութեան
 անգամ՝ չկարէր անփոյթ ակամբ հայել ՚ի նա: Որով-
 հետեւ գիտէր Պարոն Ա իլրօթ՝ եթէ կարող էի
 ձեռնտու լինել որդոյ իմոյ վայելուչ օգնութեամբ,
 ոչ դժկամակէր ընդ միաւորութիւնն: վասն որոյ
 գերգաստանքն երկոքին վայելէին ՚ի միասին զոյն
 ամենայն միաբանութիւն՝ որ միշտ յառաջընթաց է
 ակնկալեալ ընտանութեան: Փորձ ելով անձամբ
 անձին եթէ աւուրք սիրահարութեան են երջանե-
 կագոյնքն կենաց մերոց: սրտի մոտք ուրախանայի
 ընդ երկարութիւն այնորիկ: և բազմապիսի բերկ-
 րութիւնք՝ զորս սիրահարքս երկոքին ձաշակէին
 յամենայն աւուր յընկերակցութեան իրերաց, թուի
 թէ աճեցուցանէին զսէր նոցա: Ը ատ անգամ՝
 ներդաշնակութիւն զարթուցանէր զմեզ ընդ առա-
 ւոտն: և ՚ի պարզ աւուր աշտանակէաք ՚ի ձի առ ՚ի
 յորս ելանել: Օ ժամն՝ ընդ մէջ նախաձաշուն
 և միջօրէի, նուիրէին տիկնայք ՚ի պաձու ձանս և
 ՚ի վարժութիւն ուսման: կտրդային սովորաբար
 զերես մի, ապա յառէին ՚ի հայելին: որ՝ իմաս-
 տասէրք անգամ վկայեսցեն, առաւել գեղեցիկ երես
 յանդիման առնէր: ՚Ն ժամն ձաշու բազմէր ամուռ-
 սին իմ ՚ի գլուխ սեղանոյն: և զի ցանդ կամակո-
 րէր անձամբ անձին բաշխել ամինեցուն ըստ սա-
 րասի մօր իւրոյ, վասն որոյ առնէր վասն մեր հետ
 զհետէ համօրէն կերակրոցն զպատմութիւն: Հետ
 ձաշելց՝ առ ՚ի արգել լինել տիկնաց չգնալ ՚ի
 մէնջ, հրամայէի հասարակօրէն հեռացուցանել ըդ

սեղանն . և էր որ՝ ՚ի ձեռն օգնականութեան երած ըշտի , ընծայէին մեզ աղջկունքն զամնազուարձ ներդաշնակութիւն . Ը թայածութիւն , արբունն թէյի , շինական պարք և աչքակապիք կարձէին զմեացուած աւուրին՝ առանց օգնականութեան նարտի . զի ատէի ես զամնայն տեսակս խաղուց՝ բաց ՚ի քաննակէ , յորոյ վերայ հինաւուրց բարեկամն իմ կամ՝ ես զիտղ մի ՚ի կորուստ մատնէաք : Եւ ոչ կարեմ աստանօր անյիշատակ անցանել ընդ չարագուշակ գիպուած իմն , որ պատահեցաւ ՚ի վերջին անգամ խաղու մերոյ . պէտք էր ինձ ձգել զըռս , այն ինչ հնգիցս անգամ երկու ու մին ձգեցի հետ զհետէ :

Օ այս օրինակ անցին ամլսք քանի մի , մինչ ՚ի վաղձանի պատշաճ գատեցաւ որոշել զօր հարսանեաց գեռահասակ լժակցացն . որք թուէր թէ սրտեռանդն փափազանօք լրդանային այնմիկ : Քընթացս հանգերձանաց հարսանեացն՝ չէ ինչ պիտոյ նկարագրել զբազմազբազ պիտանութիւն ամուսնոյս , կամ զլսորամանկ տեսիլ դատերաց իմոց . իրաւն ասել՝ իմ ուշն հաստատեալ էր առ այլ իմն առարկայ—վաղձան վնել գիտէի ձառին՝ զոր ՚ի մօտոյ հրատարակել կամէի , ՚ի ջատագովութիւն սիրելի սկզբանց իմոց : Որովհետեւ հոյէի ընդ այս որպէս ընդ ձարտար իմն գործ և սակս փաստիցն և սակս անցին : անմարթ էր ինձ՝ առ ամբարտաւանութեան սրտիս , չցուցանել զայն իմ հինաւուրց բարեկամ Պարոն Ա իլմօթայ , քանի ոչինչ երկրայէի ըն-

գունել զհաւանութիւն նորա , այլ անազան ուրեմն հասու եղէ՝ զի խիստ սաստիկ խանդակաթեալ էր ի հակառակն կարծիս . և ոչ առանց օրինաւոր պատճառաւաց , զի արդէն զհետ մտեալ էր չորրորդ ամուսնութեան :

Այս՝ որպէս քաջ երևեսցի , եղեւ առիթ գառն հակաճառութեան , որ սպառնացաւ խափանել զդիտեալ ընտանութիւն մեր . սակայն հաստատեցաք ի միջի մերում՝ միով աւուրբ յառաջ քան զհարսանիսն քննել զվէճ մեր ընդերկայն բանիւք :

Երկարեցաւ վէճն յերկոցունց կողմանց քաջիկ եռանդեամբ . վկայեաց զինէն իբրև զայլափառէ , դարձուցի զշարախօսութիւն իւր անդրէն ինքեան . յաւել ասել , և ես անդրէն դարձուցանէի զպատասխանի : Այս ի մերձաւորաց կոչեաց զիս արտաքս , և վշտագին դիմօք խորհրդատրեաց ինձ տեղի տալ վիճաբանութեանն՝ գոնէ մինչ ի վախճան հարսանեացն : “Օ ի՞արդ .” զոչեցի ես . “թողուլ ի բաց զվէճն ձշմարտութեան , և տալ նմա կանգնել զաղթանակ՝ որ արդէն հասեալն է ի ծայր անալիութեան : Քորդորեալ զիս՝ եթէ կարես , լքանել զինչ իմ՝ քան զվիճաբանութիւնս : ”—“Ուրեմն յաւ է ինձ ծանուցանել քեզ ,” դարձոյց անդրէն բարեկամս , “զի ինչք քոյ բովանդակ գոգջիր չինչք են , Ա աճառականն այն՝ յորոյ ի ձեռս հաւատացեալ էիր զդրամն քոյ , փախուցեալ է ի բաց՝ առ ի խոյս տալ յօրինաց սնանեկութեան , և կարծի եթէ չէ թողեալ զէթ զշելինդ մի առ ստեղլին :

Աչ ախորժէի վշտագնել զքեզ կամ զընտանիս քոյ զըրուցիւքս այսուիկ մինչ ՚ի վաղձան հարսանեացն, սակայն պիտոյացի արդ առ հանդարտութիւն սաստկութեան վիճաբանութեան քում. քանզի հաւատամ՝ զի խոհականութիւն քո պարտաւորեսցէ զհարկաւորութիւնն գէթ կեղծաւորելոյ՝ մինչ ապահովեսցէ որդիդ զինչս նորապատկ հարսի իւրում:” — “Եթէ զոր միանգամ ասես Ճշմարիտ իցէ:” ասացի ես, “Եւ պարտ եթէ եղիցի ինձ դառնաւլ մուրացիկ, ոչ երբէք բռնադատեսցեն զիս այդոքիկ ՚ի չարագործութիւն, կամ համոզեսցին յուրացութիւն սկըզբանց իմոց:” ՚Ի սմին խոկ վայրկենի գուացից ես ինձէն՝ ազդ առնել նոցա զարկածից կենաց իմոց: խոկ առ վիճաբանութիւնն, ստրջանամ խոկ վասն մասանցն՝ յորս զիջայ ՚ի չնորհս նորա: Նա զի՞ ոչ շնորհեցից նմա յաղթանակ կանգնել որովև և իցէ եղանակաւ:”

Յոյժ ընդ երկար եղիցի նկարագրել մի մի՝ զանցնիւր զգացութիւնս երկաբանչւրոց ընտանեացն, ՚ի յայտնութեան անդ խմում զթշուտոռութենէ մերմէ: սակայն որ միանգամ այլք ամենեքեան զգային՝ թեթեագոյն էր առ որով սիրականքն տոկային: Պարոն Ա իլօթ՝ որ յառաջագոյն խոկ բաւականապէս հակամիտեալ երեւէր ՚ի քակտումն հարսանեացն, այսու աղէտիւքս խոկոյն որոշեաց զմիտա իւր ։ ունէր զառաքինութիւն մի անթերի, այն էր խոհեմութիւն: որ բազում անգամ մի միայնն է, որ մնայ մեզ յեօթանասուն և երկուերորդի հասակի:

ԳԼՈՒԽ Գ

ՏԵՂԱՓՈԽՍՈՒԹԻՒՆ : ԲԱՐԵԲԱԴԴԻ ՎԻՃԱԿ
 ԿԵՆԱՑ ՄԵՐՈՑ՝ ԳՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՐԵՆ
 'Ի ՎԱԽԱՑԱՆԻ ԼԻՆԵԼ 'Ի ՄԵՐՄԵ
 ՀԱՅԹՀԱՅԹՄԱՆԻ :

ՄԻ ՄԻԱՅՆ յոյս ընտանեաց մերոց էր աբդ,
 եթէ լուր տարաբաղզութեան մերոյ չարակամական
 իցէ կամ անվաւեր . սակայն թուղթ գործակալի իմայ
 'ի քաղաքէն՝ փութով հաստատեաց զամենայն պա-
 րագայսն : Որչափ առ իս միայն , կորուստ մեծու-
 թեանն ոչինչ էր . հոգք իմ միայն վսոն ընտանեացս
 էին . պիտէր խոնարհեալ նուաստանային՝ տուանց
 գիտելոյ զիարդ անզգայ լինել արհամարհութեան :

Մերձ երկու եօթնեակք անցին՝ նախ քան ըզ
 ձեռնարկել իմ 'ի սփոփանս տիրութեան նոցա .
 քանզի կանխահաս մխիթարութիւն՝ է յիշատակիչ
 և եթ տրտմութեան : 'Ի միջոցի անդ՝ զբաղեալ էին
 միտք իմ առ գիւտ ինչ ապագայ ապրատից , և հուսկ
 յետոյ փոքրիկ ժողովրդապետութիւն իմն՝ հնգե-
 տասան ստերլինաց առ տարին , առաջի անկտւ ինձ
 'ի հեռաւոր սահմանակցութեան , ուրանօր մարթ էր
 ինձ վայելել զսկզբունս իմ առանց հարստահարու-
 թեան : Ուրախութեամբ սրտի ընկալայ զայս ա-
 ռաջարկութիւն , հաստատելով 'ի մոի աճեցուցանել

զմուտա իմ՝ հերկելով զիոքրիկ վիճակ ինչ գետնի։
 Օ այս օրինակ վերջաւորեալ՝ հոգ տարայ ապա
 հաւաքել զնշխարս կործանեալ միծութեան իմոյ։
 և զամենայն զարտիս հաւաքելով և վճարելով՝
 չորեքտասան հազար ստերլինաց չոք հարիւր և եթ
 եղեւ մնացեալն։ Ա ասն որոյ՝ փոյթ կալայ զառա-
 ջինն խոնարհցուցանել նախ զբարձրամութիւն
 ընտանեաց իմոց՝ հաւասար չափու վիճակի իւրեանց։
 քանզի քաջ դիտէի՝ որ փքացեալ աղքատութիւն
 է ինքնին թշուառութիւն։ “Ո՛չ կարէք տգէտ լինել
 որդեակաք իմ,” ասացի, “զի ոչինչ խոհականութիւն
 մեր կարող էր զգէմ ունիլ տարաժամ թշուառու-
 թեան մերոյ։ սակայն բազում ինչ մարթ է խո-
 հականութեան աւնել՝ առ ՚ի դերե հանել զներ-
 գործութիւն նորա։ Տնանկացաք մեք զարդին՝ սի-
 րեցեալքո իմ, և ցուցանէ մեզ հանձար յարմարել
 զանձն առ խոնարհ վիճակ մեր։ Եկայք ուրեմն
 առանց գժկամակութեան թողցուք՝ ՚ի բաց զայն
 ամենայն պերձութիւնս, որով բազմութիւնք մարդ-
 կան թշուառանան։ և զհետ պնտեսցուք՝ ՚ի ցածուն
 աստիճանի աստ, այնմ խաղաղութեան՝ որով ամե-
 նայն ոք կարէ լինել երջանիկ։ Քաղցրութեամբ
 ապրին աղքատք՝ առանց ինչ մերոցս օգնականու-
 թեան, ընդէր ապա չուսանիցիմք և մեք կեալ
 առանց նոցայն։ Քաւ լիցի՝ որդեակաք։ եկայք ՚ի
 սմին իսկ վայրկենէ հբաժեշտ առցուք յամենայն
 պերձասիրութեանց։ տակաւին գոյ մեզ հերիք մնա-
 ցեալ առ երջանկութիւն, եթէ ունիցուք զկա-

տարելութիւն . և եկայք՝ ՚ի բաւականութենէ առցուք , որ միանգամ պակասի մեզ ՚ի յաջողակութեան : ”

ԵՌ քանզի անդրանիկ որդին իմ աշակերտ էր գրոց , առաջադրեցի առաքել զնա ՚ի քաղաքն , զի անդ կարողացի ճարտարութեամբ իւրով ձեռնտուլինել պիտոյից և մեր և իւր : **Ա**նջատումն բարեկամաց և մերձաւորաց է թերեւս մի յաղետալի հետեանաց չքաւորութեան : **Ե**կն եհաս վաղլաղակի օրն՝ յորում պարտ էր մեզ ցիր և ցանցը ունիլ յայս առաջին անգամ : **Ո**րդին իմ՝ յետ հրաժարական զողղոյն իւր մատուցանելոյ մօր իւրում և մնացելոցն՝ որք խառնեցին զարտասուս ընդհամբուրից , եկն մերձեցաւ զօրհնութիւն առնուլ յինէն : **Օ** որ և բղխեաց սիրտ իմ մեծաւ յօժարութեամբ . և որ՝ հանդերձ հինդ ոսկւով , էր ամենայն ժառանգութիւնն զոր արդ ունէի տալ ՚նմա : “**Ե**րթաս դու . որդեակ , հետիոտա ՚ի լ ոնդոն , ըստ օրինակի ՚նախահաւուն քոյ Հուկերայ : **Ա**նկանակ ուրեմն զնոյն ձի՝ որ պարզեցաւ ՚նմա ՚ի բարի եպիսկոպոսէն ՚Պ իւէլայ . զցուալս այս և զնոյն գիրս ևս : որ միսիթարեսցէ զքեզ առ ճանապարհաւն : կրկին տողքս որ ՚ի ՚նմա արժեն զհաղարս հազարաց : Ո՞նկանէ էի և ծերացաւ , և ո՞ւ դեսի զարդարն արհամարհեալ . և ո՞ւ զսաւան ՚նորա՝ ըէ ՚նորանաց հաց : **Թ**անդ այս լիցի քոյդ միսիթարութիւն ՚ի զնացս քո : **Ե**րթ որդեակ . որ միանգամ եղեցի բաղդ քոյ՝ տուր ինձ տեսանել զքեզ առ անդամ մի ՚ի տարին : կան միշտ զսիրտ

քո բարի . և երթ ՚ի խաղաղութիւն ։ Որովհետեւ
ունէր զանբժութիւն և զպատիւ , ոչինչ զանգիտէի
ընկենուլ զնա մերկ ՚ի մէջ ամփիթէատրոնի աշխարհի .
զի զիտէի զիւր մասն բարւոք վճարել ունէր ,
եթէ յաղթեալ և թէ յաղթական :

Մեկնիլն նորա լոկ նախապատրաստութիւն իմն
էր չուոյ մերոյ , որ յետ սակաւուց պատահեցաւ :
Թռողուլ հեռանեալ ՚ի տեղոջէ՝ ուր վայելեցաք
զայնքան ժամս անդորրութեան , ոչ եղե մեզ ա-
ռանց արտասուելոյ . զոր արիութիւն անգամ ոչ կա-
րաց ունձել Թուղ զայս՝ ձանապարհորդութիւն եօթա-
նասուն մղոնաց այնացիկ՝ որք ցարդ չէին երբէք հե-
ռացեալ ՚ի տանէ տանն մղոնօք , ելից զմեզ ահիւ և
կասկածանօք , զորս և աղաղակք տնանկաց՝ որք
հետևեցան մեզ զմղոնս ինչ , ձեռն ետուն աճեցու-
ցանել : Առօրեայն ուղեգնացութիւն հասոյց զմեզ
իրեւ երեսուն մղոնօք ՚ի հանդերձեալ առանձնու-
թինէ մերմէ , և անցուցաք զգիշերն ՚ի շնի միում
յաննշան իջեանի իրիք առ ձանապարհաւ : Խըրե
ցուցին մեզ զբնակարան մեր , խնդրեցի ՚ի պանդո-
կապետէն՝ ըստ սովորութեան իմում : շնորհ առնել
մեզ ընկերակցութեամբ իւրով , ընդ որ կարի հեշ-
տեաւ հաւանեցաւ . զի զոր միանգամ և ինքն ըմ-
պէր . յաւելանոյր ՚ի հաշիւն յառաւօտու : Օ ի-
արդ և իցէ՝ ծանօթ էր քաջ ողջոյն վիճակի առանձ-
նութեանն առ որ ձանապարհորդէաք , յատկապէս
Ապետին Թառնհիլոյ կալուածատեաւն մերում ,
և որ սակաւ մղոնօք բնակէր հեռի ՚ի տեղւոջէն :

Ա, կարագրեաց զազնուականս զայս որպէս զմի ո՞մն՝
 որ ցանկայր ո՛չ զայլ ինչ զողցես գիտել զաշխար-
 հէ, բաց ՚ի հեշտութեանց նորա . յաւէտ իմն անուա-
 նի ելով առ սիրոյն որ առ սիրուն սերն : Յա-
 ւել ևս՝ եթէ ոչինչ առաքինութիւն կարող էր
 զդէմ ունիլ հնարից և անգուլ ջանից նորա, և
 թէ հազիւ աղջիկ ինչ երկրագործի՝ ընդ տասն
 մյուսօք շուրջանակի, որ ո՛չ եգիտ զնա յաղթական
 և անհաւատարիմ: Ոժէ և վշտակնեաց զիս զըոյցս
 այս, կարի իմն զօտարոտի ներգործութիւնս արար
 'ի գտաներս իմ, որոց կերպարանք երևէին զուար-
 թանալ ընդ ակնկալութիւն մօտալուտ յաղթանա-
 կութեան, և ո՛չ խկ ամուսին իմ էր պակաս հա-
 ճեալ և աներկեան զհրապուրանաց և զառաքի-
 նութենէ նոցա: Ո՞ինչ զայս օրինակ միտք մեր
 զբաղեալ էին, եմուտ կին վանատեառն ազդ առնել
 նմօ՝ եթէ ազնուականն այն օտարական որ զերկուտ
 աւուրս էր ՚ի պանդոկի անդ, չունէր դրամս հա-
 տու ցանելոյ, և ո՛չ կարէր վճարել զհաշիւն:
 “Չունի՞ դրամս,” զոշեաց պանդոկապետն, “ան-
 կարելի է այդ: Քանզի յերեկի խկ ետ զերիս
 գիննիս սպասաւորան մերով՝ ներել հինաւուրց
 զինուուրին, որ պիտէր գանիլ ընդ փողցս քաղա-
 քին շնագողութեան համար:” Եւս սակայն՝ առա-
 ւել պետքելով կնոջն յասութեան իւրում, հանդեր-
 ձեցաւ ելանել ՚ի սենեկէն՝ երդմամբ սպառնալով
 ստանալ զհատուցումն ու ե իցէ եղանակաւ. յորժամբ
 աղաչեցի զպանդոկապետն ճանաչել տալ ինձ զօ-

տարականն այն առատասիրտո որպէս նկարագրեցաւն,
 Հաւանեցաւ ընդ այս, ցուցանելով ՚ի ներքս զազ-
 նուական ոմն իբրև երեսնամեայ, զգեցեալ զպատ-
 մուճան՝ որ զարդարեալ երեկը երբեմն ՚ի վերջա-
 ռորս : Բարեձե էր դրիւք, և դէմքն դրոշմեալ
 զծիւք մտածողութեան : Հակիրճ և անպաճոյճ
 ՚ի բանս իւր, թուեր թէ չիմանալ կամ յոչինչ
 դրել զոյն : Ընդ ելանել պանդոկապետին ՚ի սե-
 նեկէ, անմարթ էր ինձ չցուցանել զփոյթ իմ առ-
 օտարականն, աեսանելով զազնուական ոմն յայն-
 պիսի կացութեան . և մատուցի նմա զքսակ իմ
 լցուցանել անտի զառժամեան կարօտութիւն :
 “Աիրով ընդունիմ” պարո՞ն, ”գարձոյց նա, “և ուրախ
 եմ զի սխալանք իմ վերջին՝ ՚ի պարգևել զոր միան-
 գամ” ունեի դրամն առ իս, եղէն առիթ յերեան
 ածելոյ, եթէ զոն դեռ ևս քեզ նման մարդիկ : Բայց
 և այնպէս պարտ է ինձ ազաքել նախ տալ ինձ զիտել
 զանուն և զտեղի բնակութեան բարեբարի իմոյ, առ
 ՚ի վճարել նմա որչափ կանուխ որ կարեռ եղեցի :”
 Յայսմ լիովին հաճեցուցի զմիտս նորա, ոչ թէ
 միայն պատմելով զանուն և զտարաժամ թշուա-
 ռութիւն իմ, այլ և զվայրն առ որ դէմ եգեալ
 գնայի : — “Այս բարեբազգագոյն ևս է՝ քան որում
 ես ակնունէի, այնու զի նոյն է և իմ ճանապահ .
 արգելեալ լինելով աստէն ՚ի հեղեղաց զերկուս
 աւուրս, ընդ որս յուսամ ՚ի վաղիւն մարթասցուք
 անցանել :” Հաւատասեցի նմա զհաճութիւն իմ ՚ի
 յընկերութեան նորա, յոր յաւելով աղերսանաց

ամուսնոյ և դստերացս, համոզեցաք զեա ընթրիս
առ մեղ առնել յերեկոյին: Օ բուցաբանութիւն
օտարականին՝ միանդամայն և՛ զուարձալի և՛ խրա-
տական՝ յորդոր եղին ինձ ցանկալ շարունակու-
թեանն: բայց՝ հասեալ էր զարդիս ժամ մեկու-
սանալոյ, և հանգստանալոյ վասն վաղուեան վաս-
տակոց:

Ի վաղիւ ընդ առաւօտն սոմենեքին մեք ՚ի մի-
ասին յուղի անկաք ՚ի ճանապարհ: ընտանիք իմ
հեծեալ ՚ի ձի՝ այն ինչ Պարոն Բռչէլ՝ նոր ըն-
կերակից մեր, գնայր հետիոտս ընդ հետս շաւզաց
առ կողաց ճանապարհին: Նկատելով ժպամամբ՝
թէ որովհետե ոչ բարւոք էաք հեծեալ, առա-
տասիրտ լինէր յաւէտ՝ քան փորձել թողուլ զմեզ
՚ի յետուստ: Եւ զի չէր տակաւին նստեալ հեղե-
շաց, պարտաւորեցաք ՚ի վարձու ունել զուղեցոյց
մի՝ որ ընթանայր յառաջոյ, Պարոն Բռչէլ և ես
բերելով զվերջն: Թէ թեացուցաք զաշխատութիւն
ճանապարհին իմաստասիրական վիճաբանութեամբք,
որում քաջ հասու երեէր լինել: Բայց որ միան-
դամ ապշեցուցանէր զիս էր՝ զի թէպէտ ինքն փո-
խառու էր գրամոց՝ այնպէս յամառութեամբ պաշտ-
պանէր զկարծիս իւր, որպէս եթէ ինքն լինէր իմ
պաշտպան: Մերթ ընդ մերթ ծանուցանէր ևս ինձ
եթէ ում այս ինչ կամ այն պատկանէին տունք
զճանապարհաւն: “Այն զոր տեսանեսդ,” ցուցանե-
լով զհոյակապ տուն ինչ հեռաւոր, “է տուն Պա-
րոն Թառնհիլայ՝ ազնուականի ուրումն դեռահասա-

կի՞ որ ունի զմեծ հարստութիւն . այլ կախի բոլորովին զհրամանաց հօրեղքօր իւրոյ Անպուհւոյն Ալիլիմ Թառնահիլայ՝ աղնուականի միոջ՝ որ շատացեալ սակաւուք, թողու եղքօրորդուոյ իւրում վայելել զամենայն, և ինքն յաւետ ՚ի քաղաքին քնակիւ:— “Օ ի՞նչ.” հարցի ես, “ուրեմն գեռահասակ կալուածատէր մեր եղքօրորդի է առն այնորիկ՝ որոյ առաքինութիւն, առատաձեռնութիւնն եւ եղականութիւնքն աշխարհանազ են այնքան: Լուեալ եմ զԱնպուհւոյն Ալիլիմ Թառնահիլայ՝ որպէս զմի ՚ի յոյժ առատաձեռն, սակայն այլանդակամիտ արանց թագաւորութեանն . այր բովանդակիչ բարեսիրութեան:” — “Թաերես և կարինման ասացելոյդ, բարեսիրութիւն նորա զսնեայ անցաւըտ չափ ՚ի մատաղութեան անդ նորուն, քանզի բուռն էին կիրք յայնժամ. և զի բոլորովին հակեալ ՚ի կողմն առաքինութեան, տարան հասուցին զայն ՚ի ծայր այլանդակութեան: Անեխաւ հետամուտ եղեւ փառաց զինու և դպրութեան, անուանի եղեւ վաղվաղակի ՚ի միջի զօրուն, և եգիտ ևս զանուն ՚ի միջի գիտնականաց: Պատրողութիւն ցանդ զհետ երթայ փառասիրին, զի սոքա միայն առնուն զմեծ մասն բերկրութեան իւրեանց ՚ի շողոքորդութենէ: Ըուրջ պատեալ ՚ի բազմութենէ, որք ցուցանէին նմա զմի միայն կողմն կերպարանաց իւրեանց . մինչեւ յընդհանուր համակրութեան անդ մոռացաւ զիոյթն առ անձին օդուտ: Աէր նորին տարածէր առ ամենայն մարդիկ, զի յաջողութիւնն

չուայր նման ճանաչել եթէ զո՞ն և եղեռնաւորք։
Պատմնն բժիշկք զտկարութենէ իմեմնէ՝ որով ող-
 ջոյն մարմին եղանի այնպէս զգայուն, զի և դյզն
 հարումն պատճառէ զցաւ. զոր միանգամբ այլք ՚ի
 մարմնի կրեցին, կրեաց պարոնա այս ՚ի մտի իւրումն
Եւս և չնչին աղետ ինչ եթէ անկեղծ և թէ կեղ-
 ծեալ, հոգի հարկանէր զնա. և տառապէր հոգի
 նորա ընդ խօթագին զգացողութեամբ այլոց աղե-
 տից։ **Օ** այս օրինակ պատրաստ ելով ՚ի թիկունս
 հասանել, դիւրին է քեզ մակաբերել եթէ եղիտ
 զյոգունս պատրաստա առ ՚ի հայցել։ **Պ**այլու-
 թիւնք իւր սկսան նուազեցուցանել զհարստութիւնն,
 բայց ոչ եթէ և զբարի բնութիւնն. այս իրաւի
 առաւելու երեկը, որչափ և այն նուազէր. որչափ
 առաւել չքաւորէր, այնչափ առաւել անհոգ լինէր.
 և թէպէտ խօսէր որպէս զմարդ կատարեալ, սակայն
 զորքք իւր էին անմտի։ **Տ**ակաւին շուրջ պատեալ
 զոլով յաղաչաւորաց, և անկարող ՚ի լցուցանել
 զպէտս ամենեցուն, ՚ի տեղի դրան, ետ չլուսութան։—
Այս էր բովանդակին զոր ունէր պարզեել, և չու-
 նէր զարիւթիւն սրտի ցաւեցուցանելոյ զոքք ժխտ-
 մամբ։ **Ա**յսու օրինակաւ ձգեաց շուրջ զիւրե-
 զհոյլս յուսացողաց, զորոց զյոյս՝ գիտէր հաւաս-
 տեաւ, ունէր դերեւեցուցանել, թէ և անձկայր ձե-
 ռնտու լինել։ **Ա**ռքա կախեցան զնմանէ առ ժամա-
 նակ մի, և լքին զնա նախատանօք և արհամար-
 հութեամբ ըստ արժանւոյն։ **Ա**կայն՝ ըստ չափու-
 արհամարհութեան այլոց, անդասնելի եղեւ և յաչ

իւր : **Հաստատեալ լինելով մոտաց նորա ՚ի վերայ շողոքորդութեան նոցին , և հաստատութեանս այսորիկ խախտեալ զոլով , անմարթ էր ՚ի զովութենէ սրտին գտանել զբերկըութիւն՝ զոր ոչ զիտաց երբէք ՚ի յարգել :** Վիսաւ աշխարհ ցուցանել դայլ իմն տեսութիւն . շողոքորդութիւն բարեկամաց իւրոց սկսաւ զիջանիլ ՚ի լոկ հաւանութիւն : **Հաւանութիւնն էառ ընդ հուզ զառաւել մտերմական կերպարանս խրատու , և խրստ՝ երբ անարգեալ , ածէր զյանդիմանութիւն ՚ի վերայ :** **Կոր ուրեմն եղիս՝ եթէ այնոքիկ բարեկամք՝ զորս լոկ ծարաւ օդտի ածեալ էր շուրջ զիւրեաւ , սակաւ արժանայարդ էին . նոր ուրեմն եղիս՝ եթէ զսիրտ անձին պիտի միշտ տալ՝ առ ՚ի գրաւել զայլոցն :** **Կոր ուրեմն գտի՝ եթէ—եթէ—մոռացայ զոր կամէի նշանակել . ՚ի կարծոյ ասել՝ պարո՞ն , վերջաւորեաց ՚ի մտի իւրում խնամ տանել իւրոյ ինքեան , և որոշեաց զձեւ իմն նորոգելոյ զկործանեալ միծութիւն իւր :** **Այսորիկ աղաղաւ՝ ըստ այլանդակ մոտաց իւրոց , շրջեցաւ հետիսոս ընդ իւրովիս , և զարդիս՝ չեւ ես երեսնամեայ՝ հանգամանք նորա առաւել ձսիս են քան երբէք :** **Այժմեան շնորհարաշխութիւնք նորա առաւել պատշաճական են և չափաւոր քան զառաջինն . սակայն տակաւին պահէ զբեաւորութիւնն փոփոխամտական , և առաւել հաճութիւն զգոյ ՚ի նորօրինակ առաքինութեան :**

Այնպէս զբաւեալ էր ուշոյ խնոյ ՚ի զրուցատրութենէ Պարոն Բռչէլայ , զի հազիւ ականէի ՚ի շաւիզ

գնացից իմոյ՝ մինչև աղաղակ ընտանեացս խռովեցուցին զմել. իբրև գարձայ նշմարեցի զկրտսեր դուստր իմ՝ ի միջի սրնթաց հեղեղացն ջուրց. 'ի վայր անկեալ յերիվարէն և պատեալ 'ի հոսանաց. Անկղմեալ էր երկիցս ՚ի խոր, և ոչ յիմ կարի խակ կայր ժամանել 'ի գէպ յօգնութիւն. Վանաւանդ զգացողութիւնք իմ այնպէս բուռն էին, մինչ ոչ թոյլ առնել ինձ ձեռնարկել 'ի փրկութիւն նորա. ջրասոյզ լինէր աներկբոյ, եթէ չէր ընկերի իմոյ՝ ընդ տեսանել զլտանդն, խակոյն արկեալ զանձն ՚ի փրկել զնա, և ոչ առանց ինչ դժուարութեան երեր զնա անվեսա 'ի միւս կողմն. Փոքու իմն 'ի վերոյ հեղեղացն առեալ. անցին անվտանգ և միւս ընտանիքն. ուր պարագ գտեալ, միաւորեցաք զերախտագիտութիւն մեր ընդ նորայն. Երախտադիտութիւն նորա առաւել հեշտեաւ երեակերպեացի 'ի միտս՝ քան նկարագրեսի. շնորհակատ լինէր զազատչէ իւրմէ առաւել հայեցուածովք քան բանիւք, և եկաց մնաց հաստանեալ 'ի բազուկ նորա, որպէս թէ տակաւին կարօտէր օգնութեան. Հուսացաւ և ամուսին իմ ունիլ յաւուր միում զհաճութիւն՝ գարձուցանելոյ նմա զնորհսն ՚ի տան անդ իւրում. Օ այս օրինակ՝ յետ հաեգիստ առնլոյ ՚ի միւսում իջևանի, և 'ի միասին ճաշելոյ, որովհետեւ երթայր Պարսն Բռչէլ ՚ի միւս կողմն շնիին՝ հրաժեշտ էառ ՚ի մէնջ. և մեք հետեւցաք ՚ի զնացս մեր՝ գիտելով ամուսնաց առ ճանապարհան, թէ կարի յոյժ հաւա-

Նեցաւ ընդ նա . և յայտ առնելով թէ՝ եթէ տէր
լինէր նա ազնուութեան և մեծութեան առ ՚ի հաւա-
սար ընծայել զանձն ընտանութեան մերում, չգոյր
այլ ոք որում տռաւել մտադիւր հաւանութիւն
տայր : Ոչ կարէի զուսպ ունել 'ի ժպտմանէ՝ 'ի
լսելն զճամարտակող բարբառ նորա . բայց ոչ եր-
բէք խոժոռեցայ յոյժ ընդ անիվնաս երեակերպու-
թիւնս, որք առիթ լինէին ուրախութեան մերում:



ԳԼՈՒԽ Դ.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԻՄՆ ԹԷ՝ ԵՒ ԱՄԵՆԱԽՈՌԱԲ ԲԱԴԴ
ԿԱՐԻ ՊԱՐԴԵՏԵԼ ԶԵՐՋԱԿՈՒԹԻՒՆ. ՈՐ ՈՇ
ԶՀԱՆԳԱՄԱՆԱՑ, ԱՅԼ ԶԻՍՊՆՈՒԱԾՈՑ
ԱՆՁԻՆ ԿԱԼՈՒ :

ԱՅՆԻ առանձնութեան մերոյ էր 'ի
փոքրիկ սահմանակցութեան երկրագործաց, որք
հերկէին զլիձակ իւրեանց գետնի, և հաւասարա-
պէս անծանօթ էին հարստութեան և աղքատու-
թեան : Որովհետև զամենայն զպէտս կենաց իւրեանց
լցուցանէին 'ի միջի իւրեանց, հաղիւ երբէք 'ի
տես ելանէին աւանաց և քաղաքաց տռ աւելոր-
դութեանց 'ի խնդիր : Հեռի 'ի քաղաքականաց՝
տակաւին ողջ պահէին զնախնական պարզութիւնս
վարուց, և սակաւապէտ 'ի բնաւորութենէ՝ հաղիւ
զիտէին եթէ ժուժկալութիւնն է առաքինութիւն :

Գործէին զուարթութեամբ յաւուրս վաստակոց և պահէին զտօնախմբութիւնս՝ որպէս զմիջոցս պարապոյ և զուարձութեան։ Տօնէին պարերգութեամբ զ՞օնունդն՝ Քրիստոսի առաքէին զսիրացոյցս յառաւօտու Ա աղենտիանոսի ուտէին զհաստեայս 'ի վերջին աւուրս բարեկենդանի յուցանէին զուշիմութիւն իւրեանց յսկզբան Ապլիլի և բարեբաղատութեամբ ճայթեցուցանէին զկազինս 'ի տօնի հըրեշտակապետին Միքայէլի։ Ա ուր զժամանաման մերոյ առեալ՝ ողջոյն շնն ելին ընդ առաջ վիճակաւորին իւրեանց, զգեցեալ 'ի հանգերձս վայելուչս, և զառաջեաւ տանելով զարինդ և զժմբուկ հանդերձեալ ևս էին զինջոյս առ մերս ընդունելութիւն, յոր զուարթագին դիմոք բազմեցաք և որ միանգամ պակասէր 'ի զբուցատրութեան հանճարոյ մասին՝ լնանիւր ծաղու։

Փոքրիկ բնակութիւն մեր էր առ ոտովք զառ 'ի վայր բլրոյ միոջ, թփուտ ինչ գեղեցիկ պատսպարէր զմեզ 'ի թիկանց, և խոխոջիւն առուակին զառաջեաւ տանն քաղցրացուցանէր զլաելիս մեր 'ի մի կողմն էր մարդագետին 'ի միւսն դալարի։ Ա իւնակի իմ պարունակէր զքսան էկըրս * պատուական գետնի, հատուցեալ առ որ զհարիւր ստերլինս ըստ հաճութեան կամաց նախորդի իմոյ։ Աչինչ կարէր զերազանցել քան զվայելութիւն փոքրիկ ցանկաց իմոց, կեծնիք և շարք ծառոցն ցուցա-

* Էկըրն Աօց է 1840 քառակուսի զքկալսի։

ՆԵՐՈՎ անձառելի գեղեցկութեամբ։ Տուն իմ միաւ
յարկ և յարդածածկ՝ որ մեծապէս ձեռնտու լինէր
յամբութիւն նորա։ որմննքն ՚ի ներքուստ մաք-
րապէս սպիտակացուցեալ, զոր փոյթ կաշտն դլու-
տերք իմ զարդարել պատկերօք ըստ քմաց իւ-
րեանց։ Ու էպէտ և նոյն սենեակ արքանեկէր մեզ
՚ի տեղի գոհնչի և խահարանի, այս առաւել
ձեռնտու լինէր ՚ի ջեռոցանել զայն։ Ունալ զայս
և քանզի ծայրագոյն մաքրութիւն թագաւորէր ՚ի
նմա՝ սկաւառակք, ալնակք և պղնձիք ջննջ մաք-
րեալք և պայծառ կարգաւ շարեալք ՚ի բասուցի՝
՚ի դէպ երևէին առաջի աչաց, և չէին պիտոյ այլոց
կարասեաց մեծագնոց։ Երեք այլ սենեակք և ո
գոյին—մին վասն ամուսնոյ իմոյ, և միւսն՝ ՚ի մի-
ջի մերոյն, վասն երկուց գտաերաց մերոց։ և եր-
բորդն՝ հանդերձ երկու մահճօք, վասն մնացեալ
մանեկանց։

Փոքրիկ հասարակապիտութիւնն՝ որում ես օրէնք
տայի, կարգադրեալ էր ըստ հետևեալ օրինակի։
ընդ մերկանալ արշալուսոյ՝ խմբէաք ամննեքին ՚ի
սրահի, յառաջագոյն ջեռոցցեալ յսպատաւորէն,
յետ ողջունելոյ զիրեարս մայելուչ յարդանօք՝
քանզի միշտ պատշաճ համարէի ցուցանել զարհես-
տական իմն ձեւ քաղաքավարութեան, առանց որոյ
համարձակ ազատութիւն քակտէ միշտ զբարեկամու-
թիւն, ՚ի ծունկս անկանէաք ամննեքին ՚ի շնորհակա-
լութիւն այնմ՝ Արարչի՝ որ պարգևեաց մեզ զմիւս
մին օր, զինի կատարման այսր պաշտաման, որդին

իմ և ես երանէաք զհետ առօրեայ գործոց մերոց արտաքոյ տան , խակ ամուսին իմ և դստերքս փոյթ կալնուին ՚ի հանդերձել զնախաճաշ , որ միշտ պատրաստ էր ՚ի հաստատեալ ինչ ժամանակի : Անծայէի նախաճաշուն զմիջոց կէս ժամու , և կէսօրեան ճաշու մերոյ զժամ մի . զոր յանմեղ զուարձութիւնս անցուցանէր ամուսին իմ ընդ դստերացս , և ես յիմաստասիլական առարկութիւնս ընդ որդւոյ իմոյ :

Որովհետեւ յառնէաք ընդ արեգական , վասն որոյ ոչ շարունակէաք երբէք ՚ի վաստակս մեր յետ նորին մնանելոյ . այլ դարձ առնէաք անդրէն ՚ի տուն առ ակնկալեալ ընտանիս մեր . ուր զուարժագին դէմք , պայժառ վառարան և ախորժելի հուր կազմ և պատրաստ դտանէին առ մեր ընդունելութիւն : Եւ ոչ առանց կոչնականաց իսկ լինէաք , էր երբեմն՝ զի Վլամբօրօյ մշակ՝ շատախօս գրացին մեր , և շատ անգամ կոյլ սրնգահարն յայց ելանէին մեղ , և առնուին զջաշակ մնձոյ դինւոյ մերոյ՝ զորոյ ոչ զբաղադրութեան կերպ և ոչ զհամբաւն էաք կորուսեալ : Անմինաս անձինքս սոքա ըզ պէսպէս կերպս ունէին բարի ընկեր լինելոյ . զի՝ մինչ մինչ հարկանէր զսրինդ , միւսն եղանակէր ըզ քաղցր տաղերգութիւն : Վաղճան տոյյաք զիշերոյ՝ ըստ օրինակի սկսանելոյ առաւօտուն , կարգելով զմատաղաւուրց մանկունս կարգալ զդաս աւուրնեւ և նա՝ որ ընթեռնայր բարձրածայն , անշփոթ և լաւագոյն՝ դտանել դտանէր զերկուս փողս առ ՚ի ար-

կանել ՚ի մախաղ աղքատին ՚ի կիւրակէրի :

Խբրե ժամանէր կիւրակէն, լինէր արդարե օր զարդարանաց . որում՝ ամենայն պատուիրանք իմ առ ծախուց արդել, ոչ կարէին խափան լինելոյ : Ուշափի քաջ գեղեցիկ և երեակերպէի՝ թէ առարկութիւնք իմ ընդդէմ մեծ ամսութեան յաղթեալ էին ունայնասիրութեան դստերաց իմոց, գտանէի վնսսա տակաւին յարեալ ՚ի ծածուկ յամենայն պաճուճանս իւրեանց առաջին . տակաւին սիրէին զանկուածոյս, զժապաւէնս, զապարանջանս և զդաստապանս. ՚աս՝ ամոււսին իմ իսկ չէր կորուսեալ զախորժակ իւր առ կրկնոցն ծիրանի, վասն զի դէպ եղեւ ինձ առ անգամ մի ասել թէ վայելուչ երեկը ինքեան :

Եւ յաւէտ յառաջնում անդ կիւրակէի, վարք նոցա յոյժ վշտագնեցին զիս. ՚ի նախնթաց զիշերի պատուիրեցի դստերաց իմոց պատրաստ լինել ՚ի վաղիւ վաղքաջ ընդ առաւօսն . քանզի ախորժէի հանապաղ լինել յեկեղեցւոջ շատ յառաջ քան զայլ ժողովուրդս : Անվրէպ կատարեցին ըստ պատուիրանիս. սակայն՝ այն ինչ ակմէքէաք ՚ի ժամ նախաճաշուն, իջին ամոււսին և դստերք իմ զլխովին զարդարեալ և պաճուճեալ ըստ նախիլին սովորութեան, գէսք՝ օծեալ անուշահոտ իւղովք, երեսք՝ պիսակաւորեալ արհեստիւք ըստ քմաց, քղանցք հանդերձից՝ շեղջեալ ՚ի յետուստ՝ շըշիւն հանելով առ ամենայն ոտնփոխ : Ոչ կարացի զուսպ ունել զժապաւմն իմ ընդ սնափառութիւն նոցա՝ և յաւէտ

ամուսնոյ իմոյ, յորմէ զաւելի կատարելութիւն տկն
ունէի գտանել։ Քայսմ տագնասլի ուրեմն՝ մի միայն
հնար որ մնայր ինձ էր՝ ժանրագին դիմոք հրա-
մայել որդւոյ իմոյ պատուէր տալ վասն կառաց
մերոց։ Օ արմացան աղջկունքն ընդ այս հրաման,
այլ ես կրկնեցի զնոյն առաւել ևս ժանրութեամբ «
Անշուշտ՝ խաղ առնես սիրելիդ իմ»՝ ասաց ամու-
սնս։ «մարթ է մեզ բարիոք գնալ հետիոտս, զի
չեն ինչ պէտք կառացի»—«Ախալիս՝ աղջեկ, զի
եթէ այսպէս զարդարեալ գնացուք յեկեղեցին,
նոյն իսկ մանկունք վիճակիս հալածեսցեն զմեզ ա-
ղաղակաւ իւրեանց զնանապարհայն։»—« Իսրաւի
կարծէի ես միշտ՝ թէ Ճառլսն իմ ցանկայր զման-
կունս իւր յստակս և չքնաղս տեսանել շուրջ զիւ-
րեւ»—« Լեր յստակ որչափ և կարողդ ես,» կար-
ճեցի զիսօսան, «ե առ այդ առաւել ևս սիրեցից
զքեզ, բայց այս ամենայն չէ յստակութիւն, այլ
ունայնամութիւն։ Թեզանապարդքս այսոքիկ,
փունջք և ծուէնքս ատելի և եթ արտացեն զմեզ
տռաջի ամենայն կանանց դրացեաց մերոց։ Քան,
որդեակք իմ։» յաւելի առաւել ժանրութեամբ։
«կարէք փոխարկել զպատմուժանսդ զայդոսիկ ՚ի հա-
ստրակ իմն տարագ։ քանզի անվայել են մեզ զար-
դարանք, որք կարօտ եմքս պիտոյից վոյելչակտ-
նութեան։ Զգիտեմ թէ փարթամաց իսկ ՚ի դէպ
եկեցեն այսպիսի վերջաւորք և ծուէնք, եթէ զմտաւ
ածցուք չափաւոր հաշուով, թէ զմերկութիւն կա-
րօտաւորաց ազգի մարդկան՝ մարթ է ժածկել պա-

ՃՈՒՃԱՆԾԸ պ մՆՈՎԼԱՍԽՐԱԳ :

Ապացուցութիւնս այս ՚ի Ճահ յաջողեցաւ . չոքան
խկոյն մեծաւ հեղութեամբ փոխել զհանգերձս , և
բերկեցայ ՚ի վաղին տեսանել զդատերս իմ յօժա-
բամիտ պարապեալ 'ի կտրել զքղանցս հանգերձից
իւրեանց առ ՚ի կարել զըաճկոն վասն երկուց փո-
քըրկանց Դիկայ և Բիլայ առ կիւրակէի . և որ
առաւել բերկեցոյցն զիս էր՝ զի այսու կրծատու-
թեամբք հանգերձքն ևս կատարելագործեցան :



ԴԼՈՒԽ Ե :

ՆՈՐ ԵՒ ՄԵՇ ԾԱՌՈԹՈՒԹԻՒՆ 'Ի ՆԵՐՔԸ

ՅԵԽԱԼ : ՅՈՐ ՄԻԱՆԳԱՄ ՀԱՍՏԱՏԵՄՔ

ԶԱԹԱՒԵԼԱԳՈՅՆ ՅՈՅՍ ՄԵՐ՝ ՅԱՅՏՆԻ

. ՀԱՍԱՐԱԿՈՐԷՇ ԼԻՇՆԵԼ

ՅՈՅԺ ԵՂԵՑԲԵՐՆ :

ԱՐԿԵԼԻՏԻԿ մի հեռի ՚ի տանէ՝ շինեալ էր
առաջընթացն իմ զնստարան իմն հովանաւորեալ
ցանկիւք թփոց և բաղեղանց : Աստանօր՝ իրըն
պայծառ լինէր օրն և աշխատանք մեր կանխաւ-
առարտեալ . խմբէաք ՚ի միասին վայելել զտարա-
ծեալ տեսիլ դաշտին յանդորրութեան երեկոյի :
Աստէն ևս ըմպէաք զթէյ , որ զարդիս պատահա-
կան խրախութիւն իմն էր եղեալ . և զի այս եր-
բեմնապէս պատահէր՝ յարուցանէր զնոր իմն բերկ-

բութիւն, զ՞չ սակաւ շփոթս ունելով ՚ի հանգեր-
ձելն : Յայսպիսի դէպս երկոքին փոքրկունք մեր
ընթեռնուին առ մեզ, և զկնի մեր ըմպէին և նո-
քա: Եզր երբեմն զի՝ առ փոփոխութիւն զուարձու-
թեանց մերոց, երգէին աղջկունքն գիթառաւ: և
այն ինչ կազմէին նոքա այս օրինակ զիտքրիկ իմն
ներդաշնակութիւն, յածէաք ամուսին խոր և ես ՚ի
զառ ՚ի վայր դաշտավայրին՝ ալճ'նազարդելոյ կապ-
տագոյն բոժոժաճագաղիօք և կենտաւրոսականօք: Խո-
սէաք զմայլմամբ զմանկանց մերոց, և վայելէաք
զքաղցրաշունչ սիզն՝ որ կրէր ընդ ինքեան զառող-
ջութիւն և զքաղցրութիւն :

Օ այս օրինակ սկսաք նշմարել զի՝ ամենայն
վիճակ կենաց կարէ ունել զիւր սեփհական բերկ-
րութիւն: ամենայն առաւօտ ծագէր մեզ զդարձ
վաստակոց, սակայն երեկոյն հատուցանէր զիոխա-
րէնն պարապ զուարձութեամբ:

ՎԵՐՁ ՚ի մուտս աշնան ՚ի տօնեախմբութեան իրեք՝
զի սուրբ պահէի զայսպիսի աւուրս յաշնատու-
թենէ, ակրմեցաք ամենեքին ՚ի սովորական վայրի
զքօսանաց մերոց: և սկսան մատաղաւուրց երաժիշտք
մեր զսովորական ներդաշնակութիւն իւրեանց: Եր-
բե զայսօրինակ պարապեալ՝ տեսաք զեղջերու մի
վազս առեալ՝ իւրե քսան քայլիւք հեռի ՚ի մէնջ,
պնդեալ դու յորսորդաց: **ԱՇ** շատ ժամանակ սւ-
նեցաք միտ գնելոյ թշուառութեանց տարաբաղդ կեն-
դանւոյն յորժամ տեսաք զհեծեալս և զքարակսնոցին
շտապաւ անցանել ՚ի թիկանց մերոց, և առնուլ

զնոյն ձանապարհ հետոց նորա : Խսկոյն կամեցայ գարծ առնել ՚ի առւնու, բայց կամ հետաքրքրութիւն՝ կամ ապշտթիւն և կամ այլ ինչ գաղանի շարժութիւն պինտ կալան զամնւսին և զդստերս իմ ՚ի տեղատղիւնց : Որուրդն առաջընթաց անց զմեօք մեծաւ արագութեամբ, հետեւեալ ՚ի չորից կամ ՚ի հնգից այլոց՝ որք նոյնպէս Ճեպել երեկին : 'Եվերջոյ՝ սպատանի մի ժամանեցաւ բարեշնորհ քան զմիւսնու, որ՝ յետ առ ժամանակ մի նկատելոյ զմեզ փոխանակ զհետ երթալոյ որսոյն, զկայ էտո առ տեղեաւն, և տարով զերխվարն ցալատանեակին իւր սպատաւոր, մերձեցաւ առ մեզ անփոյթ իմն և վեհազն եղանակաւ : Թռուէր թէ ոչ կարօտէր ժանօթացուցման, այլ մերձեցաւ ողջունել զդստերս իմ՝ որպէս թէ հաւասարի գոլով զբարեհամբոյր ընդունելութենէ : բայց սակայն կանխաւ իսկ ուսեալ էին նոքա ունչո առնել զյանդգնութեամբ : Ա ասն որոյ ժանօյց զանձնէ գոլ թռանհիլ՝ տէր կալուածոյն որ ձգիւր սակաւիկ մի շուրջ զմեօք : Յետ որոյ կրկին մատեաւ յողջոյն իգական մասին ընտանեաց մերոց, և այնպէս էր զօրութիւն մեծութեան և շքեղ զգեստուց՝ զի ոչ հերքեցաւ յոյս երկրորդ անդամ՝ : Որովհետեւ բանք նորա՝ թէ յանձնապատճան, դիւրալուր էին, շուտով մտերամացաք ընդ իրեարս, և նշմարելով առ մեզ զերաժշտական գործիս, աղաչեաց շնորհս առնել երգով իւիք : Կանգի ոչ հաճէի ընդ այսանակ անհամեմատ ժանօթութիւն, ակնարկի արարի գատե-

բաց իմաց խափանել զհաւանութիւն նոցաւ սակայն
 ակնարկութեան խմումը ընդդէմ դարձաւ միւս մին
 յամունոյս վասն որոյ զուարթագին դիմոք առին
 եղանակին զերգ իմն Պարսյդընայ Ա'եծապէս հա-
 ճեցաւ Պարսն Թաւանհիլ ընդ եղանակ և լնտրու-
 թիւնն և ապա ի ձեռս առեալ զգիթառն այլ ոչ
 յոյժ յաջող եղանակեաց բայց և այնպէս հատոց
 նմա երեց գուստը իմ զընկալեալն ի նմանե զգովառա-
 նութիւն հանդերձ շահիւք հաւաստի առնելով
 թէ եղանակք նորա առաւել բարձրաձայն էին քան
 զիւրոյ զվարժապետի Հ սյս պաշտօն մեծարանաց՝
 խոնարհեցաւ նա զոր և սա դարձոյց յարգանօք Պ-
 ռովեաց նա զախորժակ սորա և սա զկատարելու-
 թիւն նորա ոչ դար մի ողջոյն կարեր առաւել ը-
 նտելացուցանել զնոսա և Աշ զի և անխելք մայրն
 հաւասարաչափ բերկրեցեալ ստիպեաց զկալուա-
 ծատէր իւր մոտանել և առնուլ զմաշակ սնձոյ դին-
 ոյ իւրոյ Թառէր թէ ընտանիքն ողջոյն անձկալ
 անձկային հաճեցուցանել զնա նկրտէին դստերքս
 զուարժացուցանել արդի ձեռնարկութեամբք այն
 ինչ Առվակս ընդ հակառակն էարկ նմա զերկուս
 կամ զերիս վաղեմի հարցմունա որոյ վասն Ծիծա-
 ղեցան զնովաւ ըստ բաւականին գերմուկանին և ո
 ոչ սակաւ զբաղեալ էին և սիրողաբար յարեցան
 ընդ օտարին Ամենայն փոյթ իմ հազիւ մարթա-
 նայր ի բացեայ ունիլ զմատունս նոցա ի հպելոյ
 և կեղաստելոյ զանկուածոյս բկեստուց նորա և
 ամբառնալոյ զքշանցս զբանին ի տեսանել զինչ

գուցէն անդ։ Բնդ մերձենալ երեկոյին հրաժեշտ
էառ ՚ի մէնջ, բայց ոչ առանց շնորհ հայցելոյ առ
՚ի կը կնել զայցելութիւն իւր։ Ընդ որ՝ որովհետեւ
մեր կալուածատէլն էր, սրտի մոօք հաւանեցաք։

“Եղինհետայն ընդ ելանել նորա՝ ժողով գումա-
րեաց ամուսին իմ յաղագս ընթացից աւուրն։
Կարծիք իւր էին՝ թէ յոյժ բարեբազդ էր գիպ-
ուածն։ Քանզի օտար ՚ի յերեւութէն, նշմարեալ
ևս էր զիրտ ինչ։ Յուսացաւ ևս տեսանել զօրն՝
յարում մարթացուք ՚ի վեր ունիլ զգլուխ մեր
ընդ լաւագունից նոցա, և զլաւեաց զբանն վկայե-
լով թէ՝ ոչ կարէր տեսանել զպատճառ ինչ՝ եթէ
հիմ երկոքին օրիորդքն Ախնկլերոյ կարացին ա-
մուսնանալ ընդ մեծութեան, և ոչ իւր մանկունք
կարացեն գտանել։ Վասն զի վերջին բանք նո-
րա ուղղեալ էին առ իս, վկայեցի և ես թէ՝ ես ևս
չկարէի տեսանել զպատճառ ինչ։ և ոչ իսկ՝ եթէ
ընդէր Պարոն Ախմետինսըն կարաց գտանել զտասն
հազարս ստերլինաց ՚ի բաղդանոցի,* և մեր վիճակն
ընդունայն ել։ “Երդնում՝ Շառլս,” գոչեաց ա-
մուսին իմ, “զի սովին եղանակաւ վհատեցուցանես
միշտ զաշխոյժ եռանիդեան ոգւոց դստերացս և իմ։
Ասա ինձ՝ սիրելիք իմ Ասոփի, զբնչ կարծիս ունիս
զնորահեկ այցելուէ մերմէ։ Զկարծես՝ դու, բարե-
քնոյթ երեկր։”—“Եւ կարի քաջ յիրաւի, մամա-
կարծեմ շատ ունի ասել ՚ի վերայ ամենայն իրի,
և ոչ երբէք կարօտի բանից, և որչափ չնշին առար-

*Բաղդանոց. Lottery. Վ. Համբագիր։

կայն, այնչափ առաւել ունի ասել" — "Արդարե" ասաց **Օլիվիա**, "Հու է ըստ բաւականին որպէս զայր մի, այլ որչափ առ իս, չեմ յոյժ հաճեալ ընդ նմա. այնչափ անհնարին արձակ է և յանձնապաստան. իսկ ՚ի գիթառին գարշելի է:" **Օվերջին** ասութիւնս ՚նորա զերկոսին՝ ընդ հակառակն մեկնեցի ես: Խմացայ այսու՝ զի Ասփիս այնչափ ատեր զնա ՚ի ՚ներքուստ, որչափ **Օլիվիա** 'ի ծածուկ սիրեր: "Պրակեսի կարծիս և ունիցիք զնմանէ՝ դստերքով իմն զՃշմարիսն խոստովանիմ զի՞ ոչ ՚նախապաշարեաց ՚նա զիս ՚ի ՚շնորհս իւր: **Անհամեմատ** բարեկամութիւնք ցանդ զրաւին զզուանօք. և ՚նշմարեցի իսկ՝ որ համայն քաղցրաբարոյութեամբն իւրով, ճանաչէր տակաւին զմիջոցն որ ՚ի մէջ մեր կայր: **Յարեսցուք** ուրեմն յընկերակիցս մերում աստիճանի: **Չիք** այր այնքան անգոսնելի քան որ հետամուտ իցէ հարստութեան 'ի ձեռն ամուսնութեան. և չկարեմ տեսանել զպատճառ եթէ ընդէր ՚նոյնպէս անգոսնելի ոչ իցեն և հետամուտ կանայք: **Ապա** ուրեմն անգոսնելի եղիցուք մեք: եթէ ՚նպատակ ՚նորա պատուաւոր իցէ: այլ եթէ այլազդ ինչ — **Բարե՛**: զդողանի իսկ հարկանիմ լոկ ՚նորհիլն զայնմանէ: **Արդարե** չունիմ կառկածել ինչ զբարուց մանկանց իմոց, այլ սակայն երկնչեմ յոյժ ՚ի բուսոյ բարուց ՚նորա: " Կամէի և ևս յաւելուլ ՚ի բանս, եթէ չէր ՚նափան արկեալ սպասաւորի ասպետին. որ երեր մեզ զմասն որսոյն հանդերձ ողջունիւ ՚նորա, խոստանալով գալ ՚ի

ձաշ յետ սակաւ աւուրց : Այս քաջագիւղ ընծայն հզօր ջատագով եղե կողման նորա , քան որում ասութիւնք իմ բոլոր զգէմ ունիլ կարելին : Ա ասն որոյ լսեցի ես , շատ համարելով յերեան ածել զվտանգն , թողլով 'ի կամս նոցա զընտրութիւնն խուսելոյ յայնմանէ : Առաքինսութիւնն այն՝ որ յարաժամ պէտս ունիցի սլահալանման , հազիւ արժէ պահապանին :



ԳԼՈՒԽ Զ.

ԵՐಡԱՆԿՈՒԹԻՒՆ ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԱՐԱՆ :

ՔԱՆՁԻ յամառէաք ՚ի նախկին վիճի մերում մասնաւոր իմն սաստկութեամբ , առ միաբանելոյ ՚ի վերջը՝ հաւանելի եղե ընդհանրապէս հասուցանել զմասն որսոյն վասն լնթրեաց երեկոյին . զոր յօժարամիտ յանձն առին աղջկունքն : “Ճիսուր եմ ;” ասացի ես , “զի չունիմք զմի ՚ի գրացեաց կամ զօտաբական ո՞մն՝ մասնակից լինել խրախութեանս այս մերում : այսպիսի խնջոյք կրկնապատիկ ախորժելի լինին հիւրընկալութեամբ :”—“Ո՞վ բարեբաստութեանս ,” աղաղակեաց ամուսին իմ . “ահաւասիկ մեր լաւ բարեկամն Պարոն Բաչէլ , որ ապրեցոյցն զմերս Առփիսոյ . և յաղթահարեաց զքերզարտար առարկութեամբ :”—“Ճաղթել զիս՝ երեխայ , յառարկութեան ,” ասացի . “սխալիս յայդ-

միկ, սիրելիք իսր, Յոյժ սակաւք՝ կարծեմ, զայդ
առնել կարիցին. ոչ երբէք վիճեմ ընդ քեզ՝ ի
մասին ձարտարութեան քոյ 'ի հանգերձել զկար-
կանդակս սազի, և աղացեմ զի թողցես զառարկու-
թիւն վասն իսմ," Այս ինչ գեռ խօսք 'ի բերա-
նիս էին՝ եմաւտ խեղճ՝ Պարոն Բռչէն, և խնդու-
թեամբ ընկալեալ եղեւ յընտանեաց. որք զձեռանէ
կալեալ զնորա՝ ողջագուբէին խնդութեամբ, այն
ինչ փոքրիկն Դիկ սպաս եհար նմա ածելով
զաթոռ :

Հաճեալ էի ես ընդ քարեկամութիւն ապերջանիկ
առնս այսորիկ՝ սակս երկուց պատճառաց, որովհետեւ
գիտէի՝ զի կարօտ էր իմումն, և գիտէի ևս՝ զի սիրով
բերէր ընդ մեզ ըստ չափու կարեաց իւրոց : "Ճա-
նուցեալ էր 'ի վիճակի մերում անուամբ խեղճ պա-
րոնի, որ չարար զբարի ինչ ՚ի մատաղութեան իւ-
րում. թէ և զարդիս գեռ չէր հասեալ յերեսուննու
Եւրեմն երբեմն խօսէր յոյժ կատարելութեամբ,
այլ հասարակօրէն ախորժելի յոյժ էր նմա ընկե-
րակցիլ ընդ մանկանց. զորս անուանէր անմնաս
փոքրիկ մարդիկս : Խմացայ զի հռչակաւոր էր
յոյժ յեղանակել նոցա զերզս և պատմել զվեպս.
և հազիւ երբէք երթայր ՚ի դուրս՝ առանց տանելոյ
՚ի ծոցի իւրում զիր իմն վասն նոցա՝ զկոտոր մի կո-
ճակտապի կամ զփոքրիկ գործիս սուլելոյ : Գայը
սովորաբար առ անգամ մի 'ի տարին 'ի սահմանս
մեր, և մնայր անդէն զաւուրս ինչ՝ ապաւինելով ՚ի
հիւրասիրութիւն դրացեաց : Բազմեցաւ յընթրիս

առ ընթեր մեր, և ոչ անխայեաց ամսւսին իմ՝ ի
սհձոյ դինին իւր։ Զգեցաւ պատմութիւն յամե-
նայն կողմանց, երգեաց մեզ զերգս ինչ վաղեմիս,
և ասաց զբունգն վասն մանկանց։ Աքաղաղ մեր՝
որ միշտ խօսէր 'ի մետասանին, ծանոյց մեզ եթէ
ժամ' էր հանգստանալոյ։ այլ անակնկալ խոչըն-
դակ իմն յարեաւ 'ի տեղաւորել զօտարականն. ամե-
նայն անկողինք մեր արգէն զրաւեալ էին, և կարի
անագան էր առաքել զնա 'ի մերձակայ պանդոկն։
Յայս տագնապ անակնկալ՝ մատոյց նմա փոքրիկ
Պակի զիւր բաժին անկողնոյ, եթէ Առվակս եղբայր
իւր թոյլ առնէր ինքեան ննջել 'ի միասին։ “Եւ-
ես,” գոչեաց Բիլ, “տաց զիմ բաժին Պարոն Բալո-
չէլայ, եթէ քորք իմ առցեն զիս 'ի մահիճ՝ իւ-
րեանց” —“Օ օրանայք՝ որդեակք իմ.” ասացի,
“Հիւրընկալութիւնն է մի յառաջին պարտականու-
թեանց Քրիստոնէի։ Պառնան անասունք 'ի տե-
զիս իւրեանց ապաւինի, և թաշունք թռանին 'ի
բոյնս, այլ անօգնականն մարդ՝ 'ի համագոյակցաց
իւրոց միայն, կարէ գտանել զապաւինութիւն։ Ահ-
ծագոյն հիւրն յաշխարհի մերում էր “Ես՝ որ եկն
'ի փրկել զայն, ոչ զոյր նորա տուն, իբրու այն
թէ՝ տեսանել եթէ որչափ հիւրասիրութիւն մեա-
ցեալ էր 'ի միջի մերում։—Պարորայ՝ սիրելիդ
իմ.” ասացի ցամուսինս, “տօւր անձնիւր 'ի ման-
կանց զկոսոր մի շաքարոյ։ և թող Պակայն մե-
ծագոյն լիցի, զի զառաջինն նա խօսեցաւ։”
Ապղաջ ընդ առաւօտն կոչեցի զամենայն ըն-

տանիս իմ՝ 'ի քաղել զանժամանակ բոյս խոտոյ ։
 և հիւրին մերոյ մասաւցանելով զիւրն օգնականու-
 թիւն ։ ընկալաք և զնա ՚ի թիւ մեր ։ Հառաջ վա-
 րէաք զաշխատութիւն մեր զուարթութեամբ, առւ-
 աք հողմոյն զսեաթոյրան, յառաջէի ես ՚ի գլուխ՝
 և այլք զհետ իմ դային ։ Բայց և այնպէս անկա-
 րեոր էր ինձ չանսանել զանդուլ փոյթ Պարոն
 Բռչէլայ՝ յօգնել գտաեր իմում Առիխայ՝ ՚ի բաժնի
 աշխատութեան նորուն ։ Խրբե յամբովկ հաներ
 զիւրն՝ ընկերէր ՚ի նորին, և մասնէր ՚ի թաքուն
 ՚ի զրոյց ընդ նմա, այլ ես քաջ հասու էի կատա-
 րելութեան Առիխայ, և փորձն խել ունէի մեծա-
 մութեան նորա ։ վասն որոյ ոչինչ կասկածէի
 զաղքատ առնէն զայնմանէ ։ Խրբե ժամանեցաք ՚ի
 վաղձան առօրեայ աշխատանաց, հրաւիրեալ եղե
 Պարոն Բռչէլ ըստ անցելում զիշերի, այլ սակայն
 հրաժարեցաւ, քանզի խոստացեալ էր ագսնիլ առ-
 միսում ՚ի դրացեաց մերոյ, որոյ մանկան համար տա-
 նէր զսուլիչ մի ։ Խրբե մեկնեցաւ նա, բանք մեր
 ՚ի ժամ ընթրեաց դարձան ՚ի վերայ անբաղդ հիւրի
 մերոյ վերջնոյ ։ “Արակի հզօր օրինակ է,” ասացի,
 “խեղձ այրա այս, նորանոր թշուառութեանց՝ որ
 զհետ գան ապարասան և շռայլ երիտասարդութեան ։
 Ա՛չ իւիք կարօտի հանձարոյ, որ պիտոյանայ լոկ
 ՚ի ծանրացուցանել զնախկին յիմարութիւն իւր ։
 Ա՛վ անօդնական ողորմելոյն ։ ուր շողոքորդքն,
 որոց երբեմն չիչել կարէր և հրամայել ։ Գնացին
 թերես վասնել ՚ի սրահի պանդուրութեան, յօրա-

ցեալք շռայլութեամբ նորա : Գրովէին զնա երբեմն , և այժմ՝ ծափս հարկանեն ընդ պանդոյրս . նախկին զմայլումն նոցա ընդ հանձար նորին՝ փոխարկեալ է արդ յերգիծանութիւն յիմարութեան նորա . աղքատացեալ այժմ՝ և թերես արժանի աղքատութեան , քանզի ոչ այնչափ փառասէր է՝ առ լինելոյ ինքնիշխան , և ոչ այնչափ կատարեալ՝ առ լինելոյ պիտանի : ” Գրգռեալ թերես ՚ի գաղտնի պատճառաց , կարի կծուութեամբ արարի զդիտողութիւնս այս . յոյր սակս մեզմով իմն յանդիմանեաց Առփիա : “ Որպիսի և նախկին վարք նորա եղեալ իցեն՝ հայրնկ , հարկ է այժմեան վեճակի նորուն ազատ կացուցանել զնա ՚ի դսրովանաց : Արդի չքաւորութիւն նորա հերիք պատուհաս է անմտութեան նորուն անցելոյ . և լուեալ եմ ՚ի հօրէդ իմմե ասել՝ եթէ չէ արժան վիրաւորել վայրապար զողորմնին այն՝ յորոյ վերայ պատուհաս Տեառն հասեալ իցէ : ” — “ Ուղիղ ասցեր՝ Առփիա՝ ” ասաց Մովսէս որդի իմ : “ և ոմն ՚ի հնոց գեղեցիկս յանդիմանէ զայսալիսի բարս չարասէր՝ ՚ի ջանալ գեղջուկ առն քերթել զՄարսիաս . * որոյ մորթ՝ պատմէ առակ , գլխովին մաշկեալ էր յոյլմէ : Ունդ զայս , զգիտեմ եթէ վիճակ տառապեալ առնս այսորիկ այնպէս վատթար իցէ՝ որպէս

* Մարսիաս Փոխւգացի՝ էր անուանի փողահար . որ ՚ի վէզ կոչ չեալ զԱպողոն չաստուած երած շտութեան , զաշին եղին մորթա զերծ առնելոյ զյաղթեալն : Ապողոն յաղթող դատեցաւ ՚ի ընակչաց Նիսայ , և կապեալ զիեղճ Մարսիաս ՚ի ծառոյ , էղերծ զմորթ նորա :

երեւեցուցանէ հայր մեր : Ո՞չ է մեզ պարտ դաւ-
տել զգացողութենէ այլոց՝ մերովս զգացմամբ
եթէ էաք ՚ի տեղի նոցա : Որքան մըին և երեւեցի
մեզ բոյն խլըդան, սակայն բաւական լուսաւոր հա-
մարի կենդանին այն զիւր բնակրան : Եւ՝ զշմա-
րիան խոստովանիլ, միտք առնս այսորիկ պատշա-
ճեալ երեին վիճակի իւրում . քանզի՝ ոչ երբէք
տեսի զոք առաւել աշխոյժ քան զնա ՚ի սերկեանս
աւուր, յորժամ զսուցատրէր ընդ քեզ : ” Այս
ասացաւ առանց իրիք դիտման . բայց և այնպէս
զարթոյց զշառագնութիւն իմն, զոր գուն գործեաց
նա թաքուցանել կեղծեալ ծիծաղաւ . հաւաստե-
լով նմա՝ եթէ հազիւ հազ միտ եգեալ էր ասու-
թեանց նորս . սակայն հաւատայր՝ լեալ նորա եր-
բեմն երեւելի այր : Փոյթն՝ զոր կալաւ նա արդա-
րացուցանելոյ զանձն, և շառագնութիւնն՝ ցոյցք
իմն էին ընդ որս ՚ի ներքուստ ոչ հաւանեցայ,
սակայն սանձեցի զկասկածանս իմ” :

Որովհետեւ ակնկալէաք գալստեան կալուածա-
տեառն մերում ՚ի վաղիւ, չոքաւ ամուսին իւմ կազ-
մել զկարկանդակս մսոյ որսոյն . Ո՞վսէս պարապէր
ընթերցման, այն ինչ ես ուսուցանէի զփոքրկունս,
դատերքս ևս նոյնպէս զբաղեալ երեւէին . և առ-
ժամանակ մի նշմարեցի զնոսս եփել զիմն առ հը-
րով : Կարծեցի ՚ի սկզբան օգնէին մօր իւրեանց,
ըսոյց ծանոյց ինձ Դիկ յունկանէ, թէ կազմէին
զշպարս երեսաց : Բնդ ամենայն տեսակս շպարուց
չնդարոյս իմն ներհակութիւնս ունէի . քանզի զի-

Թէի թէ՝ փոխանակ օգուտ տալոյ տգեղացուցանէին
զգոյն։ Ա ասն որոյ՝ սակաւ առ սակաւ մերձեցուցի
զաթոռ իմ՝ առ վառարանն, և կալեալ զկրակա-
հանն՝ որպէս եթէ առ ՚ի ուղղել զայն, պատահ-
մաբար՝ ըստ երևութին, շըջեցի զբաղադրութիւնն
ամենայն. և կարի անազան էր յայնժամ սկսանել
՚ի նորոյ։



ԳԼՈՒԽ Եւ

ՀԱՇՎԱՄ ՔԱՂԱՔԻ ՆԿԱՐԾԳՐԵԱԼ ԹԱՇՋՐԱՄԻՏՏԻ
ԱՆԳԱՄ ՈՒՍՑԻՆ ԼԻՆԵԼ ԶՈՒԱՐՃԱՑՈՒՑԻ-
ԶԴԻՇԵՐ ՄԻ ԿԱՄ ԵՐԿՈՒՍ։

ԵՐԵՒԻ այդ եղեւ՝ յորում ընդունել ունէաք
զկալուածատէը մեր, գիւրին եղիցի երեակերպել
զհանդերձանս՝ որք սպառեցան ՚ի ցոյց վայելցու-
թեան։ Ա ակաբերեսցի ևս թէ ամուսին իմ և գլո-
տերքս սփռեցին տարածեցին զպճնազարդ փետուրս
իւրեանց առ այս վախճան։ Երեւ Փարոն թառն-
հիլ ընդ ինքեան զայլ բարեկամն ևս երկուս՝ ըզ
մատրանապետ իւր և զկերակրող։ Բազմաթիւ սպա-
սաւորաց իւրոց հրամայեաց քաղաքավարութեամբ
իմ՝ երթաւ ՚ի մերձակայ պանդոկն, այլ սակայն ա-
մուսին իմ՝ առ ցնծութեան սրտին, պնդեաց կե-
րակրել և զամբնեսին զնասա, որոյ վասն՝ իմացեր,

տանջեցաւ գերդաստանն ողջոյն զերիս եօթնեակա
առ յապայ : Որովհետեւ հարեանցի իմն յիշեալ
էր Պարոն Բռչէլ յանցեալ աւուր, թէ ինսամա-
խօսութիւնս առաքեալ էր ասպետն առ Օրիորդն
Վիլմօթ՝ նախկին սիրուհին Գէորգայ որդւոյ իմայ,
թուլացուցանէր այս մեծաւ մասամբ զիսնդութիւնն
յընդունելութեան նորա : Աակայն՝ գիտուած իմն
թեթեացոյց մասամբ իւիք գշտութն, քանզի՝ մի ոմն
՚ի հանդիսականաց յիշելու ըստ գիտաց զանուն նո-
րա, գիտեաց Պարոն Յատոնհիլ երկմամբ, եթէ
չգիտէր երբէք զայլ ինչ առաւել անտեղի՝ քան
կոչել զզարհուրատեսիլն գեղեցիկ : “Քանզի՝ թող
ինձ տգեղանալ, եթէ ոչ և նոյնպէս հաճեցայց ընդ
տիկինն՝ զոր ընտրեցից լուսով ձրագի զանդակատան
ու և իցէ բարձր եկեղեցւոյ :” Ի՞նդ այս բան ծի-
ծաղեցաւ ինքն, նոյնպէս և մեք, կատակք մեծա-
տան միշտ յաղթական են : Օլիվիա ևս չկարաց
զուսպ ունել ՚ի շնչելոյ՝ բարձրաձայն ըստ բաւա-
կանին առ լսելի լինելոյ, թէ ձոխ էր նա յոյժ
գուարձախօսութեամբ :

Յետ կերակրոյ՝ հրաւիրեցի ըմպել ՚ի հաստա-
տութիւն եկեղեցւոյ . այսր մասին շնորհակալ եղե
զինէն մատրանապետն, յայտնելով եթէ եկեղեցին
էր մի միայն տիրուհին ցանկութեանց իւրոց : “Ե՞՞ի
Պյունգ, ասա անեկեղծաբար,” ասաց ասպետն սովորա-
կանպերձութեամբ իւրով : “Համարեազեկեղեցի՝ զոյժ-
ման տիրուհին քոյ՝ զգեցեալ ՚ի թեղանիս սպիտակ
ըեհեղոյ ՚ի միոյ կողմանէ, և զՕրիորդն Ասփիա՝

առանց բեհեզդյ ՚ի միւսմէ , ընկ ո՞րն առաւել հա-
շէիր : — “Աներկբայ ընդ երկոցունց ևս .” ասաց
մատրանապետն : — “Ուղիղ ասացեր՝ Պյունկ” գար-
ձոյց ասպետն . “Քանզի՝ խեղբեսցէ զիս բաժակս ,
եթէ չփնաղագեղ աղջիկն չարժիցէ բոլոր խորամանկ
քահանայութեանց արարչութեան . զի զի՞նչ են
տասանորդք և զիւտ չարութեանց , եթէ ոչ հնա-
րագիտութիւնք և ատելի խարէութիւնք . և հաս-
տատել կարեմ փաստիւք : ” — “Խնդրեմ հաստա-
տեսցես ,” գարձոյց Առվակս որդի իմ . “և կարծեմ
կարող եղէց ես զգէմ ունել քո : ” — “Բարւոք է
պարն ,” ասաց ասպետն . որ՝ խկոյն փչելով ըզ
ծուխն ՚ի գէմն նորա , ակնարկի արար միւս բազ-
մականաց պատրաստել զմեզ ՚ի կատակն : “Եթէ
վլան հանդարտ առարկութեան իցես՝ պատրաստ եմ
ես ընդունել զհրաւէր քոյ : Եւ նախ՝ ձեռնարկու-
թիւնք քոյ վերաբանութեամբ իցեն արդեօք՝ թէ
տրամաբանութեամք : ” — “Ճեռնարկութիւն իմ ե-
ղիցի բանաւոր փաստիւք : ” գուշեաց Առվակս , ու-
րախացեալ յոյժ արձակութիւն գտանելոյ առ ՚ի
վիճաբանել : “Բարւոք է ուրեմն ,” կրկնեաց անդ-
րէն ասպետն , “և նախ առաջին , յուսամ ոչ ուրաս-
ցիս՝ թէ որ էն՝ է . եթէ ոչ շնորհեսցես ինձ զայդ ,
ոչ յառաջեցից առաւել : ” — “Պնդէր ոչ ,” գար-
ձոյց Առվակս . “կարծեմ կարող եմ շնորհել զայդ ,
և օգուտ ես քաղել անտի : ” — “Հուսամ ևս ,” գար-
ձոյց միւսն , “որ շնորհեսցես՝ թէ մասն փաքքը է քան
զբոլորն : ” — “Ո այդ ես շնորհեմ : ” ասաց Առվակս :

“զի արդար է և իրաւոցի ՝” — “Յուսամ,” ասաց ասպետն . “ոչ ուրացիս՝ եթէ երկու անկիւնք եռանկեան՝ հաւասար են երկուց ուղիղ անկեանց :” — “Ոչինչ առաւել պարզագոյն կարէ լինել,” դարձոյց միւսն , շուրջ հայելով սովորական մեծաբարոյութեամբ իւրով . — “Բարենք է ,” գոչեաց ասպետն՝ իսօսելով յոյժ արագութեամբ : “առաջարկութիւնքն այսպէս որոշեալ , անցանեմ նկատելթէ աղխաղլսումն ինքնագոյութեանց յառաջելով՝ ի փոխագարձ կրկնապատկութեամբ համեմատութեանց , արտադրէն ընականաբար զառաջարկական տրամախօսութիւն , որ մասնաւորապէս հաւաստէ թէ՝ էսութիւն հոգևորութեան մարթ է վերաբերել առերկրորդ ստորոգութիւն :” — “Կաց , կաց ,” ասաց միւսն , “չնդունիմ ես զայդ : Կարծես դու՝ հեզութեամբ յանձն առեց զայդիսի այլափառ վարդապետութիւնս :” — “Ո՞նչ ե՞նչ ,” գոչեաց ասպետն իրևե զայրացեալ . “ոչ յանձն առնուցուս : Արապատասխանի այսմ միայնոյ պարզ հարցման : Ուղիղ կարծես զԱրիստոտէլ , յորժամ տսէ թէ՝ յարաբերողքն են յարաբերեալ :” — “Անե րկբայ .” դարձոյց միւսն , “Ուրեմն՝” ասաց ասպետն , “պատասխանեան իսկոյն որում առաջարկեմս : Արդեօք ըզ վերլուծական քննութիւն առաջնոյ մասին ձեռնարկութեանս՝ յերկրորդում ասութեան անկատար դամս , թէ յասութեանն փոքրում . և տուր՝ ասեմ , զպառձառս քոյ իսկոյն :” — “Հատակատն ասացից” ասաց Առողսէս , “ոչ կարեմ ուղղապէս հասու լիւ

Նել զօրութեան ձեսնարկութեանց քոց . այլ՝ եթէ
վերածեցի այն յեղակի առաջարկութիւն, կար-
ծեմ յայնժամ պատասխանի գոյշէ . "— " Ա պարմն, "
ասաց ասպիտն . " յոյժ հնազանդ ժառայ եմ քոյ .
տեսանեմ զի կամիս զիս պատրաստել զառարկու-
թիւնս խմացութեամբ հանդերձ : • Քաւ լիցի՝ պա-
րմն, հաստատն ասացից՝ տիր հզօր ես դու վասն
իմ : " Քարոյց այս արդեամբ զծիծաղ ընդդէմինդէ
Անվականաց, որ նստէր մի միայն տիսուր պատկերն
ի բոյլս զուարթ երեսաց և ոչ իսկ արտասանեաց
զվանդ մի մինչ ի վաղձան խրախճանութեանն :

Այլ՝ թէպէտ այս ամենայն չետուն ինձ հաճու-
թիւն ինչ, սակայն ընդ Օլիլիա զայլազգ իմն կա-
լան զներգործութիւն . որ՝ սխալմամբ համարեցաւ
զայն զուարձաբանութիւն, որ լոկ գործ իմն էր
յիշողութեան, Ա ասն որոյ՝ համարեցաւ զնա այր
գերազանց . և որ միանդամ խորհեցի թէ որպիսի
զօրաւոր նիւթք են վայելուչ ձև՝ շքեղ հանդերձք .
և հարստութիւն յայնպիսի աստիճանի, հեշտեաւ
ներեսցէ նմա : Թէպէտ և իրօք ագէտ էր Պարոն
Թառնհիլ, բայց և այնպէս խօսէր հեշտեաւ . և
կարէր վարժ Ճոխաբանել ի վերայ հասարակ նիւ-
թոց զրուցատրութեան : Չեն ինչ զարմանք ու-
րեմն, թէ սյսպիսի կատարելութիւնք յաղթա-
նակեցնեն ի վերայ յօժարամսութեան աղջկան միո՞յն
որ 'ի գաստիարակութեան ուսեալ էր 'ի համարի
ունիլ զերեցթ իւր, որոյ վասն և յարգել դայ-
լոցն :

Յետ մեկնելոյ նորա՝ դարձեալ 'ի խորհուրդ
մնաք 'ի վերայ արդիւնաւորութեանց գեռահասակ
կալուածատեառն մերոյ : Արովհետեւ ուղղէր միշտ
զնոյեցուած և զբանս իւր առ Օլելիա, այլ ոչ
ես երկբայեցաւ՝ եթէ նա էր առարկայն՝ որ պատ-
ճառէր զգալուստ նորա առ մեզ : Եթ ոչ խել նա
գժուարէր յոյժ ընդ անմեղ կատականս եղքօր իւ-
րոյ և քեռ՝ առ այսորիկ աղազաւ : “Ես մանա-
ւանդ՝ Դժեբորայ խել երեէր բաժանորդ լինել փա-
ռաց աւուրն, և հրձուէր ընդ յաղթութիւն գլո-
տերն՝ որպէս եթէ իւր լինէր : “Եթ արդ՝ սիրե-
լիդ իմ,” ասաց ցիս, “պարտ է ինձ արդարապէս
խոստովանիլ՝ զի ես էի որ ուսուցի դստերաց իմոց
քաջալերել զսէր կալուածատեառն մերում : Անէի
ես միշտ զմեծամութիւն իմն, և աեսանես արդ զի
ուղիղ էի : Քանզի ա գիտէ զի՞նչ ելս ունիցի այսու”
“Այս արդարեւ ո՞վ գիտէ զայդ,” դարձուցի ես
հառաչմամբ, “յիմմէ կողմանէ չեմ յոյժ հաւան ընդ
այդ : և առաւել հաջէի ընդ աղքատի բարեսիրի,
քան ընդ այս չքեղ աղնուական՝ հարտութեամբն
իւրով և անհաւատարմութեամբն . քանզի՝ հաւատան
ինձ, եթէ իցէ նա որպէս կասկածիմն, ոչ ոք
խառնակրօն կարիցէ երբէք առնուլ զմի ի մանկանց
իմոց :”

“Իրաւի՞ հայր, ” ասաց Առովսէս, “կարի խիստ
ես յայս կը քանզի ոչ երբէք մեղադիր լիցին նմա
Երկինք վասն խորհրդոցն, այլ գոլծոց : Ամէն
մարդ ունի զհազարս թէւր խորհրդոց, որք յառ-


Նե՞ն 'ի նմա՝ առանց զօրելոյ նորա 'ի խավանել
զայնս : Գուցէ համարձակապէս մոտածելն զկրօնէ,
յակամայս է ընդ առնս այսմիկ, վասն որոյ՝ եղեալ
թէ սղալ իցեն կարծիք նորա, այլ՝ զի անենդ
սրտիւ հլու է ի հաւանութեան իւրում, չէ պարտ
մեղադիր լինել նմա վասն յանցանացն, քան քա-
ղաքապետի անպարիսպ քաղաքի՝ որ պարտաւորեսցի
տեղի ապաւինի մատուցանել ասպատակող թըշ-
նամըոյ :

“Խրաւ ասես՝ որդեակի՝” ասացի եռ, “բոյց՝ եթէ
հրաւիրեացէ քաղաքապետն զթշնամին անդ, իրաւ-
ամբ յանցաւոր դտանի . և սոյնգունակ է միշտ
ընդ այնոցիկ, որք գիրկս արկանեն սխալանաց +
ԱՌութիւնն ոչ է ի հաւանութեան փորձոց, զոր
տեսանեն, այլ ի կոյր մնալն բազմաց փորձոց որ ըն-
ծային : Ա ասն որոյ՝ թէպէտ սղալ կարծիք մեր
ակամայ եղիցին 'ի կերպանալն, այլ զի կամաւ-
թիւ լիւալ լինիմք կամ' անվոյթ լինիմք ՚ի կերպա-
ցուցանելն զնոսա, արժանի եմք պատժոյ վասն մո-
լութեան՝ կամ' անզոնման վասն յիմարութեան մե-
րումրւ”

Վկաւ արդ ամուսին իմ խառնիլ ՚ի խօսակցու-
թիւն, այլ ոչ յառարկութիւնն. յիշեաց եթէ բա-
զում արք խոհականք՝ մեզ քաջաճանօթք, խառ-
նակրօնք էին, և բարի լծակիցք . և գիտէր զկա-
տարեալ աղջկանց ոմանց, որ զհերիք իսելս ունէին
դարձուցանելոյ զիւրեանց այր : “Եւ ո գիտէ՝ սի-
րելիք իմ” յաւել ասել, “զի՞նչ Օլեվիա մար-

թասցի առնել : Ապրէ աղջիկն ասել զբազում՝ բանս
'ի վերայ ամենայն նիւթոյ, և ըստ գիտութեան
իմում, հմտացեալ է քաջ ի հակածառութեան :

“Եւ ոստի իցէ նմա ընթերցեալ զհակածառութիւնն սիրելիդ իմ,” ասացի : “Ոչ յուշ ածեմ
եթէ երբէք տուեալ իցեմ նմա զայդպիսի մատեանս,
արդարեւ մեծացուցանես յոյժ զարդիւնս նորա :”—
“Դրաւին ոչ հայրենի,” դարձոյց Օլիվիա, “ըն-
թերցեալ եմ ես զհակածառութիւնս բազում :
Ո՞նթերցեալ եմ զվէճան ի մէջ Ձուռակըմ և Ակու-
էրին, զհակածառութիւնսն Ախարինսըն Արուայի
և վայրենի Ուրբաթուն, և զարդիս պարապեալ
եմ յընթերցանութիւնն հակածառութեան Արօնա-
կան Աիրահարութեանց :”—“Աքաջ լեր,” ասացի,
“Նշան է այդ բարի աղջկան, աեսանեմ յարմարեալ
ես քաջ որսալոյ զհաւատացեալս, և արդ երթ
յօդնութիւն մօր քում ’ի պատրաստել զիարեկան-
դակն սնձոյ :



ԴԼՈՒԽ Բ :

ԱՅ ԻՄՆ ՈՐ ԽՈՍՏԵԱԾ ԶՍԱԿԱՆ ԲԱՐՔԱԾԱԴԱ-
ԹԻՒՆ, ՍԱԿԱԾ ԱՐՏԵՄԻՆ, ԿԱՐէ ԶԲԱՋՈՒՄ :


Ի ՎԱՐԴԻ ԻԻ բարձեալ այց աբոր մել Գյո-
բան Բանչէ, թէնէ ուսկս պատճառաց ինչ սկսոյ

տաղտկանալ ընդ ստէպ ստէպ դարձ նորա, սակայն անմարթ էր ինձ խնայել զբարեկամութիւն և ըդ վառարան իմ՝ ի նմանէ : Արգարե աշխատութիւն նորա առաւել քան դհատուցումն առնէր ընդունելութեան իւրում, քանզի գործէր ժիրաժիր ՚ի միջի մերում : և կամ ՚ի մարզագետնի կամ յորայս խոտոյ, ՚ի գլուխ ընթանայր : Բաց աստի՛ ունէր ևս միշտ զգուարձացուցիչ ինչ ասել, որ թեթևացուցանէր զլաստակս մեր, և էր միանզամայն այնպիս այլանդակ, և սակայն այնպէս հանձնարեղ, զի սիրէի, ծիծաղէի և կարեկցէի նմա : Ո՞ի միայն դըժկամակութիւն իմ ընդ նմա՝ ծագէր ՚ի մասին յօժարութեան նորա առ կրտսեր դուստր իմ: անուանէր զնա ընդ կատակս՝ զիւր փոքրիկ սիրուհի, և յորժամ զնեաց իւրաքանչիւր գատերացս զգոյդ ժապահինաց, նորինն չինաղազոյն էր : Ո՞չ կարէի հասու լինել՝ եթէ զիարդ օր յաւուր քաղցրանայր ընաւորութիւն նորա, աճէր և կատարելութիւնն, և պարզմութիւն նորա զգենոյր զգերագոյն կերպարանս հանձնարոյ :

Պ նտանիք մեր ճաշեցին ՚ի դաշտի, և բազմեցաք կամ մանաւանդ անկաք մեք շուրջ զթեթևազոյն խորտկօք, սփուեալ զնողոնն ՚ի վերայ սիղոյ, այն ինչ Պարոն Բառչէլ զուարթացուցանէր զիսնջոյսն: Յառաւելութիւն բերկըութեան մերոյ, սարեակէք երկու՝ կացեալ դէմ ընդ դէմ ՚ի վերայ ցանկապատաց, խօսէին ընդ իրեարս, ընտանի թռչունն կարմրալանչ եկեալ առնոյր զիշըանս հացի ՚ի ձեռաց

մերոց, և ամենայն շնչիւն երեկը իրբե զարձագանդ
անդորրութեան : “Ո՛չ կարեմ երբէք բազմիւ զայս
օրինակ,” ասէ Առփիա, “առանց յուշ ածելոյ
զերկոսին սիրահարմն՝ զորս այնպէս քաղցրութեամբ
նկարագրէ Գևի . որք կարծէցան ՚ի կենաց ՚ի գիրկո
իրերաց : Այնպէս սրտառուց իմն զոյ ՚ի նկարա-
գրութեանն, զի հարիւրից ընթերցեալ եմ զայն
նորանոր զմայլմամբ : ”—“Ուստ կարծեաց իմոց : ” ա-
սաց որդին իմ : “ամենաչքնաղ ազդուութիւնքն
յայնմ ստորագրութեան՝ յոյժ ստորեազոյն են քան
զոր ընթեռնումք յԱսմա և ՚ի Գալաստիայն (Օվե-
դիոսի : Բանաստեղծն Հռովմայեցի լաւ ևս հաս-
կանայ զկիրառութիւն գիմագրութեան . և ՚ի վերայ
այներ ձեռոյ և ճարտարութեամբ ՚ի կիր առելոյ՝ ա-
մենայն ոյժ ազդուութեանն կախեալ կայ : ”—“Ուի-
տելի է,” ասաց Պարոն Բռչէլ, “զի բանաստեղծքս
երկոքին զորս յիշատակէքդ՝ միապէս հանգանա-
կեալ են ՚ի մուժանել զանհարազատ ոճս բանից
յանցնիւր հայրենիս իւրեանց . ծանրաբեռնելով
ազդուութեամբ զտողս իւրեանց ամենայն : Արա-
գիկ փոքրու ոգւոց՝ յոյժ գիւրին գտին օրինակ
առնուլ ՚ի թերութեանց նոցա, և բանաստեղծու-
թիւնն Անդղիական՝ ըստ այնմ որ առ վաղձան
ինքնակալութեան Հռովմայ : ոչ այլ ինչ է զար-
դիս՝ քան թէ բաղադրութիւն իմն Ճոխ պատկերաց,
առանց դարանաց կամ կապակցութեան . թել իմն
ազդուութեանց՝ որ ընտիր ընծայեն զԾնչիւնն, ա-
ռանց յառաջ տանելոյ զմիտն, Այլ թերես՝ տիւ-

կե՞ն , մի՞նչ ստղուանեմ ես զայլս , իրաւացի գա-
տեսցի՝ եթէ պատեհութիւն տացից և նոցա հա-
տուցանել ինձ զփխարբէնն . և արդարեւ՝ զայս գի-
տողութիւն արարի ըսկ առ ՚ի առիթ գտանել ցու-
ցանելոյ հանդիսականաց զտաղերդութիւն իմն , որ
որ միանգամ և թերութիւնքն իցեն , կարծեմ զէթ
ազատ է յայնոցիկ զորս յիշատակեցիս :



ՏԵՂԵԲԳԱԽԹԻԿՆ

“**ՊՐԵՐՁ** հեղահոգի անապատական ,
Եւ մնացելոյս ինձ առաջնորդեա .
Ուր այն ճրադ հովտի խըրախուսական ,
Ճիւրասէր լուսովին հըրաւէր կարդայ :

“**ՔԱՆԴԻ** աստ անսէր և կորած շըջիմ ,
Կըթուցեալ քայլիւք և ոտիւք տարաամ .
Ասպարէզն անհուն թուի աշաց իմ ,
Երկայնիւ և ես որչափ և գընամ :

“**ՅԵՄԸՆ** կաց՝ որդեակ ,” ճգնաւորն ասէ ,
“Փորձելոյ ըզմութըն վտանգաւոր .
Օ ՚ի այդ նենգաւոր տեսիլըդ թուչէ ,
Կախարդէլ ըզ քեզ կորըստեան ՚ի խոր .

“**ԱՅԼ**՝ ահա, անտուն կարօտաւորին՝,
Խմ դուռըն բաց է դեռ մինչև յայս ժամ։
Եւ ըզբաժին խմ՝ թէպէտ աղքատին՝,
Կուիրեմ սիրով ես յօժարակամ։”

“**Դարձ**՝ ուրեմն վստահ, լեռ բաժանաւոր,
Օ որ խուզ խմ ձօնէ գիշերիս յայսմիկ։
Վնկողին պրտուեայ, ուտեստ չափաւոր,
Օրհնութիւնըն խմ և քուն խաղաղեկ։”

“**Ող հօտը** թափառ՝ արձակ ՚ի դաշտի,
՚ի զենման սպանուդ ոչ դատապարտեմ։
՚ի օրութենէն՝ որ ինձ ողորմի,
Ուսանիմ վարժեալ ողորմիլ նոցին։”

“**ԱՅԼ** ածեմ զուտեստ անմեղագլելին,
՚ի գալարագեղ կողէրից լերին։
Վախաղ բանջարով և պտղովք առլի,
Եւ ջուր անապակ ջինջ աղքերակին։”

“**Օ՛ն,** գարձ ուխտագնաց՝ մնուա հոգ ըստ խա,
Բոլոր երկրածին հոգք են սնուտի։
Վարդ լոկ սակաւում կարօտի յաստիս,
Եւ ոչ սակաւուն ձիգ կարօտասցի։”

Հանգոյն նուրբ ցողոյ՝ յերկնից իջելոյ,
՚ի գէտ անկան բանք նորա կակուզ.
Կյոնարհեալ օտարն պարկեշտաբարոյ,
Հետևեալ գնայ ՚ի նորին ՚ի խուզ։”

Հեռի՛ յաննշան՝ յամայի վայրի՛ ,
 Բընակարանլն կանգնէր առանձին .
 Ապաստանարան աղքատ դըրակցի՛ ,
 Եւ մոլորազնաց օտարականին :

Չինչ կուտեալ համբարք ընդ իւր ցած յարկաւ ,
 Պահանջէին տեան ըզ հոգողութիւն .
 Դուռըն փոքրագոյն բանալով փակաւ ,
 Ո անվընաս ամոլսն ընկալաւ խիոյն :

Եւ արդ՝ որ էր ժամ' խոնջեալ ամբոխին ,
 Բ զ հանգիստ առնուլ երեկոյական .
 Յարդարեալ ըզ հուր միայնակեցին ,
 Եւ խրախուսեաց ըզ հիւրն տրամական :

Եւ սըմիուեաց նմա ըզ միջերս բուտոց ,
 Եւ ստիպեաց ըզ նա խնդագին դիմօք .
 Եւ ներհուն ի մէպլս վարուց Արբոց .
 Բ զ դանդաղլոտ ժամն կարճէր բընգնէրօք :

Եցն զուարթութեամբ շուրջ շուրջանակի ,
 Փորձէ ըզ խաղս իւր փոքրիկ ձագ կատուի .
 Կանչէ ծզըիդ առ վառարանի ,
 Թաղոչի ճարճատմամբ փայտկոյտ խարուկի :

Այլ ոչինչ կարէր վշտի օտարին ,
 Հրապոյր ընծայել առ յանկուցանել .
 Քանզի տրտութիւն ժանի էր ի սրտին ,
 Եւ արտասուք խկ սկըսան քամիլ :

Տեսեալ զվեշտ նորա միայնակեցին՝

Որ նոյնպէս Ճ'նշեալ իսկ էր ի ցաւոյ,
"Եւ ուստի," ասաց, "տժբաղդ պատանի,
Եւ ուստի իցէ այս ցաւ սրտի քոյ:

"Քանի՞ հերքեցար ի լաւագոյն տանց՝

Վ տարանդի լեալ շրջես յակամոյս,
Յաւի՞ս առ անդարձ բարեկամութեանց,

Կամ՝ արհամարհեալ սիրոյ սակս լաս:

"Վ այ ինձ, բերկրութիւն՝ զոր բազդ ընծայէ,
Ե սին սնոտի և շոյտ չքանայ.

Եւ որ ըզ սնոտիս յարդիւ մեծարէ,

Քան ըզ նոսա ևս անպիտանանայ:

"Եւ զի՞նչ սին անուն Քարեկամութեան,
Քան թովչութիւն իմն կախարդիչ ի քուն.

Ատուե՛ր . հետեւող փառաց՝ ձնխութեան,

Բայց լըքեալ ըզ հէքն թողու ի լալիւն:

"Եւ Աէրն՝ յաւէտ ևս պիտակագոյն ձայն,
Արդեան սիրունաց խաղ զբօսանաց.

Անտես ի յերկրի, կամ՝ գտեալ միայն

'Դ ջեռուցանել ըզ բոյն տատրակաց :

"Ամօթ է՝ տղայ, հանգա զվիշտ քոյին,

Եւ մերժեա ի բաց ըզ սերըն՝" ասաց,

Բայց՝ մինչդեռ խօսէր՝ շառագնութիւն իմն

Պ զսիրազոհ հիւրն ըզ նորին մասնեաց :

Ափշեալ տեսանէ գեղեցկութիւն նոր ,
 Պարզել փոյթ ընդ փոյթ աչաց ակներե .
 Հանգոյն վաղորդեան գունոց երկնաւոր ,
 Երյնապէս պայծառ՝ նոյնալէս կարձատե :

Շառագնոտ երեսք և կուրծք ուռուցիկ ,
 Բզ վոփոխ ծըփանս շարժեալ յուղեցին .
 Արտնակ օտարն՝ կուսան գեղեցիկ
 Յայտնեալ երեխ . համայն սիրային :

Եւ՝ “Ա՛խ . ներեա բիրտ օտարականի ,
 Եւ անօգնական հիքոյ .” ասաց նա .
 “Ո՞յ ոտ անսառը կոխել յանգնի ,
 Արանօր Երկինք և դու ընդ նմա :

“ԱՅԼ հաճեալ գթա յաղջիկ մի անմիտ ,
 Օ որ մոլորեցոյց սիրոյն բռնութիւն .
 Ար զիետ հանգստեան , այլ՝ յաւէտ եղիտ
 Աղջեկից ինքեան դյուսահատութիւն :

“Յայնիոյս Տայն գետոյ հայր իսր բնակէր ,
 Ու եր մմծագանձ բարգաւաճ իշխան .
 Եւ ստացք նորս ողջ ինձ անկանէր ,
 Օ ի ես եի իւր զաւակըն միայն :

“Կորզել զիս նորուն ՚ի քնքուշ զրկաց ,
 Անթիւ բազմութիւն խնդրակաց եկին .
 Որք դովելին զիս առ գեղ շնորհաց ,
 Եւ սուտ կամ իրաւ սիրահարէին :

“Յամին ժամ ամբոխ վարձուոր եկեալ :

Ճոխ նուիրանօք ջանալ ջանային :

Յայլոց մէջ՝ մատաղ իշխվին խոնարհեալ :

Բայց ոչ ըդ սիրոյ ձառեաց բնաւին :

“Յած և անպահոյք հանդերձ զգեցեալ :

Ոչ իշխանութիւն և ոչ գանձս ուներ :

Հանձար և արդեամբք միայն զարդարեալ :

Ասկայն ինձ և այս ամենայն ինչ էր :

“Բացումն կոկոնի յայդ առաւօտին :

Մաքուր ցօղ երկնից ջինջ անսպական :

Օ ոչինչ մաքրութիւն յայտնել կարէին :

Կմանող լինել սուրբ մոտաց նորայն :

“Յօղն՝ կոկոնըն ՚ի ծառոյն վերայ :

Յողդյողդ հրապուրօք փայլին շողողին :

Խւր էին հրապոյրքն, սակայն՝ վոյ ինձ, վայ :

Յողդյողդումն նոցին էր իմըս բաժին :

“Բանզի՝ տակաւին յողդյողդ հնարիւք :

՚Ի զուր փորձէի ձանձրացուցանել :

Եւ՝ մինչ սիրտ իմ խոց էր նորին կրիւք :

Պարձէի ՚ի ցաւ նորին անարգել :

“Մինչ սրտաբեկեալ յիմ քամահրանաց :

Եթող զիս յիմում ՚ի հպարտութեան :

Եւ՝ մեկուսացեալ ՚ի խորս անտառաց :

Օ անխուլ մեռաւ անդ ՚ի յառանձնութեան :

“Պակայն իմ է վիշտ և իմը յանցանք ,
Եւ քաջ հատուցէ կեանք իմ փոխարէն .
Խնդրեցից նորին զառանձնութեան վանք ,
Եւ տարածեցայց ուր որ նա հանգչէն :

“Եւ անդ անտերունչ՝ անյոյս՝ առանձին .
Ընկողմանեցայց յանոյշ քուն մահուան .
Օի՝ այդպիս լուվին արար վասն իմ ,
Եւ այդպիս առնել ես եմ պարտական :”

“Մի արասցէ Տէր .” Ճգնաւորն զուեալ ,
Եւ ի գերկը իւր ըզ նա ընդգրիէ .
Հիացած սիրունն դարձաւ սպառնալ ,
Ընդգրկօղ անձըն իւր լուվինայ է :

“Դարձ Անջէլինա , իմ մրշտ սիրելին ,
Օ մայլարարդ իմ դարձիր տեսանել
Ըզ քոյդ ընդերկար կորուսեալ լուվին ,
Առ սէր և առ քեզ անդրէն դարձ առնել :

“Թոք այսպիս ըզ քեզ առ սրտիս ունել ,
Մոռանալ ի սպառ զիմ հոգ ամենայն .
Լու մեզ բնաւ՝ բնաւ չանջատիլ ,
Խմ կեանք և որ ինչ իմ է ամենայն :

“Բաւ լիցի մեզ այդ . յայսմիկ վայրկենէ ,
Ճ՛շմարիտ սիրով կեցուք միասին .
Այս թառաչ՝ որ քոյդ զանկեղծ սիրտ հերձէ ,
Հերձցէ և ըզ սիրտ լուվինայ քոյին :”

Յընթերցման տաղերգութեանն, երեք Առիխա
 խառնել զաեսիլ խանգաղատանաց ընդ հաւանու-
 թեան իւրում: Աակայն անոգորութիւն մեր փու-
 թով շփոթեցաւ 'ի ճայնէ հրացանի առընթեր մե-
 րում: և 'ոյն հետայն տեսաւ այր մի ոստնուլ 'ի
 ցանկապատէն, առնուլ զորսն սպանեալ: Որսասէրս
 այս էր ասպետին մատրանապետ, որ հարեալ էր
 զմի 'ի սարեկաց որ այնչափ ախորժ զուարձացուցա-
 նէր զմեզ: Այսպիսի բարձրաձայն բուրիւն, և
 այսքան մերձ, շրտուցին զզստերս իմ: և կարէի
 նշմարել՝ զի Առիխա յերկեղի անդ արկեալ էր
 զանձն 'ի զիրկս Պարսն Բուշէլայ պաշտպանութեան
 աղաղաւ: Յառաջ մատեաւ պարսնն և ներումն հայ-
 ցեաց՝ սակա խոռվելոյն զմեզ, յայտ առնելով՝
 թէ ոչ զիտէր սյսչափ մերձ լինել մեր: Ա ասն
 որոյ՝ բազմեցաւ առընթեր կրտսեր գտաեր իմոյ.
 և ըստ որինի որսորդաց, մատոյց նմա զոր սպա-
 նեալն էր յառաւօտու: Աամէր նա չնորունել, սո-
 կայն դաղտնի նիշ 'ի մօրէն խկոյն հաւանեցոյց զնա
 ուղղել զաղալութիւն իւր և ընդունել զպատարագն,
 թէպէտե սուզ ինչ գմիկամակութեամբ: Ամնուինն
 իմ: ըստ սովորութեան, եցոյց զամբօրտաւանու-
 թիւն սրտին շնչմամբ. զիտելով թէ զերեալ էր
 Առիխա զմատրանապետն, որպէս և քոյր նորա
 զասպետն. բայց սակայն՝ առաւել հաւանականաբար
 կասկածէի ես եթէ սէր նորա բենեւեալ էր յայլ
 իմն առարկայ: Պատգամաւորութիւն մատրանապե-

աին էր զեկուցանել մեղ՝ թէ հանդերձեալ էր
Պարսն Յօ..առնհիլ զերաժշտութիւն և զխնջոյս, և
 յառաջագրեալ 'ի նմին զիշերի լուսով լուսնի
 ընծայել մատաղաւուրց բամբշացն զհանդէս կաքաւու.
 'ի վերոյ փոքրիկ մարգագետնոյն առ գրան մերում:
 “Եւ չէ մարթ ինձ ուրանալ, թէ շահասիրութեան
 աղագաւ առաջին եղէ 'ի բերել զայս պատգամ.
 քանզի ակն ունիմ 'ի պարգևի մասին, պատուիլ
 ձեռամբ Օրիորդ Առիւա ինձ ի պարակցութիւն:
 Որում պատասխանի արար գուտոր իմ, եթէ չունէր
 ինչ ընդդիմութիւն՝ թէ կարողանայր առնել զայն
 պատուով: “Այլ կայ աստ,” յաւել ասել, “պարոն
 ոմն” հայելով ի Պարսն Բռչէլ, “որ ինձ ընկերակից է լեալ ի գործառնութեան զօրն ողջոյն, և
 անկ է նմա բաժանորդ լինել ի զբօսաննն:” Ընորհ
 կալաւ զնմանէ Պարսն Բռչէլ յաղագս մատգրու-
 թեանցն, սակայն զիջաւ մատրանապետին յիրա-
 ւունս իւր, յաւելլավ՝ թէ պիտէր ինքեան ի նմին
 զիշերի հատանել զհինդ մզոնաչափ ձանապարհ,
 հրաւիրեալ ելով յընթրիս հնձոց: Հրաժեշտ նո-
 րա փոքր ինչ զարմանալի թուեցաւ ինձ, և ոչ
 իսկ կարէի 'ի միտ առնուլ թէ՝ զիարդ կրտսեր
 գուտուրն իմ կատարեալ՝ նախամեծար լնտրէր զայր
 մի սնանկացեալ՝ քան զնա որոյ մե ծագոյն էին
 յոյժ ակնկալութիւնք: Այլ որպէս մարդիկ կա-
 րողաղոյն են ի ձանաչել զարդիւնս կանանց, նոյնպէս
 և տիկնայք շատ սնգամ ձշմարիտ գատողութիւնս
 առնեն զմենջ: Երկաքանչեւր սերք կարգեալ ե-

րեին իրրե զդէտս 'ի վերայ միմնանց, և յարդարեալ պէսպէս ընդունակութեամբք՝ պատշաճելովք ՚ի քննութիւն իրերաց :



ԳԼՈՒԽ Թ :

ԵՐԿՈՒ ՏԻԿՆԱՑՔ ԵՐԵՒԵԼԻՔ ՆԵՐԱԾԵԱԼՔ :
ԳԵՐԱԳՈՅՆ ԶԱՐԴԱՐԱՆՔ ԵՐԵՒԻՆ ՄԻՇՏ
ՎԵՐԱՆՃԱՑՆԵԼ ԶԳԵՐԱԳՈՅՆ ՍՆՈՒՆԴ :

ՀԵՇԴԻ ԹԷ ՄԵՂՆԵցաւ Պարոն Բռչէլ և
Հաւանեցաւ Առփիխ պարել ընդ մատրանապետին,
յորժամ վազելով եկին փոքրիունք իւր աղդ առ-
նել մեզ՝ եթէ եկեալ եր ասպետն բազմութեամբ
ընկերակցաց : ՚Ի դարձի՝ գտաք զկալուածատէր
մեր ընդ երկուց սպասակալ պարնաց, և երկու
մատաղաւուրց բամբշաց զարդիւք փողիտղելոց, զո-
րոց ծանոյց մեզ լինել տիկնայս յոյժ մեծարուս և
ազնուականս քաղաքին : Դէպ եղեւ զի աթոռք
մեր չբաւականացան եկելոցն ողջոյն. բայց Պարոն
Թռաւնհիլ իսկոյն առաջարկեաց՝ զի իւրաքանչիւր
պարոն նստցի ՚ի գոդ միոյ ՚ի տիկնաց : Այսմ պար-
զապէս հակառակիցի, թէև տհաճութիւն երեւ-
եցաւ ՚ի դէմն ամուսնոյս : Առաքեցաւ ուրեմն
Վովչէս փոխ առնուլ զզոյդ մի աթոռոց, և զի
պակասէին տիկնայք ՚ի թիւ լսման շնուական պա-
րուց, չոքան ընդ նմա պարնայքն երկոքին ՚ի խըն-

դիր ընկերաց : Աթոռք և ընկերք վաղվաղակի հանդերձեցան : Դարձան սպարնայքն ընդ խմա գրացի Վյլամբօրօյի վարդագեղ գտտերաց՝ պերճացելոց կարմիր գաղաթնակապիւք : Բայց ձախող իմն պատահար չեղեւ կանխատեսեալ . թէպէտ աղջկունք Վյլամբօրօյի համարեալ էին ամենալաւ կաքաւիչքն ի վիճակի մերում, և տեղեակ էին թոյլ և շջապոյտ պարուց, սակայն շննականին անձանօթ էին միանգամայն : Օ առաջինն շփոթեաց զմեզ այս . բայց և այնպէս՝ յետ սակաւ մի մշման և քարշման, յառաջ խաղացին կայտութեամբ : Երաժշտութիւն մեր բաղկանայր յերկուց ջութեակաց, սինգաւ միավ և թմբկաւ : Փայլէր լուսին պայծառութեամբ : Պարոն թառնհիլ և երէց դուստր իմ առաջնորդ եղեն պարուն՝ 'ի մեծ բերկրութիւն զննականաց . քանզի լսելով գրացեաց որ միանգամ անցք անցանէին, եկեալ խռնեցան զմեօք : Այնքան շնորհ և կայտութիւն երեէր 'ի շարժման աղջկան խմբյ, զի ոչ կարաց ամուսին իմ զուսպ ունել առ 'ի չոսյտնելոյ զհը պարտութիւն սրտին . հաւաստի առնելով՝ զի երեխայն փոքրիկ՝ թէպէտ այնպէս յաջողութեամբ շարժէր, զամենայն զքայլափոխան յիւրմէ անտի էր դողացեալ : Տիկնայքն քաղաքի անհնարին գուն զործեցին այնպէս թեթեաշարժք լինել, սակայն առանց յաջողութեան : Լողացին, թաւալիցան, թալկացան և կայթեցին, այլ ամենայն 'ի զուր . հայեցողքն՝ այս խոստացան թէ գեղեցիկ էր, բայց Վյլամբօրօյ դւացին յիշեաց՝ թէ ոտք Լիվե գըս-

տերս այնպէս քաջայարմոր ընթանային ներդաշ
 նակութեան՝ որպէս զզտրկէ նորա : Յետ երկարելոյ
 կաքաւուն իբրև զժամ' մի , տիկնայքն երկոքին՝ առ
 երկիւղի ցրտահարութեան , շարժեցին վաղձան զը-
 նել պարուն : Այս ի նոցանէ՝ կարի իմն բիրտ ե-
 ղանակաւ յայտնեաց զիամս խոր առ այս վաղձան ,
 յորժամ' ասաց թէ՝ “Չճգի արև գլեւուն առէիւն էր եղեաւ
 չըդան” : Ի դարձի մերում ’ի տուն՝ դտաք պատ-
 րաստեալ հրամանաւ Պարոն Ռաւունհիլոյ՝ բարե-
 վայելուչ ցուրտ ընթրիս : — Օ բուցատրութիւն
 արդեան առաւել ծանրաբարոյ էր քան զառաջինն :
 Տիկնայքն երկոքին տիրապէս ստուեր արկին ըզ
 դտաերօք իմովք . քանզի ոչ զայլ ինչ բարբառէին
 բաց ’ի գերաստիճանաց և զգերաստիճանեալ ան-
 ձանց . ընդ այլոց նորամուտ բանից , որպիսի են
 պատկերք , ախորժակ , Շէքսպիր և երաժշտական
 տուփք : Այս անգամ' մի կամ' երկու յոզի ևս
 հարին . զմեզ զգալուբար , սպլտացուցանելով զեր-
 դումն . այլ այդ երեկո ստուգազոյն նշան զերա-
 զանցութեան նոցա . (թէ և յետ այնորիկ իմացեալ
 եմ , զի երգնուլն բարձեալ է ’ի սովորութենէ մի-
 անդամայն :) Շ քեզաշուք զարդարանք նոցին քօղ
 արկանէին զա և իցէ խոշորութեամբ զրուցատրու-
 թեան նոցա : Ջուկէր դտաերաց իմոց զգերազանց
 կատարելութիւն նոցա նկատել նախանձու , և՝ որ
 անվայելուչ երեկո , ծայրալիր զերազոյն մննդեան
 եղանակին վերադրիւր : Բայց քան զամենայն կատա-
 րելութիւնս նոցա , յօժարութիւն տիկնացն էր զիս

բաղանցագոյնն : ԱՌէ ՚ի նոցանէ նշանակեաց՝ եթէ
 Օրիորդն Օլիվեա սակաւիկ մի առաւել զփորձ
 առնոյր զաշխարհի , առաւել ևս կատարելագոր-
 ծիւր : Յոր յաւել և միւսն թէ՝ լոկ ձմեռն մի ՚ի
 քաղաքին զփոքրիկ Ասիիա իւր փոխէր յիմն այլ :
 Արտի մտօք հաւանեցաւ ամուսին իմ ընդ երկա-
 քանչիւրան , յաւելլով եթէ չպոյր այլ՝ որում ա-
 ռաւել անձկայր , քան տալ փոքրիկ աղջկանց իւրոց
 զմիոյ ձմերան զվայելչակերպութիւն : Աչ կարացի
 զուսպ ունել չպատասխանել այսմ , թէ՝ մնունդ
 նոցա արդէն զերազանց էր աստիճանի իւրեանց , և
 թէ՝ առաւել կատարելագործութիւնն պիտոյանայր
 և եթ ծաղքալի առնել զչքաւորութիւնն նոցա . և
 ընծայել զախորժակ իմն առ հեշտութիւն՝ որում
 զերաւունս չունէին : “Եւ զի՞նչ է այն հեշտութիւն ,”
 ասաց Պարոն Թառնհիլ , “որում չիցեն արժանի
 ստանալոյ , որք ունին զայնչափ ՚ի կարի իւրեանց
 առ պարզեելոյ : Որչափ առ իս ” յաւել ասել ,
 “հարստութիւնն իմ բաւական մեծ է . սէր , ազա-
 տութիւն և հեշտութիւն են սկզբունք իմ . այլ՝
 անէծ զիս , եթէ կէս ստացուածոց իմոց՝ կարէր ըզ
 հեշտութիւնն պարզեել չքնաղագեղին իմոյ (Օլի-
 վիայ , եղեցի իւր . և փոխարէն այնորիկ զմի միայն
 շնորհ զոր ինդրէի լինէր յաւելուլ զանձն իմ ՚ի
 բարութիւնն : ” Աչ այնչափ օտար էի աշխարհի՝
 մինչ տգէտ լինել թէ այս էր քաղաքավալար ոճն
 պարտակերոյ զժորհութիւնն ամենանարդ առաջար-
 կութեան , բայց զուն եդի սանձել զգժգմնութիւն

իմ, "Պարո՞ն," գոչեցի, "գերգաստանն՝ որում զիշանիս շնորհա առնել ընկերակցութեամբ քով, այնպէս քաջ ձանաչն զարժմանաւորութիւն պատռոյ, որպէս դու : Փորձ իմն առ ՚ի վեասել այնմիկ, զհետ բերցէ զելս անհնարին լտանգաւորս : Պատիւն՝ պարո՞ն, է մեր միտյն արդեան ստացուած, և զվերջին գանձոյդ այդմանէ սլիտի մեզ յաւէտ ևս զիսյթ ունիլ :

Վ աղվաղակի զեղջ եղե ինձ սակս սաստկութեանն՝ որով բարբառեցի, իբրև ազնուականն այն՝ կալնլով զձեռանէ իմմէ, երդուաւ՝ թէ զովէր զեռանդ իմ, թէպէտ և ոչ հաճէր ընդ կասկածանս, "Որչափ առ այժմեան ակնարկութիւն քոյ," շարունակեաց, "Ակայեմ՝ զի օչինչ այնքան հեռի էր 'ի սրտէ իմմէ քան զայդպիսի խորհուրդ : Քառ լիցի, ամենայն հրապարանօք երփնում քեզ, աւաքինութիւնն որ պէտս ունիցի կանոնաւոր պաշարմանն ոչ է ըստ իմումն ախորժակի երբէք, քանզի ամենայն յաջողութիւնք իմ ՚ի գլուխ տանին յառաջնում անդ յարձակման :

Տիկնայքն երկոքին՝ որք կեղծէին տղէտ լինել մնացելոցն, անհնարին խոժոսեալ երևեցան ընդ վերջին այս կերպ համարձակութեան, և սկսան ըզ յոյժ խոհական և ծանր տրամախօսութիւնս ՚ի վերայ առաքինութեան . յայսմ ամուսին իմ, մատրանապետն, և ես իսկոյն միաբանեցաք, և ասպետն ինքնին բերաւ ՚ի վաղձանի խոստովանիլ զտիսբութիւն իւր յաղաղս նախկին յանցանացն : Խօսեցաք զբերկըութեանց ժուժկալութեան, և զպայ-

Ճառութենէ մտաց անարատից : Այս քան քաջ հա-
ճեալ էի , զի վոքը կունք իմ արթուն պահեցան
քան զսովորական ժամանակ իւրեանց՝ առ ՚ի օգուտ
քաղել յայսքան բարելաւ զրուցաբանութեանց :
Պարոն Ռառնհիլ անցաւ զանցաւ քան զիս , և
եհարց՝ եթէ որոք ընդդիմութիւն ունէի աղօթս
մատուցանելոյ : Ծնծութեամբ գիրկս արկի առաջար-
կութեանն , և զայս օրինակ անցաւ գիշերն ամենան-
դորր եղանակաւ . մինչ ՚ի վաղձանի սկսան համա-
խմբեալքն խորհել զգարձ առնելոյ : Ռուէր թէ
յոյժ դժուարաւ հրաժարիլ կամէին տիկնայքն ՚ի
գատերաց իմոց , որոց վասն զյատուկ իմն յղացեալ
էին զսէրս . և ՚ի միասին աղերս արկին շնորհել ին-
քեանց զբերկութիւն ընկերակցութեան նոցա ՚ի
տուն իւրեանց : Զեռն ետ ասպետն ՚ի խնդիրն , և
ամուսին իմ յաւել զաղացանա իւր + աղջկունքս ևս ևս
ականէին առ իս՝ որպէս թէ ցանկային զնաւլ : Յայսմ
վարանման զերկուս կամ զերխս բաղբաղայս յօդե-
ցի , զոր փութով ջրեցին դատերք իմ . մինչ ՚ի
վերջոյ պարտաւորեցայ բացարձակաբար բացասել .
որոյ վասն չգոյր այլ ինչ՝ քաւ ՚ի խոժոռ գիմաց
և հակիրճ պատասխանեաց ընդ վաղուեան օրն
ողջոյն :



ԴԱՅԻԼՈ ԺԱ

ԳՈՒՆ ԳՈՐԾԵՆ ԲԱՏԱՆԻՔՆ ՀԱՄԵՄԸՑԻ
ՎԵՐՆԵԳՈՒՆԻՑ ԻԿՐԵԱՆՑ ՇՊԵՑ
ՏԱՄԱԿԱՑ ՅՈՒԺԱՄ ՆԿՐՑԻՆ ՎԵՀ
ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ՔԱՆ ԶԻՒՄԵԱՆՑ
ԱՍՏԱՑԱՆ :

ԱՅԻ- սկսաւ երեիլ որ ընդերկար և բազմաշ-
խատ վարդապետութիւնք իմ ամենայն՝ ի վերայ
ժուժիալութեան, սլարդութեան և բաւականու-
թեան, բոլորովին խոտան եղն։ Պատիւն զորս
դերագոյնք քան զմեզ ցուցին առ մեզ ՚ի նորոյ,
զարթուցին զհպարտութիւնն՝ զոր ննջեցուցեալ էի,
բայց ոչ տարագրեալ։ Պատուհանք մեր ուրեմն լի
եղն՝ ըստ առաջնոյն, չպարմամբք պարանոցի և
դիմաց։ **Ա**րեն համարեցաւ թշնամի մորթոյ՝ ար-
տաքոյ դրան, և կրակն՝ աղականիչ գեղոյ ՚ի տան։
Դիտեաց ամուսին իմ՝ եթէ յառնել կանիսաւ
ընդ առաւտն ինսանէր աչաց դստերաց իւրոց, թէ
բանի կալ յետ ճաշոյն կարմրեցուցանէր զքիթս
նոցա, և հաւաստի արար զիս՝ թէ ոչ երեէք այն-
պէս սպիտակ երեէին ձեռք, որպէս յորժամ ոչինչ
առնէին։ **Ա**սն որոյ՝ փոխանակ աւարտելոյ ըզ

շալիկս **Պէտրդայ՝** տեսանէաք արդ զնոսա ՚ի ՚նոր
ձեւ փոխարկել զՀին սնվուսս իւրեանց, կամ պա-
րապեալ յասղնէգործութիւն: **ԽւեղՃ՝** (**Օրիորդքն**
Պյատիօրօյեան՝ զուարթ ընկերակիցք ՚նոցա ՚նախ-
կին, ՚ի բաց մերժեցան իրեւ զանարդ ընտելակիցս + և
զրուցատրութիւնն բովանդակ վազեաց ՚ի վերայ
գերաստիճանաց և գերաստիճանեալ անձանց: ընդ
պատկերաց, ախորժակաց, **Շէքսպիերայ** և երա-
ժշտական տիիոց:

Բայց՝ համբերութեամբ տանէաք այսամ ամենայնի,
եթէ չէր կախարդ կիւսի միոջ եկեալ ամբառնալ
զմեղ ՚ի կատար վեհութեան: **Ընդ երեսումն թուի**
Ոիբիլայիս, եկին վազելով դատերք իմ վասն մի
մի շիլինաց, առ ՚ի կնքել զձեռս ՚նորա արժաթով:
Խրաւն ասել, վաստակեալ էի ՚ի յար խոհական
լինելոյ, և ոչ կարացի ժխտել. զի ախորժէի տե-
սանել զեռսա ուրախ: **Խտու ուրեմն մէն մի շի-**
լինգ անցնիւրոց. թէ և վասն պատուոյ տան մե-
րս պիտի ՚նշանակել, թէ ոչ երբէք եղեն ՚նոքա
առանց փողոյ. վասն զի ամուսին իմ տայր ՚նոցա
հանապազ ունել զմի մի գիննի, բայց ոչ առանց
խիսո հրամանաց՝ չփոխանակելոյ երբէք: **Հետ**
վակեալ կալոյ ընդ կախարդին առ ժամանակ մի՝
կարդացի ՚ի դարձի ՚նոցա ՚ի տեսութենէ դիմացն,
զի յուսացուցեալ էին ՚ի մեծ իմն: “**Աղէ՝** գըս-
տերքդ իմ, զի՞արդ յաջողեցաք: **Ասա ինձ՝** ի իվեր
ետ քեզ կախարդն զարժէս փողոյ միոյ:”—“**Հա-**
ւատա՛ հայրիկ, ” ասէ ալջիկն, “կարծեմ բան ունէ

նա ընդ ոյնպիսոյ ուրումն՝ որ չէ ուղիղ։ քանզի
տիրապէս հաւաստեաց ինձ ամուսնանալ ընդ Առ-
պետի ումնմն՝ 'ի միջոցի պակաս քան երկոտասան
ամոց ։՝—“Հապա՝ դռւ Առփի, դռւ զորպիսի այր
ունիս գտանել,”—“Հայր,” պատասխանի արար,
“ինձ խոստացաւ նա զիշխան մի՛ հուպ զինի ամուս-
նութեան քեռ իմոյ ընդ Առպետին ։՝—“Օ ի՞նչ,”
ասացի, “այդ է բոլորն՝ զոր գտանել ունիք վասն
երկուց շիլինաց ձերոց։ Միայն մի իշխան և մի
Առպետ վասն երկուց շիլինաց։ Վկ անմօռութեանցդ.
կարէի ես խոստանալ ձեզ զի՞ւազաւորադն մի և
Պարբար վասն կիսոյ մասին փողոյ ձերոյ։”

Հետաքրքրութեանս այս նոցա, հետեւեցան յոյժ
կարեոր ելք. սկսաք արդ կարծել՝ թէ որոշեալ
էաք յաստեղաց մերոց առ վեհագոյն աստիճան, և
արդէն ճաշակէաք զքաղցրութիւնն ապագայ մերում
մեծութեան։

Պէտք եղեւ հազարիցս նշանակել, և հարկ է զի
դամ մի ևս նշանակեցից, թէ ժամքն՝ զորս անցու-
ցանեմք ուրախ նպատակօք զառաջեաւ, առաւել
քերկրեցուցիչ են քան զայնոսիկ՝ որք պատկին վայ-
ելմամբ։ Յառաջնում անդ՝ կազմեմք զկերակուրն
ըստ ախորժակաց մերոց, իսկ 'ի վերջնում՝ ընու-
թիւնն իսհագործէ վասն մեր։ Անհնար է երկ-
րորդել զշարս զուարձալի ցնորից՝ զոր յարուցաք
առ մեր զբոսանս։ Ականէաք ընդ բաղզո մեր ու-
պէս միւս անդամ ամբառնալ, և զի ժողովրդագե-
տութիւնն ողջոյն հաստատէին, թէ հարեալ էր

առավեան ՚ի սէր դստեր իմոյ , սիրահարեցաւ սա խակապէս ընդ նմաւ . քանզի հրապուրեցին զնա ՚ի կիրսն : Ծայսմ ախորժելի միջոցի՝ տեսանէր ամուսին իմ զերազս ամենաբարեբաղզս , զորս պէտ յանձին կալոյր պատմել մեզ յամենայնում առաւօտու մեծաւ ծանրութեամբ և ճշգութեամբ : 'Ի մլում զիշերի՝ էր դադաղ և խաչաձև ոսկերս , նշան մօտալուտ հարսանեաց . յայլում ժամանակի երեակայեաց զծոցս դստերաց իւրոց լցեալս փողով , հաւաստի նշան փութով խճողելոյ ոսկւով : 'Եսին խել աղջկունք ունէին զգուշակութիւնս իւրեանց : ՞ Օ զային զօտարոտի համբոյրս շրմանց , տեսին զօղամանեակ ՚ի ճրազի , ոստեան քսակք ՚ի հրոյ , և անկեղծ սիրացոյցք զօղեցան ընդ ըմզանակօք թէյոյ :

Ա'երձ ՚ի վաղձան շաբաթուն՝ տոմսակ մի ընկաւլաք ՚ի տիկնացն երկոցունց . յորում՝ յետ ողջունի յուսոյին տեսանել զհամայն ընտանիս մեր յեկեղեցւոջ ՚ի կիւրակէի : Ա ասն որոյ ընդ ողջոյն առաւօտ շաբաթու՝ նշմարեցի զամուսին և զդստերս իմ մտեալ ՚ի զաղտնածածուկ խորհրդածութիւն ՚ի միասին , և մերթ ընդ մերթ հայելով առ իս այնպիսի հայեցուածովք՝ որ յայտնէր զնոր ինչ դաւադրութիւն : Անկեղծ ասել մեծ կասկածանս ունէի՝ թէ անտեղի իմն առաջարկութիւն պատրաստէին երեկոյ շքեղութեամբ ՚ի միւսում աւուր : Յերեկոյի սկիզբն արտրին գործողութեանց իւրեանց կանոնաւոր եղանակաւ , և յանձն էառ ամուսինս

առաջնորդ լինել պաշարմանն ։ Յետ արքման թէյ-
ոյ՝ երբ ՚ի զուարթութեան երևեցայ, զայս օրինակ
սկիզբն կալաւ : “Ի՞նձ այսպէս թուի՛ Շառլըս
սիրելի՞դ իմ, ՚ի վաղիւ յոգունք եղիցին յեկեղեց-
ւոջ ՚ի պատուաւոր անձանց : —“Թերես և այդպէս
սիրելի՞դ իմ,” դարձուցի ես, “այլ չպիտի քեզ
տագնապիլ ընդ այդ. ունիլ ունիցիս զքարող մի՝
եթէ եկեսցեն նոքա կամ ոչ : ”—“Այդմ և ես
ակն ունիմ,” դարձոյց նա, “բայց կարծեմ՝ սիրելի,
սլիտի մեզ՝ որչափ և հնար իցէ, վայելչաբար ե-
րեիլ անդ. քանզի ո զիտէ թէ զի՞նչ դէպք ան-
ցանիցեն : ”—“Այսազգուշութիւնք քոյ,” պատաս-
խանեցի, “յոյժ գովելի են : Ա այելուչ վարք և
կերպարանք յեկեղեցւոջ են՝ որք զմայլցուցանեն
զիս : Պարտ է մեզ լինել ջերմեռանին և խոնարհ,
զուարթ և հանգարտ : ”—“Այն,” պատասխանեաց,
“զայդ և ես զիտեմ, բայց կամիմ նշանակել՝ զի
ըստ կարեորին պատշաճապէս գնասցուք. ոչ ըստ
սարասի գծոցն շուրջ զմեօք : ”—“Արդարեւ՝ սիրե-
լի՞դ իմ,” դարձուցի ես, “զնոյն և ես զնայի ա-
ռաջարկել : Պատշաճ կերպն երթալոյ այն է՝ զի
գնասցուք անդ կանուխ որքան և հնար իցէ, առ
՚ի ժամ ունել խոկալոյ նախ քան զժամբու-
թիւնն : ”—“Ի՞ւ Շառլըս,” ընդ միջեաց նա, “ըս-
տոյդ է ամենայն զոր ասեսք, բոյց ոչ իմ՝ սրտի
խորհուրդ : Ա իտք իմ է զի երթիցուք անդ շքե-
ղապէս : Գիտես զի եկեղեցին հեռի է երկու մը-
ղոնք, և վկայեմ՝ զի ոչ կամիմ տեսանել զազ-

կունա իմ տարժանիլ աշխատութեամբ մինչ ՚ի մէջն
եկեղեցւոյ , քրտնաթոր և կարմրեալ ՚ի ճեմելոյ ,
և յանդիման լինելով ամենեցուն՝ որպէս եթէ եւ-
կեալ յարշաւանաց ծխոյ : Արդ՝ սիրելիդ , այս է
առաջարկութիւն իմ . Են մեր երկոքին արօրագիր
երիվարք . մտրուկն՝ որ այս ինն ամ՝ է առ մեզ ,
և ընկեր նորա Բլակըըրի՝ որ ոչ է գործեալ ինչ
երկրային յայս անցեալ ամիս : Երկաքանչչւրքն
ևս յօրացեալ են և պղերգ , Ռնդէր ոչ և նոքա
վաստակիցերն ընդ մեզ : Եւ թնդ ինձ ասեալ քեզ ,
յորժամ յարգարեսցէ զնոսա Ո՞ովսէս սակաւիկ մի ,
ըստ բաւականին ախորժելի երևեսցին ՚ի տեսու-
թիւն :

Այսմ առաջարկութեան հակառակեցի ես , թէ
հետիւտա ընթանալ քսան անգամ առաւել պատ-
շաճաւոր լինէր՝ քան զայնպիսի անպիտան տաւարս ,
թէ Բլակըըրին սպիտակածիր էր աչօք և տրմու-
զին պակասէր ագի , թէ երբէք չկրթեցան երասա-
նակաւ , այլ և զհարիւրաւոր չարութիւնս ունէին
վատս . և թէ միայն մի թամբ և համետ ունէաք
՚ի տանն : Բայց և այնպէս՝ դիմագրութիւնքս այ-
սոքիկ յաղթահարեցան ամենայն . մինչ ՚ի վաղձա-
նի պարտաւորեցայ զհաւանութիւն տալ : ՚Ն միւ-
տում առաւտօտու նշմորեցի զնոսա ոչ սակաւ զբա-
զեալս ՚ի կուտել զայն ամենայն հարկաւորս՝ որ
սպիտոյասցի առ շահատակութիւնն , բայց զի տեսի
որ ժամանակի բան էր , գնացի ես յառաջագոյն
յեկեղեցի , և խոստացան նոքա հետեւ ինձ վազ-

վաղակի : Ապցի ես զժամ մի ՚ի բհմբին՝ սպասելով
 գալստեան նոցա , բայց ակնկալութիւն իմ ՚ի գերե
 ելանելով՝ պարտաւորեցայ սկիզբն առնել . և կա-
 տարեցի զժամբրդութիւնն , ոչ առանց վշտագնու-
 թեան ընդ չերեումն նոցա : Առաւելաւ այս , յոր
 ժամ կատարեցաւ ամենայն և ոչինչ երեսյթ ըն-
 տանեացս : Ա ասն որոյ դարձ արարի ընդ ճանա-
 պարհ հեծելոց , որ հինգ մղոն էր շուրջանակի .
 այն ինչ ճանապարհ հետեւակաց՝ երկու միայն . և
 իբրև եղէ ՚ի կիսաճանապարհի , նշարեցի զհանգէսն
 յուշիկ յուշիկ խաղալ յառաջ գէպ յեկեղեցին .
 որդի , ամուսին և երկու վոքրիկունքս ամբարձեալ
 ՚ի վերայ միոյ երիվարի , և երկու աղջկունքն ՚ի
 վերայ միւսոյն : Հարցի զպատճառ յապաղմանն .
 սակայն վաղվաղակի հասկացայ ՚ի հայեցուածոյ
 նոցա՝ որ հանդիպեալ էին հազարից Ճախորդու-
 թեանց առ ճանապարհաւն : Օ առաջինն չեին կա-
 մեցեալ երիվարքն շարժիլ ՚ի դրանէ , մինչ բա-
 րեքնոյթն Պարոն Բըո չէլ ստիպեալ էր զնոսա
 գաւազանաւ իւրով ընթանալ իբրև զգրկաչափս
 երկերիւր : Յետ որոյ խզի փոկ համեստի ամուսնոյս ,
 և ստիպին զկայ առնուլ առ ՚ի նորոգիլ զայն :
 Ապա՝ մի յերիվարէն հաստատէ ՚ի մտի իւրում
 անշարժ միալ առ տեղեաւն . և ոչ հարուածք և
 ոչ գուրգուրմանք համոզել կարեն ՚ի գնալ :
 Յայսմ տիտուր կացութենէ նոր սկսանէր սթափիլ
 յորժամ գտի զնոսա . այլ՝ տեսանելով զամենայն
 ինչ անվեաս , խոստովանիմ զի արդեան դառնու-

թիւն նոցա ոչ տհաճեցոյց զիս յոյժ այնու զի
մատուցանէր ինձ զդիպող առիթս ապագայ յաշ-
թանակութեան, և ուսուցանէր դստերացս առաւել
խոնարհութիւն :



ԳԼՈՒԽ ԺԷ :

ՏԱԿԱԲԻՆ ՀԱՍՏԱՏԵՆ ԸՆՏԱՆԻՔՆ 'Ի ՄՑԻ
ԲԱՐՁՐ ՈՒՆԵԼ ԶԳԼՈՒԽ ԻՒՄԵԱՆՑ :

Ի ՄԻՒԱԹԻՄ աւուր՝ լինելով տօն հրեշ-
տակապետին Միքայէլի, հրաւիրեցաք յերեկոյին
ճայթեցուցանել զկաղինս և խաղալ զայլ ճարտա-
րութիւնս 'ի Փլամբօրոյ գրացւոյ մերոյ : Յետին
վշտագնութիւնն խոնարհեցուցեալ էր զմեզ առ
սակաւիկ մի, ապա թէ ոչ մերժէաք հաւանակա-
նաբար զայսպիսի հրաւէր արհամարհանօք . թոյլ
տուաք ուրեմն անձին մերում լինել ուրախ : Աազ
և կարկանդակէք համեստ գրացւոյ մերոյ համեզ
էին . և գարեջուրն՝ ըստ դատման ամուսնոյս իսկ՝
որ քննիչ էր այսպիսեաց, անուշակ յոյժ : Արդար
է, եղանակ պատմաբանութեան նորա չէր այնչափ
անոյշ : Կարի երկայն և յոյժ անախորժ և բոլորն
ինքեան վերաբերելի, և արդէն տասնիցս ծիծա-
ղեալ էաք յառաջ . բայց և այնպէս քաղցրացաք
առ անդամ մի ևս ծիծաղել :

Պարսն Բռաչէլ՝ որ մի էր 'ի կոչնականաց, աշխորմէր միշտ տեսանել զանմեղ զբօսաննս խաղուց, և կարգեաց զաղջկունս և զմանկտիս 'ի խաղ աչքակապութեան: Ամուսին իմ ևս հրապարեցաւ խոռնիլ յըզքօսաննս: որ բերկրեցոց զիս յոյժ, մոտածելով թէ դեռ ոչ էր յոյժ պառաւեալ: Մի և նոյն ժամ դրացին իմ և եռ ՚ի զնին կայաք, ծեծաղէաք ընդ անձնիւր ձեռնածութիւն և զովէաք զճարտարութիւն մեր ՚ի տիս մանկութեան: Պառչակութիւնք հետևեցին սմա, որում հարցք և պատասխանիք յաջորդեցին. և ՚ի վաղճան ամենայնին նատան որսալ զմաշիկ: Որովհետեւ ամեն մնարդ տեղեակ չէ լինելոց այսմ հինօրեայ խաղու, հարկաւոր եղիցի նշանակել՝ զի միաբաներալքն յայս խաղ կազմն զբոլորակ շուրջանակի ՚ի վերայ գետնոյ, բաց ՚ի միոյ միոյնոյ՝ որ կանգնէ ՚ի միջի. որոյ զործ է ըմբռնել զմաշիկ, զոր բոլորեալքն անցուցանեն առ իրեարա ընդ զստիւք. փոքր ինչ նման կեցի ոստոյնանկաց: Կանզի անհեար է կանզնող աղջկան յանդիման լինել բոլորելոցն ամենեցուն միանգամայն, մեծ զեղեցկութիւն խաղուն է հարկանել զնա կընկամբ մաշկին յայնմ կողմանէ, ուստի անմարթ է նմա պաշտպանել զանձն: Այսու օրինակաւ էր զի երէց գուստը իմ կանգնէր շըջապատեալ և թուզեալ, կարմրայեղց, եռանդնալից և գուշելով առ անխարդախ խաղարկութիւն այնպիսի ձայնիւ որ հերիք էր ՚ի խլացուցանել զտաղերզու, յուժամ՝ ու խայտառակութեանս խայտառակու-

թեան, ու ոյլ ոք քան եթէ քաջածանօթ բարեկամք մեր քաղաքին՝ Տիկինն Բւշանէ և Օրեորդն Կառօլինա Ա իւկըմինա Ամելիա Ակէզս մըտին ՚ի սենեակն : Աղքատասցի նկարագրութիւն, վասն որոյ անհարիէ նկարագրել զայս նորոգ գառնութիւն : — Ամհ . աեսանեիլ յայնպիսի երեելի տիկնաց՝ յայնպիսի գռեհիկ կացութեան : Աչ ինչ լաւագոյն ծնանիլ կարէր՝ յայսպիսի անարդ խաղու Պարոն Ֆլամերօրօյի առաջարկութեան : Երեսցաք առ ժամանակ մի հարեալ զգետնի, որպէսթէ տիրապէս քարացեալ առ զարմացման :

Տիկնայքն երկոքին՝ չգտանելով զմեզ ՚ի տան, եկեալ էին այսրէն դհետ մեր . քանզի ոչ կարէին հանգչել առանց խմանալոյ զբնչ գէպք արդեօք արգել եղեն մեզ յեկեզցոյ յանցելում աւուր : Յանձն էառ Օլիվիա լինել ատենաբան մեր, և պատմեաց զամենայն կարճ ՚ի կարճոյ . ասելով միայն, “Անկաք յերկովարէն :” Ընդ որ մեծապէս վշտացան տիկնայքն . բայց խմանալով՝ ոչինչ վնաս եղել ընտանեացն, կարի յոյժ ուրախ եղեն . սակայն հասկանալով՝ եթէ զողցես սպանանեցան յերկիւզէն, անհնարին տիսուր եղեն . բայց լսելով թէ յաւ քուն եղաք ՚ի զիշերի, կարի յոյժ ուրախ եղեն վերստին : Աչինչ զեր անցանել կարէր քան զցոյց բարեհաճութեան նոցա ընդ դստերս իմ : — խոստավանութիւնք նոցա յանցելումն երեկոյի զերմ էին, իսկ զարգիս եռանգաղին : Յայտ արարին զանձուկ իւրեանց և ևս առաւել ամրացուցանելոյ զմտեր-

մութիւնն : **Տիկինն Բլառնէ** յատկապէս՝ հաճեալ
էր ընդ (**Օլիվեա** . **Օրիորդն** կարօլինա **Վիլելմինա**
ամիլիա **Ակէզմն**՝ (քաղցրանայ ինձ տալ ըզ
բոլոր անունն .) մեծապէս ևս յօժարեցաւ ընդ
քոյր նորա : **Պահպանեցին** զգուց ցատրութիւնն ի
միջի իւրեանց , այն ինչ գտներք իսր նստէին լոիկ՝
զմայլեալք ընդ գերազոյն կենցաղաւարութիւն նու-
ցուն : **Բայց՝** որովհետեւ ամենայն ընթերցող՝ որ-
շափ և գծուծ իցէ , ախորժէ տրամախօսութեան
մեծատանց , հանդերձ պարագայիւք վարուց իշխա-
նաց՝ իշխանուհեաց և նշանակրաց , պարտ է ինձ
խնդրել զարձակութիւն յիշելոյ աստանօր զվերջին
մասն առաջակայ զրուցատրութեան :

“**Օ** որ միանեգամ զիտեմ զայնմանէ ,” ասաց (**Օ-**
րիորդն **Պակէզս** , “այս է . որ կարեռը է Ճշմարիտ
լինել , կամ Ճշմարիտ չլինել . այլ այսչափ կարեմ
հաւաստել **Տիկնութեանդ** , որ խուժանն համակ ի
զարմանս էին գրաւեալ . **Տէրութիւն** նորա յամե-
նայն զոյնս յեղափոխեցաւ , **Տիկինն** թալկացաւ ,
բայց **Անպուհն** **Տամլին** մերկանալով զսուր իւր ,
երդուաւ լինել նորա ցվերջին կաթիւ արեան
իւրոյ : ”

“(” ն ,” դարձոյց մեր **Կշխանուհին** , “զայս կա-
րեմ ասել , զի Կշխանուհին չասաց ինձ և զվանդ
մի զայնմանէ . և հաւատամ զի Շնորհք նորա չը-
պահէ ինչ ծածուկ յինէն : **Հաւատամ** այսմ իբրեւ
Ճշմարտի , զի ի միւսում առաւօտու **Տէր** իսր Կառք-
սըն երիցս զոչեաց սենեկապետի իւրում . **Պըրնիւ-**

կան , Պըսնիզան , Պըսնիզան , բեր ինձ ըդ
նշանս իմ :

Այլ պարտ էր ինձ յառաջազոյն յիշել զան-
հընարին անքաղաքավարութիւն Պարսկացելայ ,
որ յընթացս խօսակցութեանն , նատէր զղէմսն դար-
ձուցեալ առ հուրին . և 'ի զբաւ իւրաքանչիւր
պարբերութեան՝ զոչէր “ՓՈՒՉ.” ասացուած իմն՝
որ տհաճեցուցանէր զմեզ զամենեսին , և մասամբ
իւիք թուլացուցանէր զեռանդ զրուցատրութեանն :

“Բաց աստի՛ սիրելին իմ Վիկոս ,” շարունակեաց
Խշանուհին մեր , “չգոյ ինչ յայսմ մասին յօ-
րինակի անդ տաղաջափութեան , զոր Ա արդապեան
Բըսդաք յօրինեաց ՚ի վերայ բանիս ,” ՓՈՒՉ :

“Օ արմանամ ընդ այդ ,” ասաց (Օրիորդն Վիկոս .
“Քանզի գժուարաւ զանց առնե նա զիմիք , որով-
հետեւ զրէ միայն զքօսանաց սակի իւրոյ : Բոյց
կարէ Տիկնութիւն քո շնորհ առնել ինձ տեսու-
թեամբ այնոցիկ :” ՓՈՒՉ :

“Այս սիրեցեալդ իմ ,” պատասխանեաց Խշա-
նուհի մեր , “կարձես դու՝ թէ կրեմ ես զայսպիսի
իրս ընդ իս : Ձնէպէտ և յոյժ ընտիր են արդարե ,
և համարիմ ես զիս փոքր մի գատաւոր այսպիսեաց ,
գէթ զիտեմ զինչ հաճեցուցանէն զիս : Յիրաւի
միշտ ախորժեալ եմ ես ընդ ամենայն փոքրիկ հատ-
ուածս Ա արդապետին Բըսդաքայ + քանզի՝ թո-
ղեալ զոր միանդամ նայն առնե և սիրելի Առնու-
հին մեր 'ի Հանօվը փողցի , այլ ամենայն ար-
տադրեալք ոչինչ են՝ բոյց եթէ անարդազոյնք 'ի

բնութեան . և ոչ խուն մի ՚ գերաստիձաննութեանց
՚ նոսաւ՝” ՓՈԽՉ :

“Հարկ է Տիկնութեան քում,” ասէ միւսն , “ի
բաց թողուլ և զքոյ յօրինուածս ՚ Շահմարանի
Տիկնաց : Յուսամ ասասցես թէ չպոյ ինչ յանար-
դականաց ՚ նմա : Այլ կարծեմ ոչ ևս ունիլ ու-
նիմք յայնմ կուսէ :” ՓՈԽՉ :

“Այս սիրելին ,” ասէ Տիկննն , “գիտես զի ըն-
թերցող և ընկերակիցն իմ թողեալ է զիս՝ առ ՚ի
ամուսնանալ ընդ Ուոչ Օօրապետի , և զի տա-
ռապեալ աչք իմ ոչ ներեն ինձ ինձէն զրել , զհետ
եմ ՚ ժամանակէ հետէ այլում միւսոյ : Ոչ է գիւ-
րին գտանել զքաջայարմար ոք , և արդարե երեւ-
սուն ստերլին առ տարին ստկաւ թոշակ է վասն
քաջուսում և անստղիւտ աղջկան , որ կարասցէ ըն-
թեռնուլ , զրել և ընդերակից լինել . որչափ առ
մանկուն քաղաքին , անմարթ է գտանել զմին առ
սպասահարկութիւն :” ՓՈԽՉ :

“Օայդ գիտեմ և ես ,” դարձոյց Օօրիորդն
Վկէցս , “ի ձեւն փորձոյ : Քանզի յերեցունց ան-
տի ընկերակցաց՝ զոր կալայ ՚ միջոցի կիսոյ տար-
ւոյս , մին ոչ կամեր գործել զհասարակ ինչ գործ
առ ժամ մի յաւուր . միւսն համարեցաւ քսան և
հինգ զիննին առ ամեն շատ փոքր վարձ , և պար-
տաւորեցայ արձակել զերսորդն կասկածելով զչա-
րութենէ իմեքէ ընդ մատրանապետին : Առաքինու-
թիւնն ով սիրելի Տիկնն Բալանէ , առաքինու-
թիւնն անգին է . բայց ուր իցէ գտանել :” ՓՈԽՉ :

Ամուսին իմ՝ ընդերկար ունինգրութիւն էր եւ-
 ղեալ զիսովին այսամ զբուցատրութեան. բայց յա-
 էտ յապուշ հարաւ ՚ի վերջին բանից նոցա. Ե-
 րեսուն ստերլին և քսանըհինգ գիննի առնելին յի-
 սուն ու վեց ստերլին և հինգ շիլին Անգղիական.
 որ բոլորն զողցես մուրանալ երթային, և մարթ
 էր հեշտեաւ ապահովել առ մեզ. Առ վայր մի
 հնարեցաւ իմանալ զհաւանութիւն իմ ՚ի հայեցուա-
 ծոյս. և՝ զշշմարիսն խոստովանիլ, իմ կարծիքն էր
 թէ երկու այսպիսի վիճակք՝ քաջ յարմարեալ
 էին երկաքանչիւրոց գտտերաց մերոց. թանգ զայս
 եթէ ասպեսն զանկեղք սէր ունէր առ երեց դուռ-
 տըր իմ, այս լինէր ճանապարհն յարմարելոյ զնա
 ամենայն իրօք առ բաղդ իւր : Ա ասն որոյ վեր-
 ջաւորեաց ամուսին իմ՝ զի մի զրկիցիմք յայսպիսի
 օգտից առ պակասութեան վստահութեան, և յան-
 ձնն էառ հրապարակախօս լինել ՚ի կողմանէ ըն-
 տանեաց ամենեցուն. “Ակն ունիմ,” ասաց, “նե-
 րեսցէ Տիկնութիւն ձեր իմումն յանդգնութեան :
 Արդարե չունիմք զիրաւունս առ այսպիսի շնորհս,
 սակայն ընականաբար պարտ է ինձ ցանկալ յա-
 ռաջադէմ ընծայելոյ զբանիկունս իմ յաշխարհի : Եւ
 համարձակիմ ասել, երկոքին աղջկունք իմ ընկա-
 լեալ են զվայելու Հրահանկարթիւն և կատարե-
 լութիւն . գոնէ չկարէ շնն ցուցանել զաւադոյն:
 Կարեն ընթեռնուլ, զրել և հաշւել. գիտեն ըզ
 գործածութիւն ասլան՝ չուլալ, վերակար և դոյլ
 ամենայն հասարակ գործ. կարեն ժակոսել, զան-

գուղել և ծոփ գործել . և դիտեն զսուզ ինչ երաւ-
ժշուութիւն . կարեն կարկատել զմոքրիկ հանդերձս
և առջնէնիար յօրինել . երէցն իմ կարէ կտրել ըլ
թուղթ , և կրտսերն ունի զայժ սիրուն կերպ գու-
շակելոյ ՚ի ձեռն նարտի : " ՓՈԽՉ :

Խբրե զբաւեաց զայժ գեղեցիկ հատուած պեր-
ճախոսութեան , տիկնայքն երկոքին նայեցան առ
իրեարս առ վայր մի անմառնչ , երկբայութեան
ձեռլ և ծանրութեան : ' Խ վաղճանի ' Օրիորդն
կարօլինա Ա իշլմինա Ամմլիա Ռ սկէզս հաճե-
ցաւ նշանակել , թէ օրիորդքն երկոքին ըստ կար-
ծեաց զոր կարէր ձեակերպել ՚ի սակաւ ծանօթու-
թենէ անտի , յոյժ յարմարեալ երեէին յայսպիսի
գործառնութիւն . " բայց զործ այսպիսի ' տիկին ' ,
խօսելով ընդ ամուսնոյ իմոյ , " պէտս ունի քաջի
քննողութեան որպիսութեանց , և առաւել ծանօ-
թութեան իրերաց : Ա թէ ' տիկին ' , " յաւել ա-
սել , " կասկածիմ ինչ զառաքինութենէ , զիսոհեմու-
թենէ և զընարազութենէ նացա . բայց զոյ իմն ձե
յայսպիսի իրս ' տիկին ' , զայժ ձե իմն : " ՓՈԽՉ :

Կարի իմն հաւան զտաւ ամնւոին կմ կասկածա-
նաց նորա , յայտնելով եթէ և ինքն նոյնովէս յոյժ
դիւրապատրաստ էր կասկածոտ լինելոյ . սակայն
առաջի արար զմկայութիւն դրացեաց ամենեցուն առ
որպիսութեան . բայց մերժեաց զայժ իշխանուհին
մեր որպէս զաւելորդ , հաստատելով ' թէ հաւա-
նութիւն Ձառնահիլ ազգականի իւրոյ հերիք եղի-
ցի . և ՚ի վերայ այսորիկ յանկուցաք զաղերս մեր :

ԴԱՅԻԼՈ ԺԲ.

ՃԵՍՏԵՏԵՆԼ ԵՐԵՒՏ ԲԱՂԴ ԽՈԽԱՄՀԵՑՈՒՑԱՆԵԼ
ԶԲԵՏԵՆԼՈ ՎԵԿՖԻԼԴԱՑ : ԴԱՅԻՆՈՒԹԻՒՆՔ
ՍԲՏ ԲԱԶՈՒՄ ԱՆԴԱՄ ԸԹԱՏԵԼ ՑԱ-
ԽԵՑՈՒՑԱՆԵՆ · ՔԱՆ ԶԱԴԱՑՍ ԴՍՎԱԿԱՆ :

ԵՐԵՒԻ դարձաք ՚ի տուն , նուիրեցաւ գիշերն
հնարից ապադայ յաղթանակութեան : Պանայր
Դեբորա մեծաւ ուշիմութեամբ գուշկել՝ որ ՚ի
յաղջկանց ունելոց էր հաւանականաբար զբարեգոյն
վիճակ , և զառաւել պատեհութիւն տեսանելոյ ըզ
լաւ ընկերութիւնս : Ա՞ի միայն խոչ յառաջագի-
մութեան մերոյ էր՝ ընկալնուլ զհաւանութիւն առ-
պետին . սակայն՝ ցուցեալ էր նա յարդ զբաղում
փորձս բարեկամութեան , առ ՚ի չերկբայիլ այժ-
մուս : ՚Ի մահճ՚ի իսկ շարունակեաց ամուսին իմ
զնիւթ խօսիցն . “Ազէ , իրաւի՛ սիրելիք իմ Շառ-
լոս , ՚ի միջի մերում , կարծեմ պատուական աւուր
զորք աջողեցաք ՚ի սերկեանս : ”—“Շատ սիրուն ,”
ասացի ես , չզիսելով զինչ ասել : —“Օ ի՞նչ , շատ
սիրուն միայն ,” դարձոյց նա . “Ես կարծեմ շատ
րաւ : Դիցուք թէ՝ աջողեցի աղջկանց առնել ճառ
նօթութիւնս երևելեաց ՚ի քաղաքին : Այսմ վըս-
տահ եմ : զի Լ ոնդոն է մի միայն քաղաքն յաշ

խարհի՝ վասն ամենայն կերպ արանց : ՅՌԱՌԱ զոյս՝
սիրելի, նորանոր բանք պատահին յամենայն ա-
ռուր . և զի տիկնայք երևելիք այսպէս հաճեցեալ
են ընդ դստերս իմ . զի՞նչ ոչ մարդիկ երեւելիք
եղիցին . Անտոնու (Է ՖՀԻ ՏԵ՛ՐԵԴ.) վկայեմ, հաճեալ
եմ յոյժ ընդ Տիկինն Բլառնէ . այնքան յօժա-
րակամու Բայց և այնպէս Օրիորդն Կարօլինա
Վիլէլմինա Ամելիա Վիկտոր գրաւեալ է զջերմին
սիրտ իմ : Այլ դու տեսե՞ր, յորժամ' եկին խօսել
զտեղեաց ՚ի քաղաքին, որպէս խորյն բեեռեցի ըզ
նոսա : Ասա ինձ, սիրելին իմ, չկարծես կատա-
րեցի անդէն վասն մանկանց իմոց : ”—“Այս՝”
դարձուցի ես . չգիտելով չինչ խորհել զայնմանէ :
“Աստուած աջողեսցէ երկոցունց ես ՚ի բարին՝ յայսմ
օրէ ցամիս երիս : ” Այս էր մի յայնց գիտողու-
թեանց՝ սովորակի առնէի առ ՚ի կարծիս տալ ա-
մուսնոյ զխորագիտութենէ իմմէ . քանզի՝ եթէ
յաջողէր աղջկանց, ուրեմն բարեպաշտ ցանկու-
թիւնն էր լցեալ . այլ՝ եթէ ձախողակ ինչ զհետ
գայլը, ուրեմն համարեալ լինէր իբրև զգուշակու-
թիւն իմն : Օ բոյցքս այսոքիկ լոկ յառաջընթաց
էին այլոց մեքենայից . և յիրաւի երկնչէի յոյժ :
Այս չէր ինչ պակաս քան եթէ որովհետեւ
պէտք էր զարդիս զգլուխ մեր սակաւիկ մի բարձր
ունիլ յաշխարհի, պարտ և պատշաճ էր վաճա-
ռել զտըրմուզն հնացեալ զաւուրբք՝ ՚ի մերձակայ տօ-
նավաճառի, և գնել զերիվար՝ որ կարիցէ տանել զմի
կամ զերկուս ըստ պահանջման հարկի, և ցուցանել

զվայիլչութիւն յեկեղեցւոջ կամ՝ յայցելութեան :
 Այսմ պնտագոյնս հակառակեցի ՚ի սկզբան : բայց
 նոյնագէս պնդագոյնս գիմադրեցաւ : Ուրեմն՝ որչափ
 ես թուլանայի . նոյնչափ հակառակորդ իմ զօրա-
 նայր . մինչ ՚ի վաղձանի հաստատեցաւ հրաժարիլ
 յայնմանէ :

«Քանզի յէզս աւուր զտեղի տռնոյր տօնալաւ-
 ձառն , ՚ի մտի եղի գնալ անձամբ . բայց՝ հրազդու-
 րեաց զիս ամսւսին իմ , թէ ցրտահարեալ էի . և
 ոչ ինչ կարէր համազել զինքն թողուլ զիս գնալ
 արտաքս : » «Քան լիցի քեզ , սիրելիդ իմ . Վայ-
 սէս որդի մեր խելօք և բաւականին , և կարէ գը-
 նել և վաճառել շահու . գիտես զի ամենայն տու-
 րեառք մեր մեծամեծք՝ ՚ի նմանէ են յաջողեալ :
 Վիշտ ընդդիմադարձ և դանդաղ , արդեամբք պար-
 տասեցուցանէ զնոսս մինչեւ զին հատանէ : »

Որովհետեւ ունէի զհամարումն ինչ զխոհեմու-
 թենէ որդւոյս : յօժարեցայ ուրեմն վստահանալ
 ՚ի նա զայս գործառնութիւն . և ՚ի միւսում առաւու-
 տու նշմարեցի զքեռս նորա , մեծաւ ինամով
 զքաղեալ պատրաստել զՎավսէս առ տօնալաճառն .
 յապաւելով զհերս , սրբելով զՃարմանքս և փնջա-
 զարդելով զգլխարկ նորա գնդասեղամբք : Վաղ-
 ձան առեալ պաճուճանաց՝ բերկրեցաք ՚ի վաղձանի
 տեսանել զՎավսէս աշտանակեալ ՚ի տրմուղն , ու-
 նելով յառաջոյ զտուփ եղենեայ՝ բերել զհամե-
 մունս ՚ի տուն : Վերարկուն էր յայնմ ասուոյ՝ զոր
 կոչեն որոտումն և փայլակն , որ՝ թէպէտ շատ կար-

Ճացեալ, լաւ էր յոյժ քան ՚ի բաց ընկենուլ: Բաճ-
կոնն էր ՚ի գոյն սաղականաւչի: և զծամնն կտպեալ
էին քորք ՚նորա՝ լոյն և սեաւ ժապաւինաւ:
Օ հետ չոդաք ՚նորա ամենեքին մեք զբազում
քայլս ՚ի դրանէ, աղաղակելով զինի ՚նորա “բարի
բաղդ, բարի բաղդ,” մինչ անհետ եղեւ ՚ի տեսու-
թենէ:

Հազիւ թէ մեկնեցաւ ՚նա, և ահա տաճարապետ
Պարոն Թառանհիլոյ եկն խնդակից լինել ընդ մեզ
առ բարի բաղդ միւ, ասելով թէ լուեալ էր ՚ի
տեառնէ իւրմէ յիշել զանուանս մեր մեծաւ բարե-
բանութեամբ:

Երեէր թէ հաստատեալ էր բարեբաղդութեան
միայնակ չգալ: Ա իւս մի հետեակ ՚ի նոյնոյ տանէ
հետեեցաւ հանդերձ տոմսակաւ առ գտտերս իմ,
յոյտնելով թէ տիկնայքն երկոքին այնպիսի հա-
ճոյական զըսցս ընկալեալ էին զմէնջ ՚ի Պարոն
Թառանհիլոյ, որ՝ յետ փոքունց այլոց կանիա-
քնութեանց, յուսային կատարելապէս բաւարա-
րիլ: “Ա յո՞,” ասաց ամուսինս, “տեսանեմ արդ՝
զի ոչ է դիւրին մուտ գտանել ՚ի գերդաստան երե-
ելեաց ։ բայց յորժամ” ոք առ անդամ մի մասէ,
յայնժամ՝ որպէս Առլուկս ասէ, մարթ է զնալ
և ՚ի քուն լինել:” Ո նդ այս զուարճաբանութիւն՝
որպէս դիտեալն էր, հաւանութիւն ետուն զստերք
իմ բարձրտաճայն ծիծաղաւ: ’Ի կարճոյ՝ այնքան
եղեւ բերկրութիւննորա ընդ այս պատգամաբերու-
թիւն, զի տարաւ արդեամբք զմեռն ՚ի ծոց իւր

և ետ պատղամաբերին զկէս շիլին և մնըկէս պէնս :

(Օրս այս էր օր այցելութեան : Օ հետ սոցա եկն Փարոն Բռուչէլ, որ զայր ի տօնավաճառէն : Բերէր փոքրիանց իմոց զկոճապղպեղեայ կոտապս՝ փողոյ միոյ առ անձնիւր : զոր ամուսին իմ յանձն էսու պահել և տալ նոցա ըստ գասաւցն հետ զհետէ : Եթեր և դատերաց մէն մի տուփ, յորս պահել կարէին զնշխարս կնքոյ, զդեղունչս, զկարկատանս, կամ նաև զիտղերը ունիցին : Ամուսին իմ հասարակօրէն ախորժէր ընդ պայուսակս մորթոյ աքիսի, որպէս զյոյժ բաղդաւորս . այլ այս յետոյ : Տակաւին յարգէաք զՓարոն Բռուչէլ, թէ և տմարդի վարք նորա վերջին՝ մասնաւորապէս աըհաճեցուցին զմեղ, և ոչ արդ կարէաք չաղօրդել նմա զցնծութիւն մեր, և հարցանել զնորհուրդ . թէ հազիւ երբէք հետեւաք խորհրդոյ, յոյժ պատրաստք էաք ամենեքին 'ի հարցանել : Խերե ընթերցաւ զտոմսակ տիկնացն, շարծեաց զգլուի իւր . և յայտ արար՝ թէ զործ այսպիսի պէտս ունէր կարեորազոյն զգուշաւորութեան : Այս նշոյլ երկմոռութեան՝ մեծապէս դառնոցոյց զամուսին իմ : “Ո՛չ երբէք երկրայէի՝ պարոն.” ասաց, “զպատրաստութենէ քումմէ լինելոյ հակառակ դատերաց և ինձ : Դու առաւել զգուշութիւն ունիս քան զոր պէտք են : Օ իարդ և իցէ, կարծեմ՝ յորժամ պէտս ունիցուք խորհրդեան, յայնպիսեաց հարցցուք որք ինքնին 'ի կիր արկերալ երեիցին :” — “Ուսպիսի միանզամ և լեալ իցին իմ վարք՝ տիկին,”

պատասխանեաց ՚հա, “ոչ է արդեան խնդիրն, թէ պէտ չիցեմ ինձէն ՚ի կեր արկեալ զիսորհուրդ, պարտիմ՝ ըստ մտացս խղճի, տալ այնացիկ որք արկանիցին;” Քանզի կասկածէի, թէ պատասխանիս այս զգգովաճառք բանս ածէր զինի, լցուցանելով թշնամանօք՝ որ պակասէր ՚ի հանձարոյ, փոխեցի զիսօսսն՝ ցուցանելով զարմանալ եթէ զի՞նչ արդեօք յամեցուցանէր զորդին մեր ՚ի տօնավաճառի. քանզի արդէն մերձ էր երեկոյանալ: “Ա՞ի մասածեր ինչ,” ասաց ամուսինս, “հաւատա՛ զի որդի մեր զիտէ զինչ առնէն: Հաւատա՛ լեր, ոչ երբէք տեսցուք զնա վաճառել զհաւս իւր յանձրեստ աւուր: Օ այնպիսի սակարկութիւնս տեսեալ եմ զնա առնել, որ հիացուսցէն զոք: Պատմեցից առ այդ զլաւընն մի՝ որ պայթեցուցանել տայցէ զկողս ձեր ծիծաղելով. բայց՝ իմ արեն, ահաւանիկ գոյ Առովուէս, աւանց երիվարի, և զտուփն ՚ի թիկունըս իւր:

Այն ինչ խօսեցաւ՝ եհաս Առովուէս յուշիկ ընթանալով, և քրանահարեալ ընդ եզեւն տփովն, զոր պնդ եալ էր փոկուլ զթիկանց իւրոց հանգոյն փերեզակի: “Քարեաւ, բարեաւ եկիր Առովուէս. աղէ որդեակ, զի՞նչ բերես ՚ի տօնավաճառէ:”— “Քերեալ եմ զիս,” գարձոյց Առովուէս խորամանկ հայեցուածով, և զնելով զտուփն ՚ի վերայ սեղունատախտակին:— “Այս, զսյդ զիտիմ Առովուէս:” ասաց ամուսին իմ, “բայց ուր է երիվարն:”— “Ա աճառեցի զնա:” ասաց Առովուէս, “առ երիս ըս-

աերլինս , հինգ շիլինդ և երկու փողոյ : ”—“**Օ** օ-
րանաս , իմ լաւ տղայ ,” գարձոյց նա , “քանզի զի-
տեի զի ներգործել ունեիր ի նոսա : ’Ա միջի մե-
րում , երեք ստերլին՝ հինգ շիլին և երկու փողն
ոչ վատ ինչ գործ է աւուր . բեր ուրեմն աես-
ցուք : ”—“**Ես** փող չեմ բերեալ ,” ասաց Վովսէս
վերստին , “փոխանակեցի զծին ընդ ապրանաց , և
ահաւասիկ է : ” հանելով զծրար մի ի ծոցոյն , “ա-
հա երկոտասան սարք կանաչ ակնոցաց՝ արծաթի
շրջանակօք , և պահարանքն ի մորթոյ ձկան : ”—
“Երկոտասանն սարք կանաչ ակնոցաց ,” կրկնեաց
ամուսին իմ ողորմ ձայնիւ : “Ետուր զտրմուզն և
բերեր ոչինչ՝ բաց յերկոտասանն սարուց կանաչ
անպիտան ակնոցաց : ”—“**Ո**րելի մոյր իմ ,” գար-
ձոյց տղայն . “ընդէր ոչ ունեին գնիցես բանի : Հո-
ղագին գտի զնոսա : ապա թէ ոչ ոչ երեք գնեի :
Երծաթի շրջանակքն միայն վաճառեցցին կրկին
քան զոր հատուցի : ”—“**Ա**վանս թուզ մի տալ ար-
ծաթի շրջանակացն ,” գոչեաց ամուսին իմ զայրա-
ցեալ , “կարեմ երդնուր՝ զի ոչ վաճառեցցին ա-
ւելի քան զեկոս փողոյն , ըստ համեմատութեան
հալեալ արծաթոյ՝ հինգ շիլին առ ունեին : ”—“**Վ**ի
վշտագնեացիս ինչ վասն վաճառելոյ զշրջանական : ”
ասացի ես , “քանզի և ոչ զլեց փող արժեն . վասն
զի քաջ աեսանեմ զի պղինձ են փայլեցուցեալ : ”
“**Օ** ինչ ,” գոչեաց ամուսինս , “արծաթ չեն , շր-
ջանակքն արծաթի չեն : ”—“**Վ**չ ,” գարձուցի ես ,
“ոչինչ առ ելի արծաթի քան զքոյդ տապակ : ”—

“Եւ այսպէս ուրեմն՝” գարձոյց նա, “կորուսաք զտրմուղն և սոսցաք զերկոտասան սարս լոկ կանաչ ակնոցաց՝ պղնձի շրջանակօք և ձկնամորթոյ պահարանօք։ Աստանանըն տանիի այսպիսի խաբէռութիւն։ Խտրեցեալ է անբանն, և պարտ էր նմանանաչել զընկերս իւր :”—“Աղարեցար արդ՝ սիրելի՞,” ասացի, “չէր պարտ նմանանաչել զնոսա երբէք :”—“Ի բաց տար, կախեա զտխմարն,” գարձոյց նա, “բերել ինձ զտյսպիսի անպիտան իւս։ Եթէ ունէի արկանէի զնոսա ՚ի հուր :”—“Աղարեցար վերատին՝ սիրելի՞,” քանզի թէպէտե պղնձի իցեն, պահեսցուք զնոսա առ մեզ։ Քանզի պղնձի ակնոցք՝ զիտես, լաւ են քան զոշինչ։

Օ այսու ժամանակաւ իմացաւ եղկելին Վոլսէս զպատրանս իւր։ Ետես արդ՝ զի յիրաւի խաբեալ էր ՚ի շրջագայիկ զողոյ, որ ՚նշմարելով զերպարանս նորա, ՚նշանաւորեալ էր զնա որպէս զպատրաստական որս։ Ա ասն որոյ հարցի զպարագայս խաբէռութեանն։ Ա աճառէ զծին, և երեի շրջել ՚ի տօնավաճառին ՚ի խնդիր միւսոյ։ Այս ոմն յարդոյատեսիլ՝ ածէ զնա ՚ի վրան մի, պատճառանօք ունելոյ զմին առ վաճառ։ “Աստանօր,” շարունակեաց Վոլսէս, “տեսաք զայլ ոմն այր զգեցեալ վայելչաբար՝ որ ՚ի փոխ խնդրէր զքսան ստերլինս ՚ի վերայ այսոցիկ։ տաելով թէ պէտա ունէր փողոյ, և վաճառէր զայնս առ երիր մասին արժողութեանն։ Պարսնն առաջին՝ որ կեզաւորէր լինել իմ բարեկամ, ասաց ինձ յունկանէ զնել զնոսին, խրատ

տալով զայսպիսի պատուական առաջարկութիւն չուն ՚ի ձեռաց։ Կոչեցի զՊարսն Պարմբօրոյ, և փշեցին զգլուխ նորա որպէս զիմն։ և այսպէս ուրիշն՝ հրապուրեցաք ՚ի վախճանի գնել զամնայն և կիսել ՚ի միջի մերում։”



ԳԼՈՒԽ ԺԳ։

ՊԱՐՈՒ ԲԸԹՉԵԼ ՅԱՅՏՆԵԼ ԼԻՆԵԼ ԹՇՆԱՄԻ։

ՔԱՆՉԻ ՎՍՏԱՀԱՆԱՑ ՑԱԼ ԶԱՆՀԱՑՈՑ
ԽՈՐՀՈՒՄԻ։

ԶՊԼՅՈՊԼՅՈ փորձու փորձեցին ընտանիք մեր ցարդ ՚ինել բարեկայելուչ, սակայն անսակնկալ ձախորդութիւն քանդէր զամնայն ընդ ձեւակերպ պիլն։ Գրուն գործէի յամնայն ձախող ելից օգուտ քաղել տալ նոցա և կատարելագործել զկատարելութիւնն՝ ըստ չափու նանբանալոյ մեծամասութեան նոցին։ “Ճեսանէք՝ որդեակք, որչափ սակաւ շահի ՚ի գուն գործելին ՚ի պատրել զաշխարհ՝ ոգորելով ընդ գերազունից մերոց։ Աղքատն՝ որ ոչ ընկերակիցի բայց ընդ մեծատանց միայն, ատի յայնոցիկ յորոց հեռանայ, և արհամարհի յայնցանեկ որոց հետեւ։ Անհամենաստ միաբանութիւնք վնասակարեն միշտ տկարագոյն կողման, մեծատունն ընդունե-

լով զհաճութիւնն , և աղքատն զդժուարութիւնն ,
որ ծագին անտի : Բայց եկ՝ Դաիկ որդեակ , և երկ-
բորդեակ զառակն՝ զոր ընթեռնուիր 'ի սերկեանս ,
յօդուա ժողովելցու : "

"Դէս եղե երբեմն , " զոչեաց մանուկն , "զի
հսկայ մի և թզուկ բարեկամացան , և 'ի միասին
կեային : Դաշն կուեցին մի երբէք անջատիլ 'ի մի-
մեանց , այլ երթալ 'ի խնդիր արկածից : Առաջին
մարտն՝ զոր մարտեան , էր ընդ երկուց Աարակե-
նոսաց . և թզուկն՝ որ արի էր յոյժ , եհար զմի
յախոյենից զայրապին հարուածով : Առար այս Աա-
րակինոսին և ոչինչ վնաս , որ՝ ամբառնալով ըզ
սուր իւր , եհար և կտրեաց զբաղուկ խզնուկ թը-
զուկին : Ազէտալի էր արդ կացութիւննորա , սա-
կայն 'ի թիկունս հասանելով հսկային՝ անկան եր-
կոքին Աարակինոսքն 'ի սուդ ժամանակի մեռեալ
'ի դաշտին . և 'ի հեճուկս եհատ թզուկն զգլուխ
մեռելոյն : Ըրջեցան ապա 'ի խնդիր այլում արկա-
ծի : Այս էր ընդդէմ երից անիւնըսուշտ այժաւ-
մարդից : որ առեալ տանէին զբամբիլ մի վշտագին :
Թզուկն չէր այնքան կատաղի որքան յառաջ .
բայց և այնպէս ինքն եհար զառաջին հարուածն ,
և փոխարէն ընկալաւ զմի՝ որ եհան զմի յականցն .
սակայն եհատ հսկայն խկոյն , և եթէ չէր նոցա
փախս առեալ , անշնուշտ սպանանէր զամենեսին ըզ
նոսա : Վեծապէս ուրախ եղին ամենէքին ընդ յազ-
թութիւնն , և բամբիլն ազատեալ սիրահարեցաւ
ընդ հսկային և ամսւանացաւ : Գնացին յետոյ

անցին հեռի, և առաւել հեռի քան զոր մարթ է ինձ ասել, մինչ պատահեցան խմբոյ միոյ աւաղակոց : Այս առաջին անգամ շահատակեաց հսկայն յառաջոյ : այլ թղուկն չեր յոյժ ՚ի բացեայ : Ամուր էր պատերազմն և ձգեցաւ յոյժ : Ուրանօր և գոյր հսկայն՝ անկանեին ամենեքին առաջի նորաբայց՝ առաւել քան զմի անգամ' մերձ էր թղուկն սպանանիլ : 'Ի վաղճանի յայանեցաւ յաղթութիւնն 'ի կողմ երկոցունց բաղդախնդրացն՝ բայց թղուկն կորոյս զոան : Վնաց արդ թղուկն առանց միոյ ձեռին, ստին և միոյ ական : այն ինչ հսկայն էր առանց վերի իրիք : Առ որ կոչեաց առ վոքրիկ ընկերակից իւր : "Փոքրիկ գիւցազունդ, փառաւոր զուտրճութիւն է այս : Եկ, ստասցուք զմիւս ևս յաղթութիւն, և փառք մեր անմահ եղիցին յաւիտեան :"—"Քաւ լիցի," դարձոյց թղուկն, որ զարդիս առաւել զգօնացեալ էր : "Քաւ լիցի ինձ այդ, այլ ոչ ևս մարտեայց, յամենայնում մարտի տեսանեմ՝ որ զու գտանես զամենայն զպատիւն և զպարգե, բայց ամենայն հարուածքն անկանին ՚ի վերայ իմ :"

Քնացի բարոյական խորհրդաժութիւն առնել ՚ի վերայ առակիս, յորժամ' ուշ մեր շրջեցաւ առ սաստիկ վիճաբանութիւն իմն՝ 'ի մէջ ամսւանոյս և Պարոն Բլուչէլայ, յաղագս առաջադրեալ ուղեգնացութեան դատերացս 'ի քաղաքն : Ամուսին իմ հզօրագոյնս պնտէր զօդուտան՝ որ յառաջ զալոց էին անտի : Պարոն Բլուչէլ ընդ հակառակն՝ ջա-

Նոյր շըջել զնա ՚ի խորհրդոցն , և ես մնացի չէզոք :
 Արդեան տարհամնզմունք . ՚ոտրա երեւէին երկրորդ
 մասն այնոցիկ՝ որ այնպէս չարաչար ընկալեալ ե-
 ղեն յառաւօտու : Բարձրանայր վէճ՛ն գամ՝ քան
 զգամ՝, մինչդեռ խղճուկ Պաերորայն՝ փոխանակ ուժ-
 գին առարկելոյ , ուժգինս բարբառէր . և ՚ի վաղ-
 ձանի պարտաւորեցաւ պատսպարիլ ՚ի յաղթմանե-
 ընդ աղաղակաւ : Օ իարդ և իցէ՝ զըստ բանից նո-
 րա գառնացոյց զմել զամնեսին յոյժ . “գիտէր,”
 ասաց , “զոմանց՝ որ զծածկեալ պատճառս ունէին
 վասն ամենայնի՝ զոր ՚ի խորհուրդ տային այլոց ,
 ստկայն՝ յիւրմէ կողմանէ ցանկայր , զի այնպիսիքն
 հեռի կացցեն՝ ՚ի տանէ իւրմէ առ յապայս :”—
 “Տիկին ,” ասաց Պարոն Բըռչէլ անդորրազին
 դիմօք՝ որ և ես բորբոքէին զնա , “որչափ առ ծած-
 կեալ պատճառս , ուղիղ ես դու . ունիմ ես ըզ
 ծածկեալ պատճառս՝ զոր անխայեմ յիշատակել ,
 քանզի՝ ոչ կարես դու պատսպաննել այնոցիկ՝ զոր
 ոչ ծածկեմ ՚ի քէն : Ատկայն տեսանեմ՝ զի երթե-
 եկութիւնք իմ եղեալ են ձանձրալի . առից արդ
 ուրեմն զհրաժեշտ իմ . և եկից թերես միւսանզամ
 զյետին հրաժարականն իմ առնուլ ՚ի ձէնջ զող-
 ջոյն , յորժամ մեկնիլ կառիցիմ ՚ի շինոյս :” Օ այս
 ասացեալ էառ զգլսարկն , և ոչ ջանք Առփիայ՝
 որոյ հայեցուածք թուէին յանդիմանել զիսուճա-
 պութիւնն , կարացին իսկ արդելուլ զնա ՚ի գնալոյ :
 Իրեւ չոքաւ , սկսաք կըսել զմիմեանս զվայր-
 կեանս ինչ ամբոխեալ : Ամուսին իմ՝ որ զիտէր

զինքն լինել պատճառ, նկրտէր թաքուցանել զիւր
շիտթ բռնի ժպտմամբ, և յանձնապատճան հայեց-
ուածով, զոր կամեցայ կշտամբել: “Օ ի՞արդ՝ կին
դու,” ասացի ցնա, “այսպէս ուրեմն հիւրընկալեմք
զօտարն: Այսպէս ուրեմն փոխարինեմք ընդ լաւա-
կումութեան նոցա: Հաւատա՞ սիրելի, զի ասք յոյժ
դաժանք և ինձ յոյժ անախորժք ելին այսօր ՚ի
շթանց քոց:” — “Ո նդէր ապա գրգռեաց զիս ՚նա,”
պատասխանի ետ, “Այս քաջ գիտեմ զշարժա-
ռիթ խորհրդեան նորա: Խափանել կամի զըու-
ազջկանցս, զի ունիցի զզուարձութիւն ընկերակցու-
թեան կըրտսեր գստեր իմոյ ՚ի տան: Ակայն՝ որ
միանգամ և պատահիցի, ընտրեացէ ՚նա զբարեգոյն
ընկերակիցս՝ քան զսորա ՚նման ցածազգի անձինս
այսպիսիս:” — “Յածազգի կոչես զնա՝ սիրելի:”
ասացի ես, “շատ կարելի է թէ սխալիմք մեք ՚ի
վարկման մերում. զի ՚ի գէպս ինչ երեխ ՚նա կա-
տարելազոյն պարտնն՝ զորոյ պէսն ոչ տեսի երբէք:
Ասա ինձ Առիիա՝ աղջիկդ իմ, տուեալ է քեզ
երբէք զկազանի ցոյց ինչ սիրոյ իւրոյ:” — “Օ բու-
ցատրութիւն նորա ընդ իս՝ հայր, ” պատասխանեաց
աղջիկն, “միշտ հանձարեղ էր, համեստ և հաճոյու-
կան Արշափ առ այլ ինչ ոչ ընաւ: Անդամ մի՞
արդարեւ յիշեմ լուեալ ՚ի ՚նմանէ, եթէ ոչ եզիտ
երբէք զկին՝ որ արդիւնաւորութիւն գտանել կարեր
՚ի մարդ աղքատ:” — “Այս գունակ է՝ սիրելիդ
իմ,” ասացի ես, “կեղծուապատիր խօսք ամենայն
թշու առացելոց կամ դատարկակիցից: Բայց՝ յու-

սամ որ ուսեալ ես դու ըստ պատշաճ'ի գատ առնել զայսողիաի արանց . և թէ խելագարութիւն խել եղիցի ակն ունիլ զերջանեկու թիւն յայնալիսւոյ՝ որ այնպէս վատ տնաես է եղեալ իւրոյ ինքեան : Վայր քոյ և ես զբարեգոյն ակնկալութիւն ունիմք արդ վան քոյ : Վիւս ձմեռն՝ զոր հաւանականաբար անցուցես ՚ի քաղաքի , տացէ քեզ զպատեհութիւն զաւաւել խոհական ընտրութիւն առնելոյ : ”

Որպիսի էին խոկմունք Առփիայ առ ոյս վախճան , ոչ կարեմ պարծիլ գուշակել . սակայն՝ ՚ի ներքուստ չէի տհաճեալ ընդ ճողովրիլ ՚ի կոչնականէ ։ յորմէ մե ծապէս երկնչէի : Աւ խտազանցութիւնն հեւրընկալութեան եհար փոքր ինչ զիսիղՃ մոտցիմոց . սակայն՝ ՚ի ձեռն երկուց կամ երեց սեթեթեթեալ պատճառանց , լոեցուցի փութով զաղգարարն զոյն . որ բաւականացաւ բաւարարիլ և հաշտեցուցանել զիս ընդ իս : Յաւն՝ զոր խիղՃ մոտց պատճառէ մարդոյ՝ որ զործեալ իցէ զչար , շուտով անցանի : Երկչոտ է խիղՃ մոտց , և ըզ սպալութիւնս զայնոսիկ՝ զոր հերիք զօրութիւն չունի արգելելոյ : Հազիւ երբէք հերիք արդարութիւն ունի գատախոզելոյ :



ԴԱՅԻԼԻ ԺԳՆ

ՆՈՐԱՆՈՐ ՎՃՏԱԴՆԱՌԻԹԻԿՆՔ, ԿԱՄ ԱՊԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ
ԻՄՆ՝ ԹԷ ԱՌԵՐԱՏՈՑԹ ԶԱԲԻՔ ՄԱՐԹԻՆ ՃՇՄԱՐԻՏ
ԲԱՐԻՔ ԼԻՆԵԼ:

ՀԵՍՍԵՏԵՑԵՒ արդ ուղեգնացութիւն
գտաներաց իմոց 'ի քաղաք' : Այլով ընդունելով
Պարոն թառանչիլայ անձամբ անձին քննել զկեն-
ցաղավարութիւնն, և տալ մեզ գրով իմանալ
զվարուց նոցին : Ատկայն՝ անհրաժեշտաբար հար-
կաւոր համարեցաւ, զի երեսյթ նոցա հաւասարեցի
մեծութեան ակնկալութեանցն, որ՝ առանց ծախուց
անմարթ էր լինել : Խորհուրդ կալաք ուրեմն մի-
արան ժողովով, որ էր ևս գիւրագոյն եղանակն
փող ձարելոյ . կամ՝ տիրապէս ասել, զի՞նչ մարթ
էր մեզ հեշտեաւ վաճառել : Ա աղջան էառ արագ
խորհրդածութիւնն . տեսաւ՝ զի մնացեալ երիվար
մեր ամենեին անպիտան էր առ հերկագործութիւն՝
առանց իւրոյ ընկերի, և միապէս անյարմար առ
ձանապարհորդութիւն՝ սակս պակասելոյ միոյ ա-
կան . վասն որոյ վերջաւորեցաւ՝ զի վաճառեսցուք
զին . սակս վերոյիշեալ պատճառաց, 'ի մերձակայ
տօնավաճառի, և՝ առ 'ի զգուշանալ 'ի խաբէու-

թենէ՝ զի ես ինքն անձամբ գնացից ընդ նման
թէսլէտե առաջին անգամն էր այս առեւտրական
գործոց կենաց խոնց, սակայն ոչինչ երկրայէի կա-
տարել զպաշտօն իմ համբաւով: Արթիք մարդոյ
զնոհականութենէ խրմէ՝ կշռի ընդ այնոցիկ, ընդ
որս ընկերակցէ, և զի իմն յաւէտ՝ էր ընդ ընտանեաց
խոնց, ոչ անյաջող համարումն յղացեալ էի զաշ-
խարհային զգօնութենէ իմմէ: Օ խարդ և եցէ՝ ՚ի
միւսում առաւտուու ՚ի մեկնիլ իմում՝ յետ հեռա-
նալոյ զքայլս ինչ ՚ի գրանէ, յետս կոչեաց զիս
ամսւսին իմ խորհուրդ տալ յունկանէ՝ զի շուրջ
ունիցիմ զաջս զինե:

Պ առ հասարակ սովորութեանց՝ իբրև ժամանե-
ցայ ՚ի տօնավաճառն, գնացուցի զերիվար իմ ըստ
ամենայն քայլից խրոց, սակայն՝ ոչ գտի զոք սա-
կարկու առ ժամանակ մի: ՚Ի վաղձանի մերձեցաւ
մին, և յետ շուրջանակի զննելոյ զերիվարն ընդ-
երկար, գտանելով զնա միով ակամը կոյր, չկամե-
ցաւ ասել ինչ վասն այնորիկ. երկրորդն յառաջ
մատեաւ, սակայն՝ նշմարելով ՚ի նմա զախտ կազու-
թեան, յայտ արար՝ եթէ չառնոյր զնա վասն վա-
րելոյ և եթ ՚ի տուն. երրորդն նշմարեաց զուռոյց
միւսոյ ոտին, և ոչինչ զին հատանէր. չորրորդն
իմացաւ յաչաց՝ զի լի էր որովայն նորա ձձեօք.
հինգերորդն հիացաւ՝ եթէ զինչ ցաւ կարէի առ-
նել ՚ի տօնավաճառին՝ կոյր, հաշմատ և վիրաւոր
դրաստու՝ որ սկիտանացու էր միայն յօշտել վասն
որջոյ շան: Օ այսու ժամանակաւ ես ևս ինձէն ըս-

կսայ արհամարհել զողորմելի անասունն 'ի սրտի խմբւմ, և գողցիս ծածկիւր երես իմ ամօթով՝ ընդ մերձենալ անձնիւր սակարկուի . քանով՝ թէպէտե միանգամայն չհաւատայի ամենայնի զոր ասէին նոռքա, սակայն խորհէի՝ թէ բազմութիւն վկայից հզօր ենթադրութիւն էր ուղիղ լինելոյ . և Առորքն Գրիգոր՝ 'ի զիրս Բարի Գործոց, վկայէ զանձնէ ՚ի նոյն կարծիս լինել:

Յայսպիսի դառնազին կացութեան էի, յորժամ գաղածանօթ եղբայր ոմն եկեղեցական՝ որ նոյնպէս զգործ ունէր 'ի տօնալաձառի, մերձեցաւ առ իս . և կալեալ ղձեռանէս, առաջարկեաց անցանել 'ի պանդոկն և ըմպել զբաժակ մի՝ որ զինչ և գտանիցի : Յօժարութեամբ հաւանեցայ առաջարկութեանն, և մտեալ ՚ի վաճառատուն զարեջըոյ՝ առաջնորդեցաք 'ի ներքնասենեակ մի փոքրիկ, ուր էր մի միայն յարգելի ծերունի՝ բոլորովին պատաղեալ յլնթերցումն ստուար մատենի միոջ : Ո՛չ երբէք 'ի կերանս իմ տեսի զարարկեր՝ որ նախագրաւեր զիս առաւել քաղցրութեամբ : Խոպողիք արծաթի դիսաց՝ յարգանօք քօղարկէին զքունս նորա + և անթառամ ծերութիւն նորին՝ երեւեր ծագեալ յառողջութենէ և 'ի բարեսկրութենէ : Խնչնիցէ՝ ներկայութիւն նորա ոչինչ խավան եղեւ զրուցատրութեան մերում, բարեկամն և ես բանս 'ի մէջ առաք 'ի վերայ պէսպէս փոփոխութեանց մերում բաղդի : Ա խատոնեան հակաձառութիւնն, վերջին տետրակ իմ, նախասարկաւ ագի պատաշ-

իսանին, և ճախորդութիւնն որում պատահեցայ ։
Բայց վաղվաղակի բարձաւ ուշ մեր ՚ի յանդիմաւ
նութենէ մանկան միոջ, որ մասնելով ՚ի սենեակն
պատկառանօք ասաց ինչ մեզմաձայն ծերունազարդ
օտարականին : “**Չե՞ն ինչ պիտոյ պատճառանաց՝**
որդեակ,” ասաց ծերունին . “բարի առնելն է պար-
տիք՝ զոր պարտիմք համազոյակցաց ամենից . առ-
զայս, ցանկայի առաւել լինէր . սակայն հինգ ըս-
տերլին գիւրացուսցէ զգմուարութիւնս քոյ և բա-
րով եկիր :” **Պատանին համեստ քամեաց զարտա-**
սուս երախտագիտութեան . այլ երախտագիտու-
թիւն նորա հազիւ հաւասարէր իմայն : Կամէի
գիրկս արկանել բարի ծերունւոյն՝ ոյնպէս հաճե-
ցոց զիս բարեսիրութիւն նորա : **Հ**արունակեաց
նա ընթեռուլ, և մեք դարձաք ’ի զլուցատրու-
թիւն մեր . մինչ յիտ սակաւուց, յուշ ածելով
ընկերի իմում եթէ ունէր զգործ ՚ի տօնավաճառի,
խոստացաւ գանեալ վաղվաղակի . յաւելով թէ
միշտ ըղձալի էր ինքեան ունել զայնքան յընկե-
րակցութենէ **Ա** ար . **Պ**րիմրօզի, որքան և հնար
էր : **Ա**ռեալ ծերունւոյն զկոչումն անուան իմայ ,
մոտպիւր ականեաց յիս առ վայր մի . և իբրև
մեկնեցաւ բարեկամն, կարի ակնածութեամբ եհարց՝
եթէ իւիք առեանառու էի մեծին **Պ**րիմրօզի՝
այնում անվեհեր պաշտպանին միակնութեան , որ պա-
րիսպ ամբութեան էր եկեղեցւոյ : **Ա**յս երբէք ա-
ռաւել անկեղծութեամբ զմայլեցու սիրտ իմ՝ քան
յայնում վայրկենի : “**Պ**արո՞ն,” ասացի, “զովութիւն

այդպիսի բարւոյ առն՝ որպիսի գու՝ հաստատ եմ, ես,
յաւելու յայն ուրախութիւն սրտիս՝ զոր բարե-
սիրութիւն քոյ արդէն է ծնուցեալ։ Ահաւասիկ
առաջի քոյ՝ պարզն, նոյն Ա արդապեան Պրիմոզը,
նոյն պաշտպանն միակնութեան, զոր հաճեցար ան-
ուանել մեծ։ Տեսանես արդ զնոյն տարաբաղդ
աստուածաբան՝ որ յայսչափ ընդերկար, և՝ ամա-
չեմ ասել, յաջողութեամբ մարտեաւ ընդդէմ երկ-
րորդ ամուսնութեան՝ — “Տէր,” դարձոյց օտարա-
կանն ահաբեկ տեսլեամբ, “երկնչեմ” յոյժ համար-
ձակեցայ. այլ ներեսցես իմումն հետաքրքրութեան
տէր, ներեա աղաչեմ” — “Պարզն,” ասացի կալեալ
զձեւանէ նորա, “այնչափ հեռի ես ի տհաճեցու-
ցանելոյ զիս քոյովդ մտերմութեամբ, զի պարտիմ
աղաչել ընդունեսցես զբարեկամութիւն իմ, որպէս
արդէն ունիս զյարդանա՛ — “Պւրեմն երախտագի-
տութեամբ ընդունիմ զհրաւէր քոյ,” դարձոյց նա
սեղմելով զձեւս, “ով փառաւորեալ սիւնդ անվըս
կանդ ուղղափառութեան. և շնորհեցաւ ինձ տե-
սանել,” — Խսդեցի աստէն զոր կամէր ասել, զի՝ թէե
հանգոյն հեղինակի կարէի մարտել զոչ սակաւ
շողոքորթութիւն, սակայն ամօթխածութիւն իմ
արդ չներէր լսել առաւել։ Խնչեցէ՝ ոչինչ սիւ-
րահարք ստեղծաբանութեան զոյնպիսի վայրկենա-
կան բարեկամութիւն յօդեցին երբէ.ք. Խօսեցաք
ի վերայ զանազան առարկայից. կարծեցի զնա զա-
ռաջննն առաւել պաշտօնասէր քան դիտնական. և
սկսայ համարել անդոսնէր զամնայն վարդապետու

թիւնս մարդկային՝ որպէս զեղկղանս : Այլ ոչինչ
իւիք պակասեցոյց այս զյարդ նորա առ ինեւ . քան-
զի ես ինձէն սկսեալ էի ոչ ՚ի նորոյ , տեղի տալ
՚ի ծածուկ այսպիսի խորհրդոց . վասն որոյ ՚ի գէպ
համարեցի նշանակել . թէ աշխարհս ընդհանրապէս
սկսեալ էր չարաչոր անփոյթ լինել զվարդապե-
տական նիւթոց , և կարի յոյժ հետեւ մարդկային
խորհրդոց : “Այս Տէր ,” պատասխանի արար ,
որպէս եթէ պահեալ էր զամենայն զգիտութիւն
իւր առ այնր պահու . “յիրաւ ի՞ Պարոն , աշխարհս
՚ի խելայեղութեան իւրում է . և սակայն աշխար-
հարաբութիւն կամ ստեղծումն աշխարհի տրկեալ
է ՚ի շփոթ զիմաստասէրս ամենայն գարու : Օ որ-
պիսե խառնակութիւնս կարծեաց չեն սերմանեալ
նոքա ՚ի վերայ ստեղծման աշխարհի : Անկոնիա-
թոն , Վանեթոյ , Բերտէս և Օսելլէս Լուկանոս
ամենեքին ընդվայր ջանահնար եղեն : Վերջինն
զայսոսիկ ունի բանս : Անմբբու երմ քէի ԱՏԵԼՈՒ-
ՏԷՒՈՆ ՏՈՒ ՊԱՅ . որք նշանակեն թէ՝ ամենայն իրք
ոչ սկիզբն ունին և ոչ զկատարած : Կա և Վա-
նեթոյ՝ որ էր առ ժամանակօք Կարուզողոն Ա-
սարայ : Ասար է բառ Ասորոց՝ հաստրակօրէն ա-
ռեալ որպէս զմականուն արքայից այնր աշխարհի ,
որպէս Թեկլաթ Պաէլ Ասար , Կարոն Ասար .
Նա՝ ասեմ, ձեացոյց զնոյնանման ենթագառութիւն
իմն անհանձար . քանզի՝ որպէս մեք սովորաբար
ասեմք՝ եկ ՏՈՒ ԲԻԲԼԻՈՆ ԿՈՒԲԵՐՆԵՑԻՍ , որ նշա-
նակէ թէ մատեանք ոչ երբեք ուսուցյին զաշխարհ ,

զայս օրինակ զուն գործեաց նա ձշքրտել՝ բայց՝
ներել աղաչեմ, պարո՞ն, շեղիմ ես 'ի խօսիցն :"
Օ այս արդար ասաց, քանիզի չկարացի, իմ արեն,
տեսանել թէ զի՞նչ կայր ստեղծման աշխարհի և
բանին՝ յորոյ վերայ խօսէի. բայց՝ այս հերիք եղեւ
ցուցանել՝ թէ աշակերտ էր գրոց, և արդ առաւել
ես յարգեցի զնա: Հաստատեցի ուրեմն բերել զնա
՚ի փորձաքարն, սակայն՝ կարի հեզ և բարեհամ-
բոյր էր՝ առ վիճելոյ վասն յաղթութեան: Երբ
և առնեի զդիտողութիւն իմն՝ որ երեսէր ինը ըզ
հրաւեր առ վիճաբանութիւն, ժպտէր՝ շարժեր
զգլուին և ասէր ոչինչ. որով իմացայ՝ թէ կարէր
ասել զբազում, եթէ 'ի ճահ համարէր: Խրոսք
մեր ուրեմն՝ անխմանալի եղանակաւ փոխեցաւ 'ի
բանից հնութեան առ այն՝ որ բերէր զմեզ զեր-
կոսին ՚ի տօնավաճառն. իմն՝ ասացի էր առ ՚ի վա-
ճառեր զերիվար, և՝ բարեբաղդապէս իրաւի, նո-
րին էր առ ՚ի զնել զմի՝ վասն միոյ ՚ի վարձկանաց
իւրոց: Երիվար իմ խօսյն յանդիման ածաւ. և ՚ի
վաղձանի միաբանեցաք ՚ի սակարկութեանն: Զմայր
այլ իմն՝ բաց ՚ի վճարելոյ ինձ զգինն, և ըստ այնո՞
եհան զլամայազիր մի երեսուն ստերլինաց, և ետ ցիս
փոխել: Անընդունակ կատարելոյ իմ զայս ինդիր,
հրամայեաց կոչել զհետեակ իւր, որ յանդիման
եղեւ կարի վայելուչ նշանազգեստիւք: "ԱՌ ԱՌ-
րահամ," ասաց ցնա, "երթ և ոսկի բեր վասն այ-
սորիկ, կարես աջողել զայս ՚ի մերձակայ: Պակսընի
կամ յայլ ուրեք:" Խրսե չոքաւ, զբօսեցոյց զիս

աղդու բանախօսութեամբ ՚ի վերայ մեծի պակասութեան արծաթոյ, զոր և ես յանձին կալայ գորացուցանել՝ ողբալով և զշատ սակաւութիւն ոսկւոյ։ մինչ զի առ ժամանակաւ դարձի Աբրահամու, երկոքեանքս ես միաբանեալ էաք՝ թէ ոչ երբէք այնչափ սակաւ էր արծաթ որպէս յայժմուս։ Պարձաւ Աբրահամ ժամանցանել՝ թէ ըջեալ ընդ ամենայն կողմն տօնավաճառին, և ոչ կարաց փոխանակել, թէպէտե մատուցեալ էր զիկս կրավիւ (այս էնու, երիս ու էն շիլին) առ կատարումն։ Մեծ յուսաբեկութիւն եղեւ այս մեզ ամենեցուն։ բոյց ծերունին՝ յետ առ վոյր մի խոկալոյ, եհարց եթէ ճանաչէի զլողումն Փիլամբորոյ ՚ի սահմանի երկրի խմում։ Ընդ պատասխանելով՝ թէ դրակից դրացի իմ էր։ “Եթէ այդպէս իցէ ուրեմն,” դարձոյց, “հաւատամ աջաղեսցի գործ մեր։ Պատցես զփոխանակաղիր ՚ի վերայ նորա՝ հատուցանելի ՚ի տեսութեան։ և՝ թող ինձ ասել, է նա այր այնքան եռանդուն՝ որքան ոք ՚ի միջոցի հինգ մլուաց շուրջանակի։ ՚Ի բաղում ամաց հետէ՝ բարեսէր Աղօմնն և ես ճանաչեմք զերեարս։ Յուշ լինի՝ զեյերիս ոստիւնս միշտ յաղթեմ զեա, այլ ոստոստէր նա ՚ի վերայ միոյ ոտին՝ առաւել յերկար քան զիս։” Փոխանակագիր՝ յիմ դրացւոյ վերայ, այնպէս էր իմ համար՝ որպէս զիոող, քանզի բաւականապէս ճանաչէի զերողութիւն նորա։ Ատորագրեցաւ փոխանակագիրն, և տուաւ ՚ի ձեռս իմ։ և ծերունին Պարոն Պէնկինսըն, իւր սպասաւորն

Արքահամ և երիվարն իմ հինաւուրց Բնակ Բըրբի
երագեցին յընթացս՝ քաջ հաճեալ ընդ իրեարս :

Հետ սակաւուց՝ նոր սկսայ խորհել թէ սղալեալ
էի, յընդունել զիտիանակագիր յօտարականէ մի-
ոջէ, վասն որոյ խոհականաբար հաստատեցի 'ի
մորի հետեւ ել գնողին և առնուլ յետա զերիվար
իմ, Այլ կարի անագան էր այս . վասն որոյ ուղ-
ղակի դարձ արարի գէպ 'ի տուն, հաստատելով
փոխանակել զիտիանակագիրն ՚ի զուդ փող՝ որքսն
շուտ որ հնար էր : Գատի զբարեպարիշտ բարեկամն
իմ՝ ծխել զծխաքարշ առաջի գրան իւրոյ, և
ծանուցանելով նմա՝ եթէ ունէի զիտքրիկ փոխա-
նակագիր մի ՚ի վերայ իւր, ընթերցաւ զայն եր-
կից հետ զհետէ, “Կարծեմ կարես ընթեանուլ
զանունն,” ասացի ես, “Եփրեմ ՞ էնկինոըն,” —
“Այս,” դարձոյց նա, “կարի իմն պարզ է անունն
և զպարոնն ևս ճանաչեմ, ամենամեծ եղունագործն
ընդ հովանեաւ երկնից : “Եոյն խկ դոզն է սա՝ որ
վաճառեաց մեզ զակնոցան, Ոչ յարդելի տեսլեամբ,
ծաղկեալ ալեօք և անխուփ գրպանօք էր . և ոչ
խօսեցաւ զընդերկար իմն թել զիտութեան՝ զՅու-
նաց, զաշխարհաստեղծութենէ և զաշխարհէ, ”
Այս պատասխանի արարի հառաջմամբ, “Այս,”
շարունակեաց նա, “զայդ մի միայն կտոր դիտու-
թեան ունի յաշխարհի, և միշտ բարբառէ զնոյն՝
յորժամ զգրոց աշակերտա գտանէ . բայց ճանաչեմ
ես զգողդ, և լիբունեցից զնա տակաւին :

Ուհակէտե հերիք դառնացեալ էի արդէն, ամ-

Նաևմեծ տաղնապ իմ գեռ պիակի գոյր՝ ՚ի յանդիման լիւնելս ամսւսնոյ իմոյ և զստերացս : Աչ ոք ուսումնատեսոյ՝ յառաւել երկեղի եղւ երբէք դառնալ ՚ի դոլրատուն , տեսանել անդ զդէմն վարժապետին , քան զիս գնալ ՚ի տուն : Չի խարդ և իցէ՝ որոշեցի ՚ի մաի կանխել քան զկատազութիւն նոցա , եւ ինքն ՚ի բարկութիւն բըգելով զառաջննն :

ԱՅԼ աւաղ . ընդ մասնել իմում , գաի զընտանիս ոչ իւիք միտեալ ՚ի մարտ : **Ամսւսին** իմ և աղջկունքս հարեալ գլխովին յարտասուս , Պարսն Թառնհիլայ եկեալ գոլով ազդ առնել նոցա թէ ուղեղնացութիւն իւրեանց ՚ի քաղաքն վճարեալ էր ՚ի սպառ : Համբառ առեալ զմէնջ երկոցունց տիկնաց՝ ՚ի չարեկամէ ումն մնէ որ զմեօք , ՚ի նմին առեր ելեալ էին ՚ի լոնքոն : Աչ զդիտումն և ոչ զհեղինակն կարէր նշմարել . սակայն՝ որ միանգամ և իցնն , կամ ոք և տարածեալ իցէ , շարունակեաց հաւաստի տանել ընտանեաց իմոյ՝ զբարեկամութենէ և զպաշտպանութենէ իւրմէ : Պատի զնոսա ուրիմն անդորրութեամբ մն ծառ տանել ձախորդութեան իմոյ , այնու զի ծածկիւր ՚ի մն ծութեան վշտազնութեան իւրեանց : Բայց՝ որ յաւետ վարանէր զմեզ , էր մաածել թէ ովլ էր այնպէս անարդ , որ բարբառսէր զհամբառ գերգաստանի միոջ՝ մեզ պէս անընասի . յոյժ նուաստ ՚ի նախանձուկս արկանելոյ , և յոյժ անմեղ ՚ի դժկամակութիւն յարուցանելոյ :



ԳԼՈՒԽ ԺԵ ·

ԸՄԵՆԱՑՆ ՎԱՏՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՈՒ ԲՈՉԵԼՅԵ
ՄԻԱՆԴԱՄՑՆ 'Ի ՑԱՑ ԳԱՆ ՑԱՄԱՐՈՒԹԻՒՆՆ
ԼԻՆԵԼՈՅ ՔԱՆ ԶՉԸՓՆ ԿՄԱՍՈՒՆ :

ԵՐԵԿՈՅՆ և մասն վաղուի աւուր ՚ի վար
արկան յանպոտղ ջանս՝ յոյշտ ածելոյ զթշնամիս
մեր . հազիւ թէ մին ՚ի գրացեաց զերք մնաց ՚ի մե-
րոց կասկածանաց . և անձնիւր 'ի մէնջ պատճառս
ունէր իւրոց կարծեաց՝ քաջ ծանուցելոց մեզ .
Այն ինչ յոյշապիսի վարանս էաք շուարեալ . մի
'ի մանեկանց մերոց՝ որ խազայր արտաքոյ . երեր
զնամակակալ տուփ մի գտեալ ՚ի վերայ գալարւոյն .
Խսկոյն ծանուցաւ գոլ Պարոն Բըռչէլայ , առ ո-
րում տեսեալ էաք . և ՚ի վերահասութեան , տեսան
՚ի նմա յարեանցի յիշատակութիւնք ՚ի վերայ դա-
նազան առարկայից . այլ՝ որ յաւէտ զմուգրու-
թիւն մեր գրաւեաց , էր կնքեալ թուղթ մի . յորոյ
վերայ գրետլ էր , “Օրինակ նամակին ոռաքելոյն
առ երկոսին Տիկնոյսն 'ի թխառնհիլ Ասսորլ .”
Խսկոյն որոշեցաք թէ նա էր անարժան չարախօսն .
և խորհուրդ կալաք՝ բեկանել արդեօք զկնիքն .
Հակառակ կացի ես . իսկ Առիկա՝ որ յամառէր
թէ յամնայն ՚ի մարդկանէ նա վերջն էր լինելոց

յանցաւոր գոտանիլ այդքան անարժանութեան, պնդէր
ընթերցման այնորիկ, զայտար միտեցան և մնացեալքն
ընտանեաց, և՝ առ միաբանեալ աղերսանաց նոցին,
ընթերցայ ըստ հետազայի:

“ՏԿԱՆՑՑԲ.”

Բերողն այսորիկ շատացուսցէ զձեզ ըստ բաւականին յաղագս անձին՝ յորմէ այս դայ. մին՝ թերես բարեկամ՝ անմեղութեան, և պատրաստ խափանի արկանելոյ պատրանաց նորին: Գիտեմ հաւաստեաւ՝ զի մասնաւորապէս կամք ունիք բերելոյ զերկուս մատաղաւուրց բամբիշ ՚ի քաղաքն, զորս ճանաչեմ փոքր ՚ի շատէ ընդ որպիսութեամբ ընկերակցաց: Որովհետեւ չկարեմ տեսանել զմիամնութիւն պատրեալ, և ոչ զառաքինութիւն արատեալ, պարտիմ մատուցանել զկարծիս իմ՝ թէ անյարմարութեան այսպիսում յառաջադրութեան, զհետ եկեցին վնասակար ելք: Չէր երբէք այս իմս կերպ՝ խօսիւ վարելոյ ընդ վատանուն և զեղլսից, և ոչ իսկ արդ զայս եղանակ կանուի պարզաբանելոյ զիս կամ յանդիմանելոյ զմուլութիւն, եթէ վաղձան այնորիկ չկցէր յանցաւորութիւն: Ընկալարնեք ուրեմն՝ զաղգարարութիւն բարեկամի միոջ, և քաջ կըսեցէք զհետեանս մուծանելոյ զվատահամբաւութիւն և զմուլութիւն յառանձնութիւն մինչեւ յարդ թագաւորեցին: Վաղձան առին արդ տարակուսանք մեր: Այս

երև էր ի՞ն ՚ի թղթին յարմարելի երկոցունց կողմանց, և կշտամբանք նորին մարթ էին յարաբերիլ այնոցիկ՝ որոց էրն զրեալ, որպէս մեզ. բայց չարակամ գիտաւորութիւնն յայտնի եղեւ, և այդ շատ էր մեզ: Ամուսին իմ գժուարաւ ժուժեաց լսել մինչ ՚ի վաղձանն. այլ թշնամանէր զգրողն անարդել ցասմամբ: Օլեվիա խստացաւ նոյնալէս, և Առփիա երեէր գլխովին յապուշ հարեալ ընդ անարդութիւն նորաւ: Որչափ առ իս, երեեցաւ ինձ այս մի յամենանարդ գիպաց անգրգիռ ապերախտութեան՝ որում երբէք գիպեալ էի, և ոչ այլ առիթ կարէի գտանել այնմիկ, քան զանձուկ նորին ռնելոյ զկրտաեր գուտարն իմ ՚ի շնին, առ ՚ի յաճախ պարապս գտանելոյ հանգիպելոյ նմա: Օ այս օրինակ բազմեալ որոճայաք ՚ի վերայ հնարից վըրէժինդրութեան, յորժամ միւս փոքրիկ մեր եկն վազելով ազդ առնել մեզ, թէ Պարոն Բըռչէլ մերձինայր ՚ի միւսոյ կողմանէ գաշտին: Առաւել գիւրին է երկնել ՚ի մտի՝ քան նկարագրել զիտուն զգացողութիւնս որ Ճնանին ՚ի ցաւոյ նորոգ անիրաւութեան, և զբերկրութիւնն եկեալ հասեալ վրիժառութեան: Թէ պէտք մեր էին միայն ՚ի գէմս հարկանել նմա զապերախտութիւն իւր, սակայն հաստատեցաւ առնել զայն ամենակծու եղանակաւ: Առին վասն միաբանեցաք հանգիպել նմա սովորական ժպտմամբ մերով: շաղակրատել յսկըզբան՝ առաւել քան հասարակ քաղցրութեամբ, առ ՚ի սակաւիկ մի զբօսեցու ցանել: և ապա՝ ՚ի միջի

շողոմարար անսպոբութեանն , ճայթել 'ի վերսց
նորա որպէս զգետնաշարժ , և ընկղմել զնա իմացու-
թեամբ իւրոյին վասութեան : Այս այսպէս վեր-
ջաւորեալ : յահճն էառ ամսւսին իմ կառավարել
զգործն ինքնին . այնու զի ուներ իրօք զետարե-
լութիւն առ այնպիսի ձեռնարկութիւն : Տեսաք զնա
մերձենալ , եմուտ 'ի ներքս , կալաւ զաթու մի
և բազմեցաւ : "Ոիրուն օր է Պարսկա Բըռչէլ :"—
“Շատ սիրուն՝ վարդապետ . թէկ՝ թուի ինձ անձ-
քեն ընձիւղելով* այգւոյ իմոյ :”—“Պնձիւղելով
ագոյ քոյ :” ասաց ամսւսին իմ բարձրաձայն ծի-
ծաղաւ . և ապա զներումն հայցեաց վասն կատա-
կասիրութեան իւրոյ :—“Որտի մտօք ներեմ քեզ՝
սիրելի Տիկին ,” պատասխանի արար նա , “այլ
վկայեմ ոչ համարէի զայն կատակ , եթէ չէր քո
այնպէս ասացեալ :”—“Ուերես ոչ , պարսկա :” ասաց
ամսւսինս ակնարկելով առ մեզ . “և սակայն հաս-
տագ եմ՝ կարես ասել քանի կատակք վաճառին
առ ունկի մի :”—“Ինձ այնպէս թուի՝ տիկին ,”
գարձոյց Բըռչէլ , “օր յառաւօտուս կատակերգու-
թիւն իցես ընթերցեալ . զի ունկիով կատակաց առ-
մնագեղեցիկ ծնունդ է մտաց . և սակայն՝ տիկին ,
յաւէտ ցանկայի տեսանել զկէս ունկի կատարե-

* Ըստ Անդրեականին է՝ “ընձիւղելով հասկից իմաց ,” որում
ծաղք առնել կինն “ընձիւղելով եղջերաց քոց :” օր նոյնայնք է
Անդրեականն : Զի Corn Կըռն է հասկ ցորենոյ , իսկ Horn Համա-
եղջեր . մեք ևս զնոյնայնք՝ և զոդցե՛ս նոյնանման բառս եղաք ՚ի
Հայումն՝ զի երկոքումբք ևս նախ սոի Բըռչէլ որպէս զանասուն :

լութեան :”—“**Հ**առատամ” կարես ,” ասաց ամսւսին
իմ՝ տակաւին ժպտելով ՚ի մեր կողմ , թէև ընդդէմ
ինքեան էր ծիծաղն . “և սակայն տեսեալ եմ զարս
ոմանս կեղծաւորել զկատարելութիւն՝ զոր սակաւ
ունին :”—“**Ե**ւ առանց երկուանաց ,” դարձոյց հա-
կառակորդ նորա , “Ճանաչես զկանայս ցուցանել
զհանձար՝ զոր չունին :” Փութով խացայ որ ոչինչ
օգտիլ ուներ ամսւսին իմ ՚ի բանիս . վասն որոյ
որոշեցի ես ինքնին վարել ընդ նմա առաւել ևս
խառութեամբ : “**Հ**անձար և կատարելութիւն եր-
կոքին ես ոչինչ են ,” ասացի ես , “առանց անբը-
ծութեան , այն է միայն որ գին հատանե իւրաքան-
չեւը մարդոյ . տգէտ շնեականն առանց յանցանաց ,
առաւել է քան զիմաստասէրն բազմայանց . քանզի
զի՞նչ է ինելք կամ արութիւն առանց սրտի :

Այր արդարասէր է ազնուագոյնն յարարածս Աստուծոյ :

“**Հ**ամարեցի ես միշտ ,” դարձոյց Պարոն Բըռչէլ ,
“զլարձեալ առածս Պիօպոյ , որպէս զյոյժ անար-
ժանս առն խելացւոյ , և զանարգելի փախուստ ՚ի
գերակայութենէ իւրմէ : Ուպէս յարդ մատենից
առաւելու՝ ոչ ՚ի ձեւն ազատութեան սղալանաց ,
այլ մեծութեան գեղեցկութեանցն բանից . այնպէս
պիտի և զմարդկանց գին հատանել՝ ոչ ՚ի ձեւն
ազատութեան ՚ի յանցանաց , այլ մեծութեան առա-
քինութեանցն զոր ունին : Պիտիականին պակասեցի
խոհեմութիւն , քաղաքականին առաւելցի հլար-
տութիւն , և ախոյենին վայրագութիւն . այլ՝ նա-
խադասեսցուք սոցա զանարգ արուեստաւորն , որ

աշխատանօք պարապի ընդ կեանս բոլոր , առանց ստգտանաց կամ զովութեանց : 'Ի ճահ և նոյնպէս նախագասել զառած անսխալ նկարա Պալամինեան դարաստան , քան զթիւր բոյց վսեմ կենդ անատուռւթիւնս Հռովմէական մատին :'

"Ի խողութիւն քոյ այս՝ պարմն , " պատասխանեցի , "արդար է , երբ առաքինութիւնք պայծառ իցեն և պակասութիւնք մանունք . բայց երբ երեխոր մեծամեծ մոլութիւնք հակադրին ՚ի նոյն միտս՝ նոյնաքանակ տարօրինակ առաքինութեանց , այդ պիսի անձն արժանի է արհամարհանաց : "

"Պառցէ գուցեն այդպիսի հրեշք՝ որպէս նկարագրեցերդ , մեծի մոլութեանց յարելոց ընդ մեծի առաքինութեանց , այլ՝ յընթաց կենոց խմաց . չգտի երեքք զիտորձ գոյութեան նոցա . ընդ հակառակն՝ նշմարեալ եմ միշտ , զի ուր ընդարձակ են միտք , անդ բարի են ախորժակք : Եւ արդարեւ՝ "Աախախնամութիւն Բարձրելոյն յաւետ յայսմ մեզ քաղցր բարեկամ երեխ , այսանակ տկարացուցանելով ըզ կատարելութիւն՝ ուր սիրտ թիւրեալ է , և նուազեցուցանելով զդորութիւն՝ ուր կամք են չարութիւն առնելոյ : Այս կանոն տարածեալ երեխ և առ միւս կենդանիս . մոքրիկ ազգ վեռնոց միշտ նենդաւոր են , անդութ և անարի . այս ինչ նոքանոր զարդարեալ են զօրութեամբ և կարողութեամբ , են ազնուաբարոյ , քաջ և բարեհամբոյր : "


"Ի խողութիւնքդ այդոքիկ կարի քաջ հնչեն , " գարձուցի ես , " և սակայն դիւրին եղեցի 'ի ամին

վայրկենի ցուցանել զայր մի՝ ” և սկեռեցի զաշս
իմ հաստատեալ ՚ի ՚նա , “որոյ գլուխ և սիրտ ձեւա-
ցուցանեն զամենագարշելի դիմագրութիւնս + Այս ,
պարս՞ն .” հետեւեցի ամել բարձրացուցանելով ըզ
ձոյն իմ ; “և ինդամ ընդ պատեհութիւնս ըմբռնե-
րոյ զեա ՚ի միջի կարծեալ ապահովութեան իւրում :
Ճանաչես զայս , պարս՞ն , զայս յիշատակարան + ”
“Այս , պարս՞ն , ” դարձոյց ՚նա անտեղիստալի վրա-
տահութեամբ , “իմ է յիշատակարանդ , և ուրախ
եմ ընդ գտանել քոյ զայն :”—“Եւ ճանաչես զայս
թուղթ , ” զուեցի : “Ազէ , մի թուլանար՝ մարդ ,
ոյլ անպատկառ հայեաց ՚ի գեմա իմ . հարցանեմ .
Ճանաչես զայս գիր :”—“Օ այդ գիր , ” դարձոյց
՚նա , “այս . ես գրեցի զեիրդ :”—“Եւ զբարդ մար-
թացար , ” ասացի , “այդպէս վատութեամբ՝ այդ-
պէս ապերախտութեամբ յանդգնիլ զրել զայս
գիր :”—“Եւ զբարդ գու , ” դարձոյց ՚նա անհամե-
մատ լրութեամբ , “այդպէս վատութեամբ յան-
դգնեցար խորտակել զկնիք ՚նորա : Ո՞չ զիսիցես ,
որ կարող եմ արդ կախել տալ զձեզ զամենեսին
վասն այնորիկ : Ամենայն զոր պարտ է ինձ տռ-
նել , է երդնու ՚ի մերձակայ դատաստանատան , թէ
պարտաւոր գտեալ էք խորտակելոյ զիսակ յիշատա-
կարանի իմաւմ , և այդպէս կախել զձեզ զամենես
սին առ գրանս :” Այս մասն անակնկալ ժպրհու-
թեան ՚նորա այնքան զրգուեաց զիս՝ մինչ հաղիւ
կարացի զսպել զբարկութիւնս : “Ա ճարեաց՝ ա-
պերանա թշուառական , ’ի բաց լել աստի , և մի

այլ պղծեր զքնակութիւն խմ վատութեամբ քով .
երթ , և մի այլ տար ինձ տեսանել զգէմն քոյ
միւս անդամ , չեռի լեր ՚ի դրանե . իմմէ , և մի մի-
այն պատիմ՝ զոր ցանկամ քեզ , է տաղնապիչ
խիղճ՝ մտաց , որ հերիք տանջիչ եղիցի : ” Օ այս
ասացեալ ընկեցի նմա զիւր յիշատակորան , զոր ՚ի
վեր էառ ժպտմամբ , և՝ փակելով զՃարմանդն
կարի հանդարտութեամբ , եթող զմեզ զլխովին հի-
ացեալ ընդ անխոռով վստահութիւն նորա : Ա-
մուսին խմ յատկապէս ցասուցեալ էր՝ թէ ոչինչ
կարէր բարկացուցանել զնա , կամ ամաչեցուցանել
վասն անդգամն թեանցն : “ Աիրելիք խմ : ” ասացի՝
ցանկալով հանդարտել զկիրմն , որք յոյժ բռնա-
ցեալ էին ՚ի մեզ . “ չպիտի՝ մեզ զարմանալ՝ թէ
չար մարդկան պակասի ամօթ . — շառագնին միայն
յըմբռնին ՚ի բարեգործութեան , այլ պարծին ՚ի
մոլութիւնս իւրեանց : ”

Յանցանք և Ամօթ՝ ասէ այլաբանութիւն , զա-
ռաջինն ընկերք էին , և յսկզբան անդ ուղեգնա-
ցութեան անբաժան կեային ՚ի միմեանց : Իսյց մի-
աբանութիւն նոցին գտաւ ընդհուպ անախորժ և
անպատշաճ լինել երկաքանչիւրոց ես : Յանցանքն
ետ ամօթոյ զըստէպ ըստէպ վըստագնութիւն , և
Ամօթն յաճախակի ՚ի վեր հանէր զգաղանի դա-
ռաձնախութիւնս յանցանաց : Ա ասն օրոյ՝ յետ ընդ-
երկար անհամաձայնութեան , հաւանիցան հուսկ
ուրեմն անջատիլ ՚ի միմեանց ՚ի յաւիտեան : Յան-
ցանքն միայնակ շահատակի այ յառաջ արխաբար

հասանել Շակատազրոյ , որ երթայր յառաջոյ ՚ի
նմանութիւն դահճի , այլ Ամօթ՝ բնականաբար
երկչոտ ելով , դարձաւ ընկերակցիլ Առաքինութեան .
զոր՝ ՚ի սկզբան ուղեգնացութեանն , թողեալ էին
՚ի յետուստ : Օ այս օրինակ՝ որդեակք , յետ ճա-
նապարհորդելոյ մարդկան ընդ աստիճանս ինչ մա-
լութեան , լքանե զնոսա Ամօթ . և դառնայ կալ ՚ի
վերայ սակաւուց առաքինութեանց , որք տակաւին
մնացեալ իցեն :



ԴԼՈՒԽ Ժ.Օ.

ԸՆՏՄՆԵԲ ՋՀՆԱՐՍ ՚Ի ԿԻՐ ԱՅՆՈՒՆ , ԱՐԱՒՄ
ՄԵԾԱԳՈՅՆ ԸՆԴՀԴՄԱԳԻՐԻ :

ՈՐ միանգամբ զգացմունք Առիլայ մարթ էին
լինել , այլք յընտանեաց հեշեեաւ արզահատեցան
վասն բացակայութեան Պարոն Բըռչէլայ՝ զալըս-
տեամբ կալուածատեառն մերոյ . որոյ երթեսեկու-
թիւնք առաւել ստէպ և երկարատե եղեն արդ ;
Ուեպէտ և ՚ի դերե եղեն ջանք նորա հայթհայթել
վասն դստերացս զզուարձութիւն քաղաքին՝ ըստ
դիտման իւրում , զամենայն զպատեհ ՚ի վար արկա-
նէր ընծայել նոցա զայն ամենայն դուզեաքեայ
զբօսանս , զոր առանձնութիւն միր շնորհէր : Պայր

հասարակօրէն յառաւօտու, և այն ինչ որդի իմ և ես
 հետեւէաք գործոց մերոց արտաքնոց, նստէր ինքն
 ընդ ընտանեաց ՚ի տան և զբօսեցուցանէր զնոսա նկա-
 րագրութեամբ քաղաքին, որոյ ամէն կողմանց որո-
 շակի ժանօթ էր: Աարէր երկրորդել զամենայն ըզ
 գիտողութիւնս՝ որ մանրամասն վաճառիւր ՚ի մմնու-
 լորտի թատրոնաց, և ունէր զամենայն զչքնաղ ա-
 սացուածս գիտոց ՚ի բերան, նախ քան զերեւումն
 նոցա ՚ի մատեանս խաղուց: Օ միջոցս զբուցատրու-
 թեան ՚ի գործ գնէր ուսուցանել գտտերաց խմոց ըզ
 խաղ նարտի, կամ զրգուել երբեմն զփոքրկունս իմ
 ՚ի կոփել զմիմնանս, առ ՚ի ուեւ զնոսա՝ բառ ասու-
 թեան իւրում: բայց յոյսն ունելոյ զնա ՚ի մեր փե-
 սայութիւն կուրացուցանէր զմեզ առ ամենայն թե-
 րութիւնս նորա: Պիտի խոստովանիլ՝ որ ամուսին
 իմ հաղարաւոր հնարս լարէր թակարդել զնա: կամ՝
 սիրողաբար ասել, զամենայն արհեստ ՚ի կիր առնոյր
 մեծացուցանելոյ զարդիւնս դստեր իւրոյ: Եթէ
 քաքարք ՚ի ժամ թէյի գիւրաբեկ և փիրուն էին,
 Օլիվիայ էր թրեալ զնոսա: եթէ զինին մնձոյ
 լաւ էր կենաւեալ, նորա էր քաղեալ զսինձսն, մա-
 տունք նորա էին որ այնպէս կանաչութիւն պար-
 դեկցին քացախեղէնի, և յօրինման կարկանդակի՝
 ընտրողութիւն նորա էր որ զանգեաց զբաղադրու-
 թիւնան: Ասէր ասլա երբեմն խեղձ կինն ասպե-
 տին, որ կարծէր ինքն՝ թէ նա և Օլիվիա չափա-
 հասակ էին յոյժ, և տայր երկաքանչլւրոցն կանգ-
 նիլ առ երի իրերաց տեսանել որն էր բարձրագոյն:

Այսպիսի ցոյցք խորամանկութեան՝ զոր անթափանց համարէր , այլ ընդ որ ամենեքին թափ անցանէին , յոյժ ախորժ երեկին բարերարի մերոյ . որ օր ըստ օրէ նորանոր փորձս ընծայէր կրից իւրոց , որ՝ թէ և ոչ ամբարձեալ յառաջարկութիւնս ամուսնութեան , սակայն ոչ յոյժ հեռի կարծէաք զոլ անտի . և գանդաղութիւնն նորա՝ մերթ վերագրիւր բնական ամօթխաճութեանն , և մերթ երկիւղին գառնացուցանելոյ զհօրեղբայր իւր : Խնչելիցէ դիպուած իմն՝ որ ընդհուպ պատահեցաւ , հաստատեաց առանց երկուանաց զգիտաւորութիւնն նորա լինելոյ մի յընտանեաց մերոց . նա զի՝ ամուսին իմ համարեցաւ զայն անթերի խոստումն :

Ամուսին իմ և գստերքս գարձուցանելով զայցելութիւնն Պալամբօրոյ գրացւոյ մերոյ , տեսին զի գերգաստանն այն տուեալ էր նկարել զպատկերս իւրեանց նկարագրի մլոջ , որ ճանապարհօրդէր ընդ շննն , և առնոյր զնմանութիւնս առ հնդետասան շիւլիս ըստ գլխոյ : Քանզի ընտանիքդ այդոքիկ և մեր՝ ի վաղուց հետէ ունեին զտեսակ իմն նախանձաւորութիւնն յախորժակաց մասին , խոռովիցաւ ոգի մեր ընդ այս զարտագողի յառաջադիմութիւնն նոցա ի վերայ մեր . և զամենայն զոր մարթացայ ասել և շատ ասացի , անփոյթ արարեալ , հաստատեցաւ զի և մեք նկարել տացուք զպատկերս մեր : Ա ան որոյ կալոյ զնկարագիրն , զի զի՞նչ կարէի առնել . երկրորդ խորհրդաճութիւնն մեր եղեւ ցուցանել ըզ զերազանցութիւնն ախորժակաց մերոց 'ի դիրս :

Արշավի առ ընտանիս գրացւոյ մերոյ՝ եօթն էին ընդ
ամենայն, և նկարագրեցան եօթն նարնջովք. իր իմն
բարձեալ միանգամայն 'ի սովորութենէ. ոչինչ
աղեսալիսութիւն 'ի կեանս, ոչինչ յարմարութիւն
յաշխարհի : Յանկացաք ուրեմն ունիլ զպայծա-
ռազոյն եղանակ . և՝ յետ բազմաց խնդրոց, եկաք
հուսկ ուրեմն 'ի համակամ' միաբանութիւն նկարա-
գրելոյ ՚ի միասին յընդարձակ պատմական պատկերի
աղբականութեան : Առաւել դիւրագին լինէր այս,
այնու զի մի միայն կազմ' բաւական էր ամենեցուն.
և կարի վայելու լինէր յոյժ, զի ամենայն գեր-
դաստանք ընտիր ախորժակաց զայս օրինակ նկա-
րագրեալ լինէին արդ : Արովհետե ոչ կարացաք
խկոյն ՚ի յուշ ածել զպատմական առարկայ ինչ
քաջագեալ, շատացաք անձնիւր 'ի մէնջ նկարիլ
առանձին պատմական նմանողութեամբ : Ամուսին
իմ ցանկացաւ ձեանալ ըստ Ափրուդիտեայ, և աղտ-
չեցաւ նկարին չճշգել յոյժ յանդամանդս ՚ի լան-
ջազեղ կամարին և ՚ի խոպոպիսն : Երկոքին փոքր-
կունք իւր ունէին լինել որպէս զՅանկութիւնս, առ
կողմամբ իւրով, այն ինչ ես եկեղեցական զգեստիւք,
ընծոյաբեր ունէի լինել նմա մատենիւրք իմովք
՚ի վերայ Ա եստոնեան վիճաբանութեան : Յանկայր
Օլիվիա նկարիլ ըստ Ամազոնի՝ նստելոյ առ թըմ-
բովք ծաղկանց, զգեցեալ կանաչազեղ պատմուձա-
նաւ երին երփն զարդարելով ոսկւով, և զմորակ ՚ի
ձեռին : Առփիա լինելոց էր Հովուհի հանդերձ այն-
քանիւրք զլսովք ոչսարաց, որքան մարթ էր նկար-

չին ձրի մուծանել, և Այսպէս պճնելոց էր գըշեարկաւ և սպիտակ փետրով :

Ո՞նտրութիւնք մեր այնքան հաճելի եղեն Ասպետին, զի պարտաւորեաց մուծանել և զինքն՝ որպէս զմի յընտանեաց, 'ի նմանութիւն ԱՌեժին Աղեքսանդրի առ սաս (Ելելիայ) : Օ այս համարեցաք ամենեքին մեք՝ որպէս զցուցակութիւն իմն ըզձի իւրոյ մտանելոյ յընտանութիւն մեր, և ոչ մարթ էր մեզ մերժել զինդրուած նորա : Միեցաւ ուրեմն նկարիչն ՚ի զործ, և զի անդուլ աշխատէր և շտապ, պակաս քան ՚ի չորս աւուրս աւարտեցաւ համօրէն : Այնատարը էր նկարն, և պիտի խոստովանիլ ոչ անխայեաց նա յերանդա իւր, որոյ վասն ընծայեաց նմա ամուսին իմ զմեծ ներքողեան : Յոյժ հաճ և հաւան գտաք ամենեքին ընդ զործն . այլ տարաբաղդ իմն գետք՝ որ ոչ ՚ի միտ անկաւ մինչ ՚ի վաղճան նկարագրութեանն, ահարեկ արար զմեզ : Այնքան ընդարձակ էր՝ մինչ ոչ զոլ տեղի զետեղելոյ զայն ՚ի տան : Օ խարդ անփոյթ եղաք այսպիսի դլխաւոր հանգամանաց, անհատկանալի է . այլ այսչափ ստոյդ է զի ամենեքեանս անհոգ գտաք մեծապէս : Ա ասն որոյ պասկերն փոխանակ հաճեցուցանելոյ զսնապարծութիւն մեր՝ որպէս յուսացեալ էաք, յեցեալ մնաց կարի իմն գառնացուցիչ եղանակաւ ընդդէմ որմայ խահարարին . ուր պարզեալ էր կտաւն և նկարագրեալ . կարի յոյժ ընդարձակ առ հանելոյ ընդ որոք դուռն, և ծաղը մերոց դրացեաց ամենից :

ԱՐին համեմատեաց զայն երկայն մակուկի Ոչառ
բինսըն Արուսօյի, մեծ յոյժ առ ՚ի բաց տանելոյ,
միւսն կարծեաց յաւէտ նմանէր կարժառի ՚ի սրուա-
կի, ոմանք հիանսոյին եթէ զիարդ կարելի հանիլ
արտաքս . այլք առաւել զարմանային եթէ որպիշտ
մուծաւ ՚ի ներքս :

Այլ թէսկտ զոմանց ղջազը շարժէր, ՚ի բազումս
զշարակամ' թելադրութիւնս բոլըոքեաց տիրապէս :
Ահնգանագիր ասպետին՝ կցեալ երևելով ընդ մե-
րում, շատ մեծ փառք էր առ նախանձուկս չարկա-
նելոյ : Ա ատահամբաւ փափսիք սկսան տարածիլ
՚ի մեր մինաս, և անգորըութիւն մեր անընդհատ
խորվեւը յանձանց՝ որք դային իրեւ զբարեկամն
պատմել մեզ զատացեալս մերոց թշնամեաց : Այսու-
ցիկ համբաւոց միշտ վրէծինդիր լինէաք պատշաճ
ողւով, սակայն վատահամբաւութիւն յար զօրանայ
հակառակութեամբ :

Արկին ուրեմն խորհուրդ կալաք հեռի առնել
զշարակամութիւն թշնամեաց մերոց, և ՚ի վաղձանի
վերջաւորեցաք այնպիսի առաջադրութեամբ՝ որ
շատ խորամանկութիւն ունէր առ կատարելապէս
ընդունելի լինելոյ ինձ : Այս էր, որովհետեւ զըլ-
խաւոր դիտումն մեր էր յերեան ածել զողջախա-
հութիւն սիրոյ Պարոն Թառնհիլոյ, յանձն էաւ
ամուսին խմ փորձել զնա՝ պատրուակելով խորհուրդ
հարցանել յընտրութիւն ամուսնոյ վասն երեց
դատեր իւրոյ : Թէ այս հերիք չլինէր, յայտ առ-
նել տալ զնա, որոշեցաւ ապա երկեցուցանել զնա

Հակառակորդաւ : Բայց և այնպէս ոչ երբէք հաւանեցայ այսմ վերջին առաջարկութեան , մինչ ընկալայ զանգրժելի խոստումն (Օլեվիայ ամսաւոնաւնալ ընդ անձին որ յայսմ առթի հակառակ հանդիսացի , եթէ ոչ խափան արկցէ նա այնմ իւրովի առնլովին զինքն : Այս օրինակ էր թակարդն լարեալ , որում՝ թէ և սաստիկ ոչ հակառակցի , ոչ բովանդակապէս հաւանեցայ :

'Ի միւսում նուագի ուրեմն այցելութեան Պարոն Թառնհիլայ , փոյթ կալան աղջկաւնք իմ 'ի բաց կալ 'ի տեղոջէն , առ 'ի պատեհ տալ մօր իւրեանց 'ի կիր արկանելոյ զհնաբա իւր . այլ մեկուսացան լոկ 'ի միւս սենեակն , ուստի լսելի լինիւր խոսակցութիւնն ամենայն : Հնարագիտութեամբ եմոյժ ամուսին իմ զբանն իներքս , նկատելով թէ մի 'ի գտաերաց Գլամբօրօյայ հաւանականաբար ունելոց էր զվայելուչ զուգակից 'ի Պարոն Ապանկլր : Այսմ հաւանելով ասպետին , էանց նա նշանակել թէ նոքա որ զտաք բաղդ ունէին , հաստատ էին միշտ գտանելոյ զարս բարիս . 'Այլ օգնեցեն Երկինք : " շարունակեաց նա , "աղջկանց այնոցիկ՝ որ չունին : Օ ինչ նշանակէ գեղեցկութիւն , Պարոն Թառնհիլ . կամ զի՞նչ նշանակեն ամենայն առաքինութիւնք և ամենայն կատարելութիւնք յաշխարհի , յայսմ դարուս շահախնդրութեան : Ոչ է այս՝ Օ ինչ է նա . այլ՝ Օ ինչ ունի նա . է ամենեցուն աղաղակ : "

"Քաջ ընդունիմ , Տիկին : " դարձոյց նա , "զար-

դարութիւն ևս և զնորութիւն գիտողութեանց քոց .
և եթէ ես թագաւոր՝ լինէի՝ այլազգ լինէր այդ :
Հայնժամ արդարեւ գեղեցիկ ժամանակ լինէր վասն
անինչ աղջկանց—երկոքին բամբիշք մեր առաջինն
լինէին՝ որոց վասն հոգայի :

“Ա՞հ . պարո՞ն ,” դարձոյց ամուսինս , “զուար-
ձարան հաճիս լինել . այլ ցանկամ ես թագուհի
լինէի , և յայնժամ դիտեմ ուր ականել ունէր երեց
դուստր իմ վասն ամուսիոյ : Այլ արդ՝ զի ՚ յուշ
ածեր ինձ Պարոն Թառնհիլ , ոչ կարես՝ յան-
կատակս , ցուցանել զյարմարաւոր այր մի վասն
նորա : Ինն և տաննամեայ է զարդիս , քաջահա-
սակ և քաջուսումն , և՝ ՚ ՚ նուաստ դատողաւթեան
խումբ , ոչ կարօտի կատարելութեանց :

“Եթէ ինձ անկանէր՝ տիկին ,” պատասխանի ա-
րար նա , “ընտրութիւն առնել , գտանել գտանէի
զոք ունող ամենայն կատարելութեանց՝ որ երջանիկ
առնել կարասցէ զհրեշտակ մի : Այսպիսի ոք՝ լի-
խոհականութեամբ , մե ծութեամբ , վայելութեամբ
և անկեղծութեամբ . այսպիսի՝ տիկին , ըստ կար-
ծեաց իմաց եղեցի յարմարաւոր այրն :”—“Այս՝
պարո՞ն ,” ասաց նա , “բայց ձանաչես զոք այդպի-
սի :”—“Ոչ՝ տիկին ,” դարձոյց նա , “անմարթ է
ձանաչել զոք որ արժանի իցէ այր նորա լինելոյ .
կարի մեծ զանձ է նա առ ստացումն միոյ առն .
ստառածուհին իմն է նա , յիմ հոգին . իսուիմ զոք
կարծեմն հրեշտակ իմն է նա :”—“Ա՞հ , Պարոն
Թառնհիլ , գու շղթքորդես միոյն զգուստը իմ—

բայց զմնաւ ածեմք մեք ամուսնացուցանել զնա
ընդ միում 'ի քոց վարձկանաց, որոյ մայր նոր
վաղձանեցաւ, և որ պէտս ունի տնօրինի. գիտես զռ
նշանակեմ՝ զԱ իլիէմս մշակն, եռանդուն այր՝ Պա-
րո՞ն թառնհիլ, կարող տալոյ նմա զլաւ հաց, և որ
շատ անդամ խնամախօսութիւնս է առաքեալ — (որ
արդեամբք այդպէս էր) — սակայն պարս՞ն, "զրա-
ւեաց ասել, "ուրախ եղէց ունիլ զհաւանութիւն
քոյ առ մերս ընտրութիւն : "— "Օ ինքո՞ւ ամկին՞ն, "
պատասխանեաց նա, "զհաւանութիւն իմ—իմ հա-
ւանութիւն առ այդպիսի ընտրութիւն : Քաւ լի-
ցի : Օ ի՞նչ, պատարագել զայդքան գեղեցկութիւն
և կատարելութիւն և բարելաւութիւն առ իք մի
անդգայ երանութեան, ներեա ինձ, ոչ երբէք հա-
ւանեցայց ընդ այդ անիրաւութիւն : Եւ պատճառս
ունիմ՞ն" — "Արդարեւ՝ պարս՞ն, " ասաց Պերորայ,
"եթէ պատճառս ունիս, այդ այլ բան է, այլ ևս
ուրախ եղէց իմանալ զպատճառսդ այդոսիկ" —
"Երեա ինձ՝ տիկին՞ն, " զարձոյց նա, "չէ մարդ
յերեան ածել առ խորութեանն : (զնելով զձեռն
'ի վերայ լանջացն) — թաղեալ, սեեռեալ են նո-
քա տառ :

Յետ մեկնել զնալոյ նորա, ընդհանուր խորհր-
դակցութեամբ ոչ կարեաք՝ եթէ զի՞նչ խորհիլ
զպատուական ասացուածցու : (Օլելիտ համարեք
զիսասա իբր զնչանս բուռն կրից, այլ ես ոչ այդէ-
քոն եռանդուն էի, պարզ երեւեցու ինձ, որ առա-
ւել սէլոքան ամուսնութիւն դոյր ՚ի նոսա, սակայն

զոր միանգամ և գուշակիցեն, հաստատեցաւ յառաջ վարել զհնարս Ա իլիէմ մշակի. որ ընդ երեխել դստերս ՚ի շինին, սէր ցուցեալ էր առ նա :



ԴԼՈՒԽԻ ԺԷ.

ԴԺՈՒԱՐԵՏ ԴՏԱՆՏ ՈՐՈՇ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ
ԸՆԴԴԻՄՈՒՆԱԼ ԶՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐ
ԵՒ ՀԱՃՈՅԱՐԱՐ ՓԱՐՁՈՒԹԵԱՆՑ :

ԲԵՆՉԻ փոյթ իմ միայն վասն իսկական
երջանկութեան մանկանս էր, անդուլ ջանք Պարոն
Ա իլիէմսոյ հաճելի եղեն ինձ. նա զի անդորր էր
կացութեամբ, խոհեմ և անկեղծ : Ա ոկ սակաւու
քաջալերութեան պէտք էր վերանորոգել զնախկին
կիրա նորա, և այսպէս՝ յետ միոյ կամ երկուց երե-
կոյից, ինքն և Պարոն Ռառանհիլ հանդիպեցան ՚ի
տան մերում, և առ ժամանակ մի կշռեցին զիրեարս
հայեցուածով սրամառութեան. ոյլ Ա իլիէմս ոչ-
ինչ վարձ պարտիւր կալուածատեաւն իւրում, և
առ ոչինչ գրեաց զարտմառութիւն նորա : (Օլիւլիա
յիւրմէ կողմանէ, կերպարանեաց կատարելապէս ըզ
տարփաղ՝ եթէ մարթ իցէ կերպարանել կոչել զայն
որ արդեամբք բնաւորութիւն էր նորա, կեղծառո-
ւելով թափել զամնայն զիանքաղատանս իւր ՚ի

վերայ նորեկ սիրականին : Յօյժ վշտադնեալ երեւեցաւ Պարոն թառանհիլ ընդ այս նախամեծարութիւն , և տիսուր դիմօք հրաժեշտ էառ ՚ի մէնջ . թէպէտ և՝ խոստովանիմու շփոթէր զիս գտանել զնայայնչափ մեծ ցաւ որպէս երեէր լինել , այն ինչ ՚ի կարի իւրում էր այնչափ հետեաւ բառնալ ըզիոչն ՚ի միջոյ , յայտնելով զպատուաւոր կիրս : Այլ որպիսի վշտագնութեանց և տանել երեէր նա , դիւրին էր նշմարել զի թախծութիւն (Օլիվեոյ մեծագոյն ևս էր : Օ կնի իւրաքանչիւր հանդիպմանց այսոցիկ ընդ տարփածուց իւրոց՝ յորոց բազումք էին , մեկուսանոյր հասարակօրէն առանձինն , և տեղի տայր իւրում թախծութեան : Յօյսպիսի կացութեան գտի զնա յերեկոյի միումու յետ ցուցանելոյն զարուեսակեալ իմն զուարթութիւն առ ժամանակ մի : “Տեսանես արդ ՝ սիւելթ իմ ,” ասացի , “որ վստահութիւն քոյ ՚ի սէր Պարոն թառանհիլայ , երազ էր բոլորովին . թոյլ առնէ նա հակառակորդութեան այլում՝ ահնայ . իր ք քան զինքն ստորնագունի . թէպէտ և դիտէ թէ յիւրում կարի է ապահովել զքեզ ինքեան անկեղծ յայտարարութեամբ : ”—“Այլ հայրին ՝ դարձոյց նա . “այլ պատճառս ունի այսմ յապազմոն , դիտիմ ունի : Անկեղծութիւն հայեցուածոց և բանից իւրոց՝ վկայէ ինձ զստոյդ համարմանէ նորա : Կարձ իմն ժամանակ յուսամ յ թեան առցէ զազնուաբառոյութիւն մտաց նորա . և ցուցցէ քեզ որ կարծիք իմ զնմանէ առաւել արդար էին քան զքոյն : ”—“(Օլի-

վիա՝ սիրեցեալդ իմ," գարձուցի ես : "այն նայն
 հնարք՝ որ մինչեւ ցարդ ի գործ եղան պարտաւո-
 րելոյ զնա ի խոստովանութիւն, ի քէն առաջարկեցան
 և հնարեցան ամենայն, և ոչ իսկ ասել կարես
 թէ բռնացայ իւրք կամաց քոց : Բայց՝ մի՛ կարծի-
 ցես՝ սիրելի, թէ գործակից եղէց ես պատրել զհա-
 կառակորդ նորա թիւրեալ կրիւք քովք : Որքան
 և խնդրեսցես տացի քեզ ժամանակ, առ ի զքոյդ
 երեակերպեալ սիրական բերել 'ի յայտնաբանու-
 թիւն . իսկ ի վաղձան պայմանին՝ եթէ տակաւին
 անփոյթ եղեցի նա, պարտական եղէց տիրապէս
 ստիպել՝ որ Պարոն Ա իլեմս վարձատրեսցի սակա
 հաւատարմութեան իւրում : Անունն՝ զոր ցարդ
 կալոյ ի կեանս իմ, պահանջէ զայս յինէն . և խան-
 դաղատանք իմ հայրական ոչ երբէք բռնացեն
 անքութեան իմոյ մարդկայնոյ : Անուանեան ուրեմն
 զօր քոյ : Թաղայնմ այնքան հեռի լինել որքան
 և յարմար համարեսցիս . և նոյնհետայն ազդ ա-
 րասջնը Պարոն Թառնհիլայ զՃիշտ ժամանակէն,
 յորում առաջագրեալ եմ տալ զքեզ այլում :
 Եթէ իրաւապէս սիրէ զքեզ՝ բարի միտք իւր իսկ
 դիւրեաւ ազդեսցեն նմա՝ թէ մի միայն զոյ հնար
 խափանելոյ զկորուսանելն զքեզ ի սպառ : " Ո՞նդ այս
 առաջադրութիւն՝ զոր ոչ կարէր համարել բայց թէ
 իսկապէս արդար, հաւանեցաւ մատէիւր : Ա երա-
 նորոգեաց վերատին զանգրմելի խոստումն ամուս-
 նանալոյ ընդ Պարոն Ա իլեմսոյ, եթէ միւսն ան-
 ըդայ կացցէ . և ի միւսում պատեհութեան առաջի

Պարոն Թառնհիլոյ , հաստատեցաւ օրն և ամբա
հարսանեաց նորա ընդ հակառակորդի նորուն :

Այսպիսի բուռն ընթացք թուէր երկարատկել
զանձկութիւն Պարոն Թառնհիլոյ . բայց որ Օ-
լիվիա խկապէս զգայր՝ մատուցանէր ինձ զմասնա-
ւոր վշտագնութիւն : Յայսմ տաղնապի ՚ի մէջ խո-
հեմութեան և կրից , անկաւ աշխոյժութիւն նորա
բոլորովին , և ամենայն պատեհութիւն առանձնու-
թեան խնդրեցաւ և ծախեցաւ յարտասուս : Անցաւ
եօթնեակ մի , բայց չարար ինչ ջանք Պարոն
Թառնհիլ խափան արկանելոյ հարսանեաց նորա :
՚Ի միւսում եօթնեեկի առաւել փութաջան երևեցաւ ,
բայց ոչ տռաւել յայտնեալ : Յերսորդումն կասե-
ցաւ միանգամայն յայցելութենէ , և փոխանակ
զանժութութիւն ցուցանելոյ զստեր խմոյ՝ որպէս
ակնկալէի , թուէր տանել տխուր անդորրութեան .
զոր համարեցի ես որպէս զլքումն : Յիմոյս կող-
մանէ՝ անկեղծաբար հաճեալ էի արդ . զմուաւ ածե-
լով . թէ գուստոր խմ ապահովել ունէր ՚ի հանապա-
զորդութեան բաւականութեան և անդորրութեան .
և գովլէի ստէպ զորոշումն մոտաց նորա՝ ՚ի նախամե-
ծար ընտրելն զերջանկութիւն քան զնավառու-
թիւն :

Խըրեւ չորեք աւուրբք յառաջ քան զառաջա-
դրեալ հարսանիան , փոքրիկ գերգաստան իմ ՚ի գիշերի
պար առեալ էր շուրջ զսխրալի վառարանաւ , պատ-
մելով զանցելոց և հնարս հնարելով վասն ապա-
գայից . զբաղեալ ՚ի ձեակերպել զհազարաւոր զա-

զափարս , և ծիծաղելով ընդ որ միանդամ յառաջ գայր թեթևամառնթիւն : “Աղբ Վովկէս ,” ասացի , “ունելոց եմք ընդ հուալ զհարսանիս ի տան մերում , զի՞նչ են կարծիք քոյ զբանից և գործոց ընդհանրապէս :”—“Կարծիք իմ՝ հայր , է՛ թէ ամենայն ինչ բարեպէս յառաջնայ . և արդ իսկ խորհեմի թէ երբ քոյրն իմ Լիվի ամուսնացի ընդ Վիլիկէմս մշակին , ունելոց եմք զցքեհան մամուլս և զտախտակամած տաշտա նորա գարեջըոյ՝ առանց վարձու ի փոխ :”—“Եւ կարե քաջ յիրաւի՝ Վովկէս ,” ասացի ես , “և երգեսցէ ես շՄահ և շԺԷՒն առ ի զարթուցանել և զզօրութիւն ոգւոց մերոց :”—“Ուսուցեալ է զերգդ Դիկլայ մերում ,” ասաց Վովկէս , “զոր և կարծեմ քաջ եղանակէ :”—“Այդպէս է ,” ասացի , “ուրեմն եկայք վայելեցուք յայն . ուր է Դիկլ . տուր նմա ասել արխաբար :”—“Եղբայրն իմ Դիկլ ,” ասաց Բիլ կրտսերազոյն իմ , “արդ իսկ չոքաւ արտաքս ընդ Լիվի քեռ . այլ Պարոն Վիլիկէմս ուսուցեալ է ինձ զերկուս երգս , և ես եղանակեցից վասն քո՝ հայրեկլ : Օ սին ընտրեցես . վճռհացէալն Կոբոռու , թէ շՈՒԷԵԳԱՆԵԻՆ ի գերա Մահուան իսպանի Ծան :”—“Օ ողբերգութիւնն ի հարկէ , որդեակ ,” ասացի . “ոչ երբէք լուայ զայդ մինչ ցարդ . և Դիկլուա . կեանք իմ , գիտես որ տիսրդւթիւն չոր է , բեր ուրեմն զանոյշ գինին սնձոյ առ ի զօրացուցանել զոգիս մեր : Օ այնչափ արտասուսքամեալ եմ ընդ ամէն տեսակ ողբերգութիւնս արդեաց , որ՝ առանց միոյ զուարթացուցիչ բաժակի ,

զիտեմ հաւաստեաւ նկուն արաօցէ զիս այս . և
դու՝ Առփին սէրդ իմ, առ զգիթառ և սակաւիկ մի
ձայն պահեա՞ ընդ մանկան ,”

ՈՂՔԵՐԳԱՆԵՒՆ ՚Ի ԳԵՐՄԱՆ ՄԱՆՈՒՆ ԽԱՐԱՎԱՆ ՇԱՀ

Լաւ ժողովուրդք ամբնազեան՝
Խմոյ երգոյ քաջ ունկըն դիք,
Եւ շատ հակիրճ թէ դաջիք զայն,
Ոչ ընդերկար շատ յամեսջիք .

Ե՞ր յիշլինդտըն այլ մի բարի,
Օ որմէ բոլոր աշխարհ ասէր,
Թէ դնացք իւր էր արդարի
Երբ աղօթից զհետ լինէր .

Առ բարեկամ և թշնամին
Ո խիթարիչ բարեսիրտ էր .
Տայր հանապազ զգեստ մերկին,
Երբ զիւր հանդերձըս ազանէր .

՚Ի քաղաքին և գոյր մի շուն
Ո բակէս և այլ բազումք էին,
Այլ սեր ։ սկոմնդ, բարակ, կորիւն,
Ո բակէս և շուն վատթարազքին .

Ծունս ոյս և այր նախ բարեկամ։
 Այլ յորժամ մին քէն ծագեցաւ։
 Ծունն ՚ի սակըս իւրում դիտման։
 Կատաղեալ խիստ զայրն խածաւ։

՚Ի մերձակայ շուրջ փողցաց՝
 Ողջ զարմացեալ գրացիք եկին։
 Եւ երգուան շունն էր կատաղած։
 ՚Ի խածանել զայրըն բարին։

Խիստ կար' վեր վերն երեէր
 ՚Քրիստոնէլց աչաց համայն։
 Եւ յերգնուլ շունն կատաղեալ էր։
 Եւ մեռնէր այրըն երգուան։

Վակայն շուտով հրաշ ծագեցաւ։
 Որ սուտ եհան զզպարտաղման։
 Այլին ՚ի վերաց տռողջացաւ,
 Եւ խեղչ շնըն էր մեռանողն։

“Օ օրանաս, որդեանկ, զօրանաս Բիլ, ողբերս
 դութիւն քոյ արդարե տիրապէս եղերական է։
 Եկոյք՝ որդեանկք, յառադջութիւն Բիլայ առցէ
 նմա Տէր լինել Եղիսակապա յառուր միում։”
 “Յամենայն սրբն, ” ասոց սմասսին լմ, “ի թէ
 քարոզեցէ ուպէս և երգեացն, ոչինչ երկուսնամ
 զնման, Յուլավք յընտանեաց նորա ՚ի մօք կոշ-

մանէ՝ կարէին քաղցը եզանակել, Հասարակաց
ասսթիւն էր յերկրի մերում՝ թէ Բյանելինաա-
պիանք.ք ոչ կարէին ու զզակի հայել յառաջայ իւ-
րեանց, և ոչ Հըջինովնեանք շինացանել զջրադ.
թէ չգյր և մի ՚ի Գրազրանանց որ չկարիցէր եր-
գ' կամ՞ ՚ի Մարջօռամեանց որ չկարիցէր բանգն
ասել՝ “Օ իարդ ելցէ այդ,” ասացի ես, “բըր-
տազոյնն ՚ի ասպերգութեանց նոցա՝ աւելի հաճեցու-
ցանէ զիս Հասարակօրէն, քանի զարդի սեթեեթեալ
ասզու և զիրօ՝ որ քարացուցանեն զմզ ՚ի մի միայն
ասն. արտագրութիւնք յարոց դարշինք միանգա-
մայն և զսվաբանեմք : Մատու եղբօր քում զբա-
ժակ՝ Մոլսէս, Մեծ սղալու թիւնն ասպերգուցա-
պատցիկ՝ է զի ՚ի յուսահասութիւն անկանին վասն
թախծութեանց, որ յոյժ սակաւ ցաւեցուց անեն
զդիս բազգած մասն մարդկուն: Ասրուսանէ բամբիշ
զթաթալան իւր, զհովահար կամ զսկունդի, և վազա-
անուա ախմար բանաստեղծն ատզտչամիկ զձախոր-
դութիւնն ՚:

“Թերես և այդուհու իցէ սովորութիւնն, ” ասաց
Մոլսէս, “՚ի վաերմազայն շարագրութիւնս, այլ
երգք Ասանելահայ՝ որք ժամանեն առ մեզ, քա-
ջածանօթ են բոլորովին, և ձույեալ մի և նոյն զա-
զափարաւ: Ասլին պատահէ Գառլիսյ և խօսուկ-
ցին ՚ի միասին, մասաց անէ ՚նու զարդեւ ինչ առ-
նավաճառի զետեղեւ, ՚ի հերս իւր, և սա մասացանէ
՚նմա զիտւնչ ծազկանց, և առա երթան յեկեղեցին
՚ի միասին, ուր զբարի խրատ տան գետահասակ յա-

և երժահարսանց և պատանեաց, ամուռնանալ որ բան
փութով և կարողացին :

“Եւ յոյժ բարի խրատ յիբաւի՝” ասացի. “և
լսեմ չի.ք աեղի յաշխարհի՝ ուր խրատ այդքան
պատշաճաւ որութեամբ կարևոր իցէ տալ, որպէս
անդ, զի որպէս համոզին զմեզ յամունանալ,
մատակարարէ և զինն ընդ նմին. և արզարե ընտիր
վաճառանոց է այն տղայ, ուր ասեն զինչ ալիսոյ
է մեզ, և մատակարարեն ըստ ոլիտելոյ :

“Այս տէր,” գարձոյց Վովակս, “և գիտեմ
զերկուց միայն այսպիսի վաճառանոցաց կանանց
յիշւոսիա. Ուսնելահ յԱնդզիա, և ֆրանտարաբիա
ի Վագնիա, Վաճառանոց Վագնիոյ բաց է անզամ
մի ՚ի տարին, այլ կանայք մեր յԱնդզիոյ վաճա-
ռելի են յամեն զիշերի :

“Խրաւ է տղայ,” ասաց մայր նորա, “Հիւա-
ռուցն յԱնդզիա է մի միայն տեղին յաշխարհի՝ վասն
արանց դտանելոյ զկանացի :”—“Եւ վասն կանանց
կառավարելոյ զարս իւրեանց.” ընդմիջի ես, “Ա-
ռած է առ արտօքինս՝ զի եթէ արկեալ լինէր
կամուրջ ՚ի վերայ ծովու, գային տիկնոյք Աի-
ստգնուոյն ամնենեքին՝ առնուլ զօրինակ ՚ի մերոց, զի
նչ զնն կանայք յիշւոսիա նման մերոց, բայց եկ
Դիերորայ՝ կեանք խմ, քեր մեզ զմիւս սրուտակ. և
Վովակս՝ տուր մեզ զքաղցրածոյն երդ։ Որպիսի
չորհակալութիւնս չըրտատիմք յիշինից՝ սակս ոյտ
արթիակ պարզելոյ զանդորրութիւն, զողջութիւն
և զբառականութիւն։ Առաւել երջանիկ համարիմ

արդ զանձն՝ իմ՝ քան զամնամեծ թագաւորս ՚ի վերայ երկրի : Չունի նա զայսալիսի վառարան, և ոչ զայսալիսի զուարթ դէմս շուրջ զիւրե : Այս Դաբրորան, համբուրենիք զարդիս զալիս ծերութեան : Բայց երեկոյն կենաց մերոց հաւանականաբար երջանիկ եղիցի : Անրեալ եմք մեք ՚ի նախահարց՝ որ չունեին զարատ . և զհետ մեր թաղցուք զբարի և զառաքինի ազգ մանկանց : Առ կենդանութեամբ՝ զօրավիզն մեր և բերկրութիւն եղիցին աստեն, և յետ վաղձանի փոխագրեացեն զալատիւ մեր անարատ յազգաց յազգը : Ե՛կ՝ որդեակ, սպասի մք երգոյ քում : տուր մեզ զմիտաբանական երդ : Բայց՝ ուր է սիրեցեալն իմ (Օլիվիա . ձայն փոքրիկ քերովքէին այնուիկ քաղցրագոյն է ՚ի ներդաշնակութեան : ”

Խսկոյն ընդ խօսելս՝ վազս առեալ եմուտ Դիկ
՚ի ներքս . “Ո՞հ . հայրեկ . գնաց նա ՚ի մէնջ, գնաց
նա ՚ի մէնջ . Լիվի քուրիկն իմ գնաց ՚ի մէնջ ՚ի
յաւիսեան : ”—“Պանաց, որդեակ : ”—“Այս, գնաց
նա ընդ երկուց պարնաց կառօք սուրհանդակաց .
և մի ՚ի նոցանե համբուրեաց զնա, և ասաց մեռա-
ներ վասն նորա . և ելաց սա յոյժ և կամեր յետա-
դասնալ . այլ նա համնզեաց զսա վերստին և սա
չոքաւ ՚ի կառսն և ասաց . Ո՞հ . զբնչ իմ խեղձ
հայրն արասցէ, իբրեւ լուիցէ զկորուստ իմ : ”—“Արդ
ուրիմն՝ որդեակք, ” զոչեցի, “գնացէք և թշւառա-
ցարուք . քանզի ոչ այլ վայելեսցուք զժամ մի
երբէք : Եշ՝ եցէ թէ յաւերժական ցասումն Երկ-
նից իջցէ : ՚ի գլուխ իւր և իւրոցն — զայսօրինակ

շրթել զիս յաղջկանէս : Եւ անշուշտ եղիցի , առ
ի յիստ աւնուի զքաղցրիկ անոնիլ՝ զոր աւաջնոր-
դէի յերկինս : Այնանի անկեղծութիւն որ նայն
ուներ : Բայց արդ առնեացն երջանկութիւն մեր
վերջառ յերկրի : Գնացէք , և թշտ առացարուք
և վասանաւն եղիք . զիս սիրտ խմ բեկաւ . ի ներ-
քուստ : ”—“Հայր , հայր ,” զոչեաց Վավսէս , “ե
այս է արտ թիւն քոյ :”—Արտ թիւն որդեակի . այն
տեսջլք գուք որ ունիմ զարութիւն : բերէք զա-
տրճանակս խմ : Օ հետ պեղեցից գաւաճանին : Ծար-
չափ եղիցի նա յերկրի հետամատ եղէց նմա :
“Օ երացիալ որպիս եմն , զայէ զիս տակաւին զի
շնիւիլ կուեմ : Ովլ անօրինին . ովլ նենդուսոր ա-
նօրինին :” Օ այսու ժամանակաւ զբուամբ ածեալ
էի զատճանակս խմ , յորժամ խեղձ ամսու սինս
որոյ կիրք չեին այնքան բուռն որքան խմ , կարու
զիս ի զիրկու իւր : “Աիրելի , ամենասիրելի այրդ խմ :”
առաց , “մի միայն զէն որ զարդ իս պատշաճի դոշ-
զանւն ձեռաց քոյ : և Ա ետարան : Բայց զայն
սիրելի : և ընթերցեր զլւաս մեր ի համբերութիւն :
քոնզի ահարդարար ոլ սորեաց նա զմեզ :”—“Ան-
չուշ՝ տէր :” կցեաց որդիս յիտ ստկաւ լռութեան :
“սրամաս թիւն քոյ բուռն է յոյժ և անվայելուչ :
Դառւ պիտի միսիթարիչ լիցիս մօր խմայ : և յաւե-
լուս դու ի ցուս նորտ : Յայէ անվայիլ էր քեզ
և յարդոյ կուրդ ի քում : զայտօրինակ անիծանել
ամենամծ թշնամոյ քոյ : չէր սուրտ քեզ անիծա-
նել նմա , թէե անօրէն է :”—“Չանիծի զիս որ-

դեակ, անիծեցի ես : ”—“Արդարեւ անիծեր՝ հայր, և
այն կրկնակի : ”—“Աղա ուրեմն թաղցին Երկինք և
ինձ և նմա, եթէ արարի : Եւ արդ՝ որդեսկը իմ՝
տեսանեմ զի առաւել քան զմարդկային էր բարե-
սիրութիւնն՝ որ ուսոյց մեզ օրհնել զթշնամիս մերս
Օրհնեալ եղիցի Առաք անուն : Արաւ վասն ամե-
նայն բարութեանց զոր ետ մեզ, և ամենայնի զոր
էտոն ՚ի մէնջ : Այս սակայն ոչ փոքր՝ ոչ փոքր
ինչ վիշտ է՝ որ զարտասուս քամել տայ յայս
թարշամնալ աչցաց, որ ՚ի հարուստ ամաց հետեւ
չլցին բնաւ : Օ երեխայն իմ, գայթակղեցուցա-
նել զսիրեցիայն իմ : Խցէ՛ թէ շու արումն կուցէ՛
մեզնյ Աստու ծոյ, զինչ զան ինձ սսեր : Յաւ
լիցի քեզ՝ սիրելին իմ, զիարդ յաւ և զիարդ ուժու-
րալի էր ՚նա—ցդարշնիկ վայրկեանս այս ամենայն
փոյթ ՚նորա էր երջանկուցուցանել զմեզ : Անկարծ թէ
մեռեալ էր : Ասկայն գնաց, պատիւ տան մերում
արատեցաւ, և պէտք են ինձ հայել առ միւս աշ-
խարհ վասն երջանկութեան : Բայց զաւ որդեսկը,
տեսեր դու զնասա զնաւ : գուցէ բանագատնաց զնա
յերթալ : Եթէ բռնագատեցաւ, թերես և անմեղ
եղիցի տակաւ ին՞”—“Վհ, ոչ տէր ?” ասաց երեւ-
խաց : “միւսյն համբւուրեաց զնաւ, և անուանեաց զիւր
հրեշտակ : և ելաց ՚նու յաժ, և յեցու ՚ի բազու կ
՚նորին, և արշաւեցին սրնմաց ?”—“Վայ տպերսխ-
տին ?” դուքսաց ամսութնաւ որ հազիւ բարբառիւ կա-
րեր առ լոլոյն : “զայսօրինուկ վարիւ ընդ մեզ :
Արդելմունք և ոչնչ եղան ՚ի վերայ ախորժակաց

նորա : Ողօրմելի պոռնիկն անարժանութեամբ ելիք զժնողս իւր , առանց իրիք գրգռութեան . զայս օրինակ զժտղկեալ ալիս քո իջուցանել ՚ի գերեզման , և ես պիտի վութով հետև եմ :

Օ այս օրինակ գիշելն այն՝ առաջինն մերոյ իսկական թշուառութեանց , անցուցաւ ՚ի գաւնութեան տրանժանաց , և անզօր յարձակմանց յափշտակութեան մասց : Բայց և այնպէս յառաջադրեցի որոնել զդաւաճան մեր և զանդի նորա , և ՚ի գէմս հարկանել նորա զվաառութիւն իւր : Ճշէզս առաւօտուերեցաւ տեղի թշուառ աղջկանն ՚ի սեղանի , ուր հասարակօրէն զուարթութիւն և բերկլութիւն ընծայէր մեզ ամենեցուն : Ամուսին իմ՝ ըստ առաջնոյն զուն գործեաց անզորբել զսիրտ իւր թշնամնօք : “Վի՛ այլ անարդ ամօթոյն այն տան մերոյ՝ լիցի ստուերացուցանել միւս անդամ զխաղաղաւէտ գրանա յարկաց մերոց : Վչ ևս կոչեցից զնա դուստր իմ երբէք : Վչ թողանկին կեալ ընդ վատանուն սեղեիսի իւրում : ամաչեցուցէ զմեզ , այլ ոչ երբէք պատրեսցէ միւս անդամ : ”

“Ան դու ,” ասացի , “մի այսպէս խիստ բարբառեցես . գարշումն իմ ՚ի յանցանաց նորա չեն ինչ պակաս ՚ի քոյոյն . բայց այս տուն և այս սիրտ միշտ բաց եղիցին առ ողորմելի գարձարար մեղաւորն զղացեալ : Որչափ կանոււի և գարձցի ՚ի յանցաւորութենէն՝ այնչափ աւելի ընդունելի եղիցի ինձ : Առ առաջին գամ՝ ամենալաւք անդամ գթեացին . հնար հրապուրեսցէ և նորութիւն սփուեցէ

զհրապոյր իւր : Առաջին սղալումն է ծնունդ մի-
ամուռաթեան, բայց՝ այլ ամենայն ծնունդք են յան-
ցանաց : Այս, ողորմիլի իքն ընկունելի եղիցի այսմ
սրտի և այս տան . թէ և վարակեալ բիւրաւոր
մոլութեամբք : Ունկնդիր եղէց վերստին դաշնա-
կութեան ձայնի նորա, վերստին անկեայց զլանջօքն
գորտվանօք՝ եթէ լոկ զզջումն գտից անդ, Բեր՝
որդին, զԱստուածաշունչն իմ և զցուալ . խնդրեցից
զնա յամենայն ուրեք . և թէպէտ չկարիցեմ փրկել
զնա ՚ի յամօթոյ, խափան եղէց թերես հանապազոր-
դութեան անօրինութեանն :



ԴԼՈՒԽ ԺՅ :

ՀԵՏԱՄՔՈՒԹԻՒՆ ՀՈՐ ԱՌ ՚Ի ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ
ԶԿՈՐՈՒՍԵԱԼ ԶԱՏԱԿՆ ՑԱՌԵՒՆՈՒԹԻՒՆ :

ԹԵՂԵԿ երեխայն ոչ կարէր նկարագրել զհա-
սակ առն՝ որ տարաւ զքոյր իւր ՚ի սրավար կառան,
սակայն կասկածանք իմ անկան բոլորովին ՚ի վերայ
գեւահասակ կալուածատեան մելում . որոյ համ-
բաւ առ այսպիսի չարութիւն քաջածանօթ էր յոյժ .
Ուզզեցի ուլեմն զգնացս իմ գէալ ՚ի թառնհիլ
կաստըլ, ՚ի մտի եգեալ ՚ի գէմս հարկանել նմա ,

և թէ հնար ինչ դարձուցանել յետս զղուստը իմ՝
այլ՝ նախ քան զժամանումն իմ՝ առ դուրս նորա,
պատահեցայ միում՝ 'ի ժողովականաց իմց որ
պատմաց ինձ եթէ ետես զմատաղաւու րց բամբիշ
մի՛ նման դատեր իմց 'ի կառս քաջարշաւաց ընդ
պարնի միումն զոր՝ 'ի ձեռն նկարագրութեանն,
կարծել և եթ կարէի լինել Պարսն Բըռչէլ ։ և
թէ յոյժ արակս արշաւէին ։ Բայց և այնպէս լուրս
այս ոչ իւիք բաւարարեաց զիս ։ Փութացայ ու-
րեմն ի՛ ընակութիւն ասպետին ։ և թէ և կանուխ
յոյժ, ստիպէցի տեսանել զնա իսկոյն ։ Երեկցաւ
նա ընդ հուպ ամենապարզ և մատրիմ եղանակաւ,
և երեկցաւ բոլորովին առշետալ ընդ փախուստ
դստեր իմց ։ 'ի պատիւ իւր երդնլով միանգամայն
տգէտ լինել զայնմանէ ։ Դատապարտեցի ուրեմն
զիախլիին կասկած իմ՝ և դարձուցի զնոսա բոլորովին
'ի վերայ Պարսն Բըռչէլայ ։ որ՝ 'ի միտ ածի, սա-
կաւուք յառաջ զբազում՝ առանձին զրուցատրու-
թիւնս կալեալ եր ընդ նմու ։ իսկ երեսումն միւսոյ
վկայի՛ չեթող ինձ զտեղի երկուանալոյ զանզգամու-
թենէ նորա, որ հաւաստեաց ինձ եթէ նա և դուստրն
իմ իրօք գնացեալ էին 'ի կողմն Ա էլայ ։ իբրու
երեսուն մղնօք հեռի ։ ուր համախմբեալ էին
բազմութիւն մարդկան ։ Ա արեալ գոլով յայն
ստհման մտաց, յորում՝ առաւել պատրաստ եմք
դործել խուճապաւ քան խոկալ ուղապէս, ոչ
երբէք իսրհեցայ ընդ իս՝ թէ լուրքս այսոքիկ
տուեալ եղն թերես յանձանց դիտմամբ կարգելոց

առ մոլորեցուցանելոյ զիս . այլ՝ հաստատեցի հետաւ մուտ լինել դատեր իմոյ և երեակերպեալ զառածչի նորա մինչև անդ : Ա արեցի զգնացս իմ փութաշան եռանդեամբ , հարցանելով զբազումն առ ձանապարհայն . սակայն ոչինչ լուր գտի , մինչ մուանելով ՚ի քաղաքն , պատահեցայ առն միում հեծելոյ , զոր ՚ի յուշ ածի տեսեալ ՚ի տան ասպետին . և ՚նա հաւասարեաց ինձ՝ զի եթէ հետեւ ՚ի նոցա մինչ ՚ի կրկէսն ձիարշաւանաց՝ որ երեաուն մըլնօք միայն հեսի էր , իրօք հասանեի նոցա . քանզի յանցելում զիշերի տեսեալ էր զնոտա կաքաւել , և բազմութիւնն ողջոյն սխրացեալ էին ընդ հանգէս դատեր իմոյ : Ա աղքաջ ընդ առաւօնն վաղուեան աւուր՝ գեացի գեակ ուղիղ ՚ի տեղին ձիլնթացից , և զորս ժամն երեկոյի հասի յասպարէզն արշաւանաց : Ժաղով բազմութեանն յոյժ պայծառափայլ երեւէին , ամենեքին փութաջան զբաղեալ ՚ի մի միայն հետամտութիւն՝ այն է բերկրութեան . որքան օտար յիմոյն՝ այն ինքն դարձուցանելոյ զկորուսեալ դաւակ մի յառաքինութիւն : Ա արծեցի տեսանել զՊարսն Բըռչէլ սակաւուք ՚ի բացեայ յինէն . այլ՝ որպէս թէ երկուցեալ ՚ի հանգիպելոյ , ընդ մերձենալ իմում խռնեցաւ ՚ի մէջ ամբոխին , և այլ չտեսի զնա մինչ ՚ի սպառ :

“Եոր մուաւ ածի՝ թէ անօդուտ լինէր հետամուտ լինելն իմ հեռազայնս , և հաստատեցի ՚ի մտի դարձանել ՚ի տուն առ անմեղ ընտանիս իմ . որք պէտա ունէին օդնականութեան իմում : Այսց ամբոխումն

մտացս և վաստակն որում տարայ՝ ընկեցին զիս յախտ
ջերմութեան, զորոյ զնշան նշմարեցի յառաջ քան
զելանելն իմ 'ի կրկիսէն : Այս ևս միւս անակ-
նունելի հարուած էր, այսու զի առաւել քան
զեօթանասուն մղնօք հեռի էի 'ի տանէ . զիարդ
և իցէ մեկուսացոյ 'ի փոքրի' վաճառանոց ինչ
գորեջոյ առ ձանս պարհաւն, և յայսմ վայրի՝ սո-
վորական առանձնութեան կարօտութեան և սոկա-
ւապէ՛ռութեան, ըստ կողմանեցայ հսմբերութեամբ
գէ ո ակնկալեալ ելից խօթութեանս : Հաշեցոյ
աստէն իբրև զեօթներակս երիս . այլ 'ի վաշանի
յաղթեաց խառնուած մարմնոյ, թէպէտե զուրկ
էի 'ի փողոյ հատուցանել վասն ծախուց հիւրըն-
կալութեանս : Կարելի է լոկ նեղսովտութիւնն
յայսմ վերջին պատահարէ՝ արկանէր զիս վերս-
տին 'ի հիւանդութիւն, եթէ չէր ձանապարհորդի
ուրում լցույեալ զպիացս, որ եմուտ առնուլ ըզ
թեթև կազոյլր : Աչ այլ ոք էր սա քան զմար-
դասէր գրավաճառն՝ որ 'ի գտւիթ Առարք Պազոսի
եկեղեցւոյ, որ զանհամար գրքոյկս է յօրինեալ 'ի
պէտս մանկանց . անուանէր զինքն բարեկամն նոցին,
սակայն բարեկամն էր ամենայն մարդկան : Խսկ և
խոկ ընդ իջանելու փութայր անզրէն յուղի անկա-
նել, զի ունէր միշտ 'ի ձեռին զգործ յոյժ կարե-
որ, և յայնմ ժամանակի հաւաքէր իրավէս զնիւթօ
վասն պատմութեան Պարտն Յառվմաս Տըիսկի ու-
րում: Յիշեցի խոյնի զկարմիր պալարուոլից դէմն
բարեբնոյթ առնս այսորիկ . քանզի հրատարա-

կերալ էր սորա զգրութիւնս իմ ընդդէմ Արկնառ-
մուսնութեանց ժամանակին . և ՚ի սմանէ վոխ առի
զքանիի մի գրամս , վճարել ինքեան յիմում' գար-
ծի : Ելանելով ուրեմն ՚ի պանդոկէ՝ որավհետեւ դեռ
տկար էի , հաստատեցի ՚ի մտի անաշխատ վարել
զձանապարհ իմ' գէպ ՚ի տուն , տասն մղոնք յաւուր :

Առողջութիւն և սովորական անդորրաւթիւն իմ
զողցես վերանորոգեցան , և անզոսնեցի արդ զհպար-
տութիւնն՝ որ անսաստ արար զիս Զեռին ուղղու-
թեան : Ո՞ւրդ սակաւ գիտէ որպիսի վիշտք են ար-
տաքոյ համբերութեան իւրում' առ ՚ի ժուժկա-
լել , մինչեւ զիտրձն առնու . զոր օրինակ՝ յելանելն
՚ի բարձունս փառասիրութեան՝ որ յատրուաէ պայ-
ծառ երեի , ամէն ոտնվոխ ամբարձման մերում
ցուցանէ մեզ զնոր և զնսեմ' տեսարանս ծածկեալ
գերեանաց . սոյն օրինակ և յիշանելն ՚ի գագա-
թանց հեշտութեան՝ թէպէտ և հովիտն թշուառու-
թեան խաւար և նսեմ երեեսցի ՚ի բարձանց , սա-
կայն զբաղեալ միտք՝ տակաւին ուշագիր զբօսա-
նաց իւրոց , գտանէ ընդ իջման զիմն հրապութել
և հաճեցուցանել : Որչոփ և մերձենամք՝ նոյնչափ
և խաւարչտին առարկայք պայծառանալ երեին ,
և մտաւոր ակն յարմարեալ եղանի նսեմ' վիճակի
իւրում :

Յառաջեցի արդ ՚ի գնացս իմ և իրեն զերկուս
ժամս ընթացայ , յորժամնշմարեցի որ ՚ի հեռաս-
տանէ սոյոյի սկս երեեր , որում հաստատեցի ՚ի
մտի հասանել . այլ իրեն ժամանեցի՝ գտի զայն

լինել կառք աստանդական խաղարկուաց , որ զտեսարանս և զայլ զարդս թատրոնականս բարձեալ տանէր 'ի միւս դիւզ , ուր յանդիման առնել ունեին : Այլին ընկերակից էր միայն այրն որ կառավարէր , և մի ՚ի խմբից . զի մնացեալ մասն խաղարկուաց զհետ գալ ունեին ՚ի հետագայ աւուր :

“ Լաւ ընկերութիւն առ ճանապարհու , ” առէ առակ , “ կարծ հատանէ զուղին : ” Ա ասն որոյ մտի ՚ի զսոյց ընդ խեղճ խաղարկուին . և զի ես ինքնս երթեմն ունէի զթատրոնական կարողութիւնս ինչ , ճառատեցի ՚ի վերայ այսպիսի բանից սովորական ազատութեամբ իմով . բայց զի քաջիկ իմն անտեղեակ էի արդի որպիսութեանն , հարցի զո ոք լինել արդեան անուանի գրչոց թատրոնին--ովլ Դարայդոնք և Օտվեք.ք ժամանակին : “ Թուի՞ ինձ պարո՞ն , ” ասաց խաղարկուն , “ սակաւ.ք յարդի բանաստեղծից մերոց պատիւ անձին համարեսցին համեմատիլ ընդ մատենագրաց զոր յիշատակես : Ոճ Դարայդլինի և Ոչոյի՝ պարո՞ն , բոլորովին արտաքոյ են սովորութեան—ախորժակ մեր ընդ կրունեկն է դարձեալ զդար մի ողջոյն—Պյէքը , Բէն Պ անսըն և բոլոր խաղարկութիւն.ք Շէքսպիրայ , են մլրայն որ ընդունելի լինին : ” — “ Օ ինըրդ , ” ասացի ես , “ կարելի՞ է որ արդեան ժամանակ հաճեսցի ընդ վաղմի եղանակն այն խօսից , ընդ անսովոր կատականս , ընդ հոծ նկարագիրսն՝ որովք լի են դործքդ յիշատակեալ.ք : ” — “ Պարո՞ն , ” դարձոյց ընկեր իմ : “ Ժողովուրդն ոչ դատէ ինչ զեղանակէ խօսից , կամ

կատականաց, կամ նկարազրութեանց, չէ այդ իւրեանց գործ, գնան նոքա զբօննուլ միայն, և ուրախ զանձն համարին իրբեւ վայելեն զմնջկատակութիւն իմն վաւերացեալ անուամբ. Պանալնի կամ՝ Շեքսպիրայ, "—"Ապա ուրեմն երեի," առացի, "թէ արգեան բանաստեղծք մեր՝ առաւել կերպարանողք են Շեքսպիրայ քան ընութեան," "Արդարն ասել," գարձոյց ընկեր իմ, "չգիտեմ եթէ երբէք կերպարանեն զիմն. և ոչ խել՝ իրաւի՛, պահանջէ զայդ ժողովուրգն ի նոցանէ, ոչ շարադրութիւն գործոյն, այլ թիւ գիւտից և դրութեանց է որ ելուզանէ զգովեստ : Գիտեմ ես զգործ մի զլիսովին առանց միոյ կատակի՝ ամփոփեալ ի շնորհաժողովրգեան, և զմիւս խնայեալ՝ առ մուժանելոյ հազներգութին զկշտացաւ 'ի նմա : Ամէն ասեմ, պարո՞ն. գործք Ամերիկայ և Այարկուհարի շատ ունին հանձարեզութիւն առ քմաց արգեաց, արգեան ոճ՝ բարբառոյ մերոյ առաւել բնական է :

Օ այսու ժամանակաւ կահ ու կարասիք աստանդական խմբին ժամանեցան 'ի զիւղն, որ՝ երեի, հասու եղեալ մերձաւորութեան մերում, և եկեալ էին արտաքս պինուլ ընդ մեզ, զի՝ ընկեր իմ գիտեաց, թէ աստանդականք առաւել զննականս ունին արտաքուստ քան 'ի ներքուստ գրան : Աչ զմուածի զանցարմարութիւն լինելոյս յայշապիտում ընկերակցութեան, մինչեւ տեսի զամբոխ խուժանին խռնիլ շուրջ զինեւ : Փութացայ ուրեմն ապաւինիլ յառաջին պանդոկն որում պատահեցայ, և առաջնոր-

գեալ ՚ի դահլիճ՝ հասարակաց, սլատահեցայ պարնի
ուրում վայելազգեստի՝ որ եհարց ցիս եթէ խակա-
կան երեցն էի խմբին, թէ հանդերձ այլակերպու-
թեանն էր զոր զգեցեալ էի: Քետ պատմելոյ նմա-
զիսկն, և թէ չպատկանէի ես իւիք ընկերակցու-
թեանն, հաճեցաւ խնդրել յինէն և ՚ի խաղար-
կումն բաժանորդ լինել դաշխուրանի միոյ օշարա-
կացքոյ: * յորոյ վերայ բանս ՚ի մէջ էառ ՚ի վե-
րայ արդի քաղաքականութեան՝ մն ծաւ հռան-
դեամբ և փութով: ՚ի մտի խմում համարեցի զնա-
ոչինչ պակաս քան դէթ զմի յաւագանւոյն: բայց
գոգցես հաստատեցայ ՚ի համարման իմում՝ յոր-
ժամ ՚ի հարցանելո վասն ընթրեաց, պարտաւորեաց
զիս և զխաղարկուն ընթրել ընդ իւր ՚ի տան իւ-
րում: ընդ որ խնդիր՝ զինի սակաւուց թախանձա-
նաց, համոզեցաք հաւանիլ:



ԳԼՈՒԽ ԺԹ:

ՆԿԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԸՆՉԱՆ ՏԻԳՈՀՏ ԶԱՐԴԱՌ ԿՈՌԱ-
ՎԱԲԱԽԹԵՆԵԼ: ԵՒ ԶԱՆԳԻՑՈՂԻ ՎԱՍՆ
ՄԵՐՈՒՄ ԱԶԱՑՈՒԹԵԸ:

ՏՈՒՆ, ընդունելութեան մերոյ սուղ ինչ հե-
տի գոլով ՚ի գեղջէն, կոչնատէր մեր դիտեաց թէ:

* Է ըմպելի Անգղիացւոց յօրինեալ ՚ի ցքոյ, ՚ի շաքարե և ՚ի
հեթու լեմոնի խառնեալ ջերմ լըով: ուր կոչէն Punch Պըն:

ոլովհետև կառք պատրաստի չէին, առաջնորդէր
մեզ հետիոտս . և վաղվաղակի ժամանեցաք՝ ի մի
՚ յոյժ հոյակապ բնակարանաց, զոր տեսեալ էի
յայնմ մասին շինի : Արահն յոր մոտաք՝ բոլորավեն
շքեղ էր և նորաձեւ . չոքաւ նա հրաման տալ վասն
ընթրեաց, այն ինչ խաղարկուն նշանացի արար
ակնարկութեամբ՝ թէ հանգիպեալ էաք բաղդի :

Պարձաւ կոչնատէր մեր վաղվաղակի, համադամ
ընթրիք ածան, երկու կամ երեք տիկնայք տնային
հանգերձիւք ժանուցան, և զրուցատրութեան բա-
կիզբն եղեւ մասնաւոր զուարթութեամբ : Բայց և
այնպէս քաղաքականութիւնն էր ՚նիւթ՚ն՝ յորոյ
վերայ կոչնատէր մեր յաւէտ իմն ՚նազարանէր .
քանզի վկայէր՝ թէ ազատութիւնն էր պարձանք
իւր և ահաբեկութիւն : Յետ վերացման սնդոնի՝
եհարց ցիս եթէ տեսեալ էի զվերջին Ա՞նիտոր .
որում ՚ի բացասականն առնլով զպատասխանի :

“**Օ** ինչ . և ոչ զլոգիտըր* կարծեմ .” ասաց :

“**Ո**չ, պարզն ՚” գարձուցի ես : “**Հ**իանալին, յոյժ
հիանալին է ,” գարձոյց կոչնատէր իմ . “արդ՝ ըն-
թեռնում ես զբովանդակ քաղաքականութիւնս որ
հրատարակին . (**Օ**րական, **Հ**ասարակաց, **Տ**ումար,
Ժամանակագրութիւն, **Լ**ոնգոնայ Երեկոյ, **Ա**յտ-
հալայ Երեկոյ, զեօթնուտասն **Շ**տեմարանսն և
զերկոսին քննութիւնն , և թէպէտ ատեն ՚նոքա
զերեարս , ես սիրեմ զնոսա ամենեսին : **Ա**զատու-
թիւմ՝ պարզն, ազատութիւնն է պարձանք Բարի-

* Անուանք լրաթղթոց .

տանացւոց . և՝ յարեն ածխահանքաց իմոց ամենից , յարգեմ զպաշտպանս ՚նորա : ”—“ Ուրեմն յուսալի է , ” ասացի , “ յարգես զթագաւորն , ”—“ Այս . ” դարձոյց կոչնատէր իմ , “ յորժամ” առնէն զինչ մեքս կամիմք . այլ եթէ ընթանայց որպէս ՚ի նորոյ արար , ոչ այլ բնաւ աշխատ եղէց յիրողութիւնս իւր : Չասեմ ինչ , միայն կարծեմ” որ զիրս ինչ առաւել բարւոք կարէի կառավարել : Չկարծեմ թէ բաւական խորհրդատուք իցեն . պարտ է նմա խորհրդակցիլ ընդ ամենեսին՝ որ յօժարեսցին խորհուրդ տալ . և յայնէամ” իրողութիւնք այլ իմն կարծ եղանակաւ կատարեսցին :

“ Ցանկամ , ” ասացի , “ որ այդպիսի ինքնակոչ խորհրդատուք հանեսցին յանուրն տանջանաց (Pillory) : Պարտաւորութիւն բարեսէր մարդկան՝ է օգնել տկար կողման կարգադրութեան մերոյ . սրբազան կարողութեան այնմիկ՝ ասեմ” , որ յամաց ինչ հետէ տկարանայ օր ըստ օրէ , և կորուսանէ զանհական բաժին զօրութեան իւրոյ ՚ի տէրութեանն : Այլ տփէտքս այսոքիկ տակաւին շարունակեն զնոյն գոչիւն ազատութեան , և թէ զժանրութիւն ինչ ունիցին՝ արկանեն անսարդաբար յիշեալ կողմն նժարին :

“ Օ իարդ , ” գոչեաց մլր ՚ի տիկնաց , “ ապրեցայ ես տեսանել զոք այնքան անարդ , այնքան աղտեղի , որ թշնամի իցէ ազատութեան և պաշտպան բանաւորաց ազատութեւն . սրբազան պարգեն այն Երկնից . այն ժառաւոր արտունութիւնն Բրիտանացւոց , ”

“Աւրելիք ինչ իցէ,” գոչեաց կոչնատէը միր, “զի գոյի ոք զարդիս փաստաբան ստրկութեան .— որ անարգաբար անձնատուր լիցի յարտունութիւն Բրիտանացւոց : Աւրիցէ ոք՝ պարո՞ն, այդքան ցած լինել :

“Քաւ լիցի՝ պարո՞ն,” պատաօխանի արարի . “ես վասն ազատութեան եմ, յատկութեանն այն միկ աստուածոց : Փառաւմը ազատութեան, քնաբանին արդի հրապարակախօսութեան : Ամիսմ զամնեսին թագաւորս լինել : Ես ինքնս թագաւոր եղէց : Ամենեքին մեք բնականաբար միահաւասար իրաւունս ունիմք գահոյից . ամենեքին մեք հաւասար եմք ի սկզբանէ : Այս է իմ կարծիք, և էր երբեմն կարծիք կարգի ուրուք մարդկան՝ որք կոչէին Հաւասարողք : Պանացան կացուցանել ըզ միաբանութիւն ինչ, ուր ամենեքին ազատք իցեն հաւասարապէս : Այլ եղուկ, զի ոչ յաջողէր ընաւ . զի ումանք հզօրագոյնք էին ի նոսա, և ումանք ճնրտարագոյնք քան զայլս, և սոքա եղեն տեարք միւսոց, զի որպէս հեծանէ ճիադլուման քոյ զերի-վարս՝ զի ճարտարագոյն կենդանիի է քան զնոսա, սապէս և կենդանին որ առաւել ճարտարագոյն կամ հզօրագոյն լիցէ քան զնա՝ նստցի աներկբայաբար ի վերայ ուսոց նորա փոխանակաւ : Ըստ որում եղեալ է ապա ի վերայ մարդկութեան հպատակիլ, և ումանց Ճնեալ ՚ի հրամայել և այլոց հնազանդիլ, ինդիլն է՝ որովհետեւ պիտի լինել բռնաւուաց, արդեօք բարիոք է ունիլ զնոսա ընդ մեզ ՚ի

միասին ՚ի տան , թէ ՚ի նմին գեղջ , և կամ թէ յառաւել հեռաւորութեան ՚ի մայրաքաղաքի : Արդ՝ պարմն , յիմմէ կողմանէ՝ ըստ որում ատեմ ես բնականաբար զգէմն բռնաւորի , առաւել բացական լինելն նորա՝ առաւել ախորժելի է ինձ : Ո՞նդհանուր մարդիկ ես , ՚ի նոյն համաձայն կարծիս են իմ : և միաբան ընտրեալ են զթագաւոր մի , որոյ ընտրութիւն նուազեցուցանէ զթիւ բռնաւորաց , և մեանգամնոյն հեռացուցանէ զբռնաւորութիւն ՚ի մեծագոյն բաժնէ ժողովրդեան : Արդ՝ մեծամեծքն՝ որք ըստ ինքեանց բռնաւորք էին նախ քան զընտրութիւն միոյ բռնաւորի , բնականաբար գմկամակ լինին ընդ կարողութիւնն ամբարձեալ ՚ի վերոյ ինքեանց , և որոյ ծանրութիւն ուժգնագոյն անկանի միշտ ՚ի վերայ ստորակարգեալ կարգաց : Օգուտ ուրեմն մեծամեծաց է նուազեցուցանել զթագաւորական կարողութիւն ըստ կարեորին . քանզի՝ զոր միանգամ առնուն անտի՝ վերադառնայ բնականաբար յինքեանս , և զոր ունին առնել ՚ի տէրութեան՝ է ական հատանել միակ բռնաւորին , որով ՚ի ձեռա բերել զնախնի իշխանութիւն իւրեանց : Արդ՝ կարելի է տէրութիւնն յայնպիսում վիճակի իցէ , կամ օրէնք նորա այնպէս տրամադրեալ , կամ հարուստ ժողովուրդք նորին այնպէս մտաբերեալ , զի ամենեցուն միաբանիլ ՚ի գլուխ տանել զայս զորք ականահատութեան միապետութեան : ՞Քանզի՝ նախ , եթէ վիճակ տէրութեան այնպիսի իցէ որ օգնեսցէ կուտակութեան հարստութեան , և բզ

Հարուստ առաւել վարթամացուսցէ , աճեցուսցէ
այս զփառասիրութիւն նոցա : Հարկիւ զհետ գայ
կուտակութիւն հարստութեան , յորժամ՝ ըստ այժ-
մուս , առաւել ձոխութիւնք յորդեն ՚ի ներքս ՚ի
ձեռն արտաքին առ և տրոյ՝ քան ծագին ՚ի ներ-
քին աշխատասիրութենէ . քանզի արտաքին առ և
տուր կարէ լոկ վարիլ յօդուտ ՚ի մն ծասանց ,
որք և ունին ընդ նմին զհամայն դիւրութիւնս
ծագեալս ՚ի ներքին աշխատասիրութենէ . որով և
մեծատունք առ մեզ զերկուս աղբիւրս ունին հա-
րստութեան , այն ինչ աղքատք լոկ զմի միայն :
Այսու պատճառաւ գտանի հարստութեան կուտա-
կիլ յամենայն առ և տրական տէրութիւնս , և ա-
մենեքին սոքա եղեալ են ցարդ ազնուապետական
՚ի ժամանակի : Պարձեալ՝ նոյն խոկ օրէնք երկ-
րիս ձեռն տայցեն կուտակութեան հարստութեան ,
զի՝ յորժամ՝ նոցին միջոցօք խզանին բնական կո-
պանք՝ որք կապեն զհարուստ ընդ աղքատի ՚ի մի-
ասին , և սահմանի՝ զի հարուստք ամուսնասցին ընդ
հարստաց միայն + և՝ յորժամ զիտնականք անյար-
մար համարին ծառայելոյ հայրենեաց խւրեանց որ-
պէս զխորհրդականս՝ լոկ վասն պակասութեան ձո-
խութեան , և այնու օրինակաւ հարստութիւնն ա-
րարեալ լինի զիտնականին փառասիրութեան կէտ
նպատակի . այսու միջոցօք՝ ասեմ , և այսպիսի մի-
ջոցօք կուտակեցին հարստութիւնք : Արդ՝ ստա-
ցողն կուտակեալ հարստութեան՝ իբրև ընտնի պի-
տոյիւք կենաց , չունի զայլ եղանակ ՚ի վար ար-

կանելոյ զյաւելնորդ ստացուածոց իւրոց՝ բայց ՚
 գնել զիշխանութիւն : Այն է՝ այլապէս խօսելով՝
 առնել զիւր հպատակս : գնելով զազատութիւնս
 կարօտաւորին կամ վարձկանին : արանց՝ որ յօժա-
 րեն տանել դառնութեանց մերձակայ բռնաւորու-
 թեան առ հացի : Օ այս օրինակ՝ իւրաքանչիւր
 ոք յամենահարուստ անձանց գումարէ հասարա-
 կօրէն շուրջ զիւրե զերեիսան իմն աղքատագունից
 ժողովրդեան . և քաղաքականութիւնն յորդեալ ՚ի
 կուտակեալ հարստութեան՝ մարթ է բաղդատել
 ընդ Կարտեսեան դրութեան , ամէն գունտ սեփհա-
 կան շըջանաւ իւրով : Խնչելցէ՝ նոքա՝ որք յօժար
 են շարժիլ ՚ի շըջանի մեծի առն , այնպիսիք են
 միայն՝ որք ստրուկք պիտի լինին . սինլիքորք ժողո-
 վրդեան . որոց հոգիք և հրահանգութիւն յարիմա-
 րեալ են ստրկութեան . և որք չգիտեն ինչ զա-
 զատութենէ բաց յանուանէն : Այլ տակաւին
 պարտ է լինել մեծի բազմութեան ժողովրդեան՝ ար-
 տաքոյ կոպարի ազդեցութեան փարթամին . այս-
 ինքն՝ այն կարգ մարդկան՝ որ կեան ՚ի մէջ կարի
 փարթամին և կարի խառնիճաղանճին . այնոքիկ
 մարդիկ՝ որ ստացեալ ունին զնոխութիւնս մեծ
 յոյժ՝ առ ՚ի հպատակել մերձակայ առն յիշխանու-
 թեան , և սակայն անբաւական՝ առ ՚ի յառնիլ ՚ի
 բռնաւորութիւն ըստ ինքեանց : Յայսմ միջին կար-
 դի մարդկան գտանին հասարակօրէն համայն ար-
 հեստք , հանձար և առաքինութիւնք ընկերակցու-
 թեան : Վիայն այս կարգ ձանաչի լինել ճշմարիտ

սպահանիչ ազատութեան, և մարթ է կոչել Ճառ-
դովուրդ։ Արդ՝ մարթ է պատահել՝ զի միջին
կարգս այս մարդկան կորուսցէ զազդեցութիւնս իւր
համայն ՚ի տէրութեան, և ձայն նորա սուզեսցի ըստ
իմիւք ընդ խառնիճաղանձաւ։ Քանզի՝ եթէ ինչք՝
բաւականք առ ՚ի զոք բաւական առնել զարդիս՝
առ ՚ի տալ զձայն իւր յիւրողութիւնս տէրութեան,
տասնիցս պակաս եղիցին՝ քան որ բաւական համա-
րիւր յօրինման օրինադրութեանն, քաջայայտ է՝
թէ բազմութիւն խառնիճաղանձից մուհցին այս
դոյն ՚ի կարգս քաղաքականին։ և նոքա՝ շարժելով
միշտ ՚ի շրջանի մեծատան, զհետ երթիցին ուր ա-
ռաջնորդեսցէ նոցա մեծութիւն։ Յայսպիսի տէրու-
թեան ուրեմն՝ ամենայն՝ որ մնայ միջին կարգի, է
պահպանել զառանձնաշնորհութիւն և զարտօնու-
թիւնս մլոյ գլխաւոր պետի՝ ամենասրբազան աչա-
լըջութեամբ։ Օ ՚ի բաժանէ նա զզօրութիւն հա-
րստին, և ՚ի բաց կասեցուցանէ զմեծատունն՝ յան-
կանելոյ տասնապատիկ ծանրութեամբ ՚ի վերայ մի-
շակային կարգի՝ կարգելոյն ՚ի ներքոյ ինքեանց։
Մարթ է զմիջին կարգ համեմատել ընդ քաղաքի՝
զորով հարուստք ածեն զպաշարումն, և զորոյ ըզ
փրկութիւն փութացուցանէ քաղաքապետն յար-
տաքուստ։ Մինչդեռ յերկիւզի են պաշարողք ՚ի
թշնամոյն յարձակելոյ ՚ի վերայ, բնական է մա-
տուցանել քաղաքացեաց զամենագեղցիկ դաշինս,
հրապուրել զնոսա հնչմամբք, և խաղ առնել ար-
տօնութեամբք։ բայց՝ եթէ պարտեսցեն առ անզամ

մի գքաղաքապետն՝ ՚ի թիկանց, պարիսպք քաղաքին ոչինչ պահպանութիւն եղեցին բնակչացն։ Օոր միանգամ մարթ իցէ յայնժամ ակն ունելնոցա՝ հնար է տեսանել դարձուցանելով զաշս մեր ՚ի Հոլանդ, ՚ի Պէնուա, կամ ՚ի Ա ենետիկ. ուր օրէնք կառավարեն զաղքատս, և հարուստք կառավարեն զօրէնս։ Ապա՝ Եմ ես և մեռայց վասն միապետութեան, սրբազնն միապետութեան. զի՞ եթէ զուցէ իմն սրբազնն ՚ի միջի մարդկան, ալիտի օծեալ Խճանան լինի ժողովրդեան. և ամենայն նուազումն կարողութեան նորա՝ թէ ՚ի պատերազմի և թէ ՚ի խաղաղութեան, է գրժումն իսկական ազատութեան հապատակին։ Զայնք աղատութեան՝ հայրենասիրութեան՝ և Բըրիտանացւոց՝ արդէն շատ արարին. յուսալի է որ Ճշմարիտ որդիքն ազատութեան խափանեսցնն զառնել նոցա աւելի ՚ի սպառ։ Ճանաչեմ զբաղումս ՚ի պատրուակեալ ախոյինիցս ազատութեան ՚ի ժամանակի իմում, բայց և այնպէս չըիշեմ զմին՝ որ ՚ի սրտի և ՚ի տան բռնաւոր չիցէլ։”

Եռանդն իմ՝ դտի, յոյժ երկարեալ էր զբանախօսութիւնս արտաքոյ քաղաքավարութեանն կարգի. բայց անժուժութիւն կոչնատեառն իմոյ՝ որ շատ անգամ զուն գործեաց ընդմիջել զբանս իմ, ոչ էր հնար այլ ընդերկտը զուսպ ունելոյ։ “Օ ի՞նչ,” գոչեաց, “հիւրընկալիցի՞ ուրեմն ցարդ Պ իզուիթ ՚ի հանդերձ եկեղեցականի. բայց՝ յարեն բոլոր ածխահանքոց Ապոնվալայ, Ճեղեսցի առդուրս եթէ անուն իմ Ա իլկինսըն կոչեցի։” “Ե՞ր

ինացայ որ շատ երկար էի գնացեալ, և ներումն
հայցեցի վասն եռանդեանն որով բարբառեցայ :
“Եթումն,” դարձոյց նա սրտմտեալ, “կարծեմ տոյն-
պիսի սկզբունք զբիւրս պահանջեն զներումն : Օ ի՞նչ.
լքանել զազատութիւն, զինչ, և՝ որպէս Գաղե-
տիէրն ասէ, անկեալ մնալ առ ՚ի թամբիլ փայ-
տեղէն պայտիւք : Ղռուրս կորիր՝ պարսն, ՚ի տանէ
խմբէ խկոյն, առ ՚ի զվատթարագոյն ելս խափանել.
փութացիր, պարսն :” Գնայի կրկնել զփաստա իմ
այլ նոյնհետայն լուաք զբաղխիւն դրան և գոչե-
ցին երկոքին տիկնոյքն, “Հաստագ իրըև զմահ,
ահա տէր և տիրուհի մեր եկին :”—Երեի թէ ցար-
դեան կոչնատէր մեր՝ լոկ տակառապետն էր տան,
որ յաներկայութեան տեառն իւրում, միտք ու-
ներ ձեանալ ոմն, և առ ժամանակ մի տանտէր
հանդիսանալ . և՝ իրաւն ասել, խօսէր զքաղաքա-
կանութենէ ոչինչ ընդհատ ՚ի բազմաց սոսկական
պարնաց + Բայց ոչինչ կարէր գերազանցել քան
զուագնապ իմ, իբրև տեսի զպարոն և զտիկին նորա
մտանել ՚ի ներքս . և ոչ խկ հիացումն նոցա՝ ընդ
դտանելն զայսպիսի անկոչ կոչնականս և զլսքախու-
թիւն, պակաս էր ՚ի մերոյն : “Պարնայք,” ասաց
խկական տանուտէրն ինձ և ընկերիս, “ամուսին
իմ և ես ձեր խոնարհ ծառայքն եմք . սակայն
յայսնի լիցի, այս այնպիսի անակնունելի շորհ
է, զի գոգջեք ընկղմիմք ընդ պարտաւորութեամբս :”
Որչափ անակնունելի և լինէր նոցա՝ մերս ընկերու-
թիւն, նոցոյն՝ հաւաստի եմ, առաւել ևս էր վասն

մեր, և համբ եղէ ծանօթութեամբ անխելքութեանս՝ յորժամ՝ զո այլ ոք զկնի ունէի տեսանել մտանել ի սենեակն, քան զսիրեցեալն իմ՝ զ(Օ)րիորդն Արաբելայ Ա իլմօթ՝ որ յառաջ նշանեալ էր ընդ Պէտրոգյ որդւոյ իմոյ, այլ որոյ նշանն նաներացաւ, որպէս պատմեցաւ արդէն : Խսկոյն ընդ տեսանելն զիս՝ յարձակեցաւ ի գիրկս իմ անպատմելի խնդութեամբ : “Պատուելիք պարոն,” ասաց . “որպիսի երջանիկ պատահարի պարտիմք մեք զանակնունելի այցելութիւնս այս : Պիտեմ՝ հաւաստեաւ՝ քեռի և քեռակին իմ՝ յափշտակեցին յնծութեամբ : իրքե իմասցին զամննալաւ Ա արն. Պրիմրօզ ունիլ իւրիանց հիւր :” Ընդ լսել զանուն իմ՝ ծերունի պարոնն և տիկինն յոյժ քաղաքավարութեամբ յառաջ մատեան, և բարեկցին ինձ կարի սիրալիր հիւրասիրութեամբ : Եւ ոչ զսպել զժպտումն կարէին ընդ իմանալ զանցս արդի այցելութեան իմոյ, այլ եղիելի տակառապետն՝ զոր զառաջինն կամեցան արձակել, ’ի ձեռն իմոյ միջնորդութեան զներումն ընկալաւ :

Պարոն և Տիկին Արնոլդ՝ որոց տունն պատկանէր, պարտաւորեցին զիս մնալ առ ինքեանս ըզ քանի աւուրս, և զի քեռագուստը նոցա՝ գեղաղէլ սանն իմ՝ որոյ միտք մասնաւորապէս կերպարանեալ էին ընդ դաստիարակութեամբ իմով, միաբանեցաւ յաղերս նոցա՝ ընդունեցի : Հանդերձեցին ինձ ’ի զիշերի զւքեղ սենեակ մի, և կանուխ ընդ առաւոտն՝ (Օ)րիորդն Ա իլմօթ ցանկացաւ ձեմ առնուլ

ընդ իս ՚ի պարտիզի . որ պՃ՛նեալ էր ըստ նորոյ սարասի . Յետ անցուցանելոյ զժամն ինչ ՚ի ցուցանել զփեղեցկութիւնս վայրին , եհարց ցիս՝ անփոյթ ըստ երեսութին , երբ էր վերջին անգամն լսելոյս ՚ի Գեղորգայ որդւոյ իմմէ : “Ո՞հ , տիկին ,” ասացի . “մերձ երեք ամբ են արդ բացակայութեան նորա , առանց երբեք գրելոյ բարեկամաց իւրոց կամ ինձ : Ուր լինելն չգիտեմ . գուցէ այլ ոչ ևս տեսից զնա կամ զերջանկութիւն : Ոչ , սիրելիդ իմ , ոչ այլ տեսցուք զայնպիսի բերկրեցուցիչ ժամանութիւն երբեմն անցուցաք առ վառարանաւ մերով ’ի Ակկիթիլդ : Աակաւաթիւ ընտանիք իմ ցրուին զարդիս արագապէս , և աղքատութիւնն ոչ միայն զկարօտութիւն՝ այլև զվատահամբաւութիւն էած ՚ի մեր վերայ :” Ազգեկն բարելնոյթ յարտասուս հարաւ ընդ այս պատմութիւն . այլ զի յոյժ դիւրազգած զնա տեսի լինել՝ զփուշցայ ՚ի մանրամասն պատմութենէ վշտակրութեան մերոյ : Օ իարդ և իցէ՝ մսիթարութիւն իմն եղև սրտիս տեսանել , թէ չէր ժամանակին փոփոխութիւն ինչ զործեալ յզգածմանս նորա , և թէ հերքեալ էր զբաղում ինսամախօսութիւնս՝ յետ հեռանալոյ մերոյ ՚ի սահմանակցութենէ իւրմէ : Ման էած զիս ընդ բոլոր տարածեալ շնուրթիւնս վայրին , ցուցանելով զյոգնազան ճեմս և սարփինայս . և նոյն հետայն առիթ առնլով յամէն առարկայից՝ առ նորանոր հարցմանց յարաբերելոց որդւոյ իմյ : Օ այս օրինակ ծախեցաք զառաւօտն մինչ ՚ի կէս օր՝ մինչեւ

հրաւիրեաց զմեզ զանգակն ՚ի ճաշ . ուր գտաք ըզ
հոգաբարձուն աստանդական թատրոնականաց՝ զոր
՚ի վերոյ յիշատակեցի , եկեալ վաճառել զթուղթս
հրաւիրանաց յաղագս ‘**Զքնաղագեղ**’ Ապաշխարողի ,
որ յերեկոյին յանդիման առնեիւր՝ մասն Ալբատի-
ոսի ՚ի մատաղաւուրց պատանւոյ միոջէ՝ որ երբէք
չէր երևեալ յորոք տեսարանի : Է՞ոյժ եռանդուն
երեկը ՚ի գովութիւն նորամուտ խաղարկուին , և վը-
կայեաց եթէ երբէք չէր տեսեալ զոք այնպիսի
արժանի գիմագրաւելոյ առ գերազանցութիւն :
“**Օ ձես յանձին բերել**” նկատեաց , “ոչ ուսանի
՚ի միում աւուր . սակայն պարոնս այս ծնեալ ե-
րեի ճեմել ՚ի տեսարանի : **Չայնն** , ձեն և դրու-
թիւնն սքանչելի են բոլոր : **Պատահմաբար** գտաք
զնա զճանապարհայն : ” **Օ** րոյցս այս մասնաւորա-
պէս յարոյց զհետաքրքրութիւն մեր . և՝ առ ա-
ղերսանաց տիկնացն , համոզեցայ և ես ընկերել նոցա
՚ի խաղետղն . որ ոչ այլ ինչ էր . քան զյարդանոց
իմն : **Քանզի** ընկերակեցք իմ անհակառակաբար
գլխաւորքն էին տեղւոյն՝ ընկալեալ եղաք ամենա-
մեծ ակնածութեամբ , և տեղաւորեցաք ՚ի ճակատու-
նասարանի թատրոնին . ուր կացաք մնացաք առ
ժամանակ մի՛ ոչ սակաւ անհամբերութեամբ ՚ի տե-
սանել զԱլբատիոսի երեւումն : **Կորամուտ** խաղար-
կուն յառաջ մատեաւ հուսկ յետոյ , և՝ թող ծնո-
ղաց կշռել զգգացողութենէ իմմէ ՚ի ճեռն իւրեանց
յորժամ ծանեայ զնա լինել տարաբաղդ որդին իմ :
Վկսանել գնայր նա՝ երբ շուրջ յածելով զաշ

իւր զհանդիսականօք, նշմարեաց զՕրիորդն Ա իւ-
 մօթ և զիս, և եկաց միանգամայն անբարբառ
 և անշարժ, Դերասանքն ի յետուստ տեսարաննին
 որ զկառչիլն գրեցին բնական երկչութեան նորա,
 ջանացան քաջալերել զնա . բայց փախանակ յա-
 ռաջելոյ ի բանս, փղձկեցաւ ի հեղեղս արտասուաց
 և մեկնեցաւ 'ի տեսարանէն : Զգիտեմ զինչ ինչ
 եղեն զգացմունք իմ յայսմ պատահարի, քանզի
 կարի սրնթացութեամբ հետեւեցին իրերաց առ 'ի
 նկարագրել . սակայն վաղվաղակի զարթուցայ յայս
 անհաճոյ ցնորից՝ յՕրիորդէն Ա իւմօթայ, որ՝
 գունատեալ և դողդոջուն ձայնիւ խնդրեաց յինէն
 հասուցանել զինքն յետս ի տուն քեռւոյ իւրոյ :
 Խրբե ժամանեցաք, Պարոն Արնոլդ՝ որ անծանօթ
 էր դեռ տարօրինակ անցից մերոց, իմանալով թէ
 նորեկ դերասանն որդի իմ էր, արձակեաց զկառս
 իւր հանդերձ հրաւիրանօք . և զի չառնոյր նա
 յանձն միւս անգամ երեկիլ ի տեսարանն, զմիւս
 ոնին կարգեցին խաղարկուքն ի տեղի նորա, և մեք
 վաղվաղակի տեսաք զնա առ մեզ : Եցոյց նմա Պա-
 րոն Արնոլդ զամենաքաղցր ընդունելութիւն, և ես
 ընկալայ զնա յափշտակեալ բերկութեամբ ըստ
 սովորութեանս . քանզի ոչ կեղծել կարէի երբէք
 զսուտ գժգմնութիւն : Ա նորունելութիւն Օրիորդին
 Ա իւմօթայ, խառնեալ էր առ երեսս անմտադրու-
 թեամբ, և սակայն նշմարել կարէի՝ որ կեղծեալ
 էր կերպն : Ա նբոխում մտացն թուէր տակաւին ոչ
 հանդարտեալ . ասէր տասն քսան բանս անմիտս՝ որ

երևէին նման իննդամութեան, և ապա ծիծաղէր բարձրաձայն ընդ թերութիւն մտացն : Դիմուկը մերթ ընդ մերթ 'ի հայելին ժածկաբար, որպէս թէ ուրախ լեալ ընդ գիտութիւն անդիմադրելի գեղեցկութեան իւրոյ . և բազում անգամ՝ զհարցմունս առնէր՝ առանց միտ դնելոյ պատասխանեացն իւիք :



ԳԼՈՒԽ Ի .

ՊԱՇՄԱՆԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍՔԻ ԹԱՓԱՌԱԿԱՆԻ . ՃԵ-
ՏԱՄՈՒՏ ԵԼՈՅ ՆՈՐՈՒԹԵԱՆ, ԱՅԼ ԿՈՐՈՒՍԱՆԵԼՈՎ,
ԶԲԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ :

ՕԿԱՆ ընթրեաց՝ առաջի արար քաղաքա-
վարութեամբ տիկինն **Արնոլդայ** արձակել զերկուս
'ի հետեակաց իւրոց, վասն կահուց որդւոյ խոյ .
զոր ոչ ընդունել երեէր նա զառաջինն . բայց
պնդելով նորա 'ի խնդրուածին, պարտաւորեցաւ սա
ժանուցանել նմա՝ թէ գաւազան մի և մախաղ էին
ամենայն շարժական ինչքն յաշխարհի աստ որովք
կարէր պարծենալ: “**Ա** ահ . որդեակ ,” ասացի ես .
“անինչ թողեր զիս և անինչ վերադարձեալ տե-
սանեմ զքեղ վերստին . և սակայն ոչինչ երկու-

անամ՝ եթէ տեսեր զմեծ մասն աշխարհի :” — “Այս՝
հայր ,” պատասխանեաց նա . “սակայն հետամուտ
լինելն Քաղղի՝ ոչ է ձանապարհն ՚ի ձեռս բերելոյ
զնա . և արդարե կասեցայ ՚ի նորումն ՚ի հետամուտ-
թենէ :” — “Խնձ այնպէս թուի՝ պարո՞ն ,” ասաց
տիկինն Արնոլդայ . “զի պատմութիւն արկածից քոց
զբանեցուցիչ եղիցի . զառաջին մասն նոցա յաճա-
խակի լուեալ եմ՝ ՚ի քեռաղջկանէ խմմէ , իսկ եթէ
սէր ընկերութեանս համոզեսցէ զքեզ սակս մնացե-
լոցն՝ կրկնապատիկ պարտաւոր զմեզ արասցես :” —
“Ջիկի՞ն” պատասխանեաց որդիս . “խոստանամ քեզ՝
զի հաճութիւնն զոր ունիք ունեկն գնելոյ . և ոչ կի-
սով չափ հասանիցի սնապարժութեան իմոյ առ
յեղյեղելոյ զայնոսիկ . և սակայն ՚ի բոլոր պատ-
մութեան՝ հազիւ մարթացայց խոստանալ ձեզ զար-
կած ինչ . քանզի վէպիք իմ յաւետ այն են զոր
աչօք տեսի՝ քան զոր արարիս : — Առաջին թշուա-
ռութիւն կենաց իմոց՝ որ քաջայայտ է ամենեցունցդ՝
էր մեծ . սակայն՝ թէպէտ վշտացոյց , ոչ ընկղմել
կարաց զիս : Ոչ ոք երբէք զբարեգոյն ձարտարու-
թիւն ունեցաւ յուսալոյ՝ քան զիս : Որչափ պակաս
բարեշնորհ գտանէի զբաղզ ՚ի միում նուազի , այն-
չափ առաւել յուսայի ՚ի նմանէ ՚ի միւսումն . և
արդ ՚ի յատակս ելով անուոյ նորա՝ ամէն նոր հո-
լովումն բարձրացուցանել՝ այլ ոչ ցածուցանել
կարէր զիս : Յառաջեցի ուրեմն գէպ ուղիղ ՚ի Լոն-
դոն ՚ի պարզ առաւօտու , ոչինչ տագնապելով առ
վաղուի . այլ զուարձ՝ որպէս զթռչունս՝ որք եր-

գէին առ ձանապարհաւ . և միսիթարէի զանձն խոկ-
մամբ՝ թէ լոնդոն էր վաճառատեղին՝ ուր ամենայն
տեսակ կատարելութեանց հաստատ էին պատահելոյ
պատույ և պարգեի :

“Պ նոր ժամանել խմում ’ի քաղաքն՝ հայր՝ ա-
ռաջին փոյթ իմ եղեւ աւանդել զգիր յանձնարա-
րութեան քոյ՝ ազգականի մերում . որոյ վիճակ չէր
ինչ լաւագոյն քան զիմն : “Ա յիշէին առաջադրու-
թիւն իմ՝ գիտես, եղեւ ստորին վարժապետ լինել
յուսումնարանի իրիք . որոյ աղաքաւ խորհուրդ
հարցի ’ի նմանէ : “Օ առաջադրութիւնս այս ըն-
կալաւ ընտանին մեր իսկական հենքնութեամբ Ա արդո-
նականաւ . “Լ հ,” ասաց . “արդարեւ շամաս* գեղեցիկ
ընթացք է այս կաւճազծեալ (կոմագեն) վասն
քոյ : Ես ինքնա ստորին վարժապետ եղեալ եմ
յաշակերտանոցի . † և ցաւամեղմ մանեկաւ մեռնեմ,
նթէ ոչ առաւել հաճէի լինել ընդ փակակալաւ
“Ա իւգետոյ բանտի : Յ առնէի վաղ և անազան :
Տ եզօք աչաց հարկանէր զիս վարժապետն, ատէր
զիս վարժապետուհին առ տգեղ դիմացս, գիշատէին
զիս մանկունք ՚ի տան, և ոչ երբեք շնորհեցաւ ինձ
երբեք երեիլ առ դուրս պատահիլ մարդավարու-
թեան : Ա յլ՝ հաւասարի ես դու յարմարիլ գըպ-
րատան : Թ անգ ինձ հարցաքննել զքեզ սակաւիկ
մի : “Ա շակերտեալ ես առ այս պաշտօն : — ‘Ա չ’

* Շամաս . այսինքն երիցս շատ կամ յոյժ շատ :

† Աշակերտանոց . իմա ինձ աստանօր զդպրոցն, ուր մանկունք
և աւանին և կերպակըին և ընտակին :

‘Ուրեմն ոչ պիտոյացիս դպրատան : Կարես սանտ-
րել զհերս մանկանց :’—‘Ո՞չ :’—‘Ուրեմն ոչ պիտոյ-
ացիս դպրատան : ’Օչաղէկ ես հանեալ :’—‘Ո՞չ :’
‘Ուրեմն ոչ պիտոյացիս դպրատան : Կարես ըն-
կողմանիլ երեք ՚ի միում մահձի :’—‘Ո՞չ :’—‘Ու-
րեմն ոչ երբէք պիտոյացիս դպրատան : Ունիս ըզ
սուր ստամոքս :’—‘Այս :’—‘Ուրեմն ոչ իւիք պի-
տոյացիս դպրատան : ’Քաւ լիցի քեզ, պարո՞ն .
եթէ ցանկաս մժարելի և անգորը պարապման,
երթ առ ոտո կտրոցավաճառի և աշակերտեա զեօթն
ամս ’ի պտոյտքել զանիւս նորա . բայց զգնյշ լեր
՚ի դպրատանէ : Եշ սակայն եկ,’” շարունակեաց .
‘տեսանեմ զի պատանի ես աշխոյժ և սակաւ մի զի-
տութեան, զի՞նչ կարծես սկսանել զհեղինակութիւն
իբրև զիս : Ո նթերցեալ իցես աներկբայ ’ի մա-
տեանս՝ զիսելացի արանց սովամահ եղելոց ՚ի դոր-
ժառնութեանն . ցուցից քեզ զարդիս զքառասուն
յոյժ բթամիտ անձինս ՚ի քաղաքին՝ որ փարթա-
մութեամբ ապրին ՚ի ձեռն այնորիկ : Բոլորեքեան
ևս համեստ յամբաշարժ մարդիկ, պարո՞ն . որք
հեզիկ և յուշիկ ընթանան, և զրեն զպատմութիւն
և զքաղաքականութիւն և գովաբանեալք են . մար-
դիկ՝ որ եթէ աշակերտէին հնակարկատի, կարկա-
տէին զամենայն աւուրս կենաց իւրեանց զկօշիկս,
բայց ոչ երբէք յօրինել կարէին զնոսա :

‘Տեսանելով եթէ ոչ մեծ ազնուութիւն կա-
պակցէր ընդ պաշտօնի ստորին՝ վարժապետի, որո-
շեցի ընդունել զառաջարկութիւն նորա . և զբարձ-

բագոյն համարումն ունելով զգրականութենէ՝ ողջունեցի յարդանօք զհինաւուրց մայրն Գյուլբ փողցի։ Փառք ինձ համարեցի հետևել շաւղին՝ զոր Գյույդըն և (Օտվէյ յառաջ քան զիս կոխեցին։ Խորհէի զշաստուածուհին սահմանի այսորիկ՝ իրեւ զմայր զերազանցութեան։ և զի հաղորդակցութեանն ընդ աշխարհի մարթ էր պարզել մեզ զկատարելու թիւն, զհետ եկեալն զաղքատութիւն՝ դայեակ համարէի լինել խելաց։ Ացեալ այսոքիւկ մոտածողութեամբք նատայ ես։ և տեսանելով թէ բարեգոյն իրք մնային ասել ՚ի խոտորնակ կողմն, որոշցի յօրինել զմատեան մի որ բոլորովին նոր իցէ։ Պիճնեցի ուրեմն զերիս նորասքանչ ասացուածուածուարտարմատութեամբ իւիք։ Ակեղծ էին՝ այս, բայց նոր էին։ Գյոհարք ճշմարտութեան այնքան յաձախ ՚ի ներքս մուծեալ են յայլոց, զի չմնայր ինձ ինչ ՚ի ներքս մուծանել բաց ՚ի քանի մի շքեղ իրաց։ որք ՚ի հեռաստանէ ամենայն իրօք նոյնանման երեկին։ Ա կոյ երուք՝ ով զօրութիւնք։ որպիսի երեակերպեալ կարեորութիւն գագարեալ նստէր ՚ի վերոյ գրչիս ՚ի ժամ զրութեան։ Արկբայէի ոչ եթէ համայն դիսնականք աշխարհի յառանէին ընդդէմ զրութեանց իմոց։ սակայն և պատրաստեալ էի ընդդէմանալ համայն զիսնականաց աշխարհի։ Հանգոյն կողնւոյ նստէի ամփոփ և զգաստ, պատրաստեալ զիուշ մի առ անձնիւր հակառակորդ։”

“Օ օրանեաս՝ որդեակ, ” ասացի ես։ “և զի՞նչ

Էր նիւթ ճառի քո : Յուսամ ոչ զմոռացութեամբ
հարեր զկարեորագոյն առարկայն միակնութեան :
Այլ ընդմիջեմ ես . ասա : Հրատարակեցեր զնորաս-
քանչ ասացուածս քո : լաւ . և զինչ դիտնականք
աշխարհի ասացին զնորասքանչ ասացուածոց քոց :

“Տէր , պատասխանեաց որդի իմ . “ե ոչ մի ինչ
ասացին դիտնականք զասացուածոց իմոց . ոչինչ մի-
անգամայն , տէր : Անձնիւր ՚ի նոցանէ զբաղեալ
զոլով ՚ի գովել զբարեկամն և զանձն իւր , կամ դա-
տապարտել զթշնամիս . և զի տարաբաղդապէս չու-
նէի ես ոչ զմին և ոչ զմուսն , տարայ անողորմ
դառնութեան սրտի՝ անմտադրութեան :

“Այն ինչ խոկոյի յաւուր միում ՚ի սրճանոցի
(աֆ : անու) ՚ի վերայ անցից նորասքանչ ասացուա-
ծոց իմոց , կարճահասակ այր ոմն ըստ դիպաց մը-
տանելով ՚ի սենեակն , բազմեցաւ յանդիման իմ . և
զինի սակաւուց յառաջաբանական զըուցաց՝ իմա-
նալով զլինելն իմ աշտկերտ գրաց , եհան զծրար մի
առաջարկութեանց , աղաջելով զիս ստորագրել վասն
նորատիպ Պրոսերտիսի՝ զոր ՚ի լոյս կամէր ընծայ-
ել հանդերձ ժանօթութեամբ.ք : Խնդիրս այս հար-
կաւ յաւաջ երեր զպատասխանի չունելոյ իմ.յ
զդրամ . և բանս այս յորդեաց նմա զճանապարհ
հարցանելոյ զհանգստմանաց ակնկալութեանց իմոց :
Պատանելով զակնկալութիւնս իմ լինել այնքան
մեծ որքան զքսակ իմ , ‘տեսանեմ’ ասաց , ‘անձա-
նօթ ես դու քաղաքին . ուսուցից քեզ զմասն ինչ
անտի : Ականի՞ր առաջարկութեանցս , — առաջար-

կութեամբքս այսոքիւկ ապրեմ ցարու զայս երկոտասան ամս յոյժ անդորրութեամբ : Խակոյն ընդ վերագառնալ ազնուականի ուրուք 'ի ձանապարհորդութեանց իւրոց , հասանել Արիոլի* 'ի Պ ամէիկայ , կամ այրի տիկնոջ յամարանոցէ իւրմէ , գիմնման վասն ստորագրութեան : "Եախ՝ պաշարեմ ըզ սիրտս նոցա շողոմութեամբ , և ապա յարձակեմ զառաջարկութիւն իմ ընդ Ձեզքուածն : Եթէ դիւրաւ ստորագրեն յառաջնում նուազի , նորոգեմ ըզ խնդրուած իմ աղերսել զժախս ընծայեցման : Եթէ շնորհի ինձ այն : Հարկանեմ զնոսա միւս անզամն ևս վասն նկարագրելոյ զնշանակ ազգատոհմի նոցա 'ի ձակասու : Օ այս օրինակ՝ շարունակեաց նա , ապրեմ ես մնապարծութեամբ և ծիծաղիմ զնովաւ : ԱՅԼ՝ 'ի միջի մեր , զարդիս քաջ ծանուցեալ եմ ես . ուրախ եղէց առ վայր մի փոխ առնուլ զդէմս քոյ : Ազնուական ոմն երեելի արդ իսկ դարձեալ է յԽոտալիոյ . ձանաչէ դռնասլան նորա զդէմս իմ : այլ եթէ դու տարցես զօրինակս այս քերթուածոց , յինմ արեն որ յաջողեսցես , և բաժանեսցուք զաւարն 'ի միջի մեր : "

"Ո՞վ երանութեանս՝ Գէորգ , " ասացի . "Ե այս է պարագումն քերթողաց դարուս : Հանձարեղ և վսեմ ողի նոցա իջանին այսդոյն 'ի մուրողութիւն : Ամբոթ ինչ իցէ նոցա նախատինս ածել 'ի վերոյ կոչման իւրեանց , զայս օրինակ անարդ տուրեառս

* Արիոլ . սերունդ Եւրոպացւոյ 'ի բնակչաց Արեմտեան Հնդկաստանի :

առնելով գովեստի ընդ հացի : ”

“**Բ**աւ լիցի . հայր .” գարձոյց նա . “**Ճ**շմարիտ
բանաստեղծն ոչ երբեք սյդքան նուաստանայ . զի
ուր խելք զոյ . անդ և հպարտութիւն . **Ի**սկքս
զոր նկարագրեցի՝ միայն աղքատք են ՚ի բանաստեղ-
ծութեան . **Խ**սկական բանաստեղծն՝ որովհետեւ առ
ոշինչ զրէ զամենայն զնեղութիւն առ համբաւոյ ,
նոյնպէս և հաւասարաչափ անարի է առ արհամար-
հութիւն . և մի միայն նոքա՝ որ անարժան են
պաշտպանութեան , զիջանեն ժոել զայն :

“**Վ**իտք իմ՝ ամբարտաւան յոյժ առ զիջանելոյ
յայսպիսի անարժանութիւն , և սակայն բաղդ կարի
ցած առ դիմագրաւ լինելոյ միւս անգամ վասն համ-
բաւոյ , պարտաւորեցայ արդ ունել զմիջին ճանա-
պարհ և գրել վասն ապրատի : **Ա**յլ սակայն ան-
յարմար էի գործառնութեան՝ յորում լոկ աշխա-
տասիրութիւն ապահովէր զյաջողութիւն : **Զ**կա-
րէի սանձել զգարանակալ կիրս իմ՝ առ գովու-
թիւն . այլ սովորաբար ծախէի զժամանակն ՚ի ջանս
զհետ գերազանցութեան՝ որ գրաւէ զմոքրիկ տեղի ,
այն ինչ մարթ էր առաւել շահաբերութեամբ . ՚ի
կիր արկանել յընդարձակ աշխատասիրութիւնս
պտղաբեր միջակայնութեան : **Փ**ոքրիկ գրո թիւն
իմ ուրեմն ՚ի լոյս գայր ՚ի միջի շըջաբերական հրա-
տարակութեանց : անփոյթ և անձանուցեալ : **Ա**ռա-
ւել կարեորութեամբ զբաղեալ էր ժողովուրդն՝
քան ՚ի նկատել զդիւրալուք պարզութիւն ոճոյ ,
կամ զհամաձայնութիւն պարբերութեանց իմոց :

Թռերթ զկնի թերթի անկան ՚ի մառացօնս : Գորութիւնք իմ թաղեցան ՚ի միջե գրութեանց ՚ի վերայ ազատութեան , Արևելեան Բնդնց և գեղաց սակախածուածոյ կատաղի շան . այն ինչ Փիլատոս՝ Փիլէլութէս՝ Փիլէլութէրոս և Փիլանթրոպոս՝ բոլորքն ևս լաւագոյն գրէին , զի քան զիս արագացոյն գրէին :

“Արդ ուրեմն սկսայ ընկերանալ ընդ ոչ ումնք՝ բաց իմ պէս յուսաբեկ հեղինակաց . որք գովէին , աշխարէին և քամահէին զիրեալս : Հաճութիւնն զոր գտանէաք յերկս իւրաքանչիւր անուանի գըրչաց , էր անդրագարձն ըստ արժանեաց նոցա : Գտի որ ոչինչ հարտարամոռութիւն այլոյ ուրուք հաշեցուցանէր զիս : Տարաբաղդ ասացուածք իմ նուրասքանչ չորացուցեալ էին միանգամայն զայն աղբիւրակն մխիթարութեան : Ոչ ընթեռնուլ և ոչ զրել կարէի հաճութեամբ , զի գերազանցութիւն յայլում : Էր ատելութիւն իմ : և գրելն՝ առետուր իմ :

“Ի միջե այսպիսի սեաթոյր մտածողութեանց , այնինչ նատէի յաւուր միում՚ի բազմացի ՚ի Աէնտ Յէմն Պարկ , ազնուական ոմն մատաղաւուրց՝ որ մներիմ ծանօթ էր իմ ՚ի համալսարանի , մերձեցաւ առ իս : Ողջոյն տուաք մլումնանց երկմտութեամբ իւիք . նա՝ գոզցես զամօթի հարեալ սակա ծանօթ լինելոյ ուրումն՝ որ զայնպիսի գձուձ կերպարան յանդիման առնէր , և ես՝ երկուցեալ ՚ի հերքմանէ : Այլ կասկածանք իմ փութով փարատեցան , քան-

զի՝ ԱԷԴ* ԹԱ. առնհիլ բարեբնոյթ անձն էր յոյժ
ի ներքուստ :

“Ո՞մնչ ասացեր, ԳԱԷՈՐԴ.՝” ընդմիջե ես .
“ոչ ԹԱ. առնհիլ էր անուն նորա : Անշուշտ ոչ այլ
ոք է նա քան զկալուածատէրն իմ :”—“Ո՞վ եր-
ջանկութեանս ,” գոչեաց Տիկինն Արնորդի, “այդ-
չափ մերձաւոր դրացի է ձեր Պարոն ԹԱ. առնհիլ :
Դ վաղուց հետէ բարեկամ է դերդաստանի մե-
րում . և ի մօտոյ ակն ունիմք գալստեան նորա :

“Առաջին փոյթ բարեկամի իմոյ ,” շարունակեաց
որդի իմ , “էր փոխել զկերպարան իմ շքեղ հան-
գերձիւք իւրովք . և ապա թոյլ ետ ինձ բազմիլ
յիւր սեղան , զօրէն կէս բարեկամի և կէս պաշտօ-
նատարի : ԳԱ. որք իմ էր հետեւել նմա յաճրգա-
նոցս , խրախոյս տալ նմա երբ նստէր նկարագրել
տալ զպատկեր իւր , բազմիլ ի ձախմէ նորա ի կառա-
երբ չգուցեր ոք լնուլ զտեղին , և ձեռն տալ ըն-
դուստուցանել զկատակ ինչ՝ երբ խնդամնութեան
զկամը ունէր : Իսաց յայտնանէ զայլ ևս քսան չնչին
գործառնութիւնս ունէի ’ի տան : Պարտ էր ինձ
առնել զբազում փոքրիկ իրս առանց ասելոյ , կրել
զբանալին սրուակի . † կնքահայր գառնալ բոլոր
մանկանց տակառապետին , երգել երբ հրաւիրեալ
լինէի , չլինել երբէք նեղասրտեալ , միշտ խոնարհ
լինել , և եթէ հնար , յոյժ ուրախ լինել :

* ԱԷԴ Ned. անուն մտերմական և կրծատումն անուանս է գուարդ :

† Փոքրիկ պտուտակ երկաթ . որով հանեն զիսիցս ի բերանց
սրուակաց գինւց : Cork screw.

“**Խնչելիցէ՝** յայտմ պատուաւոր պաշտօնի չէի ես
առանց հակառակորդի։ **Օ** օրապետ ոմն ծովանար-
տիկ զօրաց՝ որ 'ի բնուստ ձևակերպեալ էր վասն
տեղւոյն, հակառակ հանդիսացաւ ինձ ՚ի սէր պաշ-
տանի իմց։ **Վ**այր նորա լուացարար առներե-
ելոյ, և զայս օրինակ ստացաւ նա կանխաւ ըզ
յօժարամութիւն առ կաւատութիւն և ազգաբա-
նութիւն։ **Ք**անզի՝ պարոնս այս պարապեցաւ 'ի
կեանս իւր առ ձանաչումն իշխանաց։ Թէ և հեր-
քեցաւ ՚ի յոդունց սակս թանձրամութեանն, սա-
կայն եգիտ զբաղումն ՚ի նոցանէ՛ որ իւր պէս բթա-
միտ էին. և թոյլ ետուն հանապազորդութեանց իւ-
րոց։ **Ո**րովհետեւ իւր բանն շողոքորդութիւն էր,
՚ի գործ արկանէր զայն ամենահեշտ եղանակաւ,
բայց յինէն անկերպ և բռնադատ յառաջ գայր։
և զի շողոքորդութեան անձուկ պաշտանի իմց
աճէր օր յաւուր, սապէ՞՛ յամէն ժամու առա-
ւել ծանօթանալով պակասութեանց նորա, առա-
ւել անախորժ լինէր ինձ ՚ի մատուցանել։ **Օ** այս
օրինակ և յայտմ նուագի գնայի տեղի տալ զօ-
րապետին, յորժամ բարեկամն պէտս ունեցաւ օդ-
նականութեան իմում։ **Ո**չ պակաս ինչ էր այս
քան զմենամարտիլ փոխանակ ինքեան ընդ պարնի
ուրում, զորոյ զքոյր կեղծիւր չարաչար վարեալ
յիւրմէ։ **Վ**ասագիւր անսացի ինքրանացն. և թէ-
պէտ խոժոռեալ զձեղ տեսանեմ առ իմն արար,
այլ որովհետեւ անհրտժեշտ պարտականութիւն էր
բարեկամութեան, ոչ կարէի հրաժեշտ առնուլ ան-

տի : Յանձն առի զգործն , զինաթափ արարի զա-
խոյեան իմ , և յետ սակաւուց , ուրախ եղէ իմա-
նալ՝ զի տիկինն սոսկ կին էր քաղաքի , և այրն՝
Ճամբարտակողնորա և սրիկայ : Այսը մասին ծա-
ռայութեան փոխարինեաց ինձ եռանդագին խոս-
տովանութեամբք երախտապարտութեան . այլ զի
հասանէր բարեկամի իմայ յետ աւուրց ինչ ելանել
ի քաղաքէն , չմնայր նմա այլ հնար ծառայելոյ
ինձ բաց յանձն առնելոյ զիս հօրեղբօր իւրում .
Ա կլիէմ թառնհիլ Աեպուհոյ , և այլում ազ-
նուականի ուրում յոյժ երեելոյ՝ որ վայելէր ըզ
պաշտօն տէրութեան : Խբրե գնաց , առաջին փոյթ
իմ եղե տանել զյանձնարարական թուղթ նորա
առ հօրեղբայր նորին . այր ոմն՝ որոյ համբաւ ա-
մենայն առաքինութեանց աշխարհանազ , բայց և
իրաւացի : Բ նկալեալ եղէ ի ծառայից նորա կարի
հիւրընկալ ժապանօք . քանզի դէմք սպասաւորաց
յերեան ածեն ցանդ զմարդասիրութիւն տեառն իւ-
րեանց : Առաջնորդեալ 'ի հոյակապ սրահ մի՝ ուր
Աեպուհն Ա կլիէմ վաղլաղակի եկն առ իս , աւան-
դեցի նմա զպատգամ և զթուղթ իմ . զոր ընթեր-
ցաւ և յետ սպասելոյ առ վայր մի , 'Աղէ , պա-
րո՞ն , ' եհարց ցիս . ' ծանո՛ ինձ զ՞նչէ ես արարեալ
վասն ազգականիս , առ արգիւնաւ որել եռանդագին
Հատագովութեանս այսորիկ : Բայց կարծեմ , զու-
շակել կարեմ զարժանաւորութիւնս քո . մենամար-
տեալ ես փոխանակ նորա . և զայս օրինակ ակն
ունիս յինեն ովարդեաց՝ սակս լինելոյդ զործի մա-

լութեանց նորուն : Տանիկամ' սելստ սրտիւ ցանկամ
 զի արդի բացասութիւն իմ հերիք պատուհաս եղի-
 ցի յանցանաց քոց . բայց՝ առաւել ես : զի յորդոր
 եղիցի ապաշխարութեան քում' : Խատութեան
 կշտամբանացս տարայ համբերութեամբ + քանզի
 զիտէի որ արդար էին : Ամենայն ակնկալութիւնք
 իմ ուրեմն կայացան 'ի թուղթն' առ այրն մեծ +
 Քանզի գրունք ազնուականաց պաշարեալ են ցանդ
 յաղաջաւորաց՝ բոլորքն ես կազմ' և պատրաստ
 միսիլ ՚ի ներքս զնորամանդ աղերս ինչ , ոչ դիւրին
 եղե ինձ զմուտ գտանել : Օ խարդ և իցէ՝ յետ
 կաշաւելոյ զսպասաւորն կիսով աշխարհային ընչց
 իմաց , առաջնորդեցայ 'ի վաղձանի յընդարձակ
 դահլիճ' մի . թուղթն իմ յառաջազդոյն առաքեալ
 ելով առ տեսութիւն Տէրութեան նորա : Յընթացս
 տարակուսական միջոցիս լիալիք ժամանակ զաի ա-
 կանելոյ շուրջ զենե : Ամենայն ինչ շքեղ էր և
 ճարտարարուեստ . նկարք , զարդարանք , ոսկեզօ-
 ծութիւնք , ողջ քարացուցին զիս ահիւ . և բարձ-
 րացուցին զհամարումն իմ զտեառնէն , Ո՛վ . ասա-
 ցի ես ցանձն իմ . որ քան մեծ տէրն այսմ ամենայնի
 եղիցի , որ կրէ ՚ի գլուխ իւր զպործս տէրութեան ,
 և որոյ տուն երեցուցանէ զկէս հարատութեան
 թագաւորութեանն . անշնչշտ խելք սորա անչափելի
 պիտի լինի : Յընթացս ահաւոր մտածողութեանցս՝
 ըուայ զծանր ոտնաձայն գալ յառաջ : Ո՛վ . ահա-
 ւասիկ մեծ մարդն : Ոչ , նաժիշտն էր լոկ : Ոիս
 բանաձայն լսելի եղե ընդհուպ : Աս պիտի լինի :

Ո՞չ լոկ սենեկապետն էր սա մեծ մարդոյն : 'Ի վաղձանի՝ յերեան եկն իրօք տէրութիւն նորա : 'Դու ես բերողն՝' եհարց, 'ահա այսր թղթոյ : 'Պատասխանի արարի ես խոնարհութեամբ գլխոյ : 'Իմանամ այսու,' շարունակեաց, 'եթէ զիարդ—' Այլ ՚ի նմին վայրկենի մատոյց նմա սպասաւորն զթուղթ մի, և՝ առանց այլ ևս փոյթ ունելոյ, չոքաւ նա արտաքս ՚ի սենեկէն, և եթող զիս յանդորրու մարսել զուրախութիւն իմ : Այլ ճէ տեսի զնա՝ մինչև ասացայ ՚ի սպասաւորէ միոջէ եթէ երթայր տէրութիւն նորա մտանել ՚ի կառս առ դրան : Խսկոյն հետեւեցի նմա ՚ի վայր, և յարի զձայն խմընդ այլոց երից կամ չորից՝ որ իմ պէս եկեալ էին ազերս արկանել վասն շնորհաց : Բայց և այնպէս Տէրութիւն նորա յոյժ արագս ընթանայր քան զմեզ, և շահէր զգուռն կառաց երկայնաձիգ քայլիւք, յորժամ ձայն ետու իմանալ եթէ էր ինձ ակն ունել պատասխանւոյ : Այսու ժամանակաւ եմուտ նա ՚ի ներքս, և մրմնջեաց զպատասխանի ինչ՝ զորոյ զկէնն միայն լուայ և միւս կէսն կորեաւ ՚ի շառաչիւն անուոց կառացն : Կանգնեցի առ վայր մի պարանոցաձիգ, ՚ի դիրս այնպիսւոյ ուրում՝ որ ունին դնիցէ լմբունել զիառաւոր հնչմունա : մինչև շուրջ հայելով, զտի զիս միայնակ առաջի դրան Տէրութեան նորա :

"Համբերութիւն իմ," շարունակեաց որդիս, "՚ի սպառ սպառեցաւ . զկծեալ հազարաւոր արհամարհանօք որոց պատահեցայ, յօժար էի զնալ

զիւրովին, և լոկ պէտա ունէի անդնդոց առ ՚ի ըն-
 դունել զիս: Համարեցի զանձն իմ իբրև զմի յար-
 համարհ իքաց անտի՝ զոր Բնութիւն նշանաւորէր
 արկանել ՚ի խորս աւելածոց իւրոց, կորնչիլ անդ
 յանչքութեան, Խնչեիցէ՛ ունէի տակաւին զկէս
 գիննի մնացեալ, և խորհեցայ զի մի կապտեսցէ՛
 բաղդ զայն յինէն. այլ զի աներկւան լինել զայն-
 մանէ, հաստատեցի ՚ի մտի գնալ առ ժամայն և
 վասնել զայն մինչ ՚ի ձեռս էր, և ապա ապաւի-
 նիլ պատահմանց յետ այնորիկ: Մինչդեռ գնայի
 այսու յառաջադրութեամբ, դէպ եղե զի գործա-
 տուն Պարոն Արիսալի հրաւիրաբար բաց երեցաւ-
 մատուցանել ինձ զախորժ ընդունելութիւն: ՚Ի
 գործատան այսմիկ՝ սիրով առաջի առնէ Պարոն
 Արիսալ ամենայն հպատակաց Վեհափառ Արքային,
 զառատաձեռն խոստումն երեսուն Ատերլինաց առ-
 տարին: փոխան որոյ խոստման որ միանգամ տան
 նոքտ՝ է ազատութիւն իւրեանց մինչ ՚ի վաղձան
 կենաց, և թոյլտուութիւնն նաւարկելոյ զնոսա յԱ-
 մերիկա իբրև զգերիս: Աւրախ եղէ գտանել զվայր
 մի՝ ուր կորուսանել կարէի զերկիւղ յուսահատու-
 թեան, և մտի ՚ի փապարս այս՝ զի նման էր այն-
 պիսոյ, ու խտիւք կրօնաւորի: Գտի աստանօր
 զյոգունս ՚ի տառապելոց ինձ նոանելոց, սպասեալ
 դաշտեան Պարոն Արիսալի: երե եցուցանելով զձշ-
 մարիտ գծագրութիւն Անդղիական անհամբերու-
 թեան: Ամէն ստամբակ ոգի՝ գժգմնեալ ընդ բաղ-
 դի: թափէին զցասումն անիրաւութեանց նորա ՚ի

վերայ սրտից խրեանց . այլ հուսկ յետոյ և ջ Պարսկ կրիսպ և ամենայն քրթմիջիւնք մեր հանգարանեցան , Արժան համարեցաւ կշռել զիս մասնաւոր իմն հաւանութեամբ , և՝ արդարե , սա էր առաջինն որ յընթացս այնր ամնոյ , խօսեցաւ ընդ իս ժպտմամբ : Քետ սակաւուց հարց ու փորձից , խմացաւ որ քաջայարմար էի առ ամենայն բան յաշխարհի : Եկաց առ վայր մի խորհել զպատշաճաւոր միջոցէ վասն իմ , և՝ ապտակելով զՃակատ խրբ որպէս թէ եղիտ զոր խնդրէն , հաւասար արար զիս՝ եթէ զըսց լինէր յայնժամ հրեշտակութիւն արծակելոյ ՚ի ժողովոյն Պիհուլվանիոյ առ Ճիկէսայ Հնդիկս . և՝ թէ փոյթ յանձին կալնոյր խրովսան կարողութեամբ ատենադպիր առնել տալ զիս այնորիկ : Գիտէի ՚ի սրտի խմում՝ թէ ստէր ողորմելին , սակայն խոստումն նորա ետ ինձ բերկրութիւն . զի շքեղութիւն իմն զոյր ՚ի հնչմանն : Ախեցի ուրեմն յօժարութեամբ զկէս զիննին իմ , որոյ կէսն զնաց յաւելուլ յերեսուն հազար ստերլինս նորա . և կիսովն միւսով հաստատեցի ՚ի մտի երթալ ՚ի մերձակայ պանդոկն՝ անդ ուրախ լինել առաւել քան զնա :

“ Խըրեւ ելանէի արտաքս առաջադրութեամբս այսուիկ , պատահեցայ նաւապետի ուրում վազածանօթի . և զիջաւ նա ընկերակից լինել ինձ ՚ի գաշխուրան մի օշարակացքոյ : Վանդի ոչ ընտրէի երբէք թաքուցանել զկացութիւն իմ , հաւասարաց ինձ սա՝ թէ աներկուանալի կորուստ էր ունկն մատուցանել խոստմանց տեառն զործատանն . քան-

զե խորհէր նա միայն վաճառել զիս տնկադորժաց :
 ‘Բայց’ շարունակեաց, ‘երեակերպեմ’ ես, թէ ՚ի ձեռն
 առաւել կարծ ճանապարհորդութեան՝ դիւրին ե-
 ղեցի քեզ գտանել զմայելու չ ապրուստ : Ո՛ւնեն
 դիր խորհրդոց խմոց : Առագաստեմ ’ի վաղեւ առ
 Ամստերդամ, զեարդ՝ եթէ և գու եկեսցես ընդ խ
 երբե զՃանապարհորդ : Խակ և խակ ընդ ժամանել
 քոյ՝ զամնայն զոր միանդամ պարտ իցէ քեզ առ-
 նել, եղեցի ուսուցանել Հոլանտացւոց զԱնգղե-
 երէն, և երաշխաւոր եղէց որ աշակերտ և փող
 հերիքս գտցես : Օ արդիս՝ յաւել ասել, ‘կար-
 ծեմ հասկանաս զԱնգղերէն, ապա թէ ոչ գե գոյ
 ’ի նմա : Աներկեան արարի զնա առ այդ, այլ
 ցուցի զերկմտութիւն գուցէ ոչ յօժարեսցին Հո-
 լանտացիք ուսանիլ զԱնգղերէն : Երդմամբ հաս-
 տատեաց նա՝ թէ խանդակաթ հարեալ էին նոքա
 ’ի սէր այնորիկ : և վկայութեամբս այսուիկ հա-
 ւանեցայ առաջարկութեանց նորա, և ’ի միւսում
 աւուր ելի ՚ի նաւ ուսուցանել Հոլանդացւոց զԱնգ-
 ղերէն ՚ի Հոլանդա : Աջողակ էր հողմն և կարծ
 ճանապարհորդութիւնն : և յետ վՃարելոյ վասն
 ճանապարհի խմոյ կիսով կարսեաց խմոց, դտի զես
 երբե յերկնից անկեալ՝ օտար և անձանօթ ՚ի միւ-
 սում ’ի զլիսաւոր փողոցս Ամստերդամայ : Յայսմ
 կացութեան չկամեցայ պարագ անցուցանել զորոք
 ժամանակ ուսուցանելոյ : Ա ասն որոյ սատեայ առ
 երկուս կամ երիս յայնոցիկ՝ որոց հանդիպեցայ,
 որոց կերպարանք առաւել յուսադրական երեկին :

սակայն անհնարին եղեւ հասկանալ զլեզու իրերաց :
 “Ե՞ս յայսմ վայրկենի ՚ի յուշ անկաւ՝ թէ առ ՚ի
 ուստի ցանել Հոլանդացւոց զԱնգղերէն , պարտ
 էր զի նոքա նախ ուստուսցն ինձ զՀոլանդերէնն :
 “Օ իարդ եղեւ ինձ անտես առնել զայսպիսի պարզ
 հակադրութենէ , հիանալի է . սակայն ստոյդ է , որ
 անտես արարի :

“Օ այս օրինակ ՚ի չեք ցնդեալ նպատակիս ,
 զմնաւ ածի գառնալ վերատին հանգարտիկ յԱնգ-
 ղիս . այլ հանդիպելով աշակերտի ուրում Խռան-
 դացւոյ՝ որ գառնայր ՚ի Լովենայ , զբուցատրու-
 թիւն մեր շրջելով ՚ի վերայ գրականութեան՝ (զի
 յայնին լիցի , որ միշտ զմնուցութեամբ հարկա-
 նէի զնուաստ կացութիւն իմ , երբ կարողանայի
 զբուցել ՚ի վերայ այս զիսի նիւթոց .) զիտացի ՚ի
 նմանէն թէ ոչ զոյին և ոչ երկու հոգիք ՚ի բովան-
 դակ համալսարանի իւրում , որ հասկանային զՅու-
 նարէն : Օ արմացայ ընդ այս : “Ե՞սն հետայն
 հաստատեցի ուղղել զգնացս իմ դէպ ՚ի Լովեն , և
 ապրիլ սնդ՝ ուստւցանելով զՀունարէն , և յայսմ
 յառաջնորդութեան քաջալերեցայ ՚ի գրադէտ եղբօ-
 րէ իմմէ , որ ետ հարեւանցի նշանակութեամբ իմա-
 նալ , թէ սոլին եղանակաւ մարթ էր ժամանել
 բաղդի :

“Հուղի անկայ յէզս առաւօտու արիարար : Ա-
 մէն օր պակասեցուցաներ զբեռն կարասեաց իմոց ,
 հանգոյն Ետալարսի և զամբիւղի նորա հացի . քան-
 զի հաստւցանէի անտի Հոլանդացւոց ՚ի վարձ օթե-

ւանաց առ ճանապարհայն։ Իբրև ժամանեցի 'ի Լովեն՝ հաստատեցի 'ի մտի չգնալ քծնելով առ ստորին վարժապետս, այլ պարզաբար առաջի արարի գլխաւորին զհանձնար իմ։ Չոքայ, մուտ գտի և մատուցի զծառայութիւն իմ իբրև զուսուցիչ Յունաց բարբաւոյ՝ որ ասացեալ էի անձկալի գոլ ՚ի համարանի իւրում։ Զ առաջինն երկուանալ երեեցաւ գլխաւորն ընդ կատարելութիւնս իմ։ այլ առ ապացուցութիւն առաջարկեցի դարձուցանել զմասն ու և լցէ Քոյն մատենագրի՝ ընդ որ ինքն հաճեսցի, 'ի Լատիներէն։ Գրանելով զիս բոլորովին թախանձախնդիր յառաջարկութեան իմում, զայս օրինակ խօսեցաւ ընդ իս։ — Տեսանես զիս՝ պատանիդ. ոչ երբէք ուսայ զՅունարէն, և չգտանեմ եթէ սղալեցայ երբէք զանցառութեամբ։ Ո՞նկալայ զիսոյր և զպատմուճան վարդսպետական՝ առանց Յունարինի. ունիմ զբիւր մի Ֆլորինի առ ամին՝ առանց Յունարինի. սրտի մոտօք ուտեմ. առանց Յունարինի. և՝ 'ի կարճոյ, շարունակեաց, և որովհետեւ չփիտեմ ես զՅունարէն, չհաւատամ եթէ բարի ինչ գուցէ 'ի նմա։'

“Ապրի հեռացեալ էի արդ ՚ի տանէ՝ առ ՚ի խորհել դարձ առնել անդրէն. վասն որոյ հաստատեցի յառաջադէմ ընթանալ։ Ունէի զուղ ինչ զիսութիւն երաժշտակ մն և զշափառոր ձայն. և՝ որ երբեմն զքօանաց սակի էր ինձ, դարձուցի զայն արդ ՚ի պէտա ապրատի։ Անցի ընդ մէջ անվխաս շնականաց Ֆլէ մինգայ, և՝ 'ի միջի այնալիսի Գրազդիաց-

որց որք հերիք աղքատ էին առ ՚ի ուրախ լինել
և զուարթ ։ Քանզի միշտ զուարթ գտի զնոսա ըստ
չափու կարօտութեան իւրեանց ։ Յորժամ մերձե-
նայի առ դուրս շնականի ուրուք ընդ երեկս հար-
կանէի զմի յամնազուարթ եղանակաց ։ և այն
հայթհայթէր ինձ ոչ միայն զօթեան՝ այլ և զպէտս
վաղուի աւուր ։ ՚Ն մի կամ յերկու նուագի փոր-
ձեցի խաղալ և վասն ազնուականաց ։ բոյց գար-
շելի համարեցան միշտ արարք իմ ։ և ոչ երբէք
պարզեատրեցին ինձ և ոչ չնչին իրօք ։ ՚Եւ ևս
զարմանալի թուէր ինձ այս ։ Քանզի ՚ի բարեբաս-
տութեան աւուրս՝ յորժամ նուագէի վասն ընկե-
րակցութեան ։ յառնւրս՝ յորս նուագելն եթ զրօ-
սանք իմ ։ իմ երաժշտութիւն ոչ երբէք ՚ի գերե-
ել յըզմայլեցուցանելոյ զնոսա ։ և մանաւանդ ըզ
տիկնայս ։ այլ զի արդ իմ մի միայն միջոցն էր աղ-
րստի ։ ընկալեալ լինիւր արհամարհանօք ։ փորձ
իմն եթէ զեարդ պատր սստ է աշնարհ նուազեցու-
ցանել զարժէս կատարելութեանց այնոցիկ որով
կեայ մարդ ։

“Այսու եղանակաւ յառաջեցի մինչ ՚ի Պարիս ։
ոչ այլ ինչ գիտաւորութեամբ՝ քան եթէ ականել
շուրջ զենուե և ապա յառաջել ։ Ժողովուրդք Պա-
րիսայ առաւել սիրեն զօտարականս որք զփող ու-
նին ։ քան զայնոսիկ որք ունիցին զհանձար ։ ՚Եւ
զի չկարէի ես պարծիլ ոչ միովն և ոչ միւսով ։
որոյ վասն ոչ յոյժ սիրելի եղէ ։ Յետ շրջելոյ ընդ
քաղաքն զաւուրս չորս կամ հինգ և տեսանելոյ

զարտաքինն չքնաղակերտ տանց , պատրաստէի թուղուլ զառանձնարանս այս մնապարծ հիւրասիրութեան . յորժամ անցանելով ընդ թաղ ինչ երևելի՝ ում այլում ումնք պատահեցայ քան եթէ ազգականի մերում , որում զառաջինն յանձն արարեր զիս : Հանդիպումս այս յոյժ հաճելի եղեւ ինձ , և կարծեմ ոչ անհաճոյ և նմա : Եհարց զհանգամանաց եկաւորութեան իմայ ՚ի Պարիս , և ծանոյց ինձ զիւրոյին զգործոյ . որ էր հաւաքել զպատկերս՝ մետալս՝ քանդակս՝ և զայլ ո և իցէ տեսակս հնութեանց ՚ի պէտս ազնուականի ուրում՝ 'ի ՚ ոնդոն՝ որ նոր խիկ հասեալ էր վայելչութեան և մեծի փարթամութեան : Աւելի զարմանք իմ այն էր՝ տեսանել զազգական մեր ընտրեալ յայս պաշտօն . վասն զի շատ անդամ ինքնին վկայեալ էր ինձ , թէ ինքն ոչինչ զիտէր զգործոյն : 'Ե հարցանելս զզիւարդն այնպէս յանկարծակի հմտանալոյ նորա յարհեստի քննչի , հաւաստի արար զիս թէ չգոյր ինչ առաւել զիւրագոյն : Բոլոր զազտնիքն հիմնէին 'ի պնդապէս յարումն յերկուս կանոնս . մին՝ զիտել միշտ՝ թէ պատկերն առաւել սիրուն լինէր՝ եթէ պատկերահանն առաւել աշխատութիւն յանձն առեալ իցէր . և միւսն՝ գոլել միշտ զգործս Պիտրոսի Պերուջինոյի : 'Բայց սակայն՝ ասէ , 'որպէս ուսուցի քեզ միանդամ մատենագիր լինել ՚ի ՚ ոնդոն՝ սապէս և արդ յանձն առից մարզել զքեզ ՚ի զնել զպատկերս ՚ի Պարիս :

“ ՞ նդ այս առաջարկութիւն յոյժ պատրաստա-

կամ հաւանեցայ, քանզի ապրուստ էր, և զարդիս
փառասիրութիւն իմ ամենայն ապրելն էր: Գնացի
ուրեմն յօթեանս նորա, յարդարեցի զհանդերձս
իմ ձեռնտուռութեամբ նորուն, և յետ սակաւուց
հետեւցի նմա յաճրդանոցս նկարուց, ուր ակն կա-
լեալ էր Անգղեացի պարնաց զնող լինելը: Ոչ
սակաւ զարմացայ ընդ մտերմութիւն նորա ընդ ան-
ձանց յոյժ երեւելեաց, որ զնորայն հարցանէին
զխորհուրդ ՚ի վերայ ամենայն պատկերի կամ մե-
տալի՝ իբրև յանաղալ առաջնորդ վայելչութեան:
Քաջ ՚ի կիր առնոյր զօդնականութիւն իմ յայս-
պիսի գէպս, զի իբրև հարցանէին զխորհուրդ նո-
րա՝ ծանր դիմօք առնոյր զիս մեկուսի և հարցա-
նէր ցիս, քստմնէր, ունչս առնէր, զառնայր և
հաստատէր բազմութեանն՝ թէ ոչ կարէր կարծիս
տալ՝ ՚ի վերայ այսպիսի կարեոր գործոյ: Բայց
սակայն՝ երեմն պէտք լինէր կարեորագոյն հաս-
տատութեան: Յուշ լինի ինձ տեսեալ զնա՝ յետ
տալը զկարծիս իւր թէ գոյն պատկերի իրիք հե-
րիք գողտրական չէր, առնուլ ծանրութեամբ ըզ
վրձին թուխ օծանելեաւ՝ որ պատահաբար կայր
առ տեղեաւն, և շիել անվրդով զնկարն գլխովին
առաջի համայն բազմութեան: և ապա հարցանել
եթէ չէր կատարելազորձեալ զերանզն:

Իբրև վճարեաց զգործառնութիւն իւր ՚ի Պարիս,
եթող զիս յանձն արարեալ՝ ՚ի ինամս յոզունց
երեւելի անձանց՝ իբրև զոյժ յարմարաւոր անձն
առ ուղեգնական դաստիարակութեան: և յետ

փոքր միջնցի պարապեցայ առ ազնուականի ուրում՝
 որ եթեր զսան իւր ՚ի Պարիս առ ՚ի յառաջ վարել
 զշրջագոյութիւն նորա ընդ Եւրոպիա : Անկաներ ինձ
 կառավար լինել ազնուական պատահեցին, բայց ոյ-
 սու դաշամբ՝ զի ինքնին կառավարեցէ զինքն միշտ :
 Անն իմ՝ արդարեւ, լաւ ևս խմանայր զկառավա-
 րութիւն փողոյ քան զիս : Ճառաւանդ էր սա իբրև
 երկուց հարիւր հազար ստերլինաց՝ թողեալ նմա-
 ՚ի քեռուոյ իւրմէ յԱրևմտեան Հնդիկս : և իննա-
 մաճուքն՝ առ ՚ի յարմարել զնա ՚ի կառավարու-
 թիւն այնորիկ, տուեալ էին զնա յաշակերտու-
 թիւն գործակալի ուրումն : Օ այս օրինակ արծաթ-
 սիրութիւնն էր բռնացեալ կիրք նորուն : ամենայն
 հարցմունք նորա՝ առ ճանապարհաւն, էին՝ զիարդ
 հնար չծախսել զիազ, որն էր սակաւաճախ կերպն
 ճանապարհորդութեան, եթէ կարեմր էր զնել զիր
 ինչ որ շահիւ. վաճառիցի ՚ի լոնգոն : Օ այնպիսի
 նորութիւնն՝ զորս առանց ինչ վճարելոյ հնար էր
 տեսանել առ ճանապարհայն, յոյժ պատրաստա-
 կամ էր ՚ի զննել. այլ եթէ վճարելոյ լիներ, վկայ-
 էր հասարակօրէն՝ թէ լուեալ էր անարժան գոլ
 տեսութեան : Ո՛չ երբէք վճարէր զհաշիւ ծախուց
 առանց նկատելոյ՝ թէ զիարդ բազմաժախ էր շշագ-
 նացութիւն . և այս ամենայն՝ թէ և գեռ քան և
 մի տարին չեր լրացեալ : Ճամանեալ ՚ի լէգհառն,
 այն ինչ զնայտք ՚ի զնին նաւահանգստին և նաւոցն,
 և հարց նա զծախս ծովային ճանապարհի մինչ
 յԱնգլիա : Խմացաւ որ այս գողցես ոչինչ էր առ


մեծութեամբ ծախուց ցամաքայնոյ : ոչ կարաց ուրեմն ընդդէմ կալ փորձութեանն : վասն որոյ՝ համուցեալ զննչին գումար վարձուց իմոց : հրամեշտէառ և եմուտ ՚ի նառ մի միայն սպասաւորաւ գնալ ՚ի լոնտոն :

“Միւս անգամ ուրեմն ընկեցիկ եղէ ՚ի վերայ լայնատարած աշխարհի , այլ արդ փորձ էի այս պիտեաց : Ինչնիցէ կատարելութիւն իմ յերաժշտութեան ոչինչ օգտէր ինձ յերկրի՝ ուր անձնիւր գեղական առաւել կատարեալ էր յարհեստին քան զիս . բայց զայսու ժամանակաւ ՚ի ձեռս բերեալ էի զայլ իմն կատարելութիւն , որ միւնոյն պէս յաջողէր նսղատակի իմոյ : և այս էր վարժութիւն վիճաբանութեան : Քամննայն համալստրանս և մենաստանս օտար աշխարհաց՝ պիտի առաջարկութիւն իմաստասիրական ՚ի նշանաւորեալ աւուրս , ընդդէմ ամենայն արտաքին վիճաբանի . յոյր վասն՝ եթէ ախոյեանն ճարտարութեամբ հանդիսացի , մնալթ է նմա ակն ունել պարզեաց գրամոյ՝ կերակրոյ և անկողնոյ առ միոյ զիշերի : Այսու եղանակաւ ուրեմն մարտեայ զճանապարհ իմ դէպ յլոնդիա . շրջեցայ քաղաքէ ՚ի քաղաք . յառաւել մօտոյ քննեցի զմարդիկ . և՝ թէ պատշտահ իցէ ասել , տեսոի զպատկիրի զերկոսին զերեսն : Բայց և այնպէս՝ դիտողութիւնք իմ յոյժ սակաւաթիւք են . տեսի՝ որ միազետութիւնն էր բարեգոյն կառավարութիւնն վասն աղքատոց : և հասարակապետութիւնն վասն հարստաց : Պատի՝ որ հարստութիւնն ընդհանրա-

պէս յամենային աշխարհի միւս անուն էր ազատութեան . և թէ՝ ոչ ոք այնքան անձկացող է ինքնին ազատութեան , որ չցանկանայցէ հպատակել ինքեան զկամն այլոց յընկերութեան :

“Պ նդ ժամանելս յԱնգղիա՝ հաստատեցի նախ հաստուցանել զյարդանս իմ քեզ . և ապա մտանել ՚ի թիւ շահատակաց յառաջնում ուղղորդութեան . այլ փոխեցաւ առաջադրութիւն իմ ՚ի ձանապարհին՝ հանդիպելովս անդ վաղածանօթի ուրումն՝ որ իմոցայ պատկանէր խմբոյ միոյ գերասանաց՝ որք երթային անցուցանել զամասն ՚ի շնչի : Աչ յոյժ անհաճոյ պաշտօնակից երեցայ ընկերութեանն :

Օ խարդ և իցէ՝ ծանուցին ինձ ամենեքին զկարսորութենէ պաշտամանն՝ առ որ գիտեալ էի . թէ՝ ժողովուրդն էր բազմագլխի հրէշ . և թէ՝ նոքա միայն որ զյաջողակ գլուխս ունէին , հաճել կարէին զնոսա . թէ՝ գերասանութիւնն ոչ ուսեալ լինէր ՚ի մլում աւուր . և թէ՝ առանց աւանդական ինչ քստմնութեանց երեելոց ՚ի տեսարանի . և միայն ՚ի տեսարանի՝ զայս հարիւր ամս , անմարթ էր ինձ երբէք թեկն ածել հաճել զնոսա . Աիւս դժուարութիւնն էր հանդերձել զիս յատկութեամբ , զի գոզցես բովանդակ նկարադրութիւնք յանձանձեալ էին : Ա արեցայ ուրեմն ՚ի միոյ յատկութենէ ՚ի միւս , մինչ ՚ի վաղձանի Ավուտիսն որոշեցաւ . որում ներկայութիւն ձեր ընկերութեան բարեբաղդապէս խափան եղեւ ինձ երեցուցանել : ”



ԳԼՈՒԽ ԵՅ

ԿԱՐԱ ՏԵՇՈՂՈՒԹԻՒՆ ԲԱԲԵԿԱԾՈՒԹԵԱՆ ՚Ի ՄԻՋԻ
ՄՈԼԵԿԱՆԱՑ · ՈՐ ՓՈԽԱԴԱՐՁ ԲԱՏԱՐԱՐՈՒԹԵԱՄՔ
ՄԻԱՅՆ ԼԻՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ :

Ա լիքիք որդւոյ իմայ յոյժ ընդերկար է ին
առ ճառելոյ ՚ի մլում նուազի · առաջին մասն սկսաւ
՚ի նմին զիշերի և զմնացեալն զրաւէր ՚ի մլուսում ա-
ռուր զինի ճաշոյն, յորժամ երեւումն կառաց Պա-
րոն Թառնհիլայ առ գրան՝ երեւեցաւ դոյլ առնել
հասարակաց հաճութեան · Տակառապետն՝ որ զար-
դիս բարեկամոցեալ էր ընդ իս, զեկոյց ինձ յուն-
կանէ՝ թէ արդէն զառաջարկութիւնս արարեալ էր
ասպետն վասն օրիսրդին Ա իլմօթայ, և՝ թէ քեռի
և քեռակին նորա մեծապէս հաւան երեւէին գոլ
ընդ միաւորութիւնն · Ընդ մոսանել Պարոն Թառն-
հիլայ՝ երեւեցաւ սարտնուլ յետա ՚ի տեսանելն զոր-
դի իմ և զիս · սակայն ես մտադիւր զրեցի զայն
Հիացման և ոչ տհաճութեան · Ինչելցէ ՚ի մեր-
ձենալ մեր յողջունատրութիւն, դարձոյց զողջայն

մեր ամենասպարզ անկեղծութեամբ ։ և յետ սակաւուց՝ ներկայութիւն նորա ձեռն ետ միայն աճեցուցանելոյ զհասարակաց զուարթութիւն :

Յետ ըմպելոյ զթէյ՝ կոչեաց զիս մեկուսի հարցանել զդատերէ իմմէ . բայց՝ 'ի ծանուցանելս թէ խոյզ և խնդիր իմ ՚ի գերե եղեն , մեծապէս զարմացեալ երևեցաւ . յաւելլով եթէ ցարդ ստէպ գնացեալ էր ՚ի մսիթարել զմնացեալ ընտանիս իմ , զորս քաջառողջս էր թողեալ , Եհարց ապա՝ եթէ յայտնեալ էի զթշուառութիւն նորա (Օրիորդին Ա իլմօթայ կամ որդւոյ իմյ . և ՚ի պատասխանել խումը թէ գեռ ոչ էի ասացեալ , մեծապէս հաւան գտաւ ընդ խոհեմութիւն և նախազգուշութիւն իմ , անձկալով զի ամենե իմբ թագուցից զայն : “Քան . զի շատ լիցի ՝” ասաց , “հրապարակի լոկ անձին վատահամբաւութիւն . և թերես ոչ է (Օրիորդին Ա իվի այնքան յանցուցեալ՝ որքան երևակերպեմքս ՝” Ա ’ին ՚ի սպասաւորաց կարձեաց աստէն զիսօս մեր , որ եկն հրաւիրել զասպետն ՚ի ներքս առ շինական պար . որով և մնացի տիրապէս հաճեցեալ ընդ փոյթ նորա՝ զօր երեէր ունել զգործառնութեանց իմոց : Օ իարդ և իցէ՝ մեծարանքն զոր ցուցանէր Օրիորդին Ա իլմօթայ՝ կարե պարզ էին առ սղալելոյ . և սակայն ոչ քաջ հաւան երեէր սա ընդ այն . ոյլ տանէր յաւէտ հնազանդելով կամաց քեռակնոջ իւրոյ՝ քան յանկեղծ բերմանց : “Եա՛ ուրախ ևս եղէ տեսանել զնա զի ծաւալէր զքաղցր հայեցուածս ՚ի վերայ տարաբաղդ որդւոյ իմյ . զոր

ոչ ՚ի ձեռն մեծութեան և ոչ անդուլ ջանից իւրոց՝
կարողանայր միւսն առ ՚ի զրաւել։ Բայց և այն-
պէս՝ առերևոյթ անդորրութիւն Պարոն Թառնհիւ-
լայ ոչ սակաւ ապշեցուցանէր զիս։ Եօթնեակ մի
էր արդ՝ որ բուսն ստիպմամբ Պարոն Արնոլդոյ
մնացեալ էաք աստէն։ բայց օր յաւուր որչափ
առաւել խանգաղատանս ցուցանէր Օրիորդն Ա եր-
մօթ որդոյ իմայ, նոյնչափ առաւելուլ երեւէր
բարեկամութիւն Պարոն Թառնհիլայ առ նա։

Քանցեալ ժամանակս խոստացեալ էր մեզ քաղց-
րութեամբ՝ ՚ի գործ գնել զեարողութիւն իւր ՚ի ծա-
ռոյութիւն ընտանեաց իմաց։ այլ արդ առատա-
ձեռնութիւն նորա ոչ ՚ի խոստմանս և եթ վեր-
ջացաւ։ Քառաւօտուն առաջարելոյ առ չուման
իմայ, եկն առ իս Պարոն Թառնհիլ գիմօք ան-
կեղծ բերկրութեան, զեկուցանել ինձ զգործոյ իրեք
ծառայութեան՝ զոր արարեալ էր վասն բարեկամի
իւրում Պառորդայ։ Ա պակաս ինչ էր ոյս՝ քան
ձարել վասն նորա զպաշտոն դրոշակակրի ՚ի միում ՚ի
գնեաց՝ որք երթոյին Արքամուեան Հնդիկս որոյ
վասն խոստացեալ էր միայն զհարիւր ստերլինս։
հերիք կարողութիւն ունելով պակասեցուցանելոյ
զմնացեալ երկուսն։ “Փօխան չնչին ծառայութեանս
այսորիկ ՚” հետեւցաւ ասել ազնուանկան պատանին,
“ոչ այլ ինչ տրիտուր ինոգինմ՝ քան զհաճու-
թիւնն ծառայելոյ բարեկամի իմում։ և որչափ առ
հատուցանելի հարիւր ստերլինն ։ եթէ կարեոր
չեղիցի ձեզ ժողովել ՚ի միջի ծերում, ես հատու-

ցից ընդ ձեր և գուք հատուսջեք ինձ ՚ի պատես հութեան :” Ծնորհ էր այս՝ որ կարօտէր բանից ՚ի ցուցանել զերախտազիտութիւն մեր . մասաբիւր ուրեմն ետու զմուրհակ վասն գրամցն , և զոյնչոփի շնորհակալութիւնս մասացի՝ որպէս եթէ չկամէի երբէք վճարել անդրւին :

” Ե վաղիւ էր Գրէորգոյ մի կնիւ զնաւլ ՚ի քաղաքն՝ ոռ աղահալիւ զպաշտօն իւր . ըստ գատման առասաձեռն պաշտպանի խրայ . որ ՚ի գէղ վարկաւ վառ թալ հազճեսովլ՝ զի մի ՚ի կը ջոցին կանինոցէ այւ ոք շահաւորազոյն առաջորդութեամիք :

Ա աղ քաջ ուրիմն ընդ առաւօսն միւսոյ աւուր՝ պատրաստ էր գեռահասակ զինուոր մեր յուզի անկանիւ , և երեէր մի միւյն ՚ի միջի մերում՝ որ չէր զգածեալ ոյնութիւ : Աչ աշխատանք և վասնզք՝ որոց զիմսպրաւել զիայր , և ոչ բարեկամիք և սիրունն՝ քանզի սիրէր զիա հասասասապէս (Օքիորդն Ա իմօթ , զոր զինի իւր թողոյր . թուլցուցին խիք զոգի նորա : Քիա հրաժեշտ առնելոյ յամենեցունց : Ետու նմա զամնեայն զոր ունեի՛ զօրհնութիւնն իմ : ” Եւ արգ՝ որդեակ , ” ասացի . “ երթաս մարանչիւ վասն հայրենիաց քոյ . յաւշ լիցի քիզ՝ զինարդ հաւ քոյ քաջ՝ մարտեաւ վասն օժեալ արքայի իւրոյ . երբ հաւասարմնութիւնն էր առաքինութիւն ՚ի միջի Բարիտանացոց : Ե՛րթ՝ որդեակ , և հետոնդ լեր նմա յամենայնի քաւ ՚ի թշուառութիւն իցէ մեռանիւ ընդ Լարդ Փակլէնդայ : Ե՛րթ՝ որդեակ , և եթէ անկ-

յիս դու՛ թէպէտ ՚ի բացիս, ՚ի բացիս, և անկոծ
յայնոցիկ որք սիրեննե զքեղ, ամենազոհաբ արտա-
սուք այնոքիկ են՝ որով սրսկեն Երկինք դգլուխ
անթաղ մեռելոյ :

՚Ա միւսում առաւօտու հրաժեշտ առի ՚ի բարի
ընտանեաց այնոցիկ՝ որք քաղցրացան հիւրընկալել
զիս այնքան ընդերկար, ոչ առանց յոգունց բանց
երախտապարատւթեան առ Պարոն Ծառանձիլ, սակա
յետին առատասրատւթեան իւրում: Ծաղէ զնոսա
՚ի վայելս այն ամենայն երջանկութեան՝ զար առա-
տութիւն և մնունգ բարելաւ ընծայեն: և գարձայ
զէպ ՚ի տան, հատեալ ՚ի յուսոյ գտանելոյ երբէք
զգու ստրն իմ վերատին: բայց առաքելով զթառաչ
Երկինա խնայել և ներել նմա: Հասեալ էի
արդէն իրրե ՚ի միջոցի քսան մըսնաց բնակութեան
իմայ, ՚ի գարձու ունելով զերիվար մի առ ՚ի տա-
նել զիս՝ զի գեռ անկարող էի, և միսիթարէի զանձն
յուսովք վաղլազակի տնասնելոյ զամենայն՝ որ մի-
անգամ ամենասիրելին էին ինձ յաշխարհի: Այլ
՚ի վերայ հասաւեռով գիշելոյ՝ իջեանեցայ ՚ի փոք-
րիկ իջնանի միւսում առ Ճանապարհաւն, և հայցեցի
զընկերութիւն վանառեամ ՚ի վերայ փոքրիկ շշե
միոյ զինւոյ: Կատաք առ վառարանու խան որոնի
նորա՝ որ վայելսոզոյն սենեակին էր տան, և զրու-
ցեցաք ՚ի վերայ քաղաքական թեանց և նորալոց
երկրին: Դէպ եղեւ մեզ ՚ի միջեւ այլոց բանց՝ խօ-
սել զգերառասակ Ծապեռէն Ծապեռէն Հիլայ: որ
վկայեաց նճ վանատուրն, այնչափ ատիւր՝ որչափ

Հօրեղբայր նորա Աթագուհն Ա կլիէմ՝ որ երբեմնապէս գոյցը ՚ի շքն, տիրեցեալ էր, Ը արունակեաց նշանակել, թէ բոլոր պարապումն նորա էր դժրել դստերաց այնոցիկ՝ որք ընդունէին զնա, ՚ի տունս իւրեանց, և յետ երկուց կամ երից եօթնեկաց ստացման՝ մերժէր զնոսա ՚ի բաց անձիր և մատնեալ աշխարհի : Իբրև այսգունակ շարունակէաք ՚ի բառնի մերում, դարձաւ ամուսին նորա, որ գնացեալ էր արտաքս սակա դրամափոխութեան, և ՚իշմարելով թէ այր իւր վայելէր զզուարժութիւն՝ որում ինքն չէր մասնակից, եհարց ցնա բարկացեալ ծոյնիւ զբնչ առնէր անդ, որում միայն պատասխանի արար նա հեգնօրէն՝ ըմպելով յառողջութիւն նորա, “Տեսանեմ Պ րոն Ախմոնդս, ” զոչեաց նա, “կարի շարաչար վարիս ընդ իս, և ոչ այլ ընդ երկար տարուց այդմիկ : Ահա երեք մասն գործոց թողեալ են ինձ ՚ի գործել, և չորրորդն մնայ անաւարտ, մինչ զի դու չառնես ինչ՝ բայց եթէ արբենալ ընդ եկաւորաց զօրն ողջոյն, այն ինչ եթէ դրգալ մի գինոյ ապաքինէր զիս ՚ի տեհնդէ չհպեմ երբեք և ոչ միոյ կաթի : ” Եոր իմացայ զնշանակութիւնս նորա, և իսկոյն հեղի նմա զբաժակ մի լի . զոր ընկալաւ յարգութեամբ, և յառողջութիւն իմ ըմպելով, “ոչ վասն արժողութեան զիւոյ բարկանամ ինչ՝ պարոն, ” սկսաւ դարձեալ, “բայց անբարթ է զուսպ ունել՝ երբ տունն ելանէ ընդ պատուհանն : Իթէ պարտ իցէ ստիպել պահանջել յեկաւորաց, ողջ բեռն անկանի ՚ի մերայ

իմ. մտադիւր ուտէր ընդ նոսա և զբաժակն զոյն՝ իբրեւ զետշի գառին։ Ահաւանիկ ՚ի վեր անդր է մատաղաւուրց կին մի՛ որ եկեալ է օթազայիլ առ մեզ, և չհաւատամ եթէ ունիցի դրամ, առ չափազանց քաղաքավարութեան իւրում։ Հաստագ եմ կարի յամի է ՚ի հաստուցանել, և ցանկամ յուշ ածել նման՝"—"Առ ինչ պէտք յուշ ածելոյ նման," ասաց վանատուրն. "եթէ յամի իցէ՝ աներկեան է։" "Զգիահմ զոյդ," պատասխանեաց ամսւսինն, "բայց զիտեմ որ հաստագ եմ՝ եղեւ առ մեզ զերկուս եօթնեակս, և գեռ չեմք տեսեալ զիսաչն փողոյ նորա։"—"Արթեմ սիրելիդ իմ։" ասաց նա, "ստացուք զամենայն կուտեալ ՚ի մի։"—"Առատեանալ," զոչեաց միւսն. "յուսամ ստացուք ու ե իցէ եղանակաւ, և որպէս հաստատեալս եմ, յայսմ իսկ զիշերի. ապա թէ ոչ արտաքսեացի ինքն և կահք ու կտրասիք իւր։"—"Յիշեա՞ սիրելիդիմ։" ասաց այրն, "զի կին մեծազգի է նա և արժանի աւելի ակնածութեան։"—"Ալչափ առ այդ," գարձոյց կինն, "մեծազգի կամ ցածազգի՝ աճապարհոցի ՚ի գուրս ձորձկաւ։ Անեծազգութիւնն կարելի է բարի ինչք իցեն՝ ուր առնուն, այլ յիմոյս կողմանէ ոչ ելքէք շատ բարիս տեսի ՚ի նոցանէ առ կրպականշանաւ Հարրօյայ։" Օ այս ասացեալ սլացաւ ընդ նեղ թռիչս ինչ սանդիխոց՝ որ հաներ ՚ի խոհարաննէն ՚ի սենեակ մի զազաթնահայեաց, և վաղվազակի իմացայ յուժգնութենէ աղաղակի նորա և ՚ի դառնութենէ թշնամանացն՝ եթէ չեր հնար փող

դուռնել յօթեանելըն։ Ասրի պարզաբար լսելի լինիւր նախատինք նորա։ “Ասրիր ասեմ, գնւրս կորիր իսկըյն՝ անզգամ պառնիկ, ապա թէ ոչ տաց քեզ զնշան՝ որ ոչ լաւացի զայս երիս ամիս։ Օ ի՞նչ պատեր խարէութիւն, գուլ և իջնանիլ ՚ի պարկեշտ ասեն՝ առանց խուչի կամ գրամց առ ՚ի օրհնել զքեղ։ Ե՛կ ասեմ” — “Ո՞վ պատուելի տիկին” աղեքաէր օտարականն։ “զ թա՞ ՚ի յիս զթա՞ յողարմելի ի.ք մի անտերունչ յոյց մի միոյն զիշեր, և կատարեացէ մահ զննացեալն” ։ Խոկայն ծանեայ զձոյն խղճուկ չուառացեալ մանկան իմց Օլեվիայ։ Արացայ ՚ի թիկունս նորա, այն ինչ ՚ի քարշ ածէր զնա կինն զներաց։ և կարայ զսէրեցեալ անտերունչ հեքն ՚ի գրկի խմամ։ “Հարով, բարձր եկիր կարուսեալդ իմ սիրեցեալ, որով և իցե եղանակաւ դարտաս քոյ՝ բարձր դոս, դմնձդ իմ։ ՚ի ծոց տառապեալ Հօր քոյ ծեւացեալ։ Ծառպէտ և մնլեկանն զքեզ ՚ի բաց լքցէ թողթէ, տականն է յաշխարհի մին՝ որ ոչ երրէք բարձի թողի արաւացէ։ թէպէտ և զքիւրս ու նիցիս յանցանս ՚ի համար տալոյ, յօժար եղիցի նու զամնեայն զբառացութեամբ հարկաներոյ” — “Ո՞վ սիրեցեալդ իմ իսկ” — զվայրիեանս ինչ ոչ կարէր ասել ու ելիս, “իմ ամնասիրելիդ հայր բարի, Ասրիլ է հրեշտակաց առաւել քաղցրադոյն լինել։ Ո՞վ անարժանութեանս։ Անոլէնն ոյն, ատեամ զնոս և զահձն։ Թշնամնել զայսքան բարութիւն։ Ոչ ներհոցիս ինձ, դիտեմ չներես” — “Այս, որպեակ, ներեմ

քեզ ՚ի բոլոր սրտեւ : ՞ Օ զջան միայն և տակաւ ին եր-
ջանիկ եղիցու ք երկոք հանդու : ՞ Օ բազում ուրա-
խարար օրեարս անցաք տակաւին , իմ՝ Օլեվիա : ”—
“Ա իս . ոչ , հայր իմ , ոչ ընառ : Վնացեալ աւուրք
թշուառական իհեաց իմց՝ եղիցին վատահամբաւ-
ութիւն առ գրան և ամօթ առ անին : Այս աւաղ՝
հայր իկ , զիանդ զունաթափեալ ես : Ո արթ ինչ
իցէ իմ պիս վատին այդքան վիշտ ծնանել քիզ :
Ա նշու շտ շտա կատարելու թիւն ունիս զթշտ առու-
թիւնս յանցանց իմց կապեւ : ’ի գու իս քոյ :”—
“Կատարելութիւն մեր՝ կին գոււ : ”—“Ա աշ , հայ-
ր իկ , գմէ՛ այդպիսի ցուրտ անուն : Այս առաջին ան-
գոմն է կոչեւսր զիս այդպիսի ցուրտ անուամբ : ”—
“Ծնորհեան ինձ սիրով . սիրելին : ” գարձուցի ես ,
“լոյց գնայի նշանակել : թէ կատարելութիւնն յու-
շիկ պատու արս կանգնէ ընդգեմ խոսվութեանց ,
թէպէտ և ՚ի վաղձանի անվկանգապէս : ”

Դարձաւ արդ կին վանասեան՝ խմանալ եթէ
ախարժելի եր մեզ անիւ դվայիւսպցին դսափիսն .
որում հաւաներով . ցուցաք ՚ի սննեակ մի ուս առա-
ւել ազատորէն կարեաք զըսցարեւ : Յետ սակա-
ւիկ մի անդորրանալոյ ՚ի ձեռն խօսակցութեան . ոչ
կարելի հանդարանի ՚ի հարցաներոյ զհանգամանացին
որ սատիճանաբար առաջնարգեցին նմա յարգեան
վեճակ իւր թշուառութեան : “Անօրէնն այն՝ տէր , ”
ասաց . “յառաջին օրէ անտի հանդիպման մերոյ .
առաջի արար ինձ զպատուաւոր՝ թէ և գաղանի
առաջարկութիւնս : ”

“Արդարեւ անօրէն,” ասացի ես . “և սակայն զարմացեալ եմ իրօք՝ զիարդ ոք՝ Պարսն Բռչէլայ կատարելութեան և առերևոյթ պատռւոյ , կարասցէ յանցաւոր գտանիլ այսպիսի կամաւոր վատթարութեան , և զայսօրինակ միջամաւխ լինել ի գերդաստան առ ի աւերել զայն :”

“Հայր , հայր !” դարձաց գուստը իմ . “տառապիս դու ընդ օտարութի սղալանոք . ոչ երբէք փորձեաց Պարսն Բռչէլ պատրել զիս : Փոխանակ այնորիկ՝ զամենայն զպատեհ կալնոյր զգուշացուցանելոյ զիս զանխլաբար ընդդէմ հնարից Պարսն Յնառանհիլայ , զոր արդ յաւետ վատթարագոյն գըտանեմ՝ քան զոր նայն ձևացուցանէր :”—“Պարսն Յնառանհիլ .” ընդմիջն ես . “հնամը ինչ է :”—“Այս , տէր !” դարձաց նա , “Պարսն Յնառանհին էք . որ հրապուրեաց զիս , որ ի վար էարկ զերկոսին տիկնայն՝ որպէս անուանէրն զնոսա , այլ որք իրաւապէս անձնատուր կանացք էին քաղաքի՝ անուստում և անգութ , առ ի թակարդել զմեզ ի լոնգոն . Աջողէին արդքոք հնարք նոցա՝ որպէս յուշեղից քեզ , եթէ չէր վասն նամակի Պարսն Բռչէլայ . որ առ նոսա ուղղէր զամենայն զնախատիննն՝ զոր մեք մեզ գրէաք : Օ խարդ այդքան կարսղութիւն ունեցաւ խորտակելոյ զդիտումն նոցին՝ տակաւին անյայտ է ինձ . այլ հաւաստի եմ՝ զի էր նա միշտ մեր սրտեռանդն և անկեղծ բարեկամ :”

“Յապուշ կրթես զիս՝ սիրելի ,” ասացի . “այլ արդ տեսանեմ՝ կարի քաջ հիմնեալ էին հախկին

կասակածանք իմ զվատթարութենէ Պարոն թառն-
հիլայ . այլ յաղթանակեսցէ նա յապահովութեան ,
զի ինքն հարուստ է և մեք աղքատ : Այլ ասա
ինձ՝ աղջիկ , արդարե ոչ սակաւ փորձութիւն էր՝
որ կարաց այդպէս եղածանել զամենայն զտպաւո-
րութիւնս այնպիսի գասահարակութեան , և զայն-
պիսի բնաւորութիւն առաքինական : որպէս զքոյն :

“Արդարե” տէր ,” պատասխանի արար նա ,
“ապարտի նա զամենայն զյաղթանակութիւնս իւր
ցանկութեանն՝ զոր ունէի վասն երջանկացուցանելոյ
զնա և ոչ զիս : Գիտեի զի հանդէս հարսանեաց
մերոց՝ որ զանխուլ կատարեցաւ ’ի ձեռն փափա-
կան երիցու , չէր իւիք պարաւանդական . և թէ
չունէի զայլ իմն՝ հաւատ նուիրելոյ , բայց ’ի
պատույ նորա :”—“Օ ի՞նչ ,” ընդմիջի ես . “ապա-
կեցար յիրաւի ՚ի քահանայէ և ՚ի կարգաւորէ :”—
“Այո՝ տէր , արդարե այդպէս է .” պատասխանեաց
նա . “թէ և երդուաք երկոքեանքս ևս չյայտնել
զանուն նորա :”—“Ուրեմն եկ՝ սիրելիք իմ , վերա-
տին ՚ի գիրկս իմ . և արդ հազարիցս անդամ առա-
ւել ընդունելի ես ինձ քան յառաջ , զի կին նորա
ես դու ըստ ամենայնի , և յաղագս ամենայնի , և ոչ
համօրէն օրէնք մարդկան՝ թէպէտ և գրեալ ՚ի տախ-
տակս ադամանդի , կարեն յովտ մի նուազեցուցանել
՚ի զօրութենէ սրբազն կապակցութեան այնորիկ :

“Աւաղ . հայրիկ ,” պատասխանի արար . “սակաւ
ինչ ծանօթ ես անօրինութեանց նորա . արդէն
պապիկաւ է նա ’ի նմին իսկ երիցու ընդ վեցից


կամ ութից այլոց կանանց՝ զորս՝ իմ պէս պատրիարքաւ և բարձի թողի է արարեալ:

“Այդպէս,” զուցիցի, “ուրեմն պարտիմք կախել տալ զերէցն, և դու ամբաստանեսցես զնմանէ առ վաղիւ:”—“Բայց ուղիղ եղիցի այդ՝ տէր,” գարձոյց նա, “մինչ երկուեալ եմ՝ ի գաղտնութիւն:”—“Եթէ զայդպահի խոստումն ես արարեալ՝ սիրելին,” գարձուցի, “չկարեմ և ոչ իսկ գրգեցից զքեզ երդմնազանց լինել: Թահակտ և օգուտ հասարակաց եղիցի, չպիտի քեզ ամբաստանել զնմանէ: Համանայն կարգագրութիւնս մարգկային՝ թոյլ տուեալ լինի փոքու չարի վասն՝ ի ձեռս բերելոյ զմեծագոյն բարի, զոր օրինակ՝ ի քաղաքականութեան՝ տուեալ լինի զաւառ վասն առահովելոյ զթագաւորութիւն: ի բժշկականութեան՝ հատանի անդամ՝ ի փրկել զմարմին: Բայց ի կրօնի՝ օրէնք զրեալ են և անմեղելին, ո՛ւ եբեւ առնել զւար: Եւ օրէնքս այս ուղիղ են, գուստը իմ, այնու զի յայլմէ կողմանէ: Եթէ առնիցեմք զիոքրագոյն չար առ՝ ի ձեռս բերել զմեծագոյն բարի, գործեմք զայս օրինակ զիրական յանցանս՝ ակեկալութեամբ պատահական օգտից: Եւ թէ իրօք հետեւեցի օգուտն, տակաւին միջոցն՝ որ ի մէջ զործողութեան և օգտին որ եղեւ յանցաւորական, եղիցի թերես այն՝ յորում կոչցիմք համարս տալ վասն իրաց զոր արարաք: և մատեան մարգկային արարից խփիցի ի յաւիտեան: Այլ խափանեմ զնօսս քոյ՝ սիրելի: յառաջ զնա:

“**Խ** միւսում իսկ առաւօտու,” շարունակեաց, “ծառնեայ զորպիսի փոքր ակնկալութիւն պարտ էր ինձ ունիլ զանկեղծութենէ նորա, ’**Խ** նմին իսկ առաւօտու տարաւ զիս առ այլ երկուս վատաբազդիկ կանայս, որոց իմ պէս գմբեալ էր ։ այլ որք կեային շատացեալ ’ի պոռնկութեան։ Կարի խանգակաթ սիրով սիրեն զնա առ ’ի հանգուրժել այսպիսի հակառակորդաց ’ի սէր նորա, և զուն եդի ՚ի մառացօնս արկանել զվատահամբաւութիւն իմ՝ յաղմնւկս բերկրանաց։ **Ա**յսու խորհրդով կաքաւեցի, պՃ’նեցայ և խօսեցայ, սակայն տակաւին ապերչանիկ էի։ Պարնայք այցելուք սբատմէին ինձ միշտ զկարողութենէ հրապուրանաց գեղօյ իմոյ, և ոյս ձեւն տայլ միոյն աճ’նեցուցանել զթախծութիւն իմ։ զի զամնայն զկարողութիւն նոցա ՚ի բաց էի ընկեցեալ։ **Պ**այս օրինակ ամէն օր առաւելոյր յիմ թախծութեան և նա ՚ի ժպլհութեան։ մինչ ՚ի վաղձանի համարձակեցաւ հրէշն անազորոյն՝ առաջի առնել զիս գեռահասակ սեպուհւոյ միում իւրում ծանօթի։ Պէտք ինչ իցէ՝ տէր, նկարագրել զիարդ ապերախտութիւն նորա զկծեցոյց զիս։ Պատասխանի իմ առ առաջարկութիւնս այս՝ գողցես խելագարութիւն էր։ **Ա**նձկացայ բաժանիլ։ Երբեք լանէի՝ մատոյց ինձ զքսակ։ այլ ընկեցի զայն սրտմտութեամբ յերես նորա, և հրոսեցի արտագս այնալիսի կատաղութեամբ, որ զժամանակ մի անգայ արար զիս թշուառութեանց վիճակի իմում մուկայն վաղլաղակի ականեցի շուրջ զինե, և զտի

զիս անարդ՝ ընկեցիկ՝ յանցաւոր իք մի առանց բարեկամի միոյ յաշխարհի յոր ապաստան անկանիլ։ Յայնմ միջոցի պատահելով կառաց սուրհանդակակի, մտի ՚ի յայն, նպատակ իմ ելով հեռանալ ՚ի թշուառականէն՝ զոր ատէի գարշեալ, իջուցին զիս այսրէն, ուր ՚ի ժամանամանէ հետէ, տառապանք իմ և բըրտութիւն կնոջս եղեալ են իմ մի միայն ընկերակիցք։ Բերկրական ժամքն զորս անցուցի ընդ մօր խմում և քեռ, ցաւագին գառնան արդ առ իս։ Վիշտ նոցա մեծ են, այլ իմն մն ծագոյն քան զնոցայն։ Քանզի խառնեալ են իմն ընդ յանցանաց և վատահամբաւութեան։”

“Համբերութիւն ստացիր, որդեսակ,” ասացի. “Եյուսամ գեռ բարեզունից հանդիպել։ Հանզիր ՚ի գիշերիս, և ՚ի վաղիւ տարայց զքեզ առ մայր քոյ և մնացեալ ընտանիս։ յորոց ընկալցիս զքաղցը ընդունելութիւն, լսե՛զ կին։ թափ անցեալ է այս ընդ սիրտ նորա. բայց տակաւին սիրէ զքեզ, Օլիվիա, և զմոռացութեամբ հարցէ։”



ԳԼՈՒԽ ԻԲ.

ՅԱՆՑԱՆՔ ԴԻՄԵՍԻ ԵԵՐԵԱԼ ԼԻՆԻՆ, ՈՒՄ ՄԵՐ
ԻՑԻ ՚Ի ՅՈՒՑԿԻ :

ՅԵԳԻ առաւօտ առի զդուստը իմ ՚ի յետկուէ, և խաղացի դէպ ՚ի տուն, ՚ի ձանապարհին

գուն զործեցի ամենայն հրապուրանօք անդորրել զվեշտս և զերկիւղս նորա, և զինել զնա արութեամբ սրաի հանգուրմելոյ յանդիմանութեան դառնացեալ մօր իւրում։ Օ ամենայն զապատեհ քաղէի ՚ի տեսարանէ չքնաղ դաշտավայրին ընդ որ անցանէաք, դիտել որ չնպաստել քաղցր էին Խրկինք առ մեզ՝ քան մեք առ իրեարս, և թէ յոյժ սակաւ էին թշուառութիւնք ՚ի ընութենէ արարեալ, հաւաստեցի նմա զանփոփոխութենէ սիրոյ իմոյ առ ինքն, և թէ յընթացս կենաց իմոց՝ որ թերես ձիգ լիցի, մարթ եղլիցի ինքեան ապաւնիւլ ՚ի յիս որպէս ՚ի խնամակալ և ՚ի հրահանգիւ։ Օ ինեցի զնա ընդդէմ ստգտանաց աշխարհի, ցուցի եթէ մատեանք քաղցրիկ անպարասաւ ընկերակիցք էին թշուառացելոց, և թէ եթէ ոչ համոզեսցեն զմեզ ՚ի վայելումն կենաց, ուսուցեն գոնէ հանգուրմել այնմ։

Օ երիվարն զոր ՚ի վարձու կալեալ էի, պարտ էր ինձ յայնմ զիշերի թողուլ յիջեանի մլում առ ձանապարհայն, ՚ի միջոցի հինգ մղոնաչոփ հեռաւ որութեան ՚ի տանէ իմմէ. և զի ցանկայի պատրաստել զընտանիս առ ընդունելութիւն դատեր իմոյ, հաստատեցի թողուլ զնա յիջեանին ՚ի զիշերի, և դասնաւ կոնուխ ընդ առաւօտն ընդ Առփիսյ վասն նորա, Խհաս զիշեր նախ քան ըզ ժամանիւ ՚ի սահմանեալ օթեամն մեր. ինչ և իցե յետ տեսանելոյ զնա հանդերձեալ վայելուչ դատիկոնաւ, և տալոյ զհրաման վասն պատշաճաւոր կազ-

գուրմանց, համբուրեցի զնա և յառաջեցի գեղ ՚ի
տուն: Եւ արդ զնորանոր զգածմունս բերկրութեան
համբուրէր սիրտ իմ, որչափ առաւել մերձենայի
խաղաղաւէտ կայանին այնորիկ: Հանգոյն թռչ
նոյ՝ որ ահաբեկիցի ՚ի բունոյ իւրմէ, յառաջէին
իղձք իմ՝ քան զերագութիւնս, և ճախոր առնու ին
շուրջ զփոքրիկ վառարանաւ՝ ամենայն զմայլմամբ
ակնկալութեան: Առչեցի ՚ի վեր զբաղում խանգա-
ղատական բանս՝ զոր ունէի ասել, և առի զճաշակ
խնդութեանն որով ընկրուեալ ունէի լինել: Օ գացի
արդէն զկաթոզին ողջագուրումն ամսւսնոյս, և ժըպ-
տեցայ ընդ խնդութիւն փոքրիկանց խոյս: Որովհետեւ
յուշիկ ընթանայի՝ դիշերն արագ անցանէր: Ա աս-
տակաւորք աւուրն խոր ՚ի քուն ննջէին ամենեքին,
անցեալ էին ձրագք խրճթաց ամենից, ոչինչ ձայն
չսելի լինիւր՝ բայց սուր աքաղաղին և խորածայն
զամփուան ՚ի խորին հեռաւորութենէ: Վերձեցայ
՚ի փոքրիկ ընակարան իմ բերկրութեան, և նախ
քան զհասանելին՝ ի միջոց փարսախի միոյ, բարե-
սիրտ գամփուն իմ՝ վազելով եկն ողջունել զիս:

Վերձ էր կէս զիշեր՝ յորժամ եկի հարկանել
զդուռն իմ: ամենայն ինչ հանդարտ էր և լոիկ.
սիրտ իմ պարպատէր անպատմելի ցնծութեամբ:
յորժամ: ով զարհուրանացս, տեսի զտունն ցոլտ-
նալ՝ ի բոց հրոյ, և ամենայն ծակ բոցափայլիւ
հրդեհմամբ: Զայն ետու ուժգին ցնցողական, և
անկայ զգայաղիրկ ՚ի վերայ սալայատակին: Կար-
ուուցաւ որդի իմ՝ որ ցարդ ՚ի քուն ննջէր, և

Նշմարելով զբոց հրոյն, իսկոյն զարթոյց զամուսին
իմ և զդուսար. և ամենեքին վազելով արտաքս
մերկ և խելացնոր ահաբեկութեամբ, 'ի յուշ կո-
չեցին զիս տառապանօք իւրեանց : Այլ լոկ առ
նոր առարկայս արհաւրաց. քանզի կալեալ էր զար-
դիս բոցոյն զյարկ ընակութեան մերոյ, մասն զինի
մասին թօթափելով ՚ի ներքս, այն ինչ կանգնեալ
ընտանեացս լուիկ տագնապաւ՝ հայէին որպէս եթէ
վայելել զբոց հրոյն : Յաւէի մերթ ՚ի նոսա և մերթ
՚ի յայն, և ապա հայեցայ շուրջ զինեւ վասն եր-
կուց փոքրկանցս . այլ ոչ տեսի զնոսա : Ո՞վ
թշուառութեանս : “Ո՞ւր,” գոչեցի, “ուր են իմ
փոքրկունքն :”—“Այլեցան ՚ի հուրն,” ասաց ա-
մուսին իմ անդորրաբար, “և ես ընդ նոսա մե-
ռայց :” ’Ն նմին վայրկենի լուայ զլալիւն մանկանցն
՚ի ներքուստ՝ որք նոր զարթուցեալ էին ՚ի հրոյն,
և ոչինչ կարող էր կասեցուցանել զիս : “Ո՞ւր, ուր
են իմ երեխայքն :” գոչեցի արշաւելով ընդ բոցն,
և խորտակելով զգուրս սենեկին, յորում արգելեալ
էին : “Ուր են փոքրկունք իմ :”—“Ահաւասիկ՝ հայ-
րեկ, ահաւասիկ եմք մեք :” գոչեցին ՚ի միասին,
այն ինչ զրեթէ հասեալ էր բոցն անկողնոյ նոցա-
ուր ննջէին : Կալայ զերկաքանչիւրսն ՚ի զրկի ի-
մում և իւլեցի ընդ հուրն իմովս երազութեամբ .
այն ինչ նոյն հետայն ընդ ելանել իմում՝ փլաւ
առաստաղն : “Արդ,” գոչեցի ես՝ ՚ի վեր ունելով
զմանկունս . “արդ թող բոցոյն ձարակիլ և ամենայն
ստացուածոց իմոց կորնչել : Ահաւասիկ փրկեցի ըզ

գանձս իմ։ Ահաւասիկ, սիրեցեալդ իմ, ահաւասիկ
երկոքին զանձք մեր, և տակաւին երջանիկք եղի-
ցուք։՝ Համբուրեցաք զկաթոգին սէրս մեր հա-
զարիցս, աղխեցան նոքա զպարանոցօք մերովք,
և թուեին մասնակից լինել մերոց յափշտակու-
թեանց։ այն ինչ մայր նոցա էր զի ծիծաղէր, և
էր զի լայր փոխանակաւ։

Կացի արդ յանդորրու ՚ի զննին բոցոյն։ և յետ
սակաւուց իմացայ՝ որ բազուկ իմ մինչ ՚ի յուսս
բոցակիզեալ էր անհնարին։ Չէր ուրեմն ՚ի կարու-
զութեան իմում օգնել որդուոյս՝ եթէ ՚ի գուն գոր-
ծելն ապրեցուցանել զապրանս, կամ խափանել ըզ
ճարակիւլ բոցոյն կալոյ մերում ցորենոյ։ Օ այսու
ժամանակաւ աղմուկ շիտթի անկաւ ՚ի մէջ դրա-
ցեաց՝ որք փութացան ՚ի թիկունս հասանել մեր։
բայց զոր միանդամ կարէին առնել, էր կանգնել
մեր պէս ՚ի զննին աղիտիցն։ Ինչք իմ՝ յորոց միջի
էին մուրհակք պաշտատականի դստերաց իմոց, բո-
վանդակ այրեցան։ բաց ՚ի տփոյ միոյ սակաւ ինչ
թղթոց՝ որ կայր ՚ի խոհարանին, և յայլոց երկուց
կամ երից անպիտան իրաց։ զոր յսկզբան անդ
փրկեաց որդի իմ։ Բայց և այնպէս ձեռն ետուն
դրացիք՝ թեթևացուցանել զաղէտս մեր։ Բերին
մեզ զհանդերձս, և կահաւորեցին զմի յարտաքնա-
տանց մերոց կահիւք խոհարանի, որպէս զի՝ ընդ
արշալոյսն ունէաք զմիւս՝ թէ և աղքատին, ընա-
կարան առ մեկուսանալոյ։ Մերձաւոր դրացին իմ
բարեկիր՝ և մանկունք նորա, ոչ զերջոտնեցան հո-

գալ զամենայն զպիտոյս մեր , և մատուցանելով
զամենայն զմիսիթարութիւն՝ զոր անհրահանդ բա-
րեսիրութեան մարթ էր թելագրել :

Խըրեւ զիջան ահափետք ընտանեաց իմոց , հե-
տաքրքրութիւն տեղեկանալոյ զպատճառ ընդերկար
յամցման իմոց սկսաւ զտեղի առնուլ . վասն որոյ
ծանուցանելով նոցա զամենայն զհանգամանաց , ան-
ցի պատրաստել զնոսա առ ընդունելութիւն կորու-
սեալ միոյն մերոյ , և թէ և չունեաք արդ զայլ
իմն բաց ՚ի թշուառութեանց հաղորդս առնելոյ ,
կամէի հայթհայթել նմա զիսնդութիւն ընդունե-
լութեան առ ամենայնի զոր ունեաք : ՀՅոյժ դժուա-
րին լինէր ինձ հարկ պաշտամանս այսորիկ՝ եթէ
չէր նորոգ ձախորդութեանց կորացուցեալ զհպար-
տութիւն ամուսնոյս , և բժացուցեալ զայն առաւել
կծու տրտմութեամբք : Անկարող լինելով ինձէն
գնալ վասն տառապեալ մանկանս , զի սաստիկ էր
ցաւ բազկիս , յղեցի զորդին իմ և զգուստը . որք
փութով վերադառն կրելով զեղկելի յանցաւորն
որ չունէր զհերիք արութիւն ՚ի վեր հայելոյ ՚ի գէմն
մօրն , զոր չկարսցին խրատք իմ յանկուցանել
՚ի կատարեալ հաշոռութիւն . քանզի՝ առաւել ևս
զգան կանայք զյանցմանս կանացիս , քան զմար-
դիկ : “Ա ահ , տիկինն ,” ասաց մայր նորա , “յոյժ
տղքատին է քեզ տեղիս յետ այդքան շքոց :
Դուստրն իմ Առփի և ես՝ փանաքի ընդունելութիւնս
կարեմք մատուցանել այնոցիկ՝ որք ընկերակցեալ
իցին ընդ մեծազանց միայն : Այսու Օրինորդ Լիվի,

խեղջ՝ հայր քոյ և ես շատ տառապեցաք ՚ի նորումն,
բայց յուսամ թողցեն քեզ Երկինք ։” Յընթացա
այսր ընդունելութեան՝ եղկելի զոհն կանգնէր գու-
նաթափ և զգողանի հարեալ, անկարող արտասուե-
լոյ կամ պատասխանի առնելոյ ։ այլ՝ ոչ կարէի
ես ժուժալ լուռ ՚ի զնին կտլ տագնապի նորա ·
որոյ աղագաւ յանձին բերելով զիստութիւն և ՚ի
բանս և ՚ի կերպարանս, որում միշտ զհետ դայր
իսկոյն հնազանդութիւն · “Աղաչեմ զքեզ՝ կի՞ն,”
ասացի, “զի միտ դիցես այս վերջին բանից իմհց, ածի
ես այսրէն զտառապեալ մոլորեալ թափառականն ·
դարձ նորա ՚ի պարոխս իւր՝ պահանջէ զնորոգումն
գորովանաց մերոց · Հաւաստի թշուառութիւնք
կենաց գան արդ ՚ի վերայ մեր արագութեամբ, մի
ուրեմն յաւելցուք ՚ի նոյն անմիաբանութեամբ մերով ·
Եթէ միաբանութեամբ կեցցուք, տակաւին բաւա-
րարեալ եղիցուք · Քանիզի՝ հերիք եմք ՚ի բացեայ
ունիլ զպարսաւադիր աշխարհ, և պաշտպան կալ
իրերաց · Կթութիւն Երկնից խոստացեալ է առ
զզացեալն, և թող օրինակաւ այնուիկ ուղղիլ մե-
րոյն · Երկինք՝ վկայի մեզ, առաւել ուրախ լինին
ընդ մէն մի մեղաւոր զզացեալ, քան ընդ իննառն
և ինն անձինս՝ որք ընթացին անխոտոր ուղղու-
թեամբ · Եւ այս ուղիղէ · քանզի՝ միայնակ Ճիպն
այն՝ որով կասիմք ՚ի զառ ՚ի վայր ուղին առ կո-
րուստ, առաւելցոյն Ճիպն է այն առաքինութեան,
քան զհարիւրաւոր գործս արդարութեան ·”



ԳԼՈՒԽ ԵԳ.

ՄԻԱՅՆ ՅԱՆՑԱԽՈՐՔ ԿԱՐԵՆ ԸՆԴԵԲԿԱՐ
ԵՒ ԲՈԼՈՐՈՎԴԻՆ ԹՇՈՒԱՌԱՆԱԼ:

ՊԼԵՏՔ էին մասնաւոր անդուլ ջանից՝ առ
՚ վայելուչ առնել զարդի բնակարան մեր ըստ
կարի, և յարսմարեցաք վազվաղակի վայելել միւս
անգամ զնախկին անդորրութիւն մեր, Անբաւական
լինելով օգն լինելոյ որդւոյ իմոյ 'ի սովորական
գործառնութիւնս մեր, ընթեռնուի ՚ի լուր ընտա-
նեացս ՚ի սակաւ մատենից որ փրկեցան, և յատ-
կապէս յայնպիսեաց՝ որ զուարձացուցանելով զերե-
ակայութիւն ձեռն տայր անդորրել զսիրտ, Աներ
բարի գրացիք ևս գային յամենայնում աւուր
քաղցրագոյն վշտակցութեամբ, և ժամանակ հաս-
տատեցին 'ի միաբան նորոգութիւն նախկին բնա-
կարանի իմում, Ա իլեհմն մշակն համեատ՝ ոչ եղե
վերջին ՚ի միջի այցելուացս, այլ մտաղիւր մատոյց
զբարեկամութիւն իւր, Կորոգէր իսկ զսիրոյ բանս
իւր առ դուստր իմ, այլ սա այնու եղանակաւ

մերժեաց զնոսա , որ միանգամայն սանձեաց զապա-
գայ թախանձանս նորա : Առախսծութիւն նորա ե-
րեկը հանապազորդական , և՝ ՚ի միջի փոքրիկ խմբի
մերում , նա էր միայն զոր շաբաթ մի չկարողացաւ
վերածել ՚ի զուարթութիւն : Այրոյս արդ զանշա-
ռագնական անմեղութիւնն այն՝ որ երբեմն ուսոյց
զնա յարգել զանձն , և զհետ լինել հաճութեան
՚ի ձեռն հաճեցուցանելց : Անձկութիւնն խատիւ
տիրապետեալ էր մոտաց նորա , գեղեցկութիւնն
սկսաւ տեղի տալ ընդ խառնուածոյն , և անփոյթ-
ութիւնն առաւել ևս ձեռն ետ ՚ի նուազեցուցանել
զայն : Ամէն գորովալիք յորջյորջումն ընծայեալ
քեռ նորա՝ ածէր զանհնարին ցաւս սրտի և զլաց
աչացն . և որպէս մոլութիւն իմն ապաքինեալ՝
բուսուցանէ ցանդ զայլս ՚ի տեղւոջն , սապէս նախ-
իին յանցումն նորա թէպէտ արտաքսեալ ՚ի ձեռն
զղջման , եթող զմախանս և զնախանձ զկնի : Պառն
գործեցի հազար ձանապարհաւ թեթեացուցանել
զհոդ նորա , և մուսացայ իսկ զիմ ցաւ ՚ի հոգս նո-
րանոյ . քաղելով զայնալիսի զուարձացուցիչ հատ-
ուածս պատմութեան՝ զոր հզօր յիշողութիւն և
սակաւիկ ինչ ընթերցողութիւն կարէին թելադրել :
“Երջանկութիւն մեր , սիրելի , է ՚ի կարողութեան
այնպիսւոյ ուրումն , որ կարէ առնել բերել հա-
զարաւոր անակնկալ ձանապարհաւ , որ այպն առնեն
զնախատեսութիւն մեր : Եթէ պէտք իցեն օրինակի
առ ՚ի հաստատութիւն , տաց քեզ՝ որդեակ իմ ,
զպատմութիւն անցից ուրումն ասացեալ յարժա-

նահաւատ՝ թէ և երբեմն առասպելապատում պատմագրէ :

‘Մատիլդա ամսւմնացեալ էր թերահասակ ընդ ազնուականի ուրումն Կէապօլսեցւոյ առաջին կարպի . և եղիտ զանձն այրի և մայր ’ի հասակի հնգետասանից : Այն ինչ կանգնէր յաւուր միում գգուելով զմանուկ տղայն իւր ’ի բաց պատուհանի գտիկոնին՝ որ կայր ’ի վերայ գետոյն Ա ուլտերնեայ, յանկարծակի ընդուտմամբ ոստեաւ մանուկն ’ի գրկաց նորա ’ի հեղեղատն որ ’ի ներքոյ, և խկոյն անհետացաւ : Այրն յառժաման ապշութիւն հարեալ, և գուն գնելով ’ի փրկել, մսւճնեցաւ զնինի նորա . բայց հեռի յօդնականութիւն ժամանելոյ մանկան, ինքն խկ մեծաւ գժուարութեամբ պրծաւ ’ի միւս կողմն, այն ինչ ’ի նմին վայրկենի զօրականք Գաղղիացիք յաւարի հարկանէին զայնոսիկ՝ թելադրեալ յախորժակէ և յանգթութենէ : Այս անարդ առաջադրութեան ընդդէմ եկաց զօրապետ ոմն մատաղաւուրց, որ՝ թէև դարձ նոցա պահանջէր զկարի իմն շուտափութիւն, եդ զնա ՚ի յետ կուսէ իւրմէ, և տարաւ անլտանգ ’ի բնիկ քաղաք իւր : Գեղեցկութիւն նորա զառաջինն կալաւ զաշ նորուն, և արդիւնաւորութիւնն ընդ

‘Քանզի յայնժամ յոյժ տմարդութեամբ մզիւր պատերազմ ’ի միջի Գաղղիացւոց և Խտալացւոց, գնային ’ի գործ գնել միանդամայն զերկոսին ծայրսն զայնոսիկ՝ թելադրեալ յախորժակէ և յանգթութենէ : Այս անարդ առաջադրութեան ընդդէմ եկաց զօրապետ ոմն մատաղաւուրց, որ՝ թէև դարձ նոցա պահանջէր զկարի իմն շուտափութիւն, եդ զնա ՚ի յետ կուսէ իւրմէ, և տարաւ անլտանգ ’ի բնիկ քաղաք իւր : Գեղեցկութիւն նորա զառաջինն կալաւ զաշ նորուն, և արդիւնաւորութիւնն ընդ

հուազ զսիրան : Պատակեցան . ամբարձաւ նա ՚ի բարձրագոյն աստիճանս . վայելեցին ՚ի միասին զամն բաղաւմն և երջանիկ եղեն : Բայց գերջանկութիւն զինուորի ոչ երբէք մարթ է հաստատուն անուանել . յետ հարուատ ամաց միջոցի , գունդ զինուորացն որոց հրամայէր պատահելով պարտութեան , բռնադատեցաւ ապաստան անկանիլ ՚ի քաղաքն՝ ուր կեցեալ էր ընդ ամուսնոյ իւրոյ : Տոկացին աստիւն պաշարման , և ՚ի վերջոյ առաւ քաղաքն : Աակաւ պատմագիրք կարեն առաջի առնել զառաւել գոյն զգոյն օրինակս անգութութեան՝ քան զոր Գաղղիացիք և Խտալացիք այնր ժամանակի վարէին ընդդէմ իրերաց : Ա երջաւորեցաւ ՚ի յաղթականաց յայսմդիպուածի , մահու դատել զամնայն զկալանաւորս Գաղղիացիս . բայց յատկապէս զայրն տարաբաղդին Աագիլդայ . քանզի նա ՚ի վեր քան զամնեսին ձեռնտու էր յերկարաձգման պաշարմանն : Արոշմունք նոցա հասարակօրէն ՚ի գործ գնիւր զոգցես խկոյն ընդ վերջաւորմանն : Ա ծաւ կալանաւոր զինուորին արտաքս , և կանգնեցաւ դահիճն սրով իւրով պատրաստ , այն ինչ զննականք տիսուր լրուութեամբ մնային հարուածոյն , որ լոկ ՚ի կախ մնայր , մինչև զօրագլուինն՝ որ ՚ախագահ էր ՚ի դատողութեանն , տայցէ զնշան : Յայսմ միջոցի անձկութեան և ակնկալութեան էր , որ եկն Աատիլդա զվերջին հրաժարական ողջոյն իւր առնուլ յառնէ իւրմէ և յազատչէ . աշխարելով զաղէտալի վեճակ իւր և զանդթութիւն ճակատագրին , որ

ապրեցոյց զի՞նքն ՚ի կանխահաս կորստենէ ՚ի գետն
Վուլտերնեայ՝ ականատես լինել յաւէտ ևս մե-
 ծագունից աղիտից։ Օ օրագլու խն պատանի՝ յա-
 պուշ հարաւ ընդ գեղեցկութիւն նորա, և ՚ի գութ
 շարժեցաւ ՚ի թշուառութիւնն . այլ՝ և ևս շարժե-
 ցաւ իբրև լուաւ զյիշատակութիւն նախկին վը-
 տանգից նորուն . Խնքն էր որդի նորա . մանուկն
 այն որոյ վասն դիմագրաւեաց նա այնքանւոյ վը-
 տանգի . Օչանեաւ զնա միանգամայն որպէս զմայր
 իւր, և անկաւ առ ոսս նորուն . Մասացեալն հեշ-
 տեաւ ենթագրեսցի . գերի նորա թողաւ յազատու-
 թիւն . և ամենայն երջանկութիւն՝ զոր սէր, բա-
 րեկամութիւն և պարտիք կարէին ընծայել յաշ-
 խարհի, միացան ՚ի մի։”

Օայս օրինակ գուն գործէի զբօսեցուցանել զդուստր
 իմ . այլ ունկն զնէր նա բաժանած մտագրութեամբ .
 քանզի թշուառութիւնք իւրոյ ինքեան թանձրացու-
 ցեալ էին զամնայն զկարեկցութիւնն՝ զոր երբեմն
 ունէր առ այրոց կարիս . և ոչինչ տայր նմա զան-
 գորրութիւն . Յնկերութեան՝ յահի լինէր արհա-
 մարհանաց . և յառանձնութեան՝ զտանէր լոկ զանձ-
 կութիւն . Այսգունակ էին աղէտք թշուառութեան
 նորա, յորժամ ստոյգ լուր առաք՝ թէ զնայր Պա-
 րտն թառնէիլ ամուսնանալ ընդ (Օ)րիորդին **Վ**իլ-
 մօթայ . առ որ՝ միշտ կասկածէի, ունէր զիսկական
 բերումն, թէ և յամէն գիտուածի փոյթ կալոյր
 նա առաջի իմ յայտնել զարհամարհութիւն իւր
 և անձին նորա և մեծութեանն . Լուրս այս լոկ

պիտոյացաւ աճ'եցուցանել զթախծութիւն խղճուկ
Օլիվիայ . այսպիսի հրատարակեալ դրժողու-
թիւն հաւատարմութեան՝ առաւել էր քան արու-
թիւն նորա կարէր տանել , **Օ** իարդ և իցէ՝ հաս-
տատեցի գտանել զատուզազոյն ծանօթութիւն , և
խափանել՝ եթէ հնար ինչ , զկատարումն դիտա-
ւորութեան նորա , յղելով զորդի իմ առ ծերու-
նին **Վ** իլմօթ , պատուէր տուեալ իմանալ զջըշ-
մարտութիւն համբաւոյն , և տալ ՚ի ծեռն **(Օրի-**
որդին) **Վ** իլմօթայ զնամակ իմն՝ ազդ առնելով զվա-
րուց Պարոն **Թառնհիլայ** ՚ի տան իմում :


Չռքաւ որդիս ըստ հրամանիս , և դարձաւ յերկ-
րորդ աւուր՝ հաւաստելով զջմարտութիւն զրուցին .
և թէ անհնար եղե ինքեան յանձնել զթուզթն ,
որոյ վասն պարտաւորեցաւ թողուլ անդէն . քան-
դի Պարոն **Թառնհիլ** և **(Օրիորդն)** **Վ** իլմօթ ման
առնուլին զշինաւն : Պատկիլ ունէին՝ ասաց , յետ
սակաւ աւուրց . մեծաւ հանդիսիւ երեւեալ զոլով
յեկեղեցւոյ ՚ի **Վիւրակէի**՝ նախ քան զժամանիլ
խր անդ . հարսն պար առեալ վեցիւք մանկա-
մարդուք , և նա՝ նոյնաթիւ պարհօք : **Մ**երձակայ
հարսանիք նոցին՝ լցեալ էր խնդութեամբ զշին
ողջոյն , և յաճախակի ելանէին նոքա ՚ի միասին
յամենաշքեղ կառւ , որոյ պէս ՚ի հարուստ ամոց
հետէ չէ տեսեալ ՚ի շինին : **Հ**ամայն բարեկամք
երկաքանչիւրոց գերդաստանաց , ասաց , էին անդ ,
մանաւանդ Հօրեղքայր ասպետին **Անպուհն** **Վ** ի-
լիէմ **Թառնհիլ** , որ զայնպիսի բարի համբաւ

ունէր։ Յաւել՝ եթէ ոչ այլ ինչ՝ բաց ՚ի հրձնուանց և ՚ի խրախութեանց կատարէին։ եթէ բովանդակ շնչն գովէր զգեղեցկութիւն նորահաս հարսին և զմայելուչ հասակ փեսային։ և թէ անհնարին սիրով խանդակաթ էին իրերաց։ զըաւելով՝ եթէ անհնար էր ինքեան չհամարել զՊարոն Թամանհիլ երջանկագոյն այրն աշխարհի։

“Աղէ, թող նմա, եթէ կարող իցէ.” դարձուցի ես։ “բայց տես՝ որդեակ, զայս անկողին յարդեայ և անպատսպար յարկ, զայն հողացեալ պարիսպ և զգիճին յատակ, զտառապեալ անձն իմ այսդոյն անկարացեալ ՚ի հրոյ, և զմանկունս լալով զինեւ առ հացի։ դարձար եկիր՝ որդեակ իմ, առ այսոսիկ ամենայն։ այլ ահա, ահա խել տեսանես զայր մի՝ որ ոչ վասն հազար աշխարհաց փոխեցէ զվիճակս։ Ով, որդեակք, եթէ կարողանայիք ուսանիլ միայն խօսակից լինել ընդ սրոտից ձերոց, և զիտել թէ զորպիսի ազնիւ ընկերս կարէիք առնել զնոսա, առ ոչինչ գրէիք զպերձութիւն և զլուք անարժանից։ Գողցես ամենայն մարդ ուսան զայս կեանս կոչել ձանապարհ, և զինքեանս ձանապարհորդս։ “Մանութիւնն և ևս կատարելագործեսցի, յորժամ նկատեսցուք՝ թէ բարիքն ուրախալի են և զուարթ, հանգոյն ուղեորաց որ երթայցեն գէպ ՚ի տուն։ չարքն լոկ երբեմնապէս ուրախ, հանգոյն ուղեորաց որ երթայցեն յաքսոր։”

Կարեկցութիւն իմ վասն դատերս՝ ընկճելոյ ընդ այսու նորոգ վշտագնութեամբ, ընդմիջեաց զոր

այլ և նշանակել կամէիս : Խոնդրեցի ՚ի մօրէն
զօրացուցանել զնա , և յետ սակաւուց զգաստա-
ցաւ : ՚Ի ժամանակէ անտի սկսաւ անդորրազոյն
երեիլ , և կարծեցի ես՝ թէ նորոգ հաստատութիւն
էր ստացեալ սրտի . սակայն երեւմունք պատրեցին
զիս . քանզի անդորրութիւն նորա՝ վհատութիւն իմն
էր կարի աշխատեալ սրտնեղութեանն : “Ապաստ
պարէնից՝ սիրով առաքելոց ՚ի բարեգութ ժողովը-
գականացս , թուէր զնոր իմն սփուել զուարթու-
թիւնն ՚ի միջի մնացեալ ընտանեաց իմոց , և ոչ
տհաճեցայ իսկ տեսանել զնոսա միւս անգամ՝ զու-
արթ և անդորր : Անիրաւ լինէր վհատեցուցանել
զուարթութիւն ՚նոցա , լոկ առ վշտակից լինելոյ
ընդ հաստատուն թախծութեան , կամ՝ ծանրաբեռ-
նել զնոսա տիրութեամբ՝ զոր ոչ զգային : Օ այս
օրինակ միւս անգամ կցեցաւ թել պատրութեան ,
և պահանջեցաւ երգ , և զեջաւ խնդամութիւնն
ձախր առնուլ շուրջ զիտքը իկ բնակութեամբ մերով :



ԳԼՈՒԽ ԵԳ :

ՆՈՐ ԱՂԵՑՔ :

ԵՄԻԿԱՍՈՒՄ առաւօտու ծագեցաւ արե-
գակն անժամանակական ջերմութեամբ . յոյր սակա-
միաբանեցաք նախաճաշ առնել ՚ի միասին յեղերս

մի զրածորանի , ուր՝ մինչդեռ նստէաք , միաբաւնեաց կրտսեր գուստը իմ խնդրանօք իմովք զճայն իւր ընդ ներդաշնակութեան՝ որ ՚ի վերայ մերձաւ կայ ծառոց : Քայսմ վայրի զառաջինն խղճուկ (Օլիվիտյն իմ որատահեցաւ գրժողի իւրում , և ամենայն առարկայ արբանեկէր յարուցանել զտրտմութիւն նորա : Ավկայն թախծութիւնն այն շարժեալ յառարկայից բերկրութեանց , կամ ազգեալ ՚ի գայլայլկաց ներդաշնակութեան , ոզոքէ զսիրտ փոխանակ հաշելոյ : Եւս և մայր նորա՝ յայսմ գիպի զգաց զհաճոյարար իմն թախծութիւն , և ելաց և սիրեաց զգուստըն իւր ըստ առաջնոյն : “Ե՛կ , գեղազէշդ իմ (Օլիվիա : ” ասաց , “տուր մեզ զկարձ թաղծազին երգն այն՝ այնպէս ըղձալի հօր քում : արդէն հաճեցոյց զմեզ Առփիա քոյր քոյ : Ե՛կ գուստը , հաճեցուոցէ այդ զհայր քոյ ծերացեալ : ” Օ իջաւ նա այնպիսի իմն բոլորովին սրտառուչ եղանակաւ՝ որ շարժեաց զիս :

ԵՐԲ յանմատութիւն գթի կին սիրուն ,

ԵՒ նոր իմանայ թէ մարտիկ գժենն :

ԽՇԵ գեղ մեղմեսցէ զթախծութիւն նորուն ,

ԶԵՆԵ ձար դշանցանս նորա լուասցեն :

ՄԻ միայն հնար՝ զշանցանսն ծածկել ,

ԱՔՈՂԵ զամօթ յաչաց ամենայն ,

ՕՍԻՐԵԼԻՆ ՚ի զեղձ ապաշաւ կոչել ,

ԵՎ խոցել զնա , է—մահն միայն :

Այլն ինչ ավարտէր զվերջին տողն, որում՝ ընդ-
միջութիւն ձայնին ՚ի ցաւոց, ընծայեաց զմասնաւոր
իմն քաղցրութիւն, երևումն կաւաց Պարոն Շաառն-
հիլայ ՚ի հեռաստանէ՝ խռովեաց զմեզ զամենեսին.
այլ յատկապէս առաւելեաց զտառապանս երէց
դատեր իմոյ, որ՝ անձկալով խորշել ՚ի խարդաւա-
նողէ իւրմէ, դարձաւ ՚ի տուն ընդ քեռ իւրում:
՚ի սուղ վայրկենի իջաւ նա ՚ի կառաց, և յա-
ռաջելով ՚ի տեղին ուր ես տակաւին նստէի, եհարց
զողջունէ իմմէ սովորական մտերմութեամբն իւրով:
“Պարոն,” պատասխանի արարի, “այժմեան վստա-
հութիւն քոյ արբանեկէ և եթ առաւելուլ զվա-
տութիւն բուսոյ բարուցդ, և էր երբեմն որ պատ-
ժէի զքոյին լրբութիւն՝ վասն յանդգնելոյդ զայս
օրինակ երեխել առաջի իմ: **Ա**յլ արդ ապահով
ես. զի սառուցեալ է հասակ զկիրս բարկութեան
իմոյ, և կարգ իմ զուսպ ունի զնոսա:”

“Երդնում քեզ, սիրելի պարոն,” դարձոյց նա.
“որ հիացեալ եմ ես ընդ այս ամենայն, և ոչ իսկ
կարեմ իմանալ զբ՞նչ նշանակէն: **Յ**ուսամ չկար-
ծես՝ որ վերջին արշաւանք դստեր քոյ ընդ իս,
յանցաւոր իմն ունէր ՚ի յինքեան:”

“Գնա՞ կորիր դու թշուառական,” գոչեցի.
“ողորմելի թշուառական և գլխովին ստասան, բայց
անարդութիւն քոյ ապահովէ զքեզ ՚ի սրտմութենէ
իմմէ: **Ե**ւ սակայն սերեալ եմ ես յազգատոհմէ՝
որ ոչ հանդուրժէր այսմիկ: **Ե**ւ այսպէս, վատ-
թար դու, առ ՚ի շատացու ցանել զվայրկենական

կիրս, արարեր զխեղձ արարած մի առերջանիկ 'ի կեանս իւր, և պղծեցեր զտուն մի՝ որ չունէին զոյլ բաժին բաց 'ի պատույ իւրեանց."

"Եթէ նա կամ գու," դարձոյց նա, "հաստատեալ իցէք 'ի միտս ձեր թշուառանալ, չկարեմ ես օգնել այդմիկ. բայց՝ մարթ է ձեզ տակաւին երջանիկ լինել. և զորպիսի կարծիս ունիցիք զինէն, պատրաստ զիս գտնիք միշտ հաստատել զնոյն: Մարթ է մեզ 'ի սուզ ժամանակի՝ պսակել զնա ընդ այլոյ ուրումն. և որ առաւելն է՝ պահեսցէ ևս զիրելին իւր 'ի մլո սմէ կողմանէ. քանզի վկայեմ քեզ՝ հանապազորդեցից միշտ ունիլ զՃշմարիտ յարդ առ նա:"

Ամենոյն կիրք բարկութեան իմոյ խռովեցան ընդ այս նոր արհամարհական առաջարկութիւն, քանզի՝ թէ և հանդարտ մնասցէ միտք ընդ մեծամած անիրաւանօք, փոքրիկ անիրաւութիւնք կարեն միշտ մտանել ընդ սիրտ, և հարկանել զայն կատաղութեամբ: "Տեղի տուր, զեռուն. կորիք 'ի տեսութենէ իմմէ." գոչեցի. "և մի անարգեր զիս տեսութեամբ քուլ, Եթէ աստ լինէր որդեակն իմ քաջ, ոչ ներէր այսմիկ. այլ ես ծերացեալ եմ և տկար, և բոլորովիմբ աւերեալ:

"Տեսանեմ," ասաց, "զի հակեալ ես դու բռնադատել զիս բարբառիլ խստագոյն եղանակաւ՝ քան զօր դիտեալն էի: Բայց՝ որպէս ցուցի որում մարթ եղիցի քեզ ակն ունիլ 'ի բարեկամութենէ իմմէ, ոչ անդէու եղիցի յանդիման առնիլ քեզ զհանե.

անս ցասման իմից : Հոգաբարձու իմ՝ որում փոխանցեցի զյետին մուրհակ պարտուց քոյ , խատիւ սպառնայ . և ոչ իսկ գիտեմ զիարդ արգել դնել արդարութեանն ճանապարհի , բայց եթէ ես ինքնին հատուցանիցեմ զդրամն . որ՝ որովհետեւ անկաւ ինձ նորումն ծախս առնել ՚ի պէտս առաջադրեալ հարսանեացս , ոչ գիւրին եղիցի ինձ առ ՚ի առնել : Եւ ապա՝ գաւառապետ իմ բարբառէ բոնադատել վասն հասուց . իրաւին՝ ինքն գիտէ զպարտիս իւր . քանոզի ոչ երբէք աշխատ առնեմ զանձն առ գործս այսպիսիս : Այլ սակայն ըղձալի է ինձ ծառայել քեզ , նա և՝ առաջիկայ տեսանել զքեզ և զգուատր քոյ ՚ի հարսանիս իմ՝ որ ընդ հուպ կատարեսցի ընդ Օրիորդին Ա իլմօթայ : “Եա՛ զի այս ինդրուածն է իսկ զեղաղէշն իմից Արաբէլայ , որում ոչ բացասիցես յուսամ”:

“Պարո՞ն Յաւնհիլ,” պատասխանի արարի , “լուր ինձ զայս վերջին անգամ , Որչափ առ ամուսնութիւն քոյ ընդ այլոյ ումեք՝ բաց ’ի դատերէ իմին , ոչ երբէք հաւանեցայց ես . և թէ և բարեկամութիւն քոյ յարուսցէ զիս առ գահոյս , կամ զժգմութիւնդ սուզիցէ ՚ի զերեզման , արհամարհեցից և այնպէս ես զերկոսին : Զարաշտր և անզմարելի դժբեցեր ինձ անզամ մի : Հաստատեցի զսիրտ իմ՝ ’ի պատիւ քոյ , և գտի զանարգութիւննորա : Այս երբէք ուրեմն ակն ունիցիս յինէն բարեկամութեան : Գնա՛ և ստացիր զոր բազդ ընծայեալ է քեզ՝ զեղեցկութիւն , Ճոխութիւն , առ-

ողջութիւն և հեշտութիւն։ Գյնա և թող զիս 'ի կարօսութեան, վատահամբաւութեան, խօթութեան և տրտմութեան։ Աակայն՝ խոնարհեալ որպէս եւս, իրաւացուացէ սիրտ իմ տակաւին զարժանիս նորա։ և թէպէտ ունիս զիմ' թողութիւն, զարհամարհութիւն իմ ունիցիս 'ի յաւիսեան։"

"Հաւատան ինձ ուրեմն," գարձոյց նա, "որ ըզ չափ առցես արդեանց ժպրհութեան քոյ։ և յետ սակաւուց տեսցուք՝ ո է յարմարագոյն առարկայն արհամարհանաց, դու թէ ես։" Հոյր վերայ մեկնեցաւ յոխորտանեօք։

Ամուսին և որդի իմ՝ որ ներկայ էին յայսմհանդիպման, ահաբեկեալ երեեցան երկիւղիւ։ "Ա և դստերք իմ՝ իմանալով զերթ նորա, եկին իմանալ զելս խօսակցութեան մերոյ. զոր իբրեւ լուան՝ ոչ նուազ քան զմնացեալն խոռվեցան։ Բայց՝ որչափ առ իս, առ ոչինչ գրեցի զժայրագոյն ճիզն չարակամութեան նորա։ արդէն ածեալ էր զհարուածն, և ես արդ պատրաստ կանգնէի վանել զամենայն զնորանոր ջանս նորուն։ հանզոյն պատերազմական զործւոյն այնորիկ, որ զիարդ և ընկիցի, ընծայէ տակաւին զսուր սայր պատահել թշնամոյ։

Վաղվաղակի տեսաք՝ որ ոչ 'ի զուր սպառնացաւ. քանզի 'ի միւսում իսկ առաւօտու՝ եկն զաւառապետ նորա պահանջել զտարեկան վարձն, զոր ըստ յառաջատութեան գիպուածոց յիշատակելոց, չկարէի հատուցանել։ Իս պատճառ որոյ անկարութեանս՝ վարեցան անդեայք իմ յերեկոյին, և 'ի

վաղեւ զին հատեալ վաճառեցան առ կիայ գնոցն :
 Արդ ուրեմն՝ աղաչեցին զիս ամսւ սին իմ և ման-
 կունքս՝ զիջանիլ ո և իցէ պայմանին քան անկանիլ
 ընդ հաւաստի աւերմամբ : “Ես՝ աղաչեցին զիս թոյլ
 առնել անգամ մի ևս եկաւորութեան նորա : և ի
 կիր արկին զամենայն զՃարտարախօսութիւն իւ-
 րեանց՝ նկարել զաղէտս չարեաց զոր գնայի յանձն
 առնուլ , զարհաւիրս բանտի՝ յայնալիսում դառն
 եղանակի , հանդերձ վտանգիւն՝ որ սպառնայր ա-
 ռողջութեան իմոյ , ՚ի ձեռն վերջին պատահարին ՚ի
 հրոյ : Բայց ես հանապազորդեցի անտեղիտալի :

“ Ո՞նդէր , գանձքդ իմ : ” գոչեցի , “ ը՞նդէր գուն
 գործէք այսանակ համոզել զիս յայն՝ որ չէ ար-
 դարացի : Պարտիք իմ ուսուցին ինձ թողութիւն
 տալ նմա . սակայն՝ խիզՃ մսաց իմոց ոչ ներէ
 հաւանիլ : Աամիցիք գովութեամբ հռչակեցից աշ-
 խարհի՝ զոր միանգամ ՚ի ներքուստ անգոսնեսցէ սիրտ
 իմ : Աամիք հեղութեամբ նստիցիմ , և շղթքորդի-
 ցեմ զլատանուն դաւաճան մեր . և՝ առ ՚ի խոյս տալ
 յարգելանաց , կրեցից անգարդար զյաւէտ տանջողա-
 կան տոռունս մտաւոր խոշտանգանաց : ՚Բաւ , մի-
 երբէք : Եթէ տարեալ լիցուք յայսմ կայանէ ,
 պինտ կալցուք միայն զարդարութենէ . և ուր և
 ընկիցուք , կարասցուք տակաւին առանձնանալ ՚ի
 սիրալի դատիկոն ինչ , ուր մարթ եղեցի միզ ան-
 վեհեր և բերկրեալ՝ հայիլ շուրջ զսրտիւք
 մերովք : ”

Զ այս օրինակ անցուցաք զերեկոյն : Ո՞նդ ար-

շալոյս միւսոյ աւուր՝ քանզի ՚ի գիշերին ձիւնեալ
էր առատութեամբ, պարապեալ էր որդի իմ՝ ՚ի
սրբել զայն, և բանալ զջանապարհ առաջի դրան։
Չէր ընդերկար պարապեալ այսպէս, յորժամ
դարձաւ վաղելով այլագունեալ գիմօք՝ աղդ առ-
նել մեզ, թէ անծանօթք երկուք՝ զորս գիտէր
պաշտօնատարս լինել դատաւորի, գոյին դէպէ
՚ի տունն։

Հուպ ընդ ասելն մտին նոքա ՚ի ներքս, և մեր-
ձենալով առ մահիձն՝ ուր անկեալ գնէի, զկնի
կանխապէս զեկուցանելոյ ինձ զգործառնութենէ և
զբանից իւրեանց, կալանաւոր արարին զիս ։ պատ-
ուիրելով պատրաստիլ երթալ ընդ ինքեանս յար-
գելանոց շինին, որ հեռի էր մտասան մղոնօք։

“Քարեկամք” ասացի, “յոյժ դառն եղանակ է
յորում գայք տանել զիս ՚ի բանտ . և յատկապէս
տարաբազութիւնն այն է զարդիս՝ որ մի ՚ի բազ-
կաց իմոց այրեալ է սաստիկ, և ածեալ ՚ի վերայ
իմ զներմն թեթև, և կարօտիմ կտաւոց ծածկել
զիս . և արդ անկարող և ծերացեալ եմ յոյժ՝ առ
՚ի հատանել զհեռաւոր ճանապարհ յայսպիսի սաս-
տիկ ձիւնաբերի . բայց եթէ այսպէս պիտի լինի—”

Դարձայ ապա առ ամուսին և մանկունս իմ, և
պատուիրեցի հաւաքել զկաց մնաց մեր, և պատ-
րաստիլ իսկոյն ելանել ՚ի տեղւոջէն։ Աղաչեցի
զնոսա փութալ ՚ի նոյն, և խնդրեցի յորդւոյս
օդնել քեռ իւրում երկցու . որ ներքին ծանօ-
թութեամբն՝ թէ ինքն էր պատճառ աղիտից մերոց

ամենից, անկեալ էր և կորուսեալ զթախծութիւնն յանզգայութեան, «Բաջալերեցի զամուսին իմ, որ՝ գունաթափ և զողանի հարեալ, աղխեալ էր զահաբեկեալ փոքրկունան ՚ի գրկի իւրում. որք կախէին անմուռնչ զպարանոցաւ նորա, զահի հարեալ հոյիլ շուրջ յօտարականսն : ՚Եոյն հետայն պատրաստեցաւ կրտսեր դուստր իմ առ չուն . և՝ զի ընկալաւ զբազում ստիպողական մղօնս առ շուտափութիւն, ՚ի միջոցի իբրև միոյ ժամու պատրաստք եղաք ՚ի մեկնիլ :



ԳԼՈՒԽ ԷԵ :

ՈՐՈՔ ՎԱՃԱԿ՝ ՈՐՊԻՄ ԹՇՈՒԱԹ ԵՒ ԵՄԵՒԵՍՑԻ,
ԲԱՅՑ ԵՒ ՈՒՆԵ ԶՄԻՒԹԱՐԱՒԹԻՒՆ ԻՆՉ
ՀԵՑԵՒԱԿԱՆ :

ՅՈՒԳ Դ ԱՌԱՅԵԲ յայս խաղաղաւէտ
սահմանէ և գնայաք յամրաքայլ, Երէց դուստր
իմ տկարացեալ ՚ի յուշիկ ջերմանէ՝ որ ՚ի քանի
աւուրց հետէ սկսեալ էր ական հատանել առող-
ջութեան նորա, մին ՚ի պաշտօնատարաց ձիաւոր
լինելով՝ քաղցրութեամբ էառ զնա ՚ի յետկուսէ

իւրմէ . զի մարդեկքս այսոքիկ ես՝ չկարեն միանգամայն կապտել զանձինս 'ի մարդասիրութենէ . Ածէր որդիս զմի ՚ի փոքրկանց զձեռանէ , և ամուսինս զմիւն . այն ինչ թեկնեալ էի ես ՚ի կրտսեր ազգեկ իմ , որոյ արտասուք քամէին ոչ վասն իւր՝ այլ խոց տառապանաց :

Հեռացեալ էաք արդ երկու մղոնաչափ հեռի ՚ի յետին բնակարանէ մերմէ , յորժամ' սեսաք զամբոխ վազս առեալ և ձայն արձակեալ զհետ մեր , բաղկացեալ իբրև ՚ի յինից յաղքատագունից ժողովը կանաց խոց : Կալան սոքա ահազին անիժանօք զերկոսին պաշտօնատարսն դատաւորին , և երգուելով չթողուլ երբէք զերեց իւրեանց երթալ ՚ի բանտ՝ մինչ զեռ ունիցին զեաթիլ մի արեան հեղուլ ՚ի պաշտպանութիւն նորա , գնային մեծաւ խատութեամբ վարիլ ընդ նոսա , Ա'ահարեր լինէր հետեանքն , եթէ ոչ խկոյն ՚ի մէջ անցանէի . և ոչ առանց դժուարութեան՝ պրֆուցի զպաշտօնատարսն ՚ի ձեռաց կատաղի բազմութեանն , Ա'անկունք իմ' որ աներկեան համարէին զաղատութիւնս , երեեցան յափշտակեալ խնդութեամբ , և ոչ կարէին զուսպ ունիլ զյափշտակութիւն իւրեանց : Աակայն վաղվաղակի սթափեցան , ընդ լսել զբանս իմ առ զառաձեալ ժողովուրդն , որք զային՝ որպէս երեակայէին , սպաս հարկանել ինձ :

“ Օ ի՞նչ , բարեկամք իմ . ” ասացի . “ Ե ո՞յս է կերպն ոիբելոյ ձեր զիս : Ա՞յս է եղանակն հնազանդելոյ ձեր պատուիրանաց՝ զոր ետու ձեզ ՚ի

բեմբէն : Օ այս օրինակ յառնել 'ի գեմն արդարութեան , և ածել զաւեր 'ի վերայ ձեր և իմ՝ Ո՞րն է պարագլուխ ձեր : Յուցէք ինձ զայրն՝ որ այսանակ խոտորեցուցեալ է զձեզ : Խւր արեն վկայ , որ զչափ առցէ գժգմնութեան իմոյ : Ա՞հ . սիրեցեալ հօտք իմ պատրեալ , դարձարուք ՚ի պարտիս ձեր՝ որ առ Աստուած , առ հայրենիս ձեր և առ իս : Տակաւին տեսից զձեզ թերես յաւուր միւում՝ յաւաւել երջանկութեան աստ , և ձեռնտու եղէց զկեանս ձեր և ևս երջանիկ առնել : Բայց՝ տուք ինձ գոնէ առ միիթար՝ յորժամ փակեցից զահման իմ առ անմահութիւն , զի ոչ մին ՚ի ձէնջ պիտոյացի առ տեղեաւս :

Արդ երեեցան նոքա գլխուլին զղջումն , և՝ յարտասուս փղձկելով , եկին մի զմիոյ զկնի հրաժեշտ առնուլ յինէն : Քնցեցի զձեռս անցնիւրոցն գորովանօք , և՝ թողլով նոցա զօրհնութիւն իմ , յառաջեցի ՚ի գնացս առանց այլոյ ընդհատութեան : Օ քանի ժամաւ յառաջ քան զկիշեր ժամանեցաք ՚ի քաղաքն , կամ մանաւանդ ՚ի գիւղն . քանզի բովանդակէր ՚ի սակաւ աղքատիկ տունս , կորուսեալ զսուաջին մեծութիւն իւր ամենայն , և չունելով զայլ հետս վաղեմի գերակայութեան իւրոյ՝ բաց ՚ի բանաէն :

Ընդ մոտանելն՝ օթագայեցաք յիջւանին : և ընկալաք զայնպիսի կազդուրմունս՝ որք պատրաստական գտան . և ընթրեցի ընդ ընտանեացս սովորական զուարթութեամբ իմով : Քիտ տեսանելոյ զիո-

աս պատշաճապէս տեղաւորեալ առ գիշերին, հետևեցի ապա սպասաւորաց դատաւորին՝ ի բանտ, որ զառաջինն կերտեալ էր՝ ի պէտս պատերազմի, և բաղկանայր ՚ի միոյ ընդարձակ դստիկոնէ՝ պնդագոյնս արկաթապատեալ և յատակեալ վիմաւ, յաճախեալ թէ ՚ի չարագործոց և թէ ՚ի պարտապանաց, ՚ի կարգեալ ժամն ինչ քսան և չորից։ Բաց աստի՝ անձնիւր բանտարկեալ ունէր զառանձին խուղս, ուր ամրափակիւր ՚ի գիշերի։

Ակնունէի՝ ընդ մոտանելս, զու այլ ինչ գտանել բաց ՚ի ջայլից և պէտպէս շիւանաց թշուառութեան։ սակայն կարի տարօրինակ տեսի։ Բոլոր բանտարկեալքն պարապեալ երեկին ՚ի մի միայն նպատակ։ այն է՝ ՚ի մոռացօնս արկանել զմուաճողութիւն՝ ՚ի խրախութեան կամ աղմկի։ **Ա**զդ արարայ զսովլորական բաժից՝ պահանջեալ յայսոսիկ դէպս, և խսկոյն զիջայ պահանջմանն։ թէ և սակաւ դրամն զոր ունէի՝ մերձ էր չքանաւլ։ Խսկոյն առաքեցաւ այն վասն ըմպելեաց, և վաղվաղակի լի եղեւ արգելարանն ողջոյն շուայտութեամբ՝ ծաղու և ամբարշտութեամբ։

“**Օ** իանդկ.” ասացի ես ինձէն, “այսպիսի չարագործ անձինք զուարթ եղիցին, և ես թշուառանայցեմ։ **Օ** նոյն զբանտարգելութիւն միայն զգամ ես ընդ նոսա, և կարծեմ յաւէտ ևս պատճառ ունիմ երջանկանալոյ ։”

Այսպիսի մտածողութեամբք աշխատ եղէ զուարթանաւլ. սակայն՝ ոչ ծնաւ երբէք մինչեւ ցարդ

զուարթութիւն 'ի ջանից, որք ինքնին ցաւական են : Այս ինչ նստէի ուրեմն յանկեան ուրուք բանտին վշտագին կերպարանաւ, մի 'ի բանտակցաց իմոց՝ մերձեցեալ բազմեցաւ առընթեր իմ և եմուտ 'ի զրուցատրութիւն : Հաստատուն կանոն իմ էր՝ ոչ երբէք հրաժարիլ 'ի զրուցատրութենէ ո և իցէ մարդոյ՝ որ ցանկանայցէ այնմիկ . քանզի՝ եթէ բարի, մարթ էր ինձ օգտիլ 'ի խրատուց նորա . և եթէ չար, օգնութիւն գտանէր յինէն : Գրտի զսա լինել այր հմուտ, հզօր անզրաւորական մոտաց, բայց՝ որպակէս ասի, անթերի գիտութեան զաշխարհէ . կամ պատշաճազոյնս ասել, զխոտորնակ կողմանէ մարդկային բնութեան : Եհարց ցիս՝ եթէ փոյթ կալեալ էի հոգալ զանկողին վասն իմ : որ պարագայ իմն էր՝ որում բնաւ միտ եղեալ չեի :

“Տարաբաղդ է այդ,” ասաց, “ոչ այլ ինչ դոցես աստ բաց ‘ի յարդէ . և սենեակ քոյ յոյժ ընդարձակ է և սառն : Ինչ և իցէ՝ երեխ գու փոքր ինչ պարոն լինել, և՝ զի ես ևս եղէ երբեմն որպէս զմի, մասն ծածկարանաց անկողնոյ իմոյ յօժարութեամբ եղեցի քեզ ՚ի ծառայութիւն ,”

Շնորհ կալայ զնմանէ, յայտնելով զհիացումն իմ ՚ի գտանել զայնպիսի մարդասիրութիւն ՚ի բանտի ՚ի թշուաւութեան . յաւելլով, առ ՚ի ցուցանել ՚նմա թէ աշակերտ էի գրոց, թէ՝ “իմաստասէրն հին երե էր իմանալ զարժէս ընկերակցութեան ՚ի վշտի . իբրև ասաց, ուն իսամոն այսու, և տօս ուն երէյոն . և յիրաւի ,” շարունակեցի ասել, “զի՞նչ է աշ-

խարհ՝ եթէ ընծայեսցէ լոկ զմիայնութիւն :

“Կրօսիս գու զաշխարհէ՝ պարօն՝,” գարձոյց բանտակից իմ. “աշխարհս ’ի խելայեղութեան իւրումէ, և սակայն աշխարհալարութիւն կամ ստեղծումն աշխարհի արկեալ է ՚ի շփոթ զիմաստասէրս ամենայն դարու : Օ որպիսի խառնակութիւնս կարծեաց չեն սերմանեալ նոքա՝ ’ի վերայ ստեղծման աշխարհի : Անկոնիաթոն, Անեթոյ, Բերոսէս և Օսելէս Լուկանոս, ամենեքին ընդվայր ջանահնար եղեն : Ա երջինն զայտոսիկ ունի բանս . Անորոշութեան առաջին առաջարկեալու դրույթն . որ նշանակէ ” —

“Ենոքհեա աղաջնմ, պարօն,” ասսցի, “առ ընդմիջելոյ զայտոքան գիտութիւն, բայց կարծեմ լուեալ եմ ես զայս ամենայն յառաջագոյն : Ո՞չ ապաքէն հաճութիւն եղեւ ինձ տեսանել զքեզ ՚ի Ա իլլրիջ տօնավաճառի, և ոչ անուն քոյ կոչի Եփրեմ Պէնկինսըն : ” Քայս հարցուած՝ յոդւոց միայն եհան նա, “Կարծեմ յուշ եղեցի քեզ,” առի դարձեալ, “Ա արդապետն Պրիմրօդ, յորմէ զերիվար մի գնոյ առեր : ”

Առդ ծանեաւ զիս խկոյն, քանզի նսեմութիւն տեղւոյն և մերձեցեալ գիշերն՝ խափանեալ էին որոշելոյ նորա զկերպարանս իմ յառաջագոյն : “Այս՝ պարօն,” գարձոյց Պարոն Պէնկինսըն, “քաջ յիշեմ զքեզ, զնեցի զերիվար՝ բայց մոռացայ հատուցանել զկինն : Պիլամբօրօյ դրացի քոյ է մի միայն դատախազն՝ ուստի երկնչիմ ինչ ՚ի զոլոյ ատենի . քանզի՝ եղեալ է ՚ի մտի երդնուլ

իրապէս ընդդէմ ինձ՝ որպէս զղբամահատ : ՚ Եւ բոլոր սրտէ ցաւիմ՝ պարօն, սակա երբէք պատրելոյս զքեզ, կամ զնրոք մարդ . քանզի՝ տեսանես ;” ցուցանելով զկապանս իւր, “ուր հասուցին զիս խարդախութիւնք իմ :”


“Աղէ, Պարօն,” պատասխանի արարի, “Հաւակամութիւնքոյ ՚ի մատուցանել ինձ զօդնութիւնք երբ ոչինչ ակնկալէիր փոխարինութեան, հատուցիքեզ՝ զանիւ իմով ՚ի թուրացուցանել կամ խափանել միանգամայն զվկայութիւն Պարօն Ֆլամբօրոյայ . և յառաջնում պատեհութեան յղեցից զորդի իմ առ նա այսորիկ աղազաւ . և ոչ իսկ երկուանամ՝ բայց զիջանիցի խնդրուածոց իմոց . և որչափ առ վկայութիւն իմ, մի ինչ խռովեցիս յաղազս այնորիկ :”

“Ուրեմն պարօն,” ասաց, “զոր միանգամ կարող եղէց փոխարինել՝ եղեցի քոյն, Առաւել քանզիկէսն ծածկաբանաց անկողնոյ իմոյ՝ ունիցիս ՚ի գիշելիս . և փոյթ կալայց բարեկամ քեզ հանդիսանալ ՚ի բանտիս, ուր կարծեմ ունիմ զկարողութիւն ինչ :”

Կնորհակալ եղէ զնմանէ, և ոչ կարացի չզարմանալ ընդ մանկական փոխարիութիւն դիմաց նորա . ՚ի ժամանակին երբ տեսի զնա յառաջ, գէթ վաթսնամեայ երեկը : “Պարօն,” դարձոյց նա, “սակաւ ժանօթ ես զու աշխարհի, ունէի ես յայնժամ զկերդամ, և ուսեալ եմ կեղծել զամենայն հասակ՝ յեօթն ու տասնէ յեօթանասուն : Այս,

պարո՞ն , եթէ նուիրէի զկէս աշխատութեանցն՝ առ
ի ուսանել զգործառնութիւն ինչ , զոր ետու առ
լինելոյ չարագնաց , մարթ էր ինձ լինել հարուստ
ոմն յաւուրս յայսմիկ : Բայց՝ չարագործ որպէս
եմս , տակաւին բարեկամ քեզ եղիցիմ . և այն՝
թերեւ երբ ոչինչ ակն ունիցիս :

Խափան եղեւ աւելի զըուցատրութեան մերում՝
դալուստ սպասաւորաց բանտապետին , որք եկին
կոչել զբանտարկեալսն յանուանէ , և աղխել առ
գիշերոյն : Ո՞ին ևս՝ խրձով յարդից ՚ի պէտս ան-
կողնայ իմոյ , մատուցեալ տարաւ զիս ընդ մթին
և անձուկ անցս՝ ՚ի սենեակ մի սալայատակ հան-
գոյն հասարակաց բանտին . և յանկեան միում այ-
սորիկ՝ տարածեցի զանկաղին իմ և զժածկոյթսն ,
տուեալ ինձ ՚ի բանտակցէ իմմէ . որ աւարտեալ՝
ուղղեցոյցն իմ՝ որ հերիք քաղաքավար էր , մաղ-
թեաց ինձ յերեկոյս խաղաղութիւն : Յետ սովորա-
կան մտածողութեանց իմոց , և գովարանելոյ զիշրկ-
նային Խրատիչ իմ , տարածեցի զանձնս յերկիր և
ննջեցի կարի անդորրութեամբ մինչեւ ցառաւօտ :



ԳԼՈՒԽ ԵԶ:

ԹԱՐԵԿԱՐԴՈՒԹԻՒՆ ԻՄՆ 'Բ ԲԱՆՑԻ : ՈՐՊԵՍ ԶԻ
ՕՐԵՒՔ ԿԱՏԱՐԵԱԼ ԼԻՑԻՆ՝ ՊԱՐՏ Է ՆՈՑԱ
ՎԱՐՉԱՏՐԵԼ ԸՍՏ ԶԱՓՈՒ ՊԱՏԺԵԼՈՅՆ :

ԱՅԴ ՔԵՐ ընդ առաւօտն միւսոյ աւուր՝
ղարթուցայ ես յընտանեաց իմոց, զորս յարտասուս
հարեալ զտի առ անկողնովք իմովք : « Կամ երե-
սյթ համայն շրջակայ իրաց՝ թուի թէ ահաբեկեալ
եր զնոսա : Մեղմով իմն յանդիմանեցի զտիրու-
թիւն նոցա, հաւաստելով՝ թէ ոչ այնպէս յան-
դորրու ննջեցի երբեք . և ասլա հարցի զողջունէ
երեց դստեր իմոյ, որ չէր 'ի մլջի նոցա : « Օ՛ա-
նուցին ինձ՝ թէ երեկեան անհանդասութիւն և
վաստակն առաւելեալ էին զջերմն նորա, և 'ի ձահ
դատեցաւ թողուլ զնա յետս : Երկրորդ փոյթ իմ
եղել յղել զորդի իմ 'ի ինդիր միոյ կամ երկուց
սենեկաց՝ վասն օթազայութեան ընտանեաց իմոց,
ըստ կարեռին մերձ արգելանոցին : Արար ըստ
հրամանին . բայց զմի միայն և եթ կարողացաւ
գտանել զսրահ, որ վարձեցաւ ստկաւ վարձու 'ի
սկէտս մօր և քերց իւրոց, զիջանելով բանտապետին
մարդասիրաբար՝ թոյլ առնել նմա և երկոյունց
փոքրիկ եղաբարց նորա՝ կալ ընդ իս 'ի բանտին : Ան-

կողին մի ուրեմն պատրաստեցաւ ՚ի պէտս նոցա՝ յանեկեան ուրեք սենեկին, զոր կարծեցի պատշաճապէս յարմարիլ։ Բայց և այնպէս՝ ցանկացայ նախ իմառնալ եթէ յօժարէին փոքրկունք իմ ննջել ՚ի վայրի միում, որ թուեր երկեցուցանել զնոսա ի մտանելն :

“Աղբ լաւ որդեակէք, զիարդ ախորժէք զննջարան ձեր : Յուսամ չերկնչեք ննջել ՚ի սենեկի աստ, մթին որպէս և երեկի :”

“Ոչ հայրինկ .” ասէ Դինկ, “ոչ երկնչեմ նընչել ՚ի տեղւոջ ուրուք ուր գու իցես :”

“Եւ ես,” ասէ Բիլ՝ որ զարգիս չորեքտմեայ էր միայն, “առաւել սիրեմ զո և իցէ վայր՝ ուր հայր իս իցէ :”

Յետ այսորիկ բաժանեցի ՚ի միջի անցնիւր ընտանեաց իմոց՝ զոր առնել ունէին : Առանձին իմն պատուիրեցաւ դատեր իմում՝ միտ գնել կթուցեալ ողջութեան քեռ իւրոյ, ամուսնոյ իմոյ պէտք էր ինձ միտ գնել. փոքրիկ մանեկանց իմոց լնթեանուլ առ իս : “Եւ որչափ առ քեզ՝ որդեակ :” շարունակեցի, “Պատտակօք ձեռաց քոյ պարտիմք ամենեքեանս ակն ունիլ նպաստ գտանելոյ : Ա արձ քոյ՝ ըստ օրական աշխատաւորի, լիովին հերիք եղիցին բաւական ճշդութեամբ, դարմանել զմեզ ամենեանին և մմիթարել իսկ : Ո արդիս վեշտասանամեայ ես, և ոմնիս զոյժ, և տուաւ քեզ՝ որդեակ, առ կարի իմն պիտանի վաղճան, զի դմաէ ապրեցուցանել ՚ի սովէ զանօգնական ծնողս քոյ և ընտանիս : Պատրաստ լեր ուրեմն յիւեկոյիս :

Ճարել զգործ առ վաղուի աւուր . և բեր մեզ՝
յամէն երեկոյի , զոր միանդամ վաստակեսցես փող
առ նպաստ մեր : ”

Օ այս օրինակ խրատեալ զնա և կարգեալ զա-
մենայն , ուղղեցի զգնացս իմ ՚ի հասարակաց արգե-
լարանն , ուր կարէի զառաւել օդ և զնուգարձա-
կութիւն վայելիլ : **Ա**յլ ոչ ընդերկար եղէ անդ ,
յորժամ նզովք , անառակութիւն և վայրագութիւն՝
որ յամէն կողմանց յարձակեցան ՚ի վերայ իմ , հա-
լաձեցին զիս անդրէն ՚ի սենեակ իմ : **Ա**ստայ աս-
տէն առ վայր մի , խորհելով ՚ի վերայ օտարոտի
յիմարութեան թշուառականացն . որք տեսանելով
զամենայն մարդիկ յայտնապէս զիսեալ ընդդէմ
ինքեանց , աշխատ լինէին առնել ինքեանց և զհան-
դերձեալ և զահաւորագոյն թշնամի :

Յիմարութիւն նոցա շարժեաց զկարեկցութիւն
իմ յոյժ , և ջնջեաց զվիշտ անձինս ՚ի մտաց իմոց :
Աս զի՝ երեեցաւ պարտ իմն եգեալ յիմ վերայ ,
ջանալ յուղղութիւն վերածել զնոսա : **Հ**աստա-
տեցի ուրեմն դառնալ վերստին , և ՚ի հեճուկս ար-
համարհանաց , խրատել զնոսա , և յաղթել եր-
կայնմտութեամբ իմով : **Ա** ան որոյ՝ դառնալով
անդրէն ՚ի մէջ նոցա , զեկուցի Պարոն **Պ**էնկին-
սընի զդիտաւորութենէ իմմէ , ընդ որ ՚ի բոլոր սրտէ
ծիծաղեցաւ . բայց զեկոյց այլոց ամենեցուն , **Ա**ռա-
ջարկութիւնս ընդունելի եղե մեծաւ խնուգամտու-
թեամբ , այնու զի խոստանայր ընծայել զնոր մթերս
զբօսանաց , անձանց՝ որ չունէին արդ զայլ հնարս

զուարձութեան, բայց որ ծագէր 'ի կատականաց կամ՝ յանառակութեանց :

Ոնթերցայ ուրեմն զմասն ժամերգութեան բարձր և բնական ձայնիւ, և զտի զունկնդիրս իմ բոլորովին զուարթացեալս ընդ այն : Խենէշ փսփսիք, ծաղըաշարժ յոգւոցհանութիւնք զզջման, ակնարկիք և հաղք՝ զծիծաղ ծնուցանէին փոփոխակի : Բայց և այնպէս՝ հանապազրդեցի ես ընթեռնութեական ծանրութեամբ իմով, քաջ 'ի միտ առեալ զի զոր առնեիս՝ կարելի էր յուղղութիւն վերածիցէր զոմանս, բայց ընդունէր յինքեան և ոչ զմի ինչ աղտեղութիւն 'ի յայլոց :

Օ կնի ընթերցման սկսայ զյորդոր իմ, որ զառաջինն համարեցաւ յաւէտ զբօսեցուցանել զնոսաքան կշտամբել : Անխսաւ զեկուցի նոցա, թէ ոչ այլ ինչ շարժառիթ՝ բաց 'ի բարօրութենէ նոցա, կարէր ձգել զիս առ այս . թէ ես ևս իւրեանց բանտակիցն էի, և ոչ զտանէի ինչ արդ քարոզութեամբ : **Ճ**խուր էի, ասացի, զտանել զնոսա այնպէս ամբարիշտ, որով չպտանէին ինչ, բայց հնարէր կորուսանել զբազում : “**Ք**անզի՛ հաւատացէք ինձ՝ բարեկամը՛,” զոչեցի, “զի բարեկամը՛ իմ էք՝ թէ և ուրասցի աշխալհ զբարեկամութիւնն ձեր, — թէպէտ և երկնուցուք հազարիցս յաւուրն, և ոչ դանկ մի մոցէ 'ի քսակ ձեր : **Ա**պա ուրեմն՝ զմէ կոչեցէք զգեն յամենայնում վայրկենի, և զհետ լինեցիք բարեկամութեան նորա . մինչզեռ տեսանէք զիարութ չարաչար վարի ընդ ձեզ : **Ճ**եսանէք,

զի չէ տուեալ ձեզ ինչ աստին՝ բաց ՚ի բերանաւ լիր նզովից և գատարկ որովայնաց ։ և բարեգոյն ծանօթութեամբքն՝ զոր ունիմ զնմանէ, ոչինչ բարիս տայցէ ձեզ ՚ի հանդերձելումն :

“Եթէ չարաչար վարիցի ընդ մեզ մարդոյ ուրուք ՚ի գործառնութեան մերում, բնականաբար դիմումք յայլուր : Ո՞չ ապաքէն արժան է ժամանակի ձերում ապա՝ փորձել գէթ զիսմրդ հաճեաշ ջեք ընդ եղանակ վարման այլում տեառն . որ տայ ձեզ գմնեայ զպանծալի խոստմունս դալոյ առ ինքն : Ամէն ամէն ասեմ ձեզ՝ բարեկամք, յիմարագոյն այրն այն է յաշխարհի, որ՝ յետ կողոպտելոյ ըզ տուն, երթայ ապաւինիլ առ կալանաւորակապս : Եւ սակայն՝ զբարդ հանճարեղագոյն դուք եցէք : Որոնէք զմիսիթարութիւն յայնպիսւոյ ումնմէ, որ արգէն դաւաճանեալ է զձեզ . ապաւինելուլ յամենաչարակամ իքն՝ քան զամենայն կալանաւորակապս աշխարհի . զի նոքա միայն ՚ի բանտ արկանեն զձեզ, և ապա հանեն ՚ի կախաղան . իսկ սաթակարդէ, և կախէ . և որ չարագոյնն է՝ ոչ թուղու զձեզ յետ դահճին ավարտելոյ ։”

Իբրև զըսաւեցի, ընկալայ զյարդանս ունկնդրաց իմոց . յորոց ումանք եկեալ ցնցեցին զիս զձեւանէ, երգնլով թէ յայտ բարեսէր անձն էի, և թէ ցանկային և ևս ծանօթանալոյ ինձ : Ա ասն որոյ խոստացայ երկրորդել զընթերցուած իմ ՚ի վաղիւ, և տիրապէս ծնոյս զյոյս բարեկարգութիւն հաստատելոյ ՚ի տեղւոջն, քանզի միշտ իմ կարծիքն

էր, թէ ոչ ոք այր անցանէ երբէք զժամաւ ուղղութեան։ ամէն սիրտ բաց լինելով առ սլաքս յանդիմանութեան՝ եթէ կարողանայր նետաձիգն քաջ կշռել զնպատակն։ Խբրե զայս օրինակ հաճեցուցի զմիտու, դարձայ յառանձնարան իմ։ ուր պատրաստէր ամուսինս զշափաւոր ձաշ, այն ինչ աղաչեաց Պարոն Յ Էնկինսըն զարձակութիւն յաւելլոյ զձաշ իւր ընդ մերում, և հաղորդ լինելոյ բերկրութեան՝ որպէս քաղցրացաւ նշանակել, զրուցատրութեան իմոյ։ Զէր տեսեալ զընտանիս իմ։ զի որովհետեւ գային նոքա ՚ի սենեակս ընդ գուռն անձուկ ձանապարհին՝ արդէն նկարագրելոյ, այսուեղանակաւ խոյս տային ՚ի հասարակաց արգելարանէն։ Ա ասն որոյ յառաջնում անդ տեսութեան՝ ոչ սակաւ հարեալ երևեցաւ Յ Էնկինսըն ՚ի զեղկրտսեր դստեր իմոյ, զոր վշտագին կերպարան նորա ձեռն տայր և ևս աճեցուցանել, և փոքրիունք իմ ևս չանցին անձանօթ։

“Ա աշ, վարդապետ,” ասաց, “մանկունքս այսոքիկ յոյժ գեղեցիկ և յոյժ լաւ են առ այսպիսում տեղւոջ։”

“Ո նդէր, Պարոն Յ Էնկինսըն.” պատասխանեցի, “փառք Աստուծոյ՝ մանկունք իմ բաւական բարոյական զիտութիւն ունին. և եթէ բարի լինեցին, ոչինչ փոյժ են զմնացելոց”

“Ինձ այսպէս թուի, պարոն.” դարձոյց բանտակիցս, “որ մեծ միսիթարութիւն է քեզ ունիլ զամնայն զիոքրիկ ընտանիսդ զքեւ”

“Այսիթարութիւն, Պարո՞ն Յէնկինսըն, ” պատասխանեցի . “այս արդարեւ միսիթարութիւն է . և ոչ՝ վասն բոլոր աշխարհի , առանց նոցա եղիցիս . զի՞ զըստորերկրեայ զբանտ անգամ կարեն իբրեւ ըզ պալատ երեեցուցանել : Այի միայն եղանակ զոյ վերաւորելոյ զերջանկութիւն իմ, և այդ է վնասելն զնոսա : ”

“Երկնչիմ ուրեմն՝ պարո՞ն . ” ասաց . “զի մասամբ իւիք մեղապարտ եմ ես . քանզի կարծեմ տեսանեմ աստանօր (ականելով յորդին իմ Առվակս ,) զմին՝ որում վնասեցի , և յորմէ ցանկամ զժողութիւն գտանել : ”

Խսկոյն ՚ի յուշ աճ որդիս զձայն նորա և զկերպարանն , թէպէտ յառաջագոյն յայլակերպս էր զնա տեսեալ . և կալեալ զճեռանէ նորա ժպտանօք , ներեաց նմա : “Աակայն՝ անհնար է ինձ չզարմանալ՝ թէ զի՞նչ արդեօք տեսեր ՚ի դէմն իմ նշան պատրման : ”

“Աչ գէմք քոյ՝ սիրելի պարոն . ” գարձոյց միւսն , “այլ սպիտակ զսնկապանք և սեաւ ծամակալդ համնզեցին զիս : Այլ՝ ոչինչ ամօթ քոյոց հանգամանաց , զառաւել խելօք անձինս քան զքեզ պատրեալ եմ յիմոււմ ժամանակի . և սակայն ամենայն խորամանկութեամբք իմուլք , շատ եղեն վասն իմ ՚ի վաղձանի անբան ողորմելիքն այնոքիկ : ”

“Կարծեմ , ” ասաց որդիս , “զի վիպասանութիւն անցից այդպիսի կենաց՝ որպէս քոյն , յոյժ խրատական և զքոսեցուցիչ եղիցի : ”

“Ո՞չ յոյժ յերկաքանչիւրոցն իսկ ,” դարձոյց
Պարոն Պէնկինաըն : “Ա էսլք այնոքիկ՝ որ նկա-
րագրեն միայն զարութիւնս և զմոլութիւնս մարդ-
կան , աճեցուցանելով զկասկածանս մեր ՚ի կենցա-
զավարութեան , յամեցուցանեն զաջողութիւն մեր :
Ճանապարհորդ՝ որ երկուանայ յամննայն անձնէ
որում պատահէ , և յետա գառնայ ընդ երեսումն
ամէն անձին՝ որ աւազակի պէս երեխցի , հազեւ
երբէք հասանէ ՚ի ժամանակի ՚ի վաղձան ուղեորու-
թեան իւրոյ :

“Յիրաւի՛ կարծեմ փորձառութեամբ իսկ իմով ,
որ սատանայ մարդն է անխելքազոյնն ընդ արե-
գակամբ : Խորամանկ համարեցայ ես ՚ի մանկու-
թենէ հետէ . երբ եօթնամեայ և եթ , ասէին տիկ-
նայք՝ թէ կատարեալ փոքրիկ այր էի , ՚ի չորեք-
տասանի՝ գիտացի զաշխարհ , թեքեցի զգլխարկ իմ ,
և սիրեցի զկանայս , ՚ի քսանի՝ թէ և բոլորովին
բարեմիտ , սակայն համարեցին զիս ամենեքին այն-
քան խորամանկ՝ մինչ ոչ հաւատա ընծայէր
ինձ : Օ այս օրինակ՝ ստիպեցայ ՚ի վաղձանի գառ-
նալ սրիկայ առ պաշտպանութիւն անձին . ապրե-
ցայ ցանդ յայնմ հետէ՝ զլուխ իմ բարախելով
հնարիւք պատրելոյ , և սիրտ իմ տրոփելով առ
ահի կալանաւորման : Առվոր էի շատ անգամ ծի-
ծաղել զհամեստ միամիտ գրացեաւ քով՝ Ֆլամ-
բօրօյեաւ , և այսու կամ այնու եղանակաւ խարեի
զնա հատարակօրէն՝ առ անդամ մի ՚ի տարին : Աշ-
կայն՝ տակաւին գնալով գնայր համեստ այրն այն

առանց կասկածանաց, և փարթամանայը. այն ինչ
ես հանապազորդէի տակաւին ՚ի չարութեան և ՚ի
խորամանիութեան իմում, և աղքատ էի. առանց
միսիթարութեան իսկ համեստ լինելոյ, ՚ինչ և իցէ,”
շարունակեաց, “թոյլ տուր ինձ զիտել զանցս քոյ,
և զի՞նչ երերն զքեզ այսրէն. թերես՝ թէպէտ չու-
նիցիմ զճարտարութիւն փրկելոյ զիս ինքնա ՚ի բան-
տէ, մարթացայց զերծուցանել զբարեկամն իմ:”

Օ իջանելով հետաքրքրութեանն, ծանուցի նմա
կարգաւ զամնայն զպատահարաց իմոց, և զան-
խելքութեանց՝ որ ընկղմեցին զիս յառաջիկայ նե-
ղութիւնս. և զբոլովվին անկարողութենէ իմմէ
առ ՚ի զերծանիլ:

Յետ ունկն զնելոյ զըուցի իմոյ, և լոելոյ առ
վայր մի, ապտակեաց զճակատ իւր՝ որպէս եթէ
հասանել կարեոր ինչ նպատակի, և հրաժեշտ էառ՝
ասելով փորձելոց էր զի՞նչ մարթ եղիցի առնել:



ԳԼՈՒԽ ԻՆ:

ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՅՆ ԱՌԱՐԿԱՑԻ :

Ի ՎԵԴԻ ԻՒ պատմեցի ամսւանոյ և զաւա-
կաց իմոց զհնարն ձեակերպեալ՝ առ ՚ի զբանտար-
կեալն բարեկարգելոյ, զոր ընկալան ընդհանուր

անհաւանութեամբ։ յառաջ բերելով զանկարեառութիւն և զանպատշաճութիւն այնորիկ։ յաւելով թէ ջանք իմ ոչ իւիք օգտեսցեն ուղղութեան նոցա, այլ հաւանականաբար նախատինս ածիցեն կարգի իմում։

“**Ա**երեցէք ինձ,” դարձուցի ես. “անձինքս այսոքիկ՝ որքան և անկեալ, տակտւին մարդիք են. և այդ հերիք իրաւունք են առ յօժարամութիւնս իմ։ Բարի խորհուրդք հերքեալ՝ դառնան ձոխացուցանել զպարզեողին զսիրտ. և թէպէտ խրատքն զորս քարողեմ՝ ոչ ուղղեսցեն զնոսա, սակայն հաւաստեաւ ուղղեսցեն զանձն իմ։ Եթէ ողորմելիքս սոքա իշխանազունք լինեին՝ որդեակք իմ, հազարք գտանէին պատրաստականք մատուցանելոյ զպաշտօնատարութիւն իւրեանց. բայց՝ ըստ կարծեաց իսոց, սիրտն՝ որ թաղեալ կայ ՚ի զնոսանի, այնքան պատուական է, որքան զայն որ բազմի ՚ի զահոյս։ Այս՝ գանձքդ իմ, եթէ կարողացոյց՝ ուղղեցից զնոսա. թերեւս և ոչ ամենեքին անգոսնեսցեն զիս։ Թերեւս և ասլրեցուցից զմին ՚ի յանդընդոց, և այդ մեծ շահ եղիցի. զի՝ գոյ ՚ի վերայ աշխարհի գոհար իմն այնքան անզին, որպէս զհոգի մարդոյ։”

Օ այս օրինակ ասացեալ թողի զնոսա և իջե ՚ի հասարակաց արգելարանն, ուր յոյժ զուարթագինս գտի զբանտարկեալսն՝ ակն կալեալ ժամանման իմոյ. և անձնիւրն պատրաստեալ բանտական խարդախութեամբք իւիք ծաղը առնել զլարդա-

պետն : **Ա**յսպէս իբրև գնացի սկսանել , մին առ ՚ի շեղթեքեաց զկեղծամ՝ իմ՝ որպէս եթէ պատահմարար , և ապա զներումն հայցեաց : Երկրորդն՝ որ կայր սակաւիկ մի հեռի , ունէր զգիւտ թուք արձակելոյ ընդ մէջ ատամանց իւրոց , որ տեղատարափ անկան ՚ի վերայ գրքի իմոյ : Երրորդն զոչէր **Ա**մէն՝ այնպիսի իմն կեղծեալ եղանակու , որ մնէ զուարձութիւն պարզեեաց մնացելոցն : **Չ**որրորդն գաղտազողի շորթեալ էր զակնոցս ՚ի գրպանէ իմմէ : Բայց էր այլ ոմն՝ որոյ խորամանկութիւն և ևս ընդհանրական զուարձութիւն ընծայեաց քան զայլոց ամենեցուն . զի՞ նշմարելով զեղանակն որով դասաւորեալ էի զմատեանս իմ՝ ՚ի վերայ սեղանոյ զառաջեաւ իմով , կարի իմն ճարտարութեամբ եհան զմի՝ ՚ի տեղւոջէն և եդ զպազշտական զիրս ինչ խեղկատակութեան ՚ի տեղի այնորիկ : **Ի**նչ և իցէ՝ ոչինչ փոյթ տարայ ամենայնի զոր չարագործ ակումբս այս փոքրիկ էակաց առնեին , այլ յառաջեցի . քաջ զմուաւ ածեալ՝ եթէ որ ծաղըականն էր ՚ի ձեռնարկի իմում , զծաղը շարժիցէր լոկ յառաջնում կամ յերկրորդում նուազի , այն ինչ որ կարեորն էր՝ հաստատուն կացցէր : **Վ**տաժութիւն իմ՝ յաջողեցաւ , և պակաս քան ՚ի վեց աւուրս զտան ունանք զդջայեալ և ամենեքին ուշադիր :

Արդ ուրեմն զովեցի զերկայնմտութիւն իմ և զՃարտարութիւն , զայս օրինակ պարզելով զզացութիւն հէք եղելեացն՝ մերկացելոց յամենայն բարյական զգացողութեանց , և սկսայ արդ խորհել

զերկրաւոր ծառայութիւնս ևս առնել նոցա , առաւ-
ւել միտթարական առնելով զկացութիւն իւրեանց :
Յարդ ժամանակ նոցա բաժանեալ էր 'ի մէջ սովու-
և յղփութեան , աղմկալի շուայտութեան և դառն
տուայտանաց : Ո՞ի միայն պարապումն նոցա էր
կուռել ընդ իրերաց , խաղալ զնարտ թղթոյ և հա-
տանել զկապանս ծխախոտի : Հայսմ վերջին հեղգ
աշխատասիրութենէ՝ ակնարկեցաւ ինձ կարգել զայ-
նոսիկ որ յօժարիցին գործել , կտրել զհեղոյս
վասն ծխախոտավաճառաց և կարուակաց , զկայտն
գնեալ հասարակաց ստորագրութեամբ . և երբ
կազմեալ , վաճառիւր խմով որոշմամբ . այնպէս զե-
խչին իմն , բայց հերիք առ ՚ի պահել զնա :

Ո՞չ զկայ առ ՚ի աստէն . այլ օրինադրեցի զտու-
դանս առ պատուհաս անառակութեան , և զվար-
ձատրութիւնս առ մասնաւոր աշխատասիրութեան :
« Այս օրինակ՝ պակաս քան յերկուս ե օթնեակս ,
ածի զնոսա յընտելութիւն և ՚ի մարդավարութիւն ,
և բերկրեցայ համարել զանձն որպէս զօրէնսդիր .
որ ածեալ էր զմարդիկ ՚ի բնական վայրագութենէ
իւրեանց ՚ի բարեկամութիւն և հլութիւն :

Եւ ՞ տայր՝ եթէ օրինադրական կարողութիւնն
զայս օրինակ ուղղէր զօրէնս՝ առ ուղղութիւն քան
՚ի խստութիւն : Եթէ ապացուցեալ խելամուտ
լինէր , թէ առ արմատաքի քանցելոյ զյանցանս ,
ո՞չ լինի ընտելացուցանելով զպատիժս , այլ ա-
հարկու ցուցանելով : Ապա փոխանակ այժմեան

արգելարանաց մերոց՝ որ գտանեն կամ առնեն ըդ
 մարդիկ յանցաւոր, որ արգելեն զողորմելի հէքս
 սակս գործելոյ միոյ յանցաւորութեան՝ և դարձու-
 ցանեն զնոսա՝ եթէ կենդանի դարձցին, յարմա-
 րեալս առ չարագործութիւնս հաղարս, տեսցուք՝ որ-
 պէս և ՚ի միւս կողմունս Եւրոպիոյ, զտեղիս ապաշ-
 խարութեան և առանձնութեան. ուր մեղապարտք
 հաղորդ լիցին ընդ այնպիսեաց՝ որք կարիցեն մատա-
 կարարել նոցա զապաշխարութիւն՝ եթէ յանցաւոր,
 կամ զնոր շարժաւիթս առաքինութեան՝ եթէ անմեջ Եւ
 ՚իս, բայց ոչ առաւելուն զպատիմս, է դուռն
 ուղղելոյ զտէրութիւն։ Եւ չկարեմ իսկ հրաժա-
 րել ՚ի հարցանելոյ զվաւերականութենէ իրաւանցն՝
 զոր ընկերական միաբանութիւնք առեալ են զան-
 ձամբ, գլխապարտութեամբ պատժելոյ զթեթե
 վլասս։ ՚Ի գէպս սպանութեան՝ իրաւունք նոցա
 ընդունելի են. քանզի ամենեցուն մեր պարտակա-
 նութիւն է յօրինաց անտի անձնապաշտպանու-
 թեան, զըաւել զկեանս այնորիկ՝ որ զարհամարհու-
 թիւն ցուցեալ իցէ վասն կենաց այլում։ Ռ նդդէմ
 այսպիսեաց յառնէ զինուք բնութիւն համօրէն։
 բայց ոչ սոյնպէս է ընդդէմ նորա՝ որ գողանայ
 զատացուածս իմ։ (Օրէնք բնութեան չտան ինձ զիրա-
 ւունս, պիտի լինի դաշտմբ եգելով ՚ի մէջ մեր։
 Թէ նա՝ որ զոկէ զմիւն յերիվարէ իւրմէ, մեոցին

Ասկայն սուտ է գաշնա այս . զի ոչ ոք ունի զի-
րաւունս փոխանակելոյ զկեանս իւր՝ քան եթէ բառ-
նալոյ զայն . քանզի ոչ է իւր ինքեան . իւր թո-
ղեալ զայս՝ անհամեմատ է գաշն . և յայժմեան իսկ
ատենի իրաւանց ՚ի բաց դնիցի՝ ըստ որում մեծ է
տուգանքն առ ամենաչնչին դիւրութեան . յորմէ
հետէ՝ լաւ ևս է եթէ երկու մարդիք կեցցեն , քան
մի մարդ հեծանիցէ . Բայց գաշն՝ որ սուտ է ՚ի
միջն երկուց մարդոց , հաւասարապէս նոյնպէս եղե-
ցի ՚ի միջն հարիւրոց կամ հարիւր հազարաց . քան-
զի՝ զոր օրինակ բիւրք բիւրուց բոլորակաց ոչ եր-
բէք կարեն արտադրել զքառակուսի մի , սոյն օրի-
նակ և միաւորեալ ձայն բիւրաւորաց չկարեն ըն-
ձեռել զամենափոքը հաստատութիւն ստութեան .
Օ այս օրինակ ապա բանականութիւն բարբառի ,
և անուս բնութիւն զնոյն բան ասէ . վայրենիք՝
որք կառավարին լոկ բնական օրինօք , յոյժ դորո-
վագութ են առ կեանս իրերաց . հազիւ հեղուն
զարիւն , բայց եթէ ՚ի վըէժինսկրութիւն անցելոյ
անգթութեան :

Այսոնացի նախահարք մեր , այս անազորոյն
՚ի պատերազմի , սակաւս և եթ սպանութիւնս ու-
նէին ՚ի ժամանակի խաղաղութեան . և յամենայն
նորահաստատ տէրութիւնս , որք տակաւին անյե-
ղեղս ունին զկնիք բնութեան , զի՞նչ և իցէ վնաս
հազիւ ընդ գլխապարտութեամբ անկանի :

՚ի միջն քաղաքացեաց նրբիմաստ հասարակու-
թեան է՝ որ ոլէնքն պատուհասի՝ որ է ՚ի ձեռս

Հարստաց : գնին ՚ի վերայ աղքատաց : Տէրութիւն՝ որչափ և ծերանայ , թուի ստանալ զգեգութիւն հասակի . և՝ որպէս եթէ առաւել ցանկալի լինի ստացուած մեր ըստ չափու աճման այնորիկ--որպէս թէ՝ առաւել անչափ մեր հարստութիւն , առաւել տարածի մերս երկիւդ—ամենայն ստացուածք մեր յամէն օր նոր արքունական հրամանօք շրջափակին . և շուրջ պատին կախաղանօք՝ առ ՚ի ահ արկանել յամենայն ասպատակիչս :

Ակարեմ ասել՝ արդեօ՞ք ՚ի բազմութենէ պատժական օրինաց մերոց է , թէ յապարասանութենէ ժողովրդեան մերում , որ երկիրս այս զառաւել պատժապարտս ցուցանէ ՚ի միուր ամի , քան զկէսն տէրութեանց Եւրոպիոյ ՚ի միասին առեալ : Գուցէ յերկուց ևս . քանզի փոփոխակի ծնուցանեն նոքա զմիմեանս : Յորժամ անխոտիր օրինօք պատուհասի՝ տեսանէ ազգ մի զնոյն պատիժ հաստատեալ առ աննման աստիճանո յանցանաց , ոչինչ խոտիր տեսանելովն ՚ի պատուհասի՝ բերին ժողովուրդք միանգամայն անտես առնել զխտրութեամք յանցանաց . և խոտիրս այս՝ է ամրութիւն բովանդակ բարոյականութեան , զայս օրինակ՝ բազմութիւն օրինաց ծնուցանեն զնորանոր մոլութիւնս , և նորանոր մոլութիւնք խնդրեն զնորանոր արգելս :

Անկարծ ուրեմն կարողութեան այնմիկ , փոխանակ հնարելոյ զնորանոր օրէնս առ ՚ի պատժել ըզ մոլութիւնս , փոխանակ պինտապինտ ձգելոյ զստքանն ընկերութեան՝ մինչեւ ցզալ ցնցման ՚ի խզել

զայն, փոխանակ կորուսանելոյ զողորմելի հեքս
իբրև զանալիտանս՝ նախ քան զվորձ առնուլ պի-
տանութեան նոցին, փոխանակ փոխարկելոյ զուղ-
ղութիւն ՚ի վրէժինդրութիւն—անկարծ թէ փորձէ-
աք զզսպողական հնարս կառավարութեան. և առ-
նէաք զօրէնս՝ պաշտպանիչ, բայց ոչ բռնաբարիչ
ժողովրդեան : Գտանէաք ապա՝ որ արարածքն,
որոց հոգիք համբարեալ լինին իբրև զկզկզանս,
լոկ կարօտէին ձեռին զտողականի . գտանէաք ապա՝
որ արարածքն, որք սևեռին յընդերկար տանջտ-
նարանս՝ զի մի զուցէ զկասցի հեշտութիւն զվայր-
կենական տառապանս, պիտոյասցին՝ եթէ բարիոք
վարեալ, առ ՚ի սնտել զտէրութիւն ՚ի ժամանակս
վտանգի. որ՝ որովհետեւ դէմք նոցա մերոց պէս
են, սիրտք ևս նոյնակէս իցեն . որ՝ նուազ գտանին
միտք այնքան անարդք՝ զոր երկայնսոտութիւն չկա-
րեցէ ուղղել . որ՝ մարթէ մարգոյ տեսանել զլերջ
յանցանաց իւրոց, թարց մեռանելոյ ՚ի պատճառս
այնորիկ . և որ՝ յոյժ սակաւ պէտք եղիցի արեան,
առ ՚ի մածուցանել զապահովութիւն մեր :



ԳԼՈՒԽ ԵՐ

ԵՐՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՇՈՒՅՈՒՆԹԻՒՆ ՑԱՏԷՏ ԽՈՀԵ-
ՄՈՒԹԵԱՆ ՔԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ, ԵՆ ՀԵՑԵ-
ՒԱՆՔ ՑԱՍՏ ԿԵԱՆՍ : ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՑ ԶԱՐԻՔ
ԿԱՄ ԲԱՐԻՔ ՀԱՄԱՐԵԱԼ ՀԻՆԵԼՈՎ, ՑԵՐԿՆԻՑ
ՈՐՊԵՍ ԶԻՐՍ ՍՈՍԿ ՑՈՒՄՊԵՏՍ ՑԻՆՔԵԱՆՍ,
ԵՒ ԱՆԱԲԴԱՆՍ ԽՆԱՄՈՑ ԻՒՐԱՑ
'Ի ՏՐԱՄԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ :

ԱԽԵԼ Ե քան զերկուս եօթնեակս էր արդ
արգելման իմոյ, այլ 'ի ժամանմանէ հետէ չէի
այց ելեալ յիմ սիրելի Օլիվիեայ, և անձկայի
յոյժ տեսանել զնա, Օ եկուցանելով ամուսնոյ
իմոյ զցանկութեանց իմոյ, 'ի միւսում առաւօտու
եմաւտ խեղճ աղջիկն 'ի սենեակ իմ, յեցեալ 'ի
բազուկ քեռ իւրոյ, Փոփոխութիւնն զոր տեսի ի
զեմն նորա՝ պակոյց զիս: Անթիւ շորհքն՝ որք ընա-
կեն անդ երբեմն, թևս առեալ սրացեալ էին, և
թուէր՝ եթէ ձեռն մահու ձուլեալ էր զամնայն
զկերպարանն առ ՚ի ահաբեկել զիս: Քունքն խո-
րասուզեալ, Խականն լարեալ, և մահագոյժ տըժ-
գնութիւն թագաւորէր ՚ի վերայ այտեցն:
“Ուրախ եմ տեսանել զքեզ, սիրելինք իմ,” ա-
սցէ, “այլ զմէ այս վհասութիւն՝ լիզ: Յու-

սամ՝ սէրդ իմ՝ մեծ յարգ ունիս վասն իմ՝ ներել գերեանաց սոյնպունակ ական հատանել կենաց՝ զոր յարգեմ՝ որպէս զիմ։ Օ ուարթ լեր, դռւստրու իմ, և տեսցուք տակաւին զերջանկագոյն օրեարս։”

“Քաղցրութիւն քոյ, հայր,” պատասխանի արար, “ցանգ եղե առ իս, և յաւելու այս ՚ի ցաւ իմ՝ թէ ոչ երբէք պատահեցայց հաղորդիլ այնմ երջանկութեան՝ զոր խոստանաս, Երջանկութիւն՝ երկնչիմ, ոչ այլ ևս մնայ ինձ այսրէն, և անձկամ տարազրիլ ՚ի տեղւոջէ՝ ուր լոկ գտառապելութիւն գտի։ Արդարեցանկամ՝ զի ըստ պատշաճի հնագանդեսցիս Պարոն Թառնհիլայ. թերես և բերեսցի գթալ ՚ի քեզ, և միսիթարութիւն եղեցի ինձ ՚ի մահուան։”

“Քաւ լիցի, որդեակ,” պատասխանեցի. “Քաւ լիցի ինձ բերել երբէք խոստովանիլ զգուստը իմ պունիկ, զի թէեւ աշխարհ հայեսցի ընդ սղալանս քոյ անարգանօք, թող իմ լիցի համարիլ զայն իբրև զցոյց գիւրահաւանութեան, և ոչ յանցանաց, Աիրելիդ իմ, ոչ իւիք թշուառ զանձն համարիմ ՚ի տեղւոջս յայսմիկ, որքան մթին և երեսցի, և հաստատ լեր՝ զի մինչ յարատեսցիս երջանկացուցանել զիս կեալովն քով, ոչ երբէք ընկալցի նազաւանութիւն իմ յև ևս տառապեցուցանելոյ զքեզ՝ ամուսնանալովն ընդ այլում։”

Յետ մեկնելոյ գստերս, բանտակից իմ՝ որ առ երի կայր յայսամ հանդիպման հերիք խոհեմութեամբ յանդիմանեաց զկամակորութիւն իմ մեր-

ժելոյ զՀնազանդութիւն իմն՝ որ խոստանայր ինձ
զազատութիւն։ Դահսեաց՝ եթէ չէր պարտ զոհել
զիմացեալ ընտանիս իմ։ առ խաղաղութեան միոյ
միայնոյ, և որ մի միայնն էր՝ որ յանցուցեալ էր
առ իս : “Անաւանդ,” յաւել, “չգիտեմ” արդար
եղիցի բանու՝ արդելուլ զմիաւորութիւն առն և կնոջ,
որպէս առնես այժմ զգիջանելով հաւանիլ պսակի
միոջ՝ զոր ոչ կարես խափանել, բայց ապերջանիկս
արացես :”

“Պարոն,” դարձուցի ես, “անծանօթ ես դու
առն՝ որ խոշտանգէն զիս : Քաջ խելամնւտ եմ
ես, զի ոչինչ հնազանդութիւն՝ զոր կարացից մա-
տուցանել, կարողացի գէթ վասն միոյ ժամու հայթ-
հայթել ինձ զազատութիւն։ Ազգ եղե ինձ՝ զի
յոյսմ իսկ առանձնարանի, պարտապան մի նորա՝
իբր ամաւ միով յառաջ, վաղձանեցաւ առ կարօ-
տութեան, իայց՝ թէև հնազանդութիւն և հաւա-
նութիւն իմ փոխիցէր զիս աստի յամենաշքեղ ա-
պարանս նորա, սակայն և ոչ զմին շնորհեցից։
Քանզի շնոջէ իմն յիս՝ թէ վաւերացուցանել է այդ
շնութեան։ Մինչդեռ դուստրն իմ կեայ՝ ոչինչ ա-
մուսնութիւն նորա երբէք օրինաւոր եղիցի յաչս
իմ։ Եթէ բառնիւր նա՝ արդարեւ վատթարագոյնն
լինէի յարանց, գժգմնութեամբ իմով ջանալ հեռի
պահել զայնոսիկ՝ որք ցանկան միաւորութեան։ Մօ-
անազդամ՝ որպէս էն՝ ցանկացայց յայնժամ ամուս-
նութեան նորա, առ ՚ի խափանել զալադայ անաւ-
սակութիւնս նորուն, Այլ արդ՝ ոչ ապաքէն ան-

դթագոյնն ՚ի հարց եղեցիմ ստորագրել զգործի իմն՝
որ իջուսցէ զերեխայն իմ ՚ի զերեզման, առ Ճողովրե-
լցյս և եթ ՚ի բանտէ . և սոյն օրինակ՝ առ ՚ի զեր-
ծանիլ ՚ի միոյ տառապանաց, բեկել զսիրտ մանկան
իմոյ հաղարովք :

Հատացաւ նա արդարութեամբ պատասխանւոյս,
այլ ոչ կարաց հրաժարիլ ՚ի գիտելոյ, թէ երկն-
չէր կեանք դսաեր իմոյ արդէն յոյժ հաշեալ էին առ
՚ի ընդերկար սլահել զիս յարգելարանի : “**Օ** իարդ
եիցէ,” շարունակեաց, “թէսլէտ ոչ զիջանիս հնա-
զանդել եղբօրորդւոյն, յուսամ ոչ ներհակեսցես
արկանել զքոյդ դատ առաջի հօրեղբօրն, որոյ համ-
բաւ առ արդարասիրութիւն և բարեսիրութիւն՝ ա-
ռաջինն է ՚ի թագաւորութեան : Խտրհրդատրեցից
զքեզ յղել զթուղթ ՚ի ձեռն սուրհանդակի, զե-
կուցանելով զվատ արարտ եղբօրորդւոյ իւրոյ, և
կեանք իմ վկայ, որ յերիս աւուրս ընկալցիս զպա-
տասխանի :” **Ը**նորհ կալայ զնամանէ վասն ակնար-
կութեանն, և իսկոյն մատեայ ձեռն արկանել յայն,
սոկայն կարօտէի թղթոյ, և տարաբաղդապէս ծա-
խեալ էի յայնամ առաւօտու զամենայն արծաթ մեր
՚ի պէտս նպարակաց, ինչեկիցէ ելից նա զպէտս իմ:

Յընթացս երից հետեւեալ աւուրց՝ անձկութիւն
էի զլխովին իմանալ զորպիսի ընդունելութիւն նա-
մակ իմ գտանէր . բայց և այնպէս յաճախակի ա-
զերսէի յամուսնոյ իմմէ հնազանդիլ ո և իցէ պայ-
մանաց՝ քան մնալ առ տեղեաւն . և յամէն ժամու
ընկալուի զհետեակ զրոյցս վատթարանալոյ առող-

ջութեան դստեր իմոյ : Երբորդ և չորրորդ օրն
 եհաս , սակայն չընկալսյ զպատասխանի նամակին
 իմոյ . Թերես և գանգատանք օտարականի ուրումն ,
 ոչ իւիք յաջողէին ընդդէմ սիրեցեալ եղբօրորդոյ .
 ուստի վաղվաղակի ցնդեցան յոյսքս այսքիկ որ-
 պէս զայլ առաջինսն : Ինչեցէ՝ միտք իմ տակա-
 ւին զօրացուցանէր զինքն . թէպէտե արգել և վատ
 օդն սկսան զյայտնի փոփոխութիւն գործել յոդ-
 ջութեան իմում , և բազուկ իմ՝ որ մեսասեալ ՚ի հըր-
 կիզութեանն , և ևս վատթարացաւ : Բայց և այն-
 պէս՝ նստէին մանկունք իմ առ ինե , և այն ինչ տա-
 րածէի ՚ի վերայ յարդի՝ ընթեռնուին առ իս փո-
 փոխակի , կամ ունին զնէին և արտասուէին առ
 խրատուց իմոց : Այլ՝ առողջութիւն դստերս քան
 զիմն արագապէս պակասելով , ամէն պատգամաւո-
 րութիւն զնումանէ ձեռն տայր աճեցուցանել զահ և
 զցաւս իմ : Յինդերորդէ առաւօտու զկնի գրութեան
 թղթոյս առ Անպուհն Ակիլիէմ Թատոնհիլ , խոռո-
 վեցայ լրով անբարբառութեան նորա : Արդ ուրեմն
 արգելումն ցաւալի էր ինձ իրաւապէս . սիրտ իմ
 թափէր ՚ի տեղւոջէն առ երի լինել բարձու նորա ,
 միսիթարել զնա , զօրացուցանել զնա , ընդունել
 զմերջին ցանկութիւնս նորա , և ուսուցանել հոգ-
 ոյ նորին զուղին ելից ՚ի յերկինս : Այլ լուր եհաս :
 Յոգէվարս էր . և սակայն արգելեալ էի ՚ի փոք-
 րիկ միսիթարութենէն՝ լալոյ առ նմա : Բանտակից
 իմ յետ սակաւուց եկն վերջին զրուցիւք : Ասաց
 ինձ համբերող լինել : Աաղձանեալ էր : — Պար-

ձաւ ՚ի վաղիւ և եզիտ զիս ընդ երկոցունց փոքր-կանց , զարդիս՝ մի միայն ընկերակցաց իմոց , որք ՚ի կիր արկանէին զանմեղ ջանա իւրեանց համայն առ ՚ի միսիթարել զիս : Աղաչեցին ընթեռնուլ առ իս , և հայցեցին զիս չլալ , զի յոյժ ծերացեալ էի արդ առ կոծելոյ : “Եւ ոչ արդ՝ հայրինկ , հրեշտակ է քուրիկն իմ ,” ասաց երիցագոյնն , “և ընդէր ուրեմն տրտմիս վասն ՚նորա : Քանկամ ես ինքնս հրեշտակ լինէի՝ արտաքոյ այսմ ահաւոր վայրի , եթէ հայրիկ իմ ընդ իս լինէր :”—“Այս ,” յաւել կրտսերագոյն սէրն իմ , “ Երկինք՝ ուր քուրիկ իմ է , պատուականագոյն վայր է քան զայս , և ոչ գոն անդ բաց ՚ի բարի անձանց , և մարդեք՝ որ աստ , յոյժ վատ են :”

Ընդմիջեաց Պարոն Պէնկինսըն զանմեղ շաղակրատութիւնն նոցա , նկատելով թէ՝ ոչ զոյր արդ գուստոր իմ , պարտ էր ինձ զգուշութեամբ խորհել վասն մնացելոց ընտանեաց իմոց , և ջանալ ապրեցուցանել զանձն , որ օր յաւուր ՚նուազէր առ կարօտութեան պիտոյից և առողջարար օդոյ : Յաւել՝ թէ անհրաժեշտոքար պարտ էր ինձ զոհել զուեիցէ հպարտութիւն կամ զքէն անձին՝ առ բարօրութիւն այնոցիկ՝ որք կախէին զինէն վասն օդ-նականութեան . և՝ թէ պարտաւոր էի արդ՝ եթէ բանականութեամբ և՝ թէ արդարութեամբ՝ փորձել հաշտեցուցանել զկալուածատէր իմ :

“ Փառք Աստուծոյ ,” դարձուցի ես , “ չմնաց ինձ արդ հպարտութիւն . անգոսնեցից իսկ զիրտ

իմ, եթէ տեսանելի զհպարտութիւն կամ զքէն զօղել
անդէն : **Պ**նդ հակառակն՝ որովհետեւ հարստահա-
րողն իմ՝ մին էր երբեմն ՚ի ժողովը բականաց իմոց,
յուսամ յաւուր միում մատուցանել զնա որպէս
զանարատ հոգի՝ առ յաւ իտենական դատաստանա-
րանաւ : **Պ**արոն, չունիմ ինչ արդ զքէն . և թէ-
պէտ բարձեալ է յինէն զոր միանգամ թանգագին
քան զամնայն գանձս նորա ունէի, թէպէտ խո-
ցեաց զիս ՚ի սիրտ—քանզի խօթացեալ եմ զողցես
ցլհատութիւն, յոյժ խօթացեալ՝ բանտակիցդ իմ—
սակայն ոչ երբէք աղդեսցէ այն յիս զքէն զօի-
ժու : **Ք**օժար եմ արդ հաւանութիւն տալ ամուս-
նութեան նորա . և՝ եթէ հնազանգութիւնս այս
հաճեցուսցէ զնա, տուր նմա գիտել՝ զի եթէ իւիք
անիրաւեցի նմա՝ տխուր եմ վասն այնորիկ : ”

Լառ Պարոն **Պ**էնկինսըն զմելան և զթուղթ,
և գրեաց ՚ի նմա զհնազանգութիւն իմ, զողցես որ-
պէս արտայայտեցի . որում ստորագրեցի զանունս ;
Լառ որդի իմ տանել զթուղթն առ Պարոն **Թ**առն-
հիլ, որ էր յամարանոցի իւրում ՚ի շնին : **Չ**ո-
քաւ, և ՚ի միջոցի վեցից ժամուց գարձաւ բերանոյ
պատասխանեաւ : **Դ**ժուարութիւն ինչ եգիտ, ա-
սաց, մատչիլ ՚ի տեսութիւն կալուածատեառն իւրոյ,
զի սպասաւորքն ժողիրհ.ք էին և կասկածուք . այլ՝
պատահաբար ետես զնա՝ այն ինչ երթայր արտաքս
վասն գործոյ, առ պատրաստութիւն հարսանեացն .
որ լինելոց էր ՚ի միջոցի երից աւուրց : **Յ**աւել
ծանուցանել մեզ, եթէ յառաջ մատես ինքն ամե-

նախոնարհ եղանակաւ, և ետ նմա զթուղթն . զոր
իբրև ընթերցաւ Պարսն թառնհիլ՝ ասաց, եթէ
ամենայն հնազանդութիւն անագան էր և անպիտան.
եթէ՛ լուեալ էր զբողոքելոյ մերմէ առ հօրեղբայր
իւր, որ պատահեցաւ արհամարհութեանն՝ որում
արժան էր . և որչափ վասն մնացելոցն, ապագոյ
դիմոցմունք մեր ամենայն՝ պէտք էին ուղղել առ
հոգաբարձու իւր և ոչ ինքն, Բայց և այնպէս
դիտեաց՝ թէ որովհետեւ քաջ հասու էր կատարե-
լութեան երկոցունց մատաղաւուրց բամբշացն, թե-
րես առաւել ախորժելի հաշտարարք նոքա լինէին .”

“ Աղբ՝ պարո՞ն ,” ասացի ցքանտակից իմ, “ տե-
սանես արդ զտրամադրութիւն առն՝ որ հարստա-
հարէն զիս : Արէ զուարձաբան լինել միանգամայն
և անգութ . այլ՝ թող նմա առնել ընդ իս որպէս
և կամին, վաղվաղակի ազատ եղէց ես ՚ի հեճուկս
ամենայն նգաց նորա առ ՚ի արգելուլ զիս : Ա’եր-
ձենամ՝ արդ առ բնակարան իմն, որ՝ որչափ և մեր-
ձենամ, այնչափ պայծառագոյն երեխ . ակնկալիս
այս զուարթացուցանէ զվիշտս իմ . և՝ թէպէտ թո-
ղում զհետ իմ զանօննական ընտանիս որբոց, բայց
սակայն ոչ միանգամայն բարձի թողի լիցին . բա-
րեկամ ոմն գացի թերես օգնել նոցա՝ վասն սիրոյ
տառապեալ հօր իւրեանց . և ոմանք մարդասիրա-
բար սփոփեսցեն զնոսա՝ վասն սիրոյ Արկնային
Հօր նոցին :

“ Եսն ընդ զրաւման ասիցս, ամուսին իմ՝ զոր
յո ռաջ չէի տեսեալ յայնմ առուր, յանդիման

եղեւ զարհութեալ դիմօք , և գուն զործելով բայց անկարող ՚ի խօսել : “Պ ՚նդէ՞ր՝ սէրդ իմ ,” ասացի . “ընդէ՞ր զայս օրինակ աճեցուցանիցես զվիշտս իմ քոյովդ , (Օ)՞ն . թէ և ոչինչ հնազանդութիւն կարէ դարձուցանել զիսիտ տէր մեր , թէ և կընքեալ է զիս մեռանիլ առ տեղեաւս եղկութեան , և թէե կորուսեալ եմք զսիրեցեալ զաւակ , սակայն տակաւին միսիթարութիւն գտցես ’ի մնացեալ զաւակունս քոյ , երբ ես ոչ ես իցեմ ;”—“Արդարեւ ,” դարձոյց նա , “կորուսեալ եմք զսիրեցեալ զաւակ : Առփիայն իմ՝ սիրեցեալն իմ՝ գնաց յափշտակեալ ՚ի մէնջ , առեալ տարեալ ՚ի սրիկայից :”

“Օ իմարդ՝ տիկին ,” զոչեաց բանտակից իմ . “(Օ)րիսրդն Առփիամ տարեալ յեղեռնազործաց . անշնչութ , ոչ :”

Անթարթափ հայեցիւք և հեղեղօք արտասուաց միայն՝ կարսց նա պատասխանի առնել : Այլ մին ՚ի կանանց բանտարգելոցն՝ որ ներկայ գտաւ և ՚ի ներքս եմուտ ընդ նմա , ետ մեզ զորոշ տեղեկութիւն . ծանոյց մեզ՝ թէ այն ինչ ամուսին իմ՝ գուստարս և ինքն զգնային ՚ի միասին ՚ի մեծի պողոտային՝ սուզ ինչ հեռի ՚ի գեղջէն , կառք ինն սուրհանդակի երկձի՝ արշաւելով առ նոսա և իսկոյն զկայ առնու : Քայնմ վայրի շքեղազգեստ այր ոմն՝ այլ ոչ Պարոն Ուառնհիլ , ելեալ արտաքս կալնու զմիջովք դըստերս , և բռնի քարշելով ՚ի ներքս՝ հրամայէ կառավարին արշաւել արագ . որով և ՚ի միում վայրկինի անհետ լինին յաչաց :

“Արդ” գոչեցի, “լցաւ թիւ թշուառութեանց իմաց, և ոչ իսկ ’ի կարողութեան է իմիք յաշ խարհի՝ յաւելուլ ՚ի վիշտ իմ։ Օ ի՞նչ ոչ մնաց մին. չժողուլ ինձ և զմի. ո՞վ ձիւազին. զաւանկն այն, որ կից էր սրտիս. ունէր զգեղեցկութիւն հրեշտակի, և գոզցես զհրեշտակի զհանձար։ Այլ՝ օգնեցէք կնոջ այնմիկ, և մի թողուք անկանիլ։ Չթողուլ ինձ և զմի։”

“Եղուկ, այրդ իմ։” ասաց ամուսինս. “գույաւէտ ևս երեխա կարօտիլ միսիթարութեան քան զիս։ Աղէտք մեր մեծ են, այլ տանէի այսմ և առաւելագունի ևս, եթէ լոկ զքեզ անգորը տեսանէի։ Տարցեն զմանկունս իմ և զբովանդակ աշխարհ ՚ի բաց, եթէ թողցեն ինձ լոկ զքեզ։”

Որդիս՝ որ ներկայ էր, գուն գործեաց մեղմել զթախծութիւն մեր. աղերսեաց զմեզ միսիթարութիւն զգենուլ, քանզի յուսայր որ տակաւին պատճառու ունիցուք շնորհակալ լինելոյ։ —“Հայեաց՝ որդեակ։” ասացի, “Հայեաց շուրջ ընդ աշխարհ համօրէն, և տես՝ եթէ գուցէն արդ երջանկութիւն ինչ մնացեալ վասն իմ։ Ո՞չ ապաքէն ամենայն շառաւիղ միսիթարութեան արգելեալ է, այն ինչ պայծառ ակնկալութիւնք մեր ամենայն մնան յայնկոյս գերեզմանին։”—“Այրեցեալ Հայրդ իմ։” դարձոյց նա, “յուսամ դոյ տակաւին իմն՝ որ տայցէ քեզ զմիջոց բաւարարութեան. զի ունիմ զթուղթ յեղբօրէ իմմէ Գևորգաց։”—“Օ ի՞նչ զնմանէ, որդեակ։” ընդմիջի ես. “գիտակ ինչ է

զթշուառութենէ մերմէ : Յուսամ՞ որդին իմ ազատ
է ամենայն մասամբ՝ յորոց եղիելի ընտանիք իւր
տառապին : "—"Այս, հայր : " դարձոյց նա , "բո-
լորովին ուրախ է , զուարթ և երջանիկ : Թուղթ
նորա չքերէ զայլ իմն , բաց ՚ի բարի լրոց + սիրե-
ցեալ է յաչս հազարապետի իւրոյ , որ խոստա-
ցեալ է հայթհայթել նմա զալաշտօն հարիւրապե-
տի ՚ի դատարկութեան : "

"Եւ հաւաստի ես զայսմ ամենայնէ , " եհարց ա-
մուսին իմ . "հաստագ ես՝ որ ոչինչ չար գիպեալ
է որդւոյ իմոյ : "—"Արդարե ոչինչ՝ մայր : " դար-
ձոյց որդիս , "տեսցես արդ զթուղթն՝ որ յոյժ
բերկրեցուցէ զքեզ . և թէ կարիցէ իմն պարզեել
քեզ զմիսիթարութիւն , հաստագ եմ այդ եղիցի : "

"Այլ հաստագ ես , " դարձեալ կրկնեաց նա , "թէ
թուղթն ՚ի նմանէ է . և թէ իրաւապէս երջանիկ
է նա այդպէս : "—"Այս, մայր : " պատասխանեաց ,
"անշուշտ նորին է , և յաւուր միում եղիցի նա
պատիւ և ամրութիւն ընտանեաց մերոց : "—"Ու-
րեմն գոհանամ զԱյխախնամութենէ , " գոչեաց ,
"որ վերջին զիր իմ վրիպեալ է : Այս, սիրելին
իմ : " շարունակեաց նա դառնալով առ իս , "խոս-
տովան եղեց արդ՝ որ թէպէտ ձեռն Երկնից սաս-
տիկ է ՚ի վերայ մեր յայլում գիպի , բարեշնորհ
է եղեալ յայսմիկ : Ա երջին գրով իմնվ առ որ-
դին իմ՝ որ ՚ի դառնութեան սրտմութեան , աղա-
ցցի զնա վասն օրհնութեան մօր իւրոյ , և թէ
ունէր զսիրտ առն , արդարութիւն առնել տալ

Հօր իւրում և քեռ, և վրէժս առնուլ զերաւանց մերոց : Այլ գոհութիւն “Ամա՝ որ ուղղէն զամենայն բան, վրիպեալ է այն և ես հանգիստ եմ:”— “Ան դու,” գոչեցի ես . “յոյժ չարաչար ես գործեալ, և յայլում ժամանակի թերես խատազոյն լինէին կշտամբանք իմ: Ո՞վ. յորպիսի՝ ահագին խորոց զերծեալ ես դու, որ թաղել թաղէր զքեզ և զնա ՚ի միասին յանվաղձան ապականութեան: ” Աախախնամութիւնն՝ արդարեւ, առաւել քաղցրացեալ է առ մեզ յայտիկ, քան մեք մեզ: Պահպանեալ է զորդին այն լինել հայր և ապաւեն մանկանց իմոց, երբ ես այլ ոչ իցեմ: Օ իարդ յանիրաւի տրոնջեցայ՝ կապտեալ գոլ յամենայն միսիթարութենէ, յորժամ լսեմ տակաւին որ երջանիկ է նա և անզգայ վշտաց մերոց, տակաւին պահեալ յօգնութիւն այրի մօր իւրում և ՚ի պաշտպանութիւն եղբարց իւրոց և քերց: Բայց ո՞ւ քորք մնան նմա: չունի արդ զքորս, զնացին ողջ նոքա, դողացեալ յինէն և ես աւերեալ:”— “Հայր,” ընդմիջեաց որդի իմ: “աղաջեմ շնորհեսց ինձ ընթեռնուլ զայս թուղթ + գիտեմ բերկրեցուցէ զքեզ:” Քոյր վերայ թողութեամբ իմով ընթերցաւ ըստ հետեւելոյն :

‘ՅԱՐԴԵԼԻ ՏԵՐ’

‘**Ի ԲԵՑ** եմ կոչեալ զերեակայութիւն իմ զվայրկեանս ինչ ՚ի բերկրութեանց՝ որք շուրջ պատեն զինե, առ ՚ի հաստատել ՚ի վերայ առարկայից

և ևս բերկրականաց՝ սիրեցեալ փոքրիկ վառարանի տան մերում։ Երեակայութիւն իմ կերպազրէ զանդասա ակումբն այն՝ որպէս ունկն եղեցեալ ամէն տողից այտուիկ մեծաւ հանգարատութեամբ։ «Աշմարեմ բերկրութեամբ զդէմս այնոսիկ՝ որք երբէք չզգացին զտգեղացուցիչ ձեռս փառասիրութեան կամ տառապանաց։ Այլ՝ որպիսի և իցեն երջանկութիւն ձեր առանին, հաւաստի եմ՝ յաւելումն իմն եղիցի յայն ՚ի լսել, եթէ բոլորովին հաճեալ եմ ես ընդ վիճակ իմ, և ամենայն կերպ երջանիկ եմ աստ։

«Գունդդ մեր արգելաւ ՚ի չումանէ, և ոչ թողցէ զթագաւորութիւնն։ Հազարապետն՝ որ դաւանէ զանձն ինձ բարեկամու առնեու զիս ընդ իւր յամենայն ընկերակցութիւնս զոր ճանաչէ, և՝ զինի առաջին այցելութեան՝ հասարակօրէն գտանեմ զիս ընկերալ զու առաւելեալ յարգանօք յերկրորդ գելս զայն։ Ատքաւեցի յանցելում գիշերի ընդ Գրիշնանուհւոյ, և՝ թէ հնար լինէր ինձ մոռանալ՝ գիտես զու, թերես յաղթական հանդիսանայի։ Այլ ճակատագիր իմ է յիշել տակաւին զայլս՝ այն ինչ ես ինքնս մոռացեալ եմ ՚ի բազմաց յիմոց բացակայ բարեկամաց։ և ՚ի հսմարս այս՝ երկնչիմ տէր, պարտ է ինձ թուել և զքեզ։ Քանզի ընդերկար և ՚ի զուր ակնկալեցի անձկանօք թըղթոյ միոյ ՚ի տանէ։ Օլեվիա և Առիիա ևս խոստացան գրել, բայց երեսի մոռացեալ են զիս։ Ասանոցա՝ անտանելի անբան են, և՝ թէ յայսմը վայր-

կենի կարի զայրացեալ եմ ընդ ինքեանս ։ սակոյն՝
տակաւին չպիտեմ զիարդ, թէպէտ կամիմ սակաւիկ
մի յոխորատալ, սիրտ իմ խնդրագիր լինի գողարա-
գոյն շարժմանց միայն։ Ուրեմն ասա նոցա՝ հայր,
որ յետ ամենայնի սիրեմ զնոսա խանդաղատանօք,
և հաւաստի լեռ մնալ ինձ քեզ յարաժամ։

Հնազանդ Ուդի :

“Յամենայն թշուառութիւնս մեր,” ասացի,
“զորպիսի շնորհակալութիւնս չպարտիմք դարձու-
ցանել, զի գոնէ մին յընտանեաց մերոց ազատ է
յորոց մեքս տառապիմք։ Պաշտպան լիցի նմա
Երկինք, և պահեսցէ՛ զորդի իմ զայս օրինակ եր-
ջանիկ, ամրութիւն լինել այրի մօր իւրում և հայր
երկուց տղայոցս, որ է բոլոր ժառանգութիւնն
արդ թողուլ կարեմ նմա։ Խցէ՛ թէ պահեսցէ զան-
մեղութիւն նոցա ՚ի փորձութեանց կարօտութեան,
և առաջնորդ լիցի նոցա ՚ի շաւիդս պատուոյ ։”
Հազիւ թէ ասացի զբանս զայսոսիկ, երբ աղաղակ
իմն որպէս զաղմլի՛ երեկը յառաջ գալ յստորին
բանտէն։ ցնկեցաւ վաղվաղակի, և շառաջիւն շըլ-
թայից լսելի եղեւ ընդ ուղին անձուկ՝ որ հանէր ՚ի
դատիկոն իմ։ Եմուտ բանտապետն կալեալ զայր
մի արնաթաթաւ, վերաւորեալ և ծանրաբեռնեալ
շղթայիւք։ Ա շտակցութեամբ հայէի ընդ եղիկին
այն ինչ մերձենայր առ իս, բայց իրրեւ տեսի զնա
որդի իմ լինել՝ արհատիրք պատեցին զինեւ։ “Պէ-
սրդ իմ, իմ Գէորդ, և զայս օրինակ տեսանեմ”

զքեզ։ Ա իրաւորեամլ, շղթայականպ։ Այս է երա
ջանկութիւն քոյ։ Այս կերպն դառնալոյդ առ իսու
Ու տայլը ինձ, եթէ բեկանէր սիրտ իմ՝ 'ի տեսու-
թէնէս և մեռանէի :"

"Ուր է արութիւն քոյ՝ տէր՝" դարձոյց որդիս
անվեհեր ձայնիւ : "Պիտի ինձ կրել, պատժապարտ
գտաւ կեանք իմ, և թող առցեն :"

Պ անացայ զսպել զկիրս իմ՝ զվայրկեանս ինչ
լսութեամբ, այլ թուէր ինձ մեռանիլ առ փոր-
ձոյն : "Ով, որդեակ, արտասուէ սիրտ իմ տեսա-
նել զքեզ զայս օրինակ, և չկարեմ, չկարեմ օդ-
նել այնմիկ : 'Ի վայրկենին երբ կարծէի զքեզ
երանեալ, և աղօթէի վասն փրկութեան քոյ, զայս
օրինակ տեսանել զքեզ անդրէն : Ը զթայականպ—
վերաւորեամլ, իւս սակայն մահ գեռահասակին ե-
րանելի է : Բայց ես ծեր եմ, յոյժ ծերացեալ, և
ապրեցայ տեսանել զայս օր, Տեսանել զմանկունս
իմ զամենեսին տարածամթօթափիլ շուրջ զենեն,
մինչ գեռ մնամ ես եղկելի յետնորդն 'ի միջի ա-
ւերածոյն : Խցէ՛ թէ ամենայն անէծք՝ որք սու-
զեսցեն երբէք զհոգի մարդոյ, ծանր անկանիցին ՚ի
վերայ սարանողին որդեկաց իմաց : Խցէ՛ թէ իմ պէս
ապրեսցի տեսանել —"

"Կաց, հայր իմ, կաց : " դարձոյց որդիս, "ապա
թէ ոչ շառագնեցայց ես փոխանակ քոյ : Օ խորդ,
հայր, մոռանալով զհասակ քոյ, զսուրբ կարգն
քոյ, ոյսանակ յանձին գրաւես զարդարութիւն
Երկնի և զընկենուս ՚ի վեր զանէծս զայնոսիկ՝ որք

ընդ փոյթ իջցեն ճմլել զսպիտակալարս գագաթ
քոյ ընդ աւերմամբ + Քաւ լիցի հայր . փոյթ
քոյ եղիցի արդ յարմարել զիս առ անարդ մահն
այն , զօր պարտիմ ընդ հուպ սղջունել , սպառա-
զինել զիս յուսով և անվեհերութեամբ , քաջա-
լերել զիս ըմպել յայնմ դասնութենե՝ որ բաժին
իմ եղիցի ՚ի մօտոյ :

“Որդեակ , չպարտիս մեռանիլ . հաստագ եմ ոչ-
ինչ միաս քոյ կարէ արժանաւորիլ այսպիսի անարդ
մահուան : Գեշորդն իմ չկարէ պարտաւոր դտանիլ
միասու իմիք՝ որ յամօթ արացէ զնախահարս
իւր :

“Խմն՝ հայր ,” դարձոյց որդիս , “Երկնչիմ ան-
ներելի է : Խբրե ընկալայ զթուղթ մօր իմոյ , իս-
կոյն զհետ եկի . հաստատեալ ՚ի մտի պատժել ըզ
դաւաճանն պատույ մերոյ , և յղիցի նմա զհրա-
ւէր պատահելոյ ինձ . որում պատախանի դարձոյց՝
ոչ անձամբ , այլ արձակելով զչորս յարբանեկաց
իւրոց առ ՚ի ըմբռնել զիս : Խոցեցի զմին՝ որ
զառաջինն յարձակեցաւ ՚ի վերոյ իմ , և երկնչիմ
կարելէր յոյժ . այլ՝ մնացեալքն կալանաւորեցին
զիս : Հաստատեալ է անարին՝ ՚ի զործ դնել զօ-
րէնս ընդգէմ իմ . վկայութիւնքն անժխտելի են .
առաքեալ եմ զհրաւէր մարտին , և զի ես եմ ա-
ռաջին օրինազանցն , չմնայ ինձ յոյս փրկութեան :
Բայց սակայն շատ անզամ զմայլեցուցեալ ես զիս
արիութեան ճառօք քոլք , տուր ինձ արդ՝ տէր ,
դտանել զայն ՚ի քումիդ օրինակի :

“Եւ գտցես դու, որդեակ ։ Համբարձեալ եմ
արդ ՚ի վերոյ այսր աշխարհի և ամենայն բերկրու-
թեանց զորս ընծայել կարէն ։ ’Ե վայրկենէ աստի
յայսմանէ խզեմ՝ ՚ի սրտէ իմմէ զամենայն զկապանս՝
որք ունէին զնա յերկիր, և պատրաստեցայց յար-
դարել զերկոսին զմեղ առ յաւիտենականութիւն ։
Այն, որդեակ, ցուցից ես զճանապարհն ։ և հոգի
իմ առաջնորդեսցէ քոյոյն ՚ի վերելան ։ զի ՚ի մի-
ասին թես առեալ սրասցուք ։ Տեսանեմ արդ և
հաւաստի եմ՝ չկարես աստէն ակն ունիլ թողու-
թեան ։ և միայն խրախուսել կարեմ զքեղ ՚ի խնդիր
լինել այնմ՝ մեծագոյն ատենի անդ, ուր վաղվա-
զակի համարս տալոց եմք ՚ի միասին ։ Բայց՝ օ՛ն ։
մի անխայող լիցուք ՚ի խրախուսութեան մերում ։
այլ թող համայն բանտակցաց մերոց մասնակից
լինել ։ բանտապետ բարի, թոյլ արա նոցա կալ
աստէն, մինչ ես գուն գործեցից ուղել զնոսա ։”
Օ այս օրինակ ասացեալ, փորձեցի յառնել ՚ի
յարտէ իմմէ ։ այլ պակասէր ոյժ, և կարացի լոկ
թեք անկանիլ յորմն կոյս ։ Ակմբեցան բանտար-
գելքն ըստ իմոց խորհրդոց, քանզի սիրէին ունին
դնել իմոց խրատուց ։ որդիս և մայր նորա զօրա-
ցուցանէին զիս յերկուց կողմանց ։ հայեցայ և տեսի
ոչ պակասէր ոք, և ապա բացի զբերան իմ հե-
տագայ յորդորանոք ։



ԳԼՈՒԽ ԻԹՆ

ԶՈՒԳԱՀԱՏԱՍԱՐ ԳՆԱՑՔ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ Ա-
ՊԱՑՈՒՑԵԱԼ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՐՁԱՆՎԻ ԵՒ ՏԱՌԱ-
ՊԵԼՈՅ ՚Ի ՍՏՈՐԻՆՍ ԸՍՏ ԹԷ ԸՍՏ ԲՆՈՒ-
ԹԵԱՆ ԲԵՐԿՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՑԱՌՈՅ ՝
ՊԱՐՑԻՆ ՑԱՌԱՊԵԱԼՔ ԸՆԿԱԼ-
ՆՈՒԼ ԶԿՇԻՌ ՑԱՌԱՊԵԱՑՑՆ
՚Ի ԿԵՇՆԾՆ ՀԱՌԴԵՐՁԵԼՈՒՄ:

“ԲԵՐԵԿԵՄՐԴ իմ զաւակունք իմ և
վշտակիցք իմ իբրև զմուաւ ածեալ խորհրդածեմ
՚ի վերայ մատակարարութեան բարւոյ և չարի ՚ի
ստորինս աստ, գտանեմ որ շատ է պարզեեալ
մարդոյ ՚ի վայելել, այլ շատագոյն ևս ՚ի կրել:
Ձեապէտ և հարցցուք զաշխարհ ամենային, ոչ
դոցուք զայր մի այնքան երջանիկ՝ որ չկարօտասցի
իմիք ցանկանալոյ, այլ յամէն օր տեսանեմք ըզ
հազարաւորս՝ որ զիւրովի գնալովն ցուցանեն մեզ,
չմնայր ինչ նոցա յուսալոյ: Ապա ուրեմն երեի
թէ ՚ի կենի աստ չկարեմք բոլորովին երջանիկ լի-
նել. բայց սակայն բոլորովին տառապեալ մարթ
է մեզ լինել:

“Ապա էր պիտի մարդոյ այսանակ զգալ զցաւ.
սակա էր ապերջանիութիւն մեր պահանջիցի ՚ի կեր-

պաւորութեան ընդհանրական երանութեան . Էր
սակս՝ այնինչ այլ ամենայն կարգք կատարեալ են
արարեալ՝ կատարելութեամբ ստորակարգեալ մա-
սանց իւրեանց , կարգն մեծ կարօտիցի՝ առ կատարե-
լութիւն իւր , մասանց՝ որք ոչ թէ միայն ստորակար-
գեալ են այլոց , այլ անկատար իսկ յիշքեանս . Հարց-
մունք են այսոքիկ՝ որք ոչ երբէք կարեն բացատ-
րի , և թերեւս անօղուտ եղիցին՝ եթէ ծանուցեալ ,
Այս առարկայիս ՚ի վերայ՝ ՚ի ճահ է համարեալ
Կախախնամութեան ՚ի զերև հանել զհետաքըքը-
ութիւն մեր . շատացեալ ՚ի պարգևել մեզ զա-
սիթս առ միսիթարութիւն :

“Քայսմ վիճակի հրաւիրեալ է մարդոյ զբարե-
կամական օժանդակութիւն խմաստասիրութեան . և
Երկնից տեսեալ զանբաւականութիւն այնորիկ ՚ի
միսիթարել զնա , տուեալ է նմա զօժանդակութիւն
կրօնի , Այսիթարութիւնք խմաստասիրութեան
յոյժ զուարձալի են , այլ յոլովակի ստապատիր ;
Ասէ մեզ՝ թէ լի են կեանք միսիթարութեամբք ,
եթէ յոկ վայելեսցուք զայնա . և ՚ի միւսմէ կողմանէ՝
թէ թէպէտե անհրաժեշտաբար թշուառութիւնս
ունիմք աստէն , կարձատե են կեանք և վաղվազակի
վաղձանեսցին : Օ այս օրինակ միսիթարութիւնքս
այսոքիկ ջրեն զիրեարս . քանիզի՝ եթէ միսիթար ինչ
իցեն կեանք , կարձատեսութիւն նորա պիտի թշուա-
ռութիւն լինի . և եթէ երկարատե , թաղթութիւնք
մեր երկարաձգին : Օ այս օրինակ տկար է իմաս-
տասիրութիւն , այլ կրօն բարձրագոյն ոճով միսի-

թար լինի : Վարդ՝ ասէ մեզ , յարգարէ աստէն զմիսս իւր և պատրաստէ առ միւս օթևան : Քորժամբ բարի մարդն թողու զմարմին և լինի բոլորովին փառաւոր միտք , գտցէ՝ զի արարեալ է ինքեան զերկին իմն երջանկութեան աստէն . ոյն ինչ հէքն՝ որ հաշմեալ և վարակեալ է ՚ի ձեռն մոլութեանց իւրոց , շրտնու արհաւրանօք ՚ի մարմնոյ իւրմէ , և գտանէ որ կանխեալ է քան զվորժինդրութիւններին Երկնից : 'Ի կրօն անդր ուրեմն պարտ է մեզ դիմել յամենայն հանգամանս կենաց մերոց , իբրև ՚ի ծշմարտագոյն միսիթար + քանզի՝ եթէ արդէն երջանկիք իցեմք , բերկրեսցուք զմասւ ածել թէ կարեմք զերջանկութիւնն այն անվաղջան առնել . և եթէ տառապեալք իցեմք , կարի խրախուսական լինի զմուաւ աֆել՝ թէ զոյ տեղի հանգստեան : Ը այս օրինակ բարեբաղդին՝ առաջի առնէ կրօն զշարունակութիւն երանութեան , տարաբաղդին՝ զփոփոխումն ՚ի ցաւոյ :

“Ի՞սայց՝ թէպէտ յոյժ քաղցր է կրօն առ ամենինին , զմասնաւոր պարզես խոստացեալ է վշտագնելոց . հիւանդն , մերին , անտերունչն , ծանրաբեռնեալն և բանտարկեալն՝ ունին միշտ զստէպ ստէպ խոստմունս ՚ի սրբազն օրինի մերում : Նեղենակ կրօնի մերոյ խոստովանէ զանձն յամենայն ուրեք՝ բարեկամ տառապելոց , և՝ անսման ստոց աշխարհիս այսմիկ , ձօնէ զամենայն զզգուանս իւր անօգնականաց : Անմլտք ստզտանեն զայս իբրև զակնառութիւն , իբրև զնախամեծարութիւն իմն՝

առանց արդեանց արժանաւորութեան : Այսլ ոչ
երբէք խորհին՝ թէ և ոչ ՚ի կարողութեան Երկնից
է առնել զխոստումն յաւերժական երանութեան՝
այնչափ մեծագոյն ձիր երջանկին, որչափ թշուա-
ռացելոյն : Առաջնոյն՝ յաւիտենականութիւնն է
լոկ մի միայն երանութիւն, այնու զի յառաւելն՝
առաւելու և եթ զոր միանգամ արդէն ստացեալ
ունին : Ա երջնոյն՝ կրկնակի է շահն . նուազեցու-
ցանէ զցաւ նոցա աստէն, և պարզեատրէ զնոսա
երկնային երանեաւ առ յապայս :

“Այսլ Կախախնամութիւն յայլում հայեցուա-
ծի՝ առաւել քաղցրագոյն է առ աղքատն, քան
առ մեծատուն, քանզի՝ որպէս զկեանս յետ մահ-
ուան առաւել անձկալի առնէ, սոյնպէս դիւրա-
հարթ առնէ զուզին. յայն : Կանխաւ ընտելանան
թշուառացեալք ընդ ամենայն դէմս արհաւրաց :
Ա շտագին մարդն գնէ անողորութեամբ զանձն ՚ի
վայր, առանց ստացուածոց՝ առ ՚ի ափսոսաւ, և լոկ
սակաւ հանգուցից՝ առ ՚ի կասեցուցանել զչու նորաք
զգայ և եթ զտադնապ բնութեանն ՚ի վերջին ան-
ջատման . և այս չէ իւիք մեծագոյն, քան ընդ
որովք վհատեաւ է յառաջագոյն բազմիցս . զի՝
յետ մասնաւոր ցաւոյ, ամէն նոր Ճեղքուած՝ զոր
բանայ մահ ՚ի կազմուածի, պատէ բնութիւն քաղց-
րաբար՝ անզգայութեամբ :

“Օ այս օրինակ Կախախնամութիւնն պարզե-
եալ է ապերջանկին զերկին առաւելութիւնս՝ քան
երջանկին, յաստի կեանս, մեծագոյն երանութիւն

'ի մահուան, և 'ի յերկինս՝ զայն ամենայն գերազանցութիւն բերկրութեան՝ որ ծագի ՚ի ներհական վայելչութենէ : Եւ՝ գերազանցութիւնս այս՝ բարեկամք, ոչ նուազ ինչ շահ է . և թուի լինել մի ՚ի բերկրութեանց աղքատին յառակի . զի թէ և արդէն յերկինս էր, և զգայր զամենայն զմայլ մունս որ անդ, սակայն յիշատակեցաւ իբրև զշաւելումն յերջանկութեան նորա՝ թէ երբեմն վշտացեալ էր և արդ սփոփեալ, թէ պիտէր զինչ լինելն տառապելութեան և արդ զգայր զինչ լինելն երջանկութեան :

“ Օ այս օրինակ՝ բարեկամք, տեսանէք առնէ կրօն, զոր խմաստասիրութիւն չկարէր երբէք առնել . ցուցանէ զզու գահաւասար գնացս Երկնի ընդ երջանկի և ապերջանկի . և հաւասարէ զամենայն զմայլ լութիւնս մարդկային, զոզցես՝ ՚ի միահաւասար չափ : Պարգևէ երկաքանչիւրոց հարստի և աղքատի՝ զնոյն երջանկութիւն առ յապայս, և զմիահաւասար յոյս թեկն ածելոյ այնմիկ . ոյլ՝ եթէ հարուստք զառաւելութիւն ունին՝ վայելմամբ բերկրութեան յաստի կեանս, աղքատք զանվազճան հաճութիւն ունին՝ գիտութեամբ զինչ լինելոյն երբեմն լինել թշուառ, յորժամ սպակեսցին անվազճան երանութեամբ՝ 'ի հանդերձելումն . նա՝ թէպէտ նուազ առաւելութիւն ասիցի այս, սակայն յաւերժական լինելովն՝ լցուացէ երկարութեամբն՝ զոր առժամանակեայ երջանկութիւն մը ծատանն առաւելեալ իցէ սաստկութեամբն :

“Այսոքիկ են ուրեմն միսիթարութիւնքն՝ զոր տառապեալք ունին սեսպհականեալ ինքեանց, և յորում՝ վեր են քան զմնացեալ ազգ մարդկան, յայլս ամենայն՝ ստոր են քան զնոսա, “Ե՞քա՝ որք զիտել կամիցին զտառապելութիւնս աղքատի, պարտին տեսանել զկեանս և տանել այնմիկ: Քան դիման առնել զառժամանակեայ առաւելու թիւնս՝ զոր վայելեն նոքա, է երկրորդել և եթ՝ զոր ոչ ոք հաւատան կամ կատարեն: Մարդիք՝ որք ունին զպէտս կենաց, չեն աղքատ. որք կարօտինս այնոցիկ՝ են տառապեալքն: Այն, բարեկամք իմ, մեք եմք տառապեալքն: Աչինչ զուր ջանք նուրբ երևակայութեան՝ քաղցրացուցանել կարեն զպէտս բնութեան. կամ տալ զառաձգական քաղցրութիւն՝ տամուկ արտաշնչութեան արգելարանի. և կամ զանգորըութիւն՝ բարախման բեկեալ սրտի: Թռող խմատասիրին՝ յիւրոց փափկութեան զահոյից, ասացէ մեզ՝ թէ կարող եմք դիմադրել այսմ ամենի: Ա այ ինձ. ջանքն՝ որով դիմադրեմք նոցա, է և ևս մեծագոյն ցաւն: Թռեթե է մահ, և որոք մարդ մարդի տանել այնմ. այլ տանջանք ահաւոր են, և չիք որ տոկալ կարիցէ այնոցիկ:

“Առ մեզ ուրեմն՝ բարեկամք, խոստումն երջանկութեան յիշրկինս՝ առանձին իմն սպատուական եղիցի. քանզի՝ եթէ վարձ մեր յայսմ կենի և եթլիներ, ամենաթշուառն յամենայն մարդկանէ լինեաք յիւրաւի: Խրբե հայիմ շուրջ զնսեմ որմովքս այսոքիւք՝ արարեալս յահարեկել ևս և արգելել

զմեզ, զՃրագաւս այսուիկ՝ որ պիտոյանայ լոկ ցուցանել զարհաւիրս տեղւոյն, զկապանօք այնոքիւկ՝ զոր բռնաւորութիւն է հաստեալ կամ յանցանք հարկաւոր արարեալ, իբրև զննեմ զհիւծեալ հայեցուածս այսուիկ և լսեմ զհառաչանս այնուիկ՝ ո՛վ, բարեկամք իմ, որպիսի՛ փառաւոր փոփոխութիւն եղիցի Երկին առ այսոցիկ : Ունանալ ընդ սահմանս աղատարձակս որպէս զօդ, ջեւնուլ ՚ միջի ճառագայթից յաւիտենական երանութեան, պարերգել անվաղձան երգովք փառաբանութեան, չունիլ զտէր՝ որ սպառնոյցէ կամ անարգեսցէ զմեզ, բայց զձևն Բարութեան ինքնին յաչ մեր ՚ ի յաւիտեան . իբրև խորհիմ զայսոցիկ իրաց, մահ պատգամաւոր եղանի կարի իմն ուրախարար աւետեաց, իբրև խորհիմ զայսոցիկ, սրագոյնն ՚ նետից նորա եղանի գաւաղան իմոււմ հաստատութեան . իբրև խորհիմ զայսոցիկ, զբնչ ինչ իցեն ՚ կենի աստ արժանի ունելոյ . իբրև խորհիմ զայսոցիկ, զբնչ գուցեն որք չիցեն ՚ բաց հերքելոյ : Յոգոց ելցեն թագաւորք յարքունիս իւրեանց՝ առ այսոցիկ առաւելութեանց . այլ մեք՝ որչափ և խոնարհեալ իցեմք, խանդաղատեսցուք ՚ ի սակա նոցա :

“Եւ մեր եղիցին իրքո այսոքիկ : Ա՞երն անշնչաց եղիցին, եթէ լոկ ջանք արացուք վասն նոցա . և որ միսիթարն է՝ արգելեալ եմք ՚ ի բազմաց փորձութեանց, որք կասեցուցանէին արգեօք զհետամտութիւն մեր, Ունդ մեզ միայն ջանք առնել, և մերն անշնչաց եղիցին . և որ տակաւին

միսիթարն է, ընդ հուպ իսկ. քանզի՝ եթէ հայեացուք յետո ընդ անցեալ կեանս, երևի կարձ թիզ մի և եթ. և զինչ և կարծիցուք զմնացեալ կենաց, գուցի և այնպէս սակաւագոյն տեսողութեան. որչափ և բերխմք առ ծերութիւն՝ աւուրք առաւել կարձագոյն երեին, և մաերմութիւն մեր ընդ ժամանակի՝ և ևս նուազեցուցանէ զտեսութիւն տեսելոյ նորա: Հապն, եկայք միսիթար զկեցցուք, զի փոյթ ՚ի վաղձան ուղեգնացութեան մերոյ ժամանեցուք. ընդ փոյթ զծանր բեռն ստանձնեալ յերկնից ՚ի վերայ մեր՝ յերկիր հանգուսցուք. և թէպէտ մահ՝ մի միայն բարեկամն տառապելոյ, խաղ առնէ պատկերաւն զլաստակեալ ուղեորն առ վայր մի, և հանգոյն եզերոյից նորա թռչի տակաւին առաջոյ նորա, սակայն անշուշտ և ՚ի կարձոյ եկեսցէ ժամանակ՝ ելք դադարեսցուք յաշխատութեանց մերոց, երբ անառակ մեծատունք աշխարհի, ոչ ևս կոխեսցեն զմեզ յերկիր. երբ բերկութեամբ զմտաւ ածցուք զտառապելութիւնս մեր ՚ի ստորինս. երբ շուրջ պատեալ լիցուք բոլոր բարեկամոք մերովք, կամ այնոքիւք որք արժանացան բարեկամութեան մերում. երբ երանութիւն մեր անձառելի եղիցի, և տակաւին՝ ՚ի պսակ ամենայնի, անվաղձան:



ԳԼՈՒԽ 1.

ԵՐԵԱԿԱԳՈՅՆ ԵՐԵՒՈՅԹԻՔ ՍԿՍԱՆԻՆ ԵՐԵՒԱՆ ԽԿԱՑՔ
ԱՆՑԵՂԻՑԱՎԼՔ ՀԱՑՈՒՔ, ԵՒ 'Ի ՎԱՂՃԱՆԻ
ՓՈՓՈԽԵՍՑԻ ԲԱՂԴ 'Ի ՄԵՐ ԿՈՅՆ :

ԵՅՅԵԽ զոյս օրինակ զըաւեցի և տեղի ե-
տուն ունկնդիրք իմ, բանդապետն՝ մի ՚ի մարդա-
սիրագոյն համարուեստից իւրոց, յուսացաւ՝ զի
ոչ անհաճոյ թուիցի ինձ, զի զոր առնէրն՝ պար-
տաւորութիւն իւր էր. նշանակելով՝ թէ պարտա-
կան էր հեռացուցանել զորդի իմ յամրագոյն սե-
նեակ. և՝ թէ թողեալ լիցի ՚ի տեսութիւն ելանել
ինձ յամէն առաւօտու. Ընորհ կալս զողորմա-
ծասրտութենէ նորա, և՝ սեղմ լով զձեռս որդւոյ
իմոյ, հրաժարականն ետու նմա, և զգացուցի զմեծ
պարտեացն զառաջեաւ իւրով:

Պ նկողմանեցի ուրեմն միւս անդամ, և մի ՚ի
փոքրկանցս նստաւ առ կողովք անկողնոյ իմոյ ըն-
թեանուլ, յորժամ մտեալ Պարոն Պ էնկինսնի
ծանոյց՝ եթէ զոյր լուր զդստերէ իմմէ, զի երկու
ժամաւ յառաջ տեսեալ եղև ընդ օտարոտի պար-
նի ուրում. և՝ թէ զտեղի առեալ էին ՚ի մերձա-
կայ շինի վասն կազդուրման, և երեկին դառնալ

՚ի քաղաքն։ Հազիւ զրաւեաց զբանսն՝ յորժամ
եկն բանտապետն շուտափոյթ և բերկլրալի գիմօք
ազդ առնել ինձ՝ եթէ գտեալ եղեւ զուստր իմ։
Յետ միոյ վայրկենի եկն Վովսէս վազ վազ, զո-
չլով՝ եթէ քոյր իւր Առփի էր ՚ի վայր, և գայր
՚ի վեր ընդ հինաւուրց բարեկամի մերոյ Պարոն
Բռչէլայ։

Խոկ և խոկ ընդ պատմել նորա զայս, ամենա-
սիրելի գուստըն իմ եմսւտ, և դիմօք՝ զոզցես զա-
ռանցեալ ՚ի բերկրութենէ, վազեաց համբուրել զիս
յափշտակեալ սիրով։ Արտասուք և լրութիւն ևս
մօր նորա՝ յայտնի առնեին զերկրութիւն սրտին։
“Ահաւասիկ, հայր, ” գոչեաց գեղազէլ աղջեկն,
“ահաւասիկ այրն քաջ՝ որում պարտիմ զիրկու-
թիւն իմ։ անվեհերութեան քաջի առնս այսորիկ
պարտապան եմ վասն երջանկութեան և ազատու-
թեանս —” Համբոյր մի ՚ի Պարոն Բռչէլայ՝ որոյ
բերկրութիւն և ևս մե ծագոյն երեկը քան զնորին,
ընդմիջեաց զոր միանդամ կամէր նա յաւելուլ։

“Ա՛խ, Պարոն Բռչէլ, ” ասացի ես, “եղկելի
ընակարան է այս՝ յորում արդ տեսանեսդ զմեզ։
և մեք ես յոյժ տարբեր եմք՝ յորմէ տեսերդ զմեզ
՚ի վերջնումն։ Յարաժամ բարեկամ մեր էիր։ ՚ի
վաղուց հետէ ծանեաք զաղալութիւն մեր՝ նկատ-
մամբ քեզ։ ծանեաք և զղջացաք վասն ապերախ-
տութեան մերոյ։ Յետ արհամարհանսցն՝ զոր ըն-
կալար ՚ի ձեռաց իմոց, զոզցես զամօթի հարկանիմ
ականել ՚ի գէմն քոյ։ այլ՝ յուսամ ներեսցիս ինձ։

քանզի պատրեցայ ես 'ի վատ անագորոյն թշուառականէ միոջէ, որ՝ ընդ պատրուակաւ բարեկամութեան, աւերեաց զիս :'

“Անկարելի է ինձ ներել քեզ,” ասաց Պարոն Բոչէլ, “քանզի ոչ երբէք արժանացար ցասման իմոյ . նշմարեցի ես յայնժամ փոքր ՚ի շատէ զպատրանս քոյ, և՝ զի արտաքոյ կարողութեան իմում էր խափանել, ՚ի դութ և եթ շարժիլ կարէի :

“Ո՞ւշտ իմ կշռագատութիւնն էր ,” ասացի “որ միտք քոյ ազնիւ էին . այլ արդ նոյնպէս և զտանեմ զայն : Այլ ասա ինձ, սիրելի աղջիկ, զի՞արդ ազատեցար դու, կամ ով սրիկայքն՝ որ զքեզ ՚ի բաց տանէին :

“Անշնուշտ, հայր ,” պատասխանի արար, “որչափ առ անօրէնն՝ որ ՚ի բաց տարաւ զիս, տակաւին անժանօթ եմ ես : Օ ի՞ այն ինչ մայր իմ և ես զկնայաք արտաքոյ ; Եկն ՚ի թիկանց մերոց, և զնդ նախ քան զօդնութիւն գոչելս, բռնի տարաւ զիս ՚ի կառս սուրհանդակի, և յական թօթափել երիվարքն սրացան ՚ի բաց : Պատահեցայ բազմաց առ ձանապարհայն՝ զորս յօդն կոչեցի . այլ անփոյթ եղեն զաղաչանաց իմոց, “Այն հետայն ՚ի կիր արկանէր սրիկայն զամենայն հնարս արդելուլ զաղաղակ իմ, համոզէր և սպառնայր փոփոխիկի, և երդնոյր՝ եթէ ՚ի լուռ լինէի, ոչինչ չար զմուաւածէր : Խորտակեցի ՚ի նմին պահու զկտաւի ծածկոյթն կանեփեայ, և զ՞ այլ պիտէր ինձ նշմարել ՚ի բացուստ՝ քան թէ զվաղեմի բարեկամ քոյ

զՊարոն Բռչէլ, զնալով սովորական երագութեամբ
 իւրով, ՚ի ձեռին ունելով զբիրն մեծ՝ որոյ վասն
 այնչափ այպն առնեաք զնա: Խսկոյն ընդ մերձե-
 նալ մեր ՚ի լսողութիւն՝ կոչեցի զնա յանուանէ,
 և աղաչեցի զօգնութիւն նորա: Արկնեցի զաղաղակ
 իմ բազում անգամ, յոյր վերայ ահեղ ձայնիւ
 պատուիրեաց կառավարին զկայ առնուլ, այլ ան-
 փոյթ եղե ժառայն, այլ արշաւեաց առաւելագոյն
 արագութեամբ: Արդ կարծեցի ոչ երբէք ժամա-
 նէր զհետ մեր, յորժամ ՚ի միում վայրկնի տեսի
 զՊարոն Բռչէլ վազելով հասանել առ կողովք
 երիվարացն և ՚ի մի հարուած յերկիր գլորել ըզ
 կառավարն: Խըրեւ անկաւ նա, ինքնին կասեցան
 երիվարքն իսկոյն, և սրիկայն ընդուանուլով արտաքս
 երդմամբ և սպառնալեօք ձգեաց զսուրն, և հրա-
 մայեաց նմա 'ի վեաս անձին յետս կալ: բայց
 յարձակելով Պարոն Բռչէլոյ, ջախջախեաց ըզ
 սուր նորա, և ապա հետամուտ եղե նմա իբրեւ
 զըրիր մասամբ մղոնոյ: ոյլ խուսափեաց նա:
 ՞ Օ այսու ժամանակաւ ես ինքնս ելեալ էի ար-
 տաքս, յօժար ելով ձեռն տալ ազատչի իմոյ:
 բայց փութանակի դարձաւ նա առ իս յաղթանա-
 կաւ: Կառավարն՝ որ զգաստացեալ էր, զնայր
 նոյնալէս ՚ի փախուստ դառնալ, այլ հրամայեաց
 նմա Պարոն Բռչէլ ՚ի վեաս անձին վերելակել
 անդրէն, և արշաւել յետս ՚ի քաղաքն: Հնար
 չպանելով զգէմ գնելոյ, յակամայ կամն զիջաւ:
 թէպէտ հարուածն զոր ընկալաւ՝ գէթ ինձ վեա-

սակար երևէր։ Այտէալ ստէալ գանգատէր զցաւոյն առ ձանապարհայն, մինչ ՚ի վաղձանի շարժեաց զկարեկցութիւն Պարոն Բռչէլայ. որ խնդրանօք իմովք էառ զմիւս ՚ի տեղի նորա յօթեանին՝ ուր մտաք ՚ի գարձի մերում։”

“Բարոն եկիր՝ ուրեմն,” ասացի, “դուստրդ իմ. և դու վեհանձնեայ ազատիչ նորա՝ հազար անգամ բարով։ Խճէն խրախութիւն մեր անարժան իցէ, սակայն սիրտք մեր պատրաստք են ընդունել զքեզ։ Եւ արդ՝ Պարոն Բռչէլ, քանզի փրկեցեր զաղջիկ իմ, եթէ տրիտուր համարեսցես զնա, քոյ է նա. եթէ կարես խոնարհիլ յընտանութիւն այսքան աղքատ՝ որպէս իմն, առ զնա. ստացիր զհաւանութիւն նորա՝ որպէս գիտեմ ունիս զսիրտն, և ունիցիս ես զիմն։ Եւ՝ թող ինձ ասել քեզ՝ պարոն, որ ոչ փոքր գանձ պարգևեմ քեզ. Հըռչակեալ է առ գեղեցկութեանն՝ այն արգարե, այլ չէ այդ գիտումն իմ. ընծայեմ քեզ զգանձ իմն ՚ի միտս նորա։”

“Այլ կարծեմ, պարոն, ” ասաց Պարոն Բռչէլ, “որ քաջ հասու ես զհանգամանաց վիճակի իմոյ, և զանկարողութենէ իմմէ թեարկել նմա ըստ արժանուոյն։”

“Եթէ առաջիկայ առարկութիւն քոյ,” պատասխանեցի, “ակնարկի որպէս զխուսափումն յառաջարկութենէ իմմէ, թողում ես. այլ՝ չգիտեմ ես զոք այնպէս արժանաւոր նմա որպէս զքեզ. և եթէ կարող լինէի հազարս պարզել նմա, և հա-

զարք խնդրելին զես յինէն , սակայն համեստ Արռաջէլն իմ քաջ՝ ամենասիրելի ընտրութիւն իմ լիներ :

Այսի ամենայնի՝ լռութիւն նորա միայն երեկը ընծայել զգառնացուցիչ ապաստթիւն , և՝ առանց ինչ պատասխանւոյ առաջարկութեան խմամբ , եհարց եթէ կարե որ էր հայթհայթել զսփոփանս ինչ ՚ մերձակայ պանդոկէ . որում զստորաամկան ընկալեալ պատասխանի , հրամայեաց առաքել զոր միանգամբ պատուականազոյն ճաշ պատրաստել կարողացին յայնալիսի կարծ ժանաւցման : Պատուիրեաց ևս յղել յառաջազոյն զերկոտասան շիշ զինւոյ , և զզօրացուցիչ գեղս ինչ իմ համար , յաւելլով ժպտանօք՝ եթէ առ անդամբ մի ընդարձակեր փոքր ինչ . և՝ թէպէտ ՚ բանտի , վկայեաց որ ոչ երբեք քաջ ևս յանկուցաւ ՚ զուարձանալ : Փութանակի յանդիման եղեւ սպասահարկուն՝ հանգերծ հանդերձանօք կերակրոյ . սեղան մի փոխ տուաւ ՚ բանտապետէն , որ՝ երեւելի իմն օրինակաւ փութաջան երեկը , շարեցաւ զինին կարդաւ , և երկու քաջայարդար սկստեղք եղան ՚ սեղան :

Հարդ չե էր տեղեկացեալ գտներ իմայ զվարացին անցու եղելի եղբօր իւրոյ , և չկամեաք բոլորքս և ո՛ թուլացուցանել պատմութեամբն զզուարթութիւն նորա : **Ա**յլ՝ ՚ զուր զուն զործեցի զուարթ երեւել . հանդամանօք ասրաբազզ որդւոյս՝ թափ անցանէին ընդ ամենայն ջանա իմ ՚ պատրուակել . մինչ ՚ ի վաղձանի պարտաւորեցայ խամբիւլ զզու-

արձութիւնն մեր՝ սպասման թեամբ տարաբաղդութեանց նորա . և ցանկանալով՝ զի թոյլ տացի նմա մասնակից լինել ընդ մեզ յոյամ սակաւ միջոցի բերկրութեան : Հետ զգաստանալոյ սեղանակցաց ՚ի պահուցմանէն՝ զոր զբոյց իմ ծնաւ , աղաւ չեցի և՛ զի Պարսն Պէնկինսն բանասակցի իմաւմ ևս թոյլ տացի մասնել . և շնորհեաց բանդապեսն զինդիր իմ՝ անսովոր հասպանութեամբ : Ո՞նդ բելի լինել շառաչմանց շղթայից որդւոյ իմոյ , իսկոյն վաղեաց անձկանօք քոյր նորա ընդյառաջ . ոյն ինչ նոյն հետային՝ եհարց ցիս Պարսն Բաչէլ , եթէ որդւոյ իմոյ անուն Պէտրոդ կոչիւր , որում տոռբասական տանլով զգաստախանի , եկաց տակաւ ին ՚ի լուռթեան : “Եսյն ընդ մասնել որդւոյ իմոյ ’ի սենեակն , նշմարեցի որ զիտէր զՊարսն Բաչէլ զարմացական և յարգական հոյեցուածով : ”Ե՛կ , որգեակ ,” ասացի , “թէպէտ և յոյժ խոնարհ եմք անկեալ , սակայն հաճեցաւ Տեսչութիւնն պարզելու մեզ զատկաւ ինչ թուլութիւն ՚ի ցաւոյ : Ա երազարձաւ քոյր քոյ առ մեզ , և ահա աղատիչ նորա . քաջի տանդ ոյդմիկ է՝ որ ոլարտապան եմ առ տակաւին ունելոյս զգուստը մի . առւր նմա՝ որգեակ , զձեան բարեկամութեան , արժանիի է նա մերումն եռանդադին երախտադին առաջարկիւթեան :

Անփոյթ երեկցաւ որդիս ընդ բոլոր ժամանակն ամենայնի զոր ասացի . և տակաւին հանապարփեց կալ մեռալ յակեածու բացակայութեան :

“Աիրեցեան եղբայր,” դոչեաց քոյր նորա . “ընդէլ ոչ չնորհակալ լինիս զբարի ազատչեն խմմէ . պարտին քաջք միշտ սիրել զմիմեանս :”

Տակաւ ին հանապազորգեաց նա ՚ի լռութեան և ՚ի զարմացման իւրում՝ մինչ ՚ի վաղձանի նշմարեաց այցելու մեր եթէ յայտնեալ եղեւ . և յանձին բերելով զամենայն զբնական վեհանձնութիւն իւր , ասաց որդւոյ իմոյ մատչել յառաջ : Աչ երբէք յառաջազոյն տեսի զիր իմն այնպէս վեհափառ՝ որպէս զկերպարանն , զոր յայսմ վայրի յանձին երեր նա : Ամենամեծ տռարկայն ՚ի տիեզերի՝ ասէ ոմն իմաստասէր , է բարի այրն ներստեալ ընդդպէմ ձախորդութեան . այլ սակայն՝ դոյ տակաւին մեծազոյն , որ է բարի ոյրն եկեալ սիօփել զայն : Յետ առ վայր մի կշռելոյ զորդի իմ զերազոյն եղ զանակաւ , “Տեսանեմ դարձեալ ,” ասաց , “անմիտ տղայ , որ նոյն յանցանք —” Այլ ընդհատաւ աստ ՚ի միոյ սպասաւորաց բանտապետին , որ եկն ծանուցանել՝ թէ այր ոմն երեելի՝ կառօք և բազում արբանեկօք ՚ի քաղաքէն , առաքէր զամրացանս իւր առ պարոնն՝ որ առ մեզ , և ինդըր իմանալ երբ համոյ թուիցի ծառայել ինքեան : “Ասան նմա կա՞” ասաց սեղանակից մեր . “մինչ պարագ առից ընդունելոյ զինքն :” և ապա դառնալով առ որդիս , “Տեսանեմ դարձեալ , Պարօն ,” յառաջ զնաց ասել , “որ յանցաւոր ես գու նոյնատիպ վեսառու . որոյ վասն ընկալար անգամ մի ըզ յանդիմանութիւն իմ , և որոյ վասն պատրաստեն

օրէնք զարդար սպատուհասս իւրեանց : Երեակերպես
գուցէ՝ որ արհամարհութիւն քոյոյ անձին տայ քեզ
զիրաւունս ՚ի բաց բառնալոյ զմիւայն . բայց՝ մւր
է պարո՞ն զանազանութիւնն ՚ի միջի մենամարտին՝
որ ՚ի վտանգ արկանէ զկեանս թեթեաղինս , և սի-
կարեանին՝ որ առաւել ապահովութեամբ գործէ :
“Եռազութիւն ինչ է խարդախութեան խազացո-
ղին , այն ինչ պնդէ՝ եթէ ՚ի վտանգ արկեալ է
զընդդէմն :”

“Ո՞հ . պարո՞ն ,” ասացի , “ո ոք և իցես՝ զթա
՚ի խեղճ թիւրեալ էակին . զի զոր գործեաց նա՝ էր
առ հնազանդութեան պատրեալ մօր . որ՝ ՚ի դառ-
նութեան քինուն , ստիպեաց զեա՝ վասն օրհնու-
թեան իւրոյ , վրէժս առնուլ զիւրոյ դատի : Ահա-
ւասիկ թուղթն , պարո՞ն , որ արբանեկեսցէ ապա-
ցուցանել քեզ զանխոհեմութիւն սորա , և նուա-
զեցուցանել զանցաւորութիւն նորա :”

Եառ զթուղթն և հազճեպով վերծանեաց զայն
“Այս առէ , թէև ոչ կատարեալ չքմիզութիւն ,
այնպիսի իմն պատրուակումն է սղալանաց նորա ,
որ հաւանեցուցանէ զիս ներել նմա : Եւ արդ՝ պա-
րո՞ն :” շարունակեաց նա սիրով կալնով զձեռանէ
որդւոյ իմոյ . “տեսանեմ հիացեալ ես ընդ դառ-
նելզ զիս աստէն . ոյլ յաճախակի յայց ելեալ եմ
ես բանախց ՚ի գեղս առաւել անշայեկանս : Եկեալ
եմ արդ տեսանել զարդարութիւն արարեալ ար-
ժանաւոր առն , որոյ վասն ունիմ զանկեղծագցն
համարումն : Ահերուն հետէ եղեալ եմ ծպտեալ

զննական բարեսիրութեան հօրք քում՝ Ա այելեալ
եմ ՚ի փոքրիկ բնակութեան նորա դշարգութիւն
անշաղախ ՚ի շողոմնութենէ , և ընկալեալ եմ զայն
երջանեկութիւն՝ զոր արքունիք ոչ կարեն տալ , ՚ի
զուարձացուցիչ պարզմնութեանց շուրջ զվառա-
րանաւ նորուն : Եղբօրորդի իմ տեղեկացեալ է ըզ
գիտաւորութեանց խորց գալոյ յայսր , և տեսանեմ
ժամանեալ է , անիրաւութիւն եղիցի նմա և ձեզ
միանգամայն՝ դատապարտել զնա առանց հարցա-
քննութեան , եթէ իցէ հարստահարութիւն , եղիցի
և փոխարինութիւն , և զայս ասացից՝ առանց պար-
ճանաց , որ ոչ ոք երբէք ստգտաւ զանիրաւութիւն
Վ իլեհմ Թռառնհիլ Աեպուհւոյ :

Եոր արդ իմացաք՝ որ երեելի այրն այն , զոր
այնքան ընկերկար հիւրընկալեցաք՝ որպէս զան-
ինաս և զզբօսեցուցիչ ընկերակից , ոչ այլ ոք
էր քան թէ աշխարհանազ Աեպուհն Ա իլեհմ
Թռառնհիլ . որոյ առաքինութեանց և եզականու-
թեանցն՝ հազիւ զոյր ոք անծանօթ : Խեղջ Պա-
րոն Բռոչէլն՝ իսկապէս այր էր տարածեալ մեծու-
թեան և մեծի կարողութեան . որում ծերակայտք
ունին գնէին գովարանութեամբ , և կողմնուք լսէին
հաւանութեամբ . որ բարեկամն էր հայրենեաց իւ-
րոց , բայց հաւատարիմ իւրում արքոյի . Խեղջ
ամուսին իմ ՚ի յուշ ածելով զնախկին ընտելու-
թիւն իւր , երեէր ընկրկիլ սոսկմամբ . բայց Առ-
փիա՝ որ վայրկենիւք յառաջ զնա իւրն համա-
րեցաւ , նշմարելով արդ զանհնարին հեռաւորու-

Թիւնն՝ յոր հեռացուցեալ էր ՚ի բաղզէ, ոչ կարաց թաքուցանել զարտասուս իւր :

“Ա՛խ, տէր .” զոչեաց ամսւսինս՝ ողորմ հայեցուածաւ . “զիամրդ հնար եղցի ինձ ընդունիլ զթողութիւն քոյ . արհամարհութիւնքն՝ զոր ընկալար ՚ի ձեռս իմ ՚ի վերջնում նուազի յարգելոյդ զառւն մեր գալստեամբ քով, և կատականքն՝ զոր լրբաբար արձակեցի, այսոքիկ, տէր, երկնչիմ ոչ երբէք զնեբումն ընկալցին :

“Ի՞մ Պատուելի Տիկին, ” գործոյց նա ժպտանօք, “եթէ ունէիր գու զկատակ, ես ևս զիմ պատասխանի ունէի . Թողից ես ընկերակցաց մերոց դատել, եթէ ոչ այնքան լաւ էր իմն որքան քոյն : Արդարն ասել, չեք ոք զարդիս ընդ ում բերիմ ես բարկանալ՝ քան զնա որ զարհուրեցոյց այնպէս զաղցիկն իմ որ աստ : Զգտի իսկ ժամնանակ վերահստու լինելոյ անձին չար ապիրատին, որպէս զի նկարազբել ՚ի հրատարակութեան : Արթս ինձ ասել, սիրեցեալդ Առփիա, եթէ ճանաչեցես զնա վերստին :

“Արդարե, տէր .” պատասխանի արար նո, “չկարեմ հաւաստի լինել, այլ՝ յուշ լինի ինձ որ ունէր զմեծ նշան ՚ի վերայ միոյ ՚ի յօնիցն :”— “Ծնորհեա ինձ աղաչեմ, տիկին, ” ընդմիջեաց Քէնկինսն՝ որ մերձ կայր . “այլ հաճեաց ցուցանել ինձ՝ եթէ ունէր զշեկազոյն հերս :”— “Այս . կարծեմ այդպէս էր .” ասաց Առփիա :— “Եւ մսադիր եղեւ աղնուութիւն քոյ, ” շարունա-

կեաց՝ դառնալով առ Աեպուհն Ա իլիէմ, “Երկայնութեան բարձու ոտից նորա,”—“Չկարեմ հաստի լինել երկայնութեան նոցա,” ասաց Աեպուհն, “այլ հաստատ եմ զերագութենէն. զի յառաջեցին քան զիս, զոր սակաւք ’ի թագաւորութեանս կարծէի առնել կարէին :”—“Հաճեսցի աղնուութիւն քոյ,” ասաց Պ էնկինարն, “Ճանաչեմ զայրն. անշնուշ նոյն ինքն է ամենարագ վազողն յԱնգղիա. յաղթեաց նա Պինվայրին Կիւկաստըլայ. Տիմոթէոս Բաքստէր է անունն, Ճանաչեմ զնա քաջ, և զտեղի այժմեան թաքստի նորա : Եթէ հրամայեսցէ աղնուութիւն քոյ պարոն բանտապետին՝ տալ զերկուս յսպասաւորաց իւրոց գնալ ընդ իս, երաշխաւորեցից ածել զնա առ քեզ ’ի միոյ ժամու միջոցի յընգերկարն,” Յոյր վերայ կոչեցաւ բանտապետն, ցոր՝ ընդ յանդիման լինելն, եհարց Աեպուհն եթէ Ճանաչէր զինքն, “Այս. Հաճեսցի աղնուութիւն քոյ,” դարձոյց բանտապետն, “քաջ Ճանաչեմ զԱեպուհն Ա իլիէմ Թամանհիլ. և որ ոք գիտէ ինչ զեմանէ, ցանկայ աւելի ևս գիտելոյ,”—“Աղէ ուրեմն,” ասաց Աեպուհն, “իննդրուած իմ է որ Ծոյլ տայցես առնս այսմիկ ընդ երկուց սպասաւորաց քոյ՝ երթալ ’ի պատղամաւորութիւն իմն իմով հրամանաւ . և զի ’ի ձեւս իմ է պաշտօնաւարութիւն անդուրութեանն, դործ իմ եղիցի ապահովել զքեզ,”—“Խոստումն քոյ հերթք է,” պատասխանեաց միւսն, “և իսկոյն ընդ կամիլդ առաքեա զնոսա ընդ ըս-

վանդակ Անգղիա, երբ և ազնուութիւն քոյ ի ձահ
համարեսցի : ”

Համեմատ հաւանութեան բանտապետին, առա-
քեցաւ Պէնկինսն ի խնդիր Տեմոթէոս Բաքսակ-
րայ, ոյն ինչ արթնութիւն կրտաերագոյն տղայի
մերոյ Բիլայ՝ զբօսեցոյց զմեզ. որ նոր մոտանելով
ի ներքս, անկաւ զլանջօք Աեպուհւոյն առ ի համ-
բուրել զնա: Գնոց խակոյն մայրն խրատել զըն-
տելութիւն նորուն, այլ արգել զնա այրն արժա-
նաւոր, և նստուցանելով զմանուկին ցնցոտիկ որպէս
էրն՝ ի վերայ ծնդաց խրոց, “Ա” Բել, պարարտ
դող, չես մոռացեալ զհին բարեկամ քոյ Բուչէլ.
և դու Պ. նիկ, համեստ հինաւուրցդ իմ, աստ ես
դու, տեսանիցէք որ չեմ մոռացեալ զձեզ: ” Օսյս
ասացեալ՝ ետ անձնիւրոցն զմեծ կտոր կոճապղպե-
ղեայ կտապի. զոր սրտի մտօք կերին խղճուկքն.
քանզի յոյժ սակաւ նախաձաշիկ գտեալ էին յա-
ռաւօտուն :

Արդ՝ բազմեցաք ի ձաշ զողցես ցրտացեալ, այլ
յառաջազոյն՝ բազուկ իմ տակաւին ցաւազին ելով,
զբեցց Աեպուհն զպատուէր ինչ բժշկական, զի
պարագումն բժշկականութեան զբօսանք իմն էր
արարեալ ինքետն, և առաւել քան չափաւորա-
պէս հմտացեալ էր յարհեստին, առաքելով զայս
առ գեղագաճառ տեղւոյն, պատեցաւ բազուկ իմ,
և գտի զառժամայն գիւրութիւն: Ապաս հար մեզ
ի սեղանին բանտապետն ինքնին, որ յօժարակամ
մատուցանէր հիւրի մերում զամնայն զիւրովսան

զյարդանս : ԱՅԼ՝ նախ քան զվարիլ ձաշոյն ,
միւս պատգամաւորութիւն եկն յեղօրորդուոյ նորա ,
աղաչէլով շնորհել ինքեան յանդիման լինել՝ առ
ի արդարացուցանել զանմեղութիւն իւր և զպատիւ ,
ընդ որ աղաչանս հաւանեցաւ սեպուհն , և հրամայ-
եաց մուծանել զՊարոն Թառնհիլ :



ԳԼՈՒԽ ԼԵ

ՆԱԽԿԻՆ ԲԱՐԵՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՎԱՐԶԱՑՄԵԱԼ
ԱՆՇԿԱՌԻՆԵԼԻ ՇԱՀԻՆՔ :

ԵՐԵՒԵՑԻ Պարոն Թառնհիլ ժպտմամբ՝
որ հաղիւ երբէք պակասէր , և գնայր ողջագուրել
զհօրեղբայր իւր . զոր հերքեաց միւսն արհամար-
հանօք , “Աչինչ քծնութիւն առ այժմ՝ պարսն .”
զոչեաց սեպուհն խոժոռ հայեցուածով . “մի միայն
ձանապարհն առ սիրտ իմ՝ է ընդուղին պատուոյ .
այլ՝ աստ տեսանեմ միայն զխառն ցոյցս ստութեան ,
երկչուութեան , և բռնաւորութեան : Արովէս է ,
պարմն , որ խեղջ այրա այս՝ որոյ վասն զխում
դաւանէիր զբարեկամութիւն , զայս օրինակ ահա-
զորմաբար չարչարեալ է : Դրուստին անաբգաբար

դժբեալ՝ ՚ի տրիտուր հիւրընկալութեան, և ինքն
ինքնին արգելեալ ՚ի բանտի՝ թերես և առ զըժ-
դմնելոյն ընդ նախատինսն : Որդին ևս՝ որում եր-
կեար ՚ի դիմի հարկանել որպէս զայր —”

“Հնար ինչ է, տէր,” ընդմլջեաց եղբօրոր-
դին, “որ հօրեղբայր իմ գրեսցէ զայն ՚ի յանցանս,
յորմէ կրկնակի խրատք իւր միայն համոզեցին զիս
հրաժարիլ:”

“Յանդիմանութիւն քոյ իրաւացի է,” ասաց
Անդուհն Ա կիլիէմ: “գործեցեր յայսմիկ խոհեմու-
թեամբ և բարիոք . թէպէտ՝ ոչ որպէս հայր քոյ
առնէր . եղբայրն իմ արդարե՛ հոգի էր պատուոյ,
այլ գու—Այս . յայսմնուագի յոյժ բարիոք գոր-
ծեցեր . ընդ որ հաւանիմ ես մնձապէս :”

“Եւ յուսամ,” ասաց եղբօրորդին նորա, “որ
մնացեալն ՚ի վարուց իմոց՝ ոչ դացի արժանի դըս-
տովանաց : Երեեցայ՝ տէր, ընդ դատեր պարնիս
այսորիկ ՚ի տեղիս ինչ հասարակաց զբօսանաց,
զայս օրինակ՝ որ միանգամ զբօսասիրութիւն էր, ՚ի
զայթակղութենէ կոչեցաւ խստագոյն անուամբ, և
համբաւեցաւ եթէ զառածեցուցի զգուստը նորա .
Գնացի անձամբ անձին առ հայրն, յօժարակամ
առ ՚ի լուսաւորել զիբն ՚ի բաւարարութիւն նորա,
և ընկալաւ զիս նախատանօք միայն և թշնամա-
նօք : Որչափ առ մնացեալն, յաղազս լինելոյ
նորա ՚ի տեղւոջ՝ հոգաբարձու և գաւառապիտ իմ
կարեն քաջ ևս տեղեկացու յանել զքեզ . զի՝ ՚ի ձեռս
նոցա յանձնեալ եմ զկառավարութիւն գործոց

իմոց բոլորովին : Եթէ առեալ իցէ պարտս և անյօժար կամ անկարող խոկ հատուցանել , զործ նոցին է այսու եղանակաւ ՚ի դատ վարել . և ես զիստութիւն կամ զանիրաւութիւն չտեսանեմ ինչ ՚ի հետամուտ լինելն ամենօքինաւոր միջոցաւ դարձման գտանելոյ :

“Եթէ այս ,” ասաց Անպուհն Վիլիկմ , “է որպէս պատմեցերդ , ոչինչ աններեւելի դոյ ՚ի յանցանսդ , և թէպէտ արար քոյ առաւել առատաձեռն լիներ՝ ՚ի թոյլ չտալ պարնիս այսմիկ խոշտանգիլ յատորակարգեալ բռնաւորութենէ , այլ դռնեայ իրաւացի է :”

“Վչ կարէ նա ընդդիմաբանել միոյ ՚ի մասնաւորաց ,” ասաց Ասպեսն . “ընդդիմաբանեսցէ թողլ և յոգունք ՚ի ծառայից իմոց պատրաստ են վկայութիւն տալ որում ասեմն : Օ այս օրինակ , տէր ,” հետեւեցաւ ասել , աեւանելով զի լուելի , քանզի՝ յիրաւի՞ ոչ կարէի ընդդիմաբանել նման : “զայս օրինակ տէր , անմնլութիւն իմ արդարանայ , այլ թէպէտ՝ խնդրանօք քովլք պատրաստ եմ՝ ներեւել պարնիս զայլ ամենայն իվասս իւր , սակայն փորձ նորա առ ՚ի նուտզեցուցանել զաէր քո առ իս՝ ծնուցանէ ՚ի յիս զցասումն իմն՝ զոր չկարեմ սանձահարել : Վա՞ և ո՞յս յայնպիսում ժամանակի՝ երբ որդի նորա արգեամբք պատրաստիւր առնուլ զկեանս իմ , այս՝ ասեմն , այնպիսի իմն իվաս է՝ որ հաստատեալ եմ թողուլ օրինաց առնուլ զընթաց իւրեանց : Ահա հաւերն՝ զոր առաքեաց առ իս ,

և ունիմ զերկուս վկայս 'ի հաստատութիւն . մին
՚ սպասաւորաց իմաց կարեվէր խոցեալ է . և՝ թէն
հօրեղբայր իմ իսկ ՚ի հակառակն համազեսցէ զիս ,
զոր ոչ արասցէ գիտեմ , սակայն տեսից ես զար-
գարութիւն արարեալ , և կրեսցէ նա առ այնորիկ :

“Այ հրէշ ,” գոչեաց ամռասին իմ , “գեռ հերիք
չեղե՞ քեզ քոյդ վրէժինդրութիւն . այլ խեղձ
որդի իմ պիտի զգայ զանգթութիւն քոյ : Յուսամ
բարեսէր Անպուհն Ա իլիէմ պաշտպան եղիցի մեզ .
զի որդի իմ անմեղ է որպէս զերեխայ . հաստատ
եմ որ է , և ոչ երբէք վնասեաց ումեք :

“Տիկին ,” պատասխանեաց բարի այրն . “ցան-
կութիւն քոյ առ փրկութիւն նորա՝ ոչ մեծագոյն
ինչ է քան զիմն . այլ տիսուր եմ յայտնի յոյժ
տեսանել դյանցանն . և՝ եթէ կամակորեսցի եղ-
բօրորդի իմ —” Բայց երեսումն Պ էնկինսնի և եր-
կուց սպասաւորաց բանտապետին՝ փոխագրեցին արդ
զուշ մեր : որք մտին քարչելով ՚ի ներքս զբարձ-
րահասակ այր ոմն , ազնուաբար զգեցեալ , և 'ի
դէս գալով ստորագրութեանն արարելոյ զորիկայ-
էն՝ որ 'ի բաց տարաւ զդուստր իմ : — “Ահաւա-
սիկ ,” գոչեաց Պ էնկինսն , ձգելով զնա ՚ի ներքս .
“ահաւասիկ կալաք զնա . և՝ թէ երբէք հետամուտ
գոյր ոք Տայբըլնա , սա է մին : ”

Պ նդ տեսանել Պարոն Թառառնհիլայ զկալանա-
ւորն և զ Պ էնկինսն՝ որ ՚ի պահպանութեան ունէր
զնա , երեեցաւ շըտնուլ յետս զարհութանօք :
Թառաւ գոյն երեսացն իրազեկ յանցաւորութեամբ ,

և ցանելոյր խոյս տալ. այլ Պէնկինսն՝ որ խմացաւ զգիտաւորութիւնն, արգել զնա: “Օ ի՞նչ, ասպետ,” ասաց, “յամօթթ լինիս սակա երկուց հինաւուրց ծանօթից քոց՝ Պէնկինսնի և Բաքստերայ: Այլ այս է կերպն՝ որ ամենայն մեծ մարդիկ մոռանան զբարեկամս խւրեանց: Թէպէտ և հաստատեալ եմ, մեք ոչ մոռասցուք զքեզ: Կալանաւոր մեր, հաճեսցի ազնուութիւն քոյ,” շարունակեաց նա դառնալով առ Անպուհն Ակիլիէմ: “արդէն խոստովան եղե զամենայն: Այս է պարսնն կարեվէլ խոցեալ համբաւեալ. վկայէ՝ եթէ Պարոն Թառնհիլն էր՝ որ զառաջինն համոզեաց զինքն յոյս գործ: Եթէ նա ետ ինքեան զհանդերձնն զորս այժմ զգեցեալ է, առ ՚ի երեսիլ որպէս զպարոն: և հայթհայթեաց զկառսն սուրհանդակի: Զեն եգեալ ՚ի միջի նոցա էր՝ զի տարցէ սա ըզբամբիշն ՚ի տեղի ինչ ապահովի, և թէ անդ սպառնայցէ և երկեցուոցէ զնա: մտանելոց էր Պարոն Թառնհիլ ՚ի նմին ժամն՝ որպէս եթէ ըստ պատահման՝ ՚ի փրկութիւն նորա, և թէ մարտնչէին առ վայր մի և ապա փախչէր սա: որով լաւ ևս առիթ գտանէր Պարոն Թառնհիլ՝ շահելոյ ինքնին զսէր նորա որպէս զնորին պաշտպան:”

Յիշեաց Անպուհն զկրկնոցն զգեցեալ յեղօրսուուոյ խւրմէ, և զայլ մնացեալն կալանաւորն ինքնին հաստատեաց մի ըստ միոջէ պատմութեամբ: զբաւելով՝ թէ Պարոն Թառնհիլ ստեալ վկայեալ էր առաջի իւր, թէ սիրահարեալ էր ընդ երկու-

ցունց քերցն ևս ՚ի միասին :

“Ո՞վ երկինք՝” գոչեաց Աեպուհն . “որպիսի՛ իժ սնուցանէի ՚ի ծոցի խմում : Եւ այնպէս ցանկոցնդ ևս արդարութեան՝ որպէս երևեցաւն լինել : ԱՅԼ գտցէ ինքն . կաւ զդա Պարոն բանտապետ : ԱՅԼ՝ կաց , երկնչիմ չպուցէ օրինաւոր հաւաստութիւն արգելլոյ զնա :

Յոյր վերայ Պարոն Թառանհիլ կարի իմն հեղութեամբ աղերսեաց , զի մի երկու այնպիսի թշուառականք համարեսցին իբրև զբաւական հաւաստութիւնք ընդդէմ իւր . այլ՝ զի սպասաւորք իւր հարց ու փորձեսցին : “Ապասաւորք քոյ ,” դարձոյց Աեպուհն , “մի՛ ևս քեզ պէս թշուառականն զնոսա իւրն անուանեսցէ . բայց՝ եկ , տեսցուք զինչ նոքա ունիցին ասել , կոչեցէք զտակաւապետ նորա :

Խրբե եմուտ տակառապետն , վազվաղակի խմացաւ ՚ի հայեցուածոյ նախկին տեառն իւրոյ , զի ամենայն կարողութիւն նորա վճարեալ եր արդէն : “Ասա ինձ ,” գոչեաց Աեպուհն խոժոռ դիմօք , “տեսեալ ես երբէք զտէր քոյ և զայրն այն՝ զկեցեալ ՚ի հանդերձս նորա , ՚ի միասին յընկերակցութեան :”—“Այս , հաճեսցի ազնուութիւն քոյ ,” ասաց տակառապետն , “հազարիցս անզամ . սա է այրն՝ որ միշտ բերէր նմա զտիկնայս :”—“Օ իսրաք ,” ընդմիջեաց Պարոն Թառանհիլ կրտսերն , “այս ՚ի գէմս իմ :”—“Այս ,” դարձոյց տակառապետն , “ե ՚ի գէմս ու ե իցէ մարդոյ : Արդարն ասել քեզ ,

Պարո՞ն թառնհիլ, ոչ երբէք սիրեցի կամ հաճեցոյ ընդ քեզ, և ոչինչ փոյթ ունիմ արդ ասել քեզ զբասն մոաց խոց : ”—“Արդ ուրեմն,” ասաց Պէնկինսն, “ասա ազնուութեան նորա՝ եթէ գիտիցես ինչ զինէն : ”—“Ոչ կարեմ” ասել,” ասաց տակառապետն, “եթէ շատ լաւութիւնս գիտեմ զքէն : Ի զիշերին՝ յորում դուստր պարնի այնուրիկ խաբանօք բերաւ ՚ի տուն մեր, դու ևս մին է իր ՚ի նոցան՛ : ”—“Այսպէս ուրեմն : ” ասաց Ակլեկը Վեպուհն, “տեսանեմ” լաւ վկայ ես բերեալ հաստատել զանմեզութւնն քոյ . ով նախատինքդ մարդկութեան . Ընկերշակիլ ընդ այսպիսի թշուառական ոց : Այլ (շարունակելով զհարցուփորձ իւր) անացեր ինձ Պարո՞ն Տակառապետ, թէ սա էր այրն որ էր դգուստըն ծերունի պարնիս : ”—“Ոչ այդպէս, հաճեսցի աղնուութիւնն քոյ : ” պատասխանեաց տակառապետն, “ոչ սա երեր զնա, զի ասպետն ինքնին՝ յահձն էառ զգործն . բայց սա երեր զերէցն՝ որ կեղծեց պսակել զնոսսա : ”—“Եւ կարի քաջ յերսւի : ” ասաց Պէնկինսն . “ոչ կարեմ” ուրանալ զայդ . ոյդ էր խմ պաշտօն և խոստովան լինիմ ՚ի խայտառակութիւնն իմ : ”

“Ով Երկինք բարի,” զոչեւց Վեպուհն . “զիսրդ ամէն նոր վերերեսոյթ չարագործութեան նորա խոռոշոցուցանէն զիս : Ամ նայն յանցանք նորա քաջ յայտնի են արդ . և գտանեմ” որ կատ նորա թելաղբեցաւ ՚ի բռնաւորութենէ, յերկչութենէ, և ՚ի վրէժինեզրութենէ . խնդրանօք

իմովք Պարոն Բանտապետ արձակեա զղեռահասակ զինուորն՝ քոյ կալանաւոր . և վստահ լեր յիս առ հետևանացն : Գործ իմ եղիցի պարզել զբանն առաջի բարեկամի իմոյ գատաւորին՝ որ եդ զնա ՚ի զիալահոջ : ԱՅԼ ՞ուր է ապերջանիկ բամբիչն ինք-նին . տուք նմա երեխլ ՚ի գիմի հարկանել թշուա-ռականիս . անձկամ իմանալ որովք հնարիւք խո-տորեցոյց զնա : Աղաչեցէք դալ ՚ի ներքս : Ուր է նա ՚ "

"Ա՛խ , տէ՞ր . ." ասացի , "հարցումի այդ ՚ի սիրտ հարկանէ զիս . երանեալ էի երբեմն գտտերաւ մի-ով , արդարեւ . այլ աղէտք թշուառութեան ՚ո-րա—" ԱՅԼ իմն միջարկութիւն խափան եղե ինձ . զի ո այլ ոք կարէր երեխլ՝ քան զՕրիորդն Արա-քէլոյ Վելոթ , որ ՚ի միւսումաւուր ամուսնանալոց էր ընդ Պարոն Թառնհիլայ : Աչինչ կարէր հա-ռասարիլ հիացման նորա ընդ տեսանել զՄեպուհն Վ իլիէմ և զեղօրորդի նորա աստ առաջի իւր . քանզի գալուստ իւր բոլորովին գիպուածական էր : Պէտք եղեւ՝ զի ինքն և ծերունի հայր իւր անցա-նէին 'ի մէջ քաղաքին՝ գնալ ՚ի տաւն հօրտքեռ իւրոյ , որ պնդեալ էր կատարել զհանդէս հար-սանեաց նորա ընդ Պարոն Թառնհիլայ 'ի տան իւրում . այլ զկայ առնլով վասն կազզու բման , իջեանեցան ՚ի պանդոկի միում ՚ի միւս ծայր քա-ղաքին : Անդ ՚ի պատուհանէն նշմարելով բամբ-շին զմի ՚ի փոքրիկանց իմոց խաղալ ՚ի փողոցի , և իսկոյն առաքելով զալայակ ածել զմանուկն առ

ինքն , ուստաւ 'ի նմանէ զմամն թշուառութեանց մերոց , այլ տակաւին տգէտ մնաց Պարոն Շռառն հիլայ կրտսերոյ լինելոյն պատճառ այնորիկ : Շռէ-պէտե հայր իւր բաղմօք յանդիմանեաց զանվայ-ելութիւնն գնալոյ ՚ի բանտ ՚ի մեր այցելութիւն , այլ ոչինչ զօրեցին բանք նորին . խնդրեաց յե-րեխայէն առաջնորդել ինքեան , զոր արար նա . և զայս օրինակ էր՝ որ ապշեցոյց զմեզ այսպիսի անակնունելի միաւորութեամբ :

Եւ ոչ խոկ կարեմ յառաջել՝ առանց խոկալոյ ՚ի վերայ գիպուածական պատահմանցա այսոցիկ . որք թէպէտ յամենայնում աւուր պատահին , հա-զիւ զարմացուցանեն զմեզ՝ բայց ՚ի նորանշան պա-տահարս : Արալիսի պատահական զուգնթացութեան չափարախմք մեք զբոլոր բերկրութիւն և զհեշտու-թիւն կենաց մերոց : «Քանի քանի երեւութական պատահարք պիտի միաբանիցին՝ յառաջ քան զկա-քողանաւ մեր զգեստաւորիկ կամ կերակրիկ : » Եւ նականն պիտի հաճիցի աշխատիլ , տարափին պիտի տեղալ , հողմն ըսուլ զառագաստ վաճառականին , ապա թէ ոչ բաղմութիւնք կարօտասցին սովորա-կան նպաստից :

Լուռ կացաք ամենեքին մեք զմայրկեանս ինչ . այն ինչ գեղազէշ սան իմ՝ որով կոչմամբ ան- ուանէի միշտ զբամբիշն , միաւորեաց ՚ի հայեցուածո իւր զկարեկցութիւն և զհիացումն . որք նո- րանոր կատարելութիւնս ետուն զեղեցկութեան նո- րա : «Արդարե՛ , սիրելիք իմ Պարոն Շռ ոռնհիլ»

ասաց առ ասպետն, զոր համարէր եկեալ յօդ-նութիւն ժամանել և ոչ 'ի խոշտանգել զմեղ։ “փոքր ինչ անշնորհ երեխ ինձ դալուստ քոյ այսրէն առանց իմ, և առանց երբէք ծանուցանելըդ ինձ զվեճակէ զերդաստանի միոջ՝ այսչափ սիրեցելոյ մեզ երկոցունց, գիտես՝ զի որչափ քեզ նոյնչափ և ինձ հաճելի եղիցի ձեւն տալ թեթեռութեան յարգելի ծեր վարժապետի խմբ որ աստ՝ զոր միշտ յարգեցից։ Բայց տեսանեմ՝ զի հօրեղը բօրդ պէս և դու հաճութիւն զգաս ՚ի բարեգործութեան ՚ի ծածուկ։”

“Ե՞ս հաճութիւն զգայ ՚ի բարեգործութեան, ” զոչեաց Աեպուհն Ա իլիէմ, ընդմիջելով զնա։ “Քաւ, սիրելիդ իմ, հաճութիւնք նորա այնպէս վատ են որպէս ինքն։ Տեսանես ՚ի նմա՝ տիկին։ զիտարեալ անօրէն՝ որ երբէք նախատինս էած մարդկութեան։ Ձաշուառական մի, որ՝ յետ զառածեցուցանելոյ զգուստը խեղձ՝ առնա այսորիկ, յետ գարան գործելոյ անմղութեան քեռ նորին, արկեալ է զհայրն ՚ի բանտ և զանգրանիկ որդին ՚ի շղթայս։ Վասն զի արիացաւ նա ՚ի գիմի հարկանել դաւաճանին։ Եւ թոյլ տուր ինձ, տիկին։ խնդակից լինել արդ ընդ քեզ՝ սակս զերծանելոյդ ՚ի զրկաց այսպիսի Ճիւաղի։”

“Ո՞վ բարութիւն, ” զոչեաց նազելի աղջիկն, “զիանրդ պատրեալ եղէ։ Պարոն Ձաւոնհիլ ծառոյց ինձ հաստատապէս, թէ անդրանիկ որդի պարնիս՝ Հաղարապետն Պրիմիոզ, չուեալ եր յԱմ-

րիկա ընդ նորապակ ամուսնոյ իւրոյ : ”

“**Քաղցրիկ Օրիորդ**,” ասաց ամուսինս . “ասութիւն նորա բոլորովին ստութիւն է : Գեղորդ որդին իմ ոչ երեկք հեռացաւ ՚ի թագաւորութենէս, և ոչ պատկեցաւ երեկք : Յէկէտեւ գու լքեր զնա, ինքն յոյժ սիրեաց զքեզ միշտ՝ առ ՚ի զայլս ածելոյ զմուաւ . և լուեալ եմ զնա ասել, եթէ ամուրի մեռանէր ՚ի պատճառս քոյ : **Յառաջացաւ ապա նազաբանել** ’ի վերայ սնկեղջութեան սիրոյ որդւոյ իւրոյ, զմենամարտութիւն նորա ընդ **Պարոն Շառնհիլայ** պարզաբանեաց, անտի խոտորեցաւ արագալէս յանաւակութիւնս ասպետին, ’ի կեղծուալատիր ամուսնութիւնս նորա, . և զրաւեաց կարի իմն նախատակոծ նկարագրութեամբ անարութեան նորա :

“**Երկինք բարի** .” գոչեաց **Օրիորդն Ալլմոթ**, “զինրդ մերձ եղէ ես յափն աւերման : **Բիւրաւոր** ստութիւնս ասաց ինձ պարոնս ոյս : ’ի վաղձանի հերիք հնարս ունեցաւ համոզել զիս՝ թէ ուխտ իմ առ մի միայն այլն՝ զոր նախանձար ընտրեի, ոչ ես էր պարաւանդական, այնու զի անհաւատարիմ եղեալ էր նա : **Ատութեամբ** նորա ուսայ ես ասել զմին՝ միապ’ ո քաջ և առ ուսափիրտ :

ԱՅԼ՝ զայսու ժամանակաւ ազատեցաւ որդի իմ ՚ի կապանաց արդարութեան, որովհետեւ այլն՝ վերաւորեալ կարծեցեալ, յոյն եցաւ խաբերայ գոլ : **Պարոն Պէնկինսն** ես՝ որ զմենեկապետին տարեալ էր զպաշտօն, սափիրեալ էր զհերս նորա, և հայթ-

հայթեալ որ միանգամ հարկաւորն էր առ շնորհաւ-
շուք երեման : Եմուտ ուրեմն ՚ի ներքս զեղեցկա-
պէս զգեստաւորեալ զինուորականօք իւրովք . և
առանց սնապարծութեան , (զի ՚ի վերոյ եմ այնը ,)
այնքան զեղեցիկ երևեցաւ . քան զոր երբէք տե-
սեալ էր իմ ՚ի զինուորական զգեստս : Իրրե եմուտ՝
մատոյց (Օրիորդին Ա իլմօթայ զպարկեշտ և զհեռա-
ւոր խնարհութիւն . քանզի՝ գեռ չէր տեղեկացեալ
փոփոխութեանն՝ զոր ճարտարախօսութիւն մօր իւ-
րոյ արարեալ էր յիւր շնորհ : Ա Յ Հ Ո ՞չինչ պար-
կեշտական պատշաճաւորութիւն կարէր սանձահա-
րել զանժուժութիւն շառագնեալ սիրուհւոյ նորա ,
առ ՚ի զիներումն գտանել : Արտասուք իւր , հայ-
եցուածք իւր , ձեռն ետուն բոլորն յայտնել զիս-
կական զգածմունս սրտի նորա , սակս զմոռացու-
թեամբ հարկանելոյն զնախկին խոստումն իւր , և
թոյլ տալոյ խարեբայի միոջ պատրել զինքն :
Հիացեալ երե եցաւ որդի իմ ընդ յօժարամպու-
թիւն նորա , և հազիւ կարէր ճշմարիտ համարել
զայն : “Անշնչշտ , տիկին ,” ասաց . “անբջական
տեսիլ է այս : Ա երբէք արժանաւորեցայ այս-
միկ : Օ այս օրինակ երանեալ լինել , է կարի յոյժ
երջանկանալ :”—“Ա չ ոչ .” գարձոյց նա . “պատ-
րեցայ , անարդաբար պատրեցայ ես . ապա թէ ոչ ,
ոչինչ զիս անիրաւ առնել կարէր խոստման իմում :
Գիտես զբարեկամութիւն իմ , ՚ի վաղուց հետէ զի-
տացեր զայն . այլ՝ հար զմոռացութեամբ զոր ա-
րարիս , և որպէս ուխտեցի քեզ երբեմն զկաթու-

գին անդրդուռւթիւն իւմ, զնոյն և արդ երկրորդեցից . և հաստատ լեր՝ եթէ Արաբէլայն քո չկարացի լինել քոյն, ոչ եղիցի այլում երբէք ,”— “Եւ ոչ որուք եղիցիս ,” ասաց Անալուհն Ալիլիէմ . “Եթէ որուք կարողութիւն ունիցիմ ընդհօր քում :”

Ակնարկութիւնս այս հերիք եղեւ որդւոյ խնոյ Վովսիսի , որ խկոյն սրացաւ ’ի պանդոկին՝ ուր ծերունի պարոնն էր, զեկուցանել նմա զամենայն անցից պատոհելոց : **Այլ ՚ի նմին ժամանակի նըշ մարելով Ասպետին ,** որ յամէն կուսէ վճարեցաւ վասն իւր , գտանելով այժմ՝ որ ոչինչ յոյս մնայր ՚ի շողոքորդութենէ , վերջաւորեաց՝ թէ խոհականագոյն եղանակն եղիցի դառնալ և ՚ի գիմք հարկանել հալածողաց իւրոց : **Օ այս օրինակ ՚ի բաց եգեալ զամենայն ամօթ ,** յայտնի երեեցաւ ժպիրհ անզգամբ : “Քեսանեմ ուրեմն ,” ասաց , “որ չեք ինձ արդարութեան ինչ ակն ունիլ աստին . այլ հաստատեալ եմ ինձէն ՚ի ձեռս բերել զայն : **Գիտացես՝ պարոն ,”** գառնալով առ Անալուհն Ալիլիէմ . “զի այլ ոչ ևս կախիմ զշնորհաց քոց՝ որպէս զկարօտեալ : **Արհամարհեմ զայնոսիկ :** Աչ ինչ ՚ի բացեայ ունիլ յինէն կարէ զօժիտ (**Օրիորդին**) Ալիլմօթայ . որ՝ շնորհակալ եմ զանդուլ ջանից հօր նորա , բաւական է , **Պայմանագիր և ձեռնազբեալ մուրհակն վասն օժտի նորա ,** ապահով՝ ՚ի ձեռս իմ է : (**Օժիտ նորա** և ոչ անձն , էր որ հրապուրեաց զիս յանկալ այսմ զուղաւորու-

թեան , և ունելով զմին՝ թող զմւսն ով կամի տարցէ : ”

Ահաղին էր հարուածն : Տեղեակ էր Աեպուհն Ա իլեմարդարութեան պահանջմանց նորա , քանզի ինքն էր ձեռնտու լեալ ինքնին ձեազրել ըդ պայմանագիր հարսանեացն : “ Աշմարելով ուրեմն Օրիորդին Ա իլմօթայ , թէ օժիտ իւր անձարաւ պէս ՚ի կորուստ մատնեցաւ , դառնալով առ որդի իմ եհարց՝ եթէ կորուստ օժտին նուազեցուցանէր զյարդ իւր : “ Ձեպէտ օժիտ : ” ասաց , “ արտաքոյ իցէ կարողութեան իմայ , ունիմ զոնէ զձեռս իմ մատուցանել : ”

“ Եւ այդ , տիկին : ” ասաց խեկական սիրական նորա , “ էր արդարեւ ամենայն զոր ունեիր տալ . զէթ զայն ամենայն զոր երբէք արժան համարեցայ ընկալնուլ : Եւ վկայ եղլցին ինձ , իմ Աւաբելոյ , ամենայն որ երջանիկ իցեն , պակասութիւն օժտի քոյ՝ առաւելու յայսմ վայրկենի զհաճութիւն իմ : Քանզի պիտոյանայ ապացուցանել քաղցրիկ աղջկանդ՝ զանկեղծութենէ իմմէ : ”

Ա տանելով արդ Պարոն Ա իլմօթայ , ոչ սակաւ ուրախացեալ երևեցաւ ընդ զերծումն զստեր իւրոյ ՚ի մօտալուտ վտանգէն . և մօտագիւր հաւանեցաւ ընդ քակտումն հարսանեացն : Բայց իմանալով որ պաշտատական նորա՝ որ մօւըհակաւ ապահովեալ էր ՚ի Պարոն Ձառնհիւայ , ոչ գարձուցանիւր յետս , ոչինչ կարէր անցանել քան զյուսաբեկութիւն նորա : Ետես արդ՝ որ բոլոր վող

իւր պիտեր գնայլը փարթամացուցանել զայնալիսի
ոք՝ որ լստ ինքեան չունէր զինչս : Արբեր հան-
դուրժել անզգամնոթեան նորա, այլ պակասել
փխարինի պաշտատականի դստեր իւրոյ՝ օշնդր
էր : “Եստաւ ուրեմն զվայրկեանս ինչ զբաղեալ
ի խիստ զկծեցուցիչ խոկմունս, մինչև Անպուհն
Ալիլիմ՛ զուն զործեաց նուազեցուցանել զնեզր-
տութիւն նորա : “Պարտ է ինձ խոստովանիլ,
պարո՞ն .” ասաց, “որ արգեան յուսաբեկութիւն
քոյ՝ ոչ բոլորովին տհաճեցուցանէ զիս : Անյագ
սէր քոյ առ ճոխութիւն՝ արգաբապէս պատուհասի
արդ : Բայց՝ թէպէտ բամբիչն հարուստ չկարիցէ
լինել, տակաւին հերիք բաւականութիւնս ունի
պիտոյից առ ի շատանալ : Տեսանես ահա զհամեստ
զինուոր մի՝ որ յօժար է առնուլ զիա առանց
օժտից . ի հարուստ ամանակաց հետէ սիրեալ են
զերեարա . և առ բարեկամութեան իմում՝ որ առ
հայր նորա, իմովսանն ջանք ոչ պակասեցին ’ի
յառաջադիմութիւն նորա : Թաղող ուրեմն զիառաւ-
սիրութիւն՝ որ յուսաբեկ առնէ զքեզ . և թաղ
արա առ անզգամ՝ մի այնմ երջանկութեան՝ որ ’ի
խնդիր է քումրէ ընդունելութեան : ”

“Անպահդ Ալիլիմ՛” պատասխանեաց ծերունի
պարոնն, “Հաստատ լեր՝ ոչ երբէք բռնագատեցի
զյօժարութիւն նորա, և ոչ արդ արարից : Եթէ
տակաւին սիրէ զառոյդ պատանեակս այս, թաղ
ասցէ զնա բոլորով սրախւ իմով : Փառք Աստո-
ծոյ, զոյ տակաւին մասնաւոր ինչ մնացեալ, և

խոստումն քոյ յաւելցէ յայն և ես, Ա՛խայն թռղ
հինաւուրց բարեկամի խմոյ՝ (նշանակելով զիս,)
խոստանալ ինձ, բաժին տալ դստեր խմոյ զվեց
հազարս ոտերլինաց, և թէ երբէք հասանիցի մե-
ծութեան իւրում, և ես պատրաստ եղէց 'ի սմին
խակ գիշերի՝ առաջինն լինել 'ի միացուցանել զնոսա:

Որովհետեւ ինձ մնայր արդ երջանկացուցանելոյ
զմատաղաւուրց զուգակիցն, յօժարամիտ ետու
զխոստումն՝ բաժին տալոյ որում ցանկանայր + որ՝
այնալիսի ուրումն որ ոչինչ ակնկալութիւնս ուներ
որպէս զիս, ոչ մեծ ինչ էր շնորհ: «Օ ուարձացաք
ուրեմն արդ՝ տեսանել զնոսա թռչել 'ի զիրկս իրե-
րաց յափշտակութեամբ: «Յետ ամենայնի թշուա-
ռութեանց խմոց՝» զոչեաց որդի իմ Գչէորդ, «զայս
օրինակ պարզեատրիլ: Արդարեւ առաւել է այս՝
քան զոր երբէք վստահանայի յուսալ: Ատացեալ
լինել ամենայնի որ բարին է, և յետ այսքան
ընդերկար միջոցի ցաւոյ: Եռանդադե՛ն ցանկու-
թիւնք իմ ոչ այսքան 'ի վեր խոյանալ կարէին
երբէք:»

«Այս, Գչէորդի իմ:» դարձոյց սիրալիր հարսն
նորա: «Թռղ արդ թշուառականին առնուլ զմե-
ծութիւնս խմ: որովհետեւ երջանիկ ես զու առանց
այնորիկ, նոյնակէս եմ և ես: Ո՞վ, որպիսի՛ փո-
խանակութիւն արարի: յամենավատթարագոյն
առնէն՝ 'ի պատուականագոյն, բարեգոյնն: Թռղ
վայելեսցէ նա զմեծութիւն մեր: երջանիկ եղէց արդ
ես և 'ի չքաւորութեան:»—«Եւ ես՝ խոստանամ

քեզ՝" ասաց ասպետն չարամիտ հենգնութեամբ . " զի և ես շատ երջանիկ եղեց՝ ընդ որ դուդ արհամարհես : " — " Այց , կաց , պարո՞ն . " գոչեաց Պէնկինսը . " առ այդ զերկու բառ ունիմ՝ ասելոյ : Որչափ առ պաշտառական բամբշի այնորիկ՝ ոչ երեք խուիցես և ոչ ՚ի դանդ մի : — Հաճեաց , աղնիւտեր . " շարունակեաց առ Անպուհն Ալիլիկմ : " կարող է ասպետն ունել զպաշտառական բամբշիս , եթէ ամուսնացեալ իցէ ընդ այլում : " — " Օ խարդ կարես զայրպիսի պարզ հարցումն արկանել , " պատասխանեաց Անպուհն , " աներկըսայ ոչ " — " Տիտոր եմ վասն այդորիկ . " ասաց Պէնկինսն , " զի որովհետեւ պարոնս այս և ես հինաւուրց խաղընկերք եղաք , բարեկամութիւն ինչ զգամ վասն նորա : Այլ պիտի ինձ խոստովանիլ՝ թէե յոյժ սիրեմ զիս , զի դաշնադիրս այս չարժէ և ոչ զմի ծխահեղոյս . քանզի արդէն ամուսնացեալ է : " — " Այսեւ որպէս զեղեռնաւոր , " դարձոյց ասպետն՝ որ զգրզըռեալ երեկցաւ ընդ այս ոտնհարութիւն . " ոչ երեք օրինօք պատկեցայ ես ընդ կնոջ ուրովք : "

" Խրաւի՛ ինդրեմ ինձ ներես , " պատասխանեաց միւսն , " պատակեալ ես դու , և յուսամ որ պատշաճաւոր վոխարինութիւն բարեկամութեան դարձուցես համեստ Պէնկինսնի քում . որ բերեքեղ զիկն . և եթէ հանդիսականքս առ վայր մի սանձահարեցն զհետաքրքրութիւն իւրեանց , տեսանել տեսցեն զնա : " Օ այս ասացեալ՝ մեկնեցաւ սուլորական սրնթացութեամբ իւրով , և եթող

զմլղ զամենեսին՝ անկարողս ձևացուցանելոյ զհաւանական ինչ ենթադատութիւն զգիտաւորութենէ իւրմէ : “Ե՞՞հ, թող երթայ ,” ասաց ասպետն . “զոր միանգամ արարեալ իցեմ , յայգմ անփոյթ եմ , Ո՞եծացեալ եմ արդ յոյժ , առ ի ահարեկիլ խրտուիլակօք : ”

“Հիանամ ,” ասաց Աեպուհն . “զի՞նչ կամլիցի սա նշանակել այսու : Երւաստախոհ խաղ ինչ կարծեմ :”—“Քաւցէ , տէր :” ասացի ես , “առաւել կարեոր գիտաւորութիւնս ունիցի : Քանզի՞ յորժամ խորհիմք ՚ի վերայ պէսպիսի հնարից՝ զոր սպարոնս այս լարեալ է ՚ի թակարտել զանմեղութիւն , թերեւս և մին՝ առաւել հնարագէտ քան զայլս , կարացեալ իցէ ՚ի պատրել զնա : Յորժամ զմտաւ ածեմք զորքան բազմութիւնս աւերեալ է , քանի՞ քանի ծնողք զգան արդ վշտագնեալ՝ զլատահամբաւութիւն և զպղծութիւնն զոր երեր նա ՚ի տունս իւրեանց , ոչի՞նչ զարմացայց եթէ մին ՚ի նոցանէ :—Ո՞վ սքանչելեացս : Տեսանեմ զկորուսնեալ գուստըն իմ : Ընդգրկեմ զնա : Ե՞ , է . իմ կեանք , իմ երջանկութիւն , Ես զքեղ կորուսեալ վարկայ , Ըլեվիսյդ իմ : այլ տակաւին ունիմ զքեղ , և տակաւին սովորեացիս երջանիկ առնել զնս ” Եռանդագին յափշտակութիւնք ամենասխանգակառ սիրահարաց՝ ոչ բուռն ինչ եղեն քան զիմն , իբրև տեսի զնա մուծանել զերեխտյն իմ : և կալայ զզուստրս ՚ի զրկի խմում : որոյ լուռթիւն և եթ՝ բարբառէր զմոացն յափշտակութիւն : “Եւ զարձար՝ սիրեցեալզ իմ :

միսիթար լինել ծերութեան իմաց ։՝—“Այս, այս,”
դարձոյց Պէնկինսն . “և զզուեա զնա յոյժ, զի
անըիծ դուստր է իսկ քոյ, և քան զոր պարկեշ-
տագոյն չիք ՚ի բոլոր սենեկիս՝ ո ոք և իցէ միւսնու
Եւ որչափ առ քեզ՝ ասովետ, ինչպէս որ դու
հաստատապէս կանգնիս այդանօր, բամբիշ այս է
օրինաւոր պատկեալ ամուսին քոյ . և առ ՚ի ցու-
ցանել քեզ թէ ոչ այլ ինչ խօսիմ բաց ՚ի ճշշ-
մարտութենէ, ահա վկայականն՝ որով ամուսնա-
ցոք ընդ իրեարս ։՝ Այսպէս ասացեալ՝ եդ զվեյա-
ականն ՚ի ձեռու Ապուհւոյն, որ կարգաց և բոլո-
րովին կատարեալ եղիս : “Եւ արդ՝ պարնայք,”
շարունակուց, “տեսանեմ զի զարմացեալ էք ընդ
այս ամենայն . այլ՝ քանի մի բառք պարզաբանեա-
ցեն զբժուարութիւնն : Օ ի ասպետն այն համբաւ-
աւոր, որոյ համար մեծ բարեկամութիւն ունիմ—
բայց այդ ՚ի միջի մեր է—բազմիցս վարեաց զիս
՚ի փոքրիկ գործառնութիւնս ինչ չնչինս վասն ին-
քեան : ’Ի միջի այլոց պատուիրեաց ինձ ճարել
զսուտ վկայական և զչեք երէց առ ՚ի պատրել ըզ
բամբիշ այս : Այլ՝ զի սերտ բարեկամ իւր էի,
զինչ արարի՝ բայց զնացի և բերի զՃշմարիտ երէց,
և պատկեցի զնոսա՝ որքան շուտ որ փիլոնն կարո-
ղացաւ կատարել : Կաւցէ մասճիցէք թէ առատա-
սրտութիւն իմն էր որ առնել ետ ինձ զյս : Այլ
ոչ Յամօթ երեսացս խոստովանեցոյց, գիտումն իմ
միայն՝ էր պահել զվեկայականն, և տալ ասպետին
իմանալ որ երբ և կամք լինէր ինձ, կարող էի հաս-

տատել զայն յիւր վերայ . և զայս օրինակ ՚ի վայր
բերել զնա՝ երբ փող լնելը ինձ հարկաւոր : ” Զայն
բերկրութեան երեեցաւ արդ լնուլ զսենեակն ող-
ջայն . ցնծութիւն մեր եհաս մինչ ՚ի հասարակաց
դահլիճն խել , ուր բանտարկեալք ևս միաբանեցան :

· · · · Եւ շարժլեցին զշղթայս իւրեանց ,
Օ մայլմամբ և խոշոր միաբանութեամբ :

Ուրախութիւնն տարածեցաւ յամենեցուն ՚ի գէմս ,
և Օլեվիայ խել այտք երեեցան զուարթացեալ
հաճութեամբ : Այս օրինակ նորոգիլ ՚ի համբաւ ,
՚ի բարեկամն , և առ բազդ միանգամնյն , զմայլումն
ինն էր՝ բաւական առ ՚ի կասեցուցանել զյառաջա-
դիմութիւնն տկարութեանն , և անդքէն դարձուցա-
նել զնախկին առողջութիւնն և զուարթամութիւնն :
Այլ թերես յամենեցունց միջի չգոյր ոք՝ որ զգայր
զանկեղծագոյն բերկրութիւնն , քան զիս : Տակաւին
ունելով զամենասիրելի երեխայն ՚ի գիրկս խմ , հար-
ցանէի սրտի իմայ՝ եթէ ոչ զմայլմաւնքս այսոքիկ
ցնորք ինչ էին : “ Օ խարդ կարացեր , ” ասսցի ,
դառնալով առ Պէնկինսն , “ զիարդ կարացեր յաւե-
լուլ ’ի տառապանս խմ՝ սլատմութեամբ մահուան
սորա : Այլ սակայն չէ ինչ . բերկրութիւն խմ առ
կրկին ստացումն նորա , առաւել ևս փոխարինէ ընդ
ցաւոյն : ”

“ Որչափ առ հարցումք : ” պատասխանի արար
Պէնկինսն , “ հեշտեաւ պատասխանեալ լինի : Հա-
ւանականագոյն եղանակն զերծուցանելոյ զքեզ ՚ի

բանտէ՛ կարծեցի էր հնազանդելովդ ասպետին , և
հաւանելովդ ամուսնութեան նորա ընդ միւսոյ
բամբչի : Այլ ուխտեալ էիր չնորհել երբէք այդ-
միկ՝ որքան գուստը քոյ կենդանի էր . վասն որոյ
չմնայր այլ ինչ զբանն աջողելոյ , բաց ՚ի հրապու-
րելոյ զքեզ՝ եթէ մեռեալ էր նա : Համոզեցի զամու-
սին քոյ միաբանիլ ՚ի պատրոզութիւնն , և քան զայս
պատեհագոյն այլ չգտաք զպարապ փարատելոյ ըզ
պատրանս քոյ , ”

՚Ի բոլոր ակմբին՝ միայն երկու դէմք երեւէին
չխայլել յափշտակութեամբ : Անկաւ վստահութիւն
Պարոն Թառնհիլայ բոլորովին , ետեօ արդ զխորա
վատանունութեան և կարօտութեան առաջի իւր ,
և գողայր արկանել զանձն : Ա ասն որոյ՝ ան-
կաւ առ ոսս հօրեղբօր իւրոյ , և ձայնիւ իմն մոր-
մոքեցուցիչ եղկութեան աղերսեաց զգութ նորա ,
Գնաց Անպուհն Ա իլիէմ հերքել զնա ՚ի բաց ,
այլ խնդրանօք իմնվք համբարձ զնա ՚ի վեր . և
յետ մնալոյ առ վայր մի , “ Առլութիւնք քոյ ,
յանցանք և ապերախտութիւնդ , ” ասաց , “ չե՞ն
արժանի զթութեան , սակայն ոչ միանգամայն
լքեալ լիցիս . չափաւոր իմն մատակարարեսցի քեզ՝
նպաստել պիտոյից կենացդ , բայց ոչ յիմարու-
թեանց նորուն , Բամբիշա այս ամուսին քոյ , ստա-
ցեալ տիրեսցէ երիր մասին մեծութեան այնմիկ՝
որ երբեմն էր քոյն . և ’ի գորովոյ նորա միայն
պիտի քեզ ակն ունիլ առաւելագոյն նպաստից առ
յապայս : ” Գնաց նա արտօյայտել զերախտազի-

առութիւն իւր արուեստակեալ բանիւք . այլ արգել զնա Անպուհն . հրամայելով չառաւելու զանարդութիւն իւր , որ կարի յոյժ յայտնի էր արդէն : Ընդ նմին հրամայեաց նմա մեկնիլ , և 'ի բոլոր սպասաւորաց իւրոց առաջնոց , ընտրել զմին զոր յարմար համարեսցի . որ էր բովանդակն որ շնորհիւր սպաս հարկանելոյ ինքեան :

Խակոյն ընդ մեկնիլ նորա , յառաջ մատեաւ ժպամամբ Անպուհն Ա իլիէմ' յոյժ քաղաքավարութեամբ առ նորեկ նու իւր , և շնորհաւորեաց զիս : Օրինակի նորա հետեւցան Օրիորդն Ա իլմօթ և հայր նորա . ամուսինս ևս համբուրեաց զգուստը իւր կարի խանդաղատանօք . որովհետեւ՝ ըստ ասութեան իւրում , պարկեցած կին եղեալ էր արդ : Առփիա և Առովսէս հետեւցան ՚ի կարգի . և մեր բարերար Պ էնկինսնն ևս խնդրեաց զշնորհ ընդունելութեան իւրոյ ՚ի պատիւն : Բաւարարութիւն մեր անկարեոր երեկը աւելանալոյ : Անպուհն Ա իլիէմ' , որոյ մեծագոյն հաճութիւնն էր զբարիս առնել , հայեցաւ արդ շըջանակի՝ գիմօք պարզ որպէս զարեգակն , և զոչինչ ետես բաց ՚ի ցնծութենէ ՚ի գէմն բոլորից՝ քաւ ՚ի գտներէ իմմէ Առփիայ . որ՝ պատճառաւ իմիք որում հասու լինել չկարէաք , բոլորովին բաւարարեալ չերեկը : “Կարծեմ արդ ,” ասաց ժպամանօք , “որ ամենեքին առհասարակ՝ բաց ՚ի միոյ կամ յերկուց , բոլորովին ուրախ են : Անայ ինձ միայն զգործ մի արգարութեան զործել : Գիտակ ես , պարո՞ն ,” շարունակեաց դառնաւ-

լով առ իս ։” զպարտաւորութենէ մերմէ՝ զոր պարա-
տիմք մեք երկոքեանքս Պարսն Յ էնկինսնի . և ար-
դարացի եղցի մեզ երկոցունց վարձատրել զնա առ
այնորիկ . (Օրիարխն Աստիա՝ հաստատ եմ՝ յոյժ եր-
ջանիկ արասցէ զնա . և ես տաց նմա զհինդ հարիւրս
սաերլինաց՝ որպէս զպաշտատական նորա . և հա-
ւասաի եմ՝ որ այսու յոյժ միմթար կարող են
ապրել ’ի միասին : Ե՛կ՝ (Օրիմրդ Աստիա . զի՞նչ
տսես առ այս խնամախօսութիւն իմ՝ Առցես զնաւ”
Խեղջ աղջիկն գողցես անկանիլ երևեցաւ ՚ի գիրկս
մօր իւրոյ՝ ընդ զարհուրատեսակ առաջարկութիւնն ,
“Առնուլ զնա , տէր .” ասաց գաշն ձայնիւ . “ոչ .
ոչ երբէք .”—“Օ ի՞նչ .” գոչեաց նա կրկին , “ոչ
առցես զՊարսն Յ էնկինսն՝ զբարերար քոյ , չըք-
նազագեղ պատանի մի հինդ հարիւր ստերլինովք
և բարի ակնկալութեամբք .”—“Աղաչեմ զքեզ ,
տէր .” դարձոյց նա՝ հազիւ կարելով բարբառել .
“զի գադարեսցիս . և մի առաւել վշտացուսցես
զիս այսդոյն ։”—“Տեսաւ երբէք այսպիսի կամա-
կորութիւն .” գոչեաց նա վերտանին , “ապասել առն
միում՝ որում զայնքան մեծ երախտազիսութիւն
պարտական են ընտանիքն համայն . որ ապրեցու-
ցեալն է զքոյր քոյ , և ունի զհինդ հարիւրս ստեր-
լինաց : Օ ի՞նչ , առցես ոչ զնաւ :”—“Բաւ , քաւ
լիցի ինձ երբէք .” պատասխանեաց նա զայրագ-
նեալ . “առաւել շուտով յօժարեցայց մեռանիլ :”
—“Եթէ այսպիս իցէ , ուրեմն ,” ասաց , “եթէ ոչ
առցես զնա , կարծեմ ես ինքնս պիտի առնուցում

դքեզ՝” Եւ զայս ասացեալ՝ կալու զնա եռանց
գեամբ ՚ի զիրկո իւր : “Ամենանազելին և ամենակա-
տարեալը յազգիանց .” ասաց . “զիամրդ հնար էր
քեզ երբէք կարծել՝ եթէ Բոչէլ քոյ դժրէր
քեզ . կամ՞ թէ Աեպուհն Ա իլեհմ Թառնհիլ
դարձարէր երբէք յըզմայլերոյ սիրով ընդ սիրունն
որ սիրէր զինքն վասն ինքեան միայն : Խնդրեցի
զաման ձիզս գտանել զիին , որ տգէտ զՃոխութենէ
իմ՛մէ , համարեցէր զիս ունիլ զարդինս որպէս ըզ
մարդ : Յետ ՚ի զուր փորձերոյ ես և ՚ի միջի խե-
ռաբարոյից և տգեղաց , զիամրդ մեծ ՚ի վաղձանի
զմոյլոյ մն իմ իցէ տիրապետերոյ այսպիսի խելաց
և այսպիսի երկնացին գեղեցկութեան : ” Ապա դառ-
նալով առ Պէնիլինսն , “Արովհեան չկարեմ ես
ինքն՝ պարմն , անջատիլ ՚ի բամբշէ աստի յայս-
մանէ՝ քանզի ախորդեալ էնա ընդ ձև գիմոց իմց ,
ամենայն զոր ՚ի փոխարէն տալ քեզ կարսցից ,
եղիցի պաշտամական նորա , և երթիջիր ՚ի վաղիւն
առ զաւառապետ իմ վասն հինդ հարիւրոց ստեր-
լինոց : ” Օ այս օրինակ հարկ եզե մեզ դառնալ
վերասին ՚ի յարգութիւն , և Տիրուհին Թառնհիլ
եանց ընդ նոյն յաջորդութիւն շնորհաւորութեան
ըստ քեռ իւրում որ յառաջ : “Եսին հետայն երե-
կաւ պայտակ Աեպուհոյն Ա իլեհմայ՝ ազդ առնել
եթէ սլատրաստ էին կառք տանել զմեզ ՚ի պան-
դոկն . ուր ամենայն ինչ հանգերձեալ էր առ մերս
ընդունելութիւն : Ամսւոխն իմ և ես պարագլուխ
եղաք , և թողաք զնամեմ բնակարանն տրտմութեան ,

Առատաձեռն Անդուհն Հրաման արար բաշխել ՚ի
միջի բանտարկելոցն՝ զքառասուն ստեղինս . և Պա-
րոն Ա իլմօթ՝ Հրապութեալ յօրինակէ նորուն ,
պարզեեաց յիւրմէ կողմանէ զկիսով չափ գումա-
րին . Օ նկալեալ եղաք ՚ի վայր ձայնիւք ցնծու-
թեան գիւղականաց , և տեսի և ցնցեցի զճեռս եր-
կուց կամ երից համեստաբարոյ ժողովրդականաց
իմաց , որք էին ՚ի միջի թուոյն . Օ հետ եկին մեզ
մինչ ՚ի վանսն , ուր բազմահարկի խնջոյք պատ-
րաստեալ էին վասն մեր , և խոշորագոյն նպարակք
մն ծաւ քանակութեամբք բաշխեցան ՚ի միջի ժո-
ղովրդեանն :

Հետ ընթեաց , որովհետեւ քաղեալ էին ոգիք
իմ հետ զհետէ յաջորդութեամբ բերկութեան և
ցաւոյ՝ որ յընթացս աւուրն , թողութիւն խնդրեցի
մեկուսանալոյ . և թողլով զերեխանն ՚ի միջի զու-
արձութեան իւրեանց , իսկ և իսկ ընդ զտանելն զիս
առանեծին , հեզի զսիրտ իմ առաջի Պարզեողին
ցնծութեան որպէս և տրտմութեան , և ապա նըն-
ջեցի յանդորրու մինչեւ ցառաւօտ :



ԳԼՈՒԽ ԼԲ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ :

ՅԵԳՈ առաւօտու 'ի նոյն ընդյառնելս 'ի քնոյ՝ գտի զանդրանիկ որդի իմ'նստեալ առ ոտովք անկողնոյ իմոյ, որ գոյը յաւելուլ ՚ի ցնծութիւն իմ' միւսուլ դարձուածուլ բաղդի առ իմս օգուտ :

՚Այս՝ ազատ կացուցանելով զիս ՚ի պայմանադրութենէն որով երէկ բաժին տուեալ էի նմա, ծանոյց ինձ եթէ վաճառականն իմ՝ որ սնանկացաւ 'ի քաղաքին, կալանաւորեալ էր յլնատվըրալ :

և անդ յանձնեալ էր ՚ի ձեռս զստացուածս առաւելագոյն ևս զումարի՛ քան որ անկանէր պարտատեարց իւրոց :

Առատաձեռնութիւն որդւոյս զոդցես այնքան հաճեցուցին զիս, որքան և այս անակնունելի բարեբաղդութիւն :

Այլ յերկըայս էի արգեօք ՚ի ձահ էր ինձ ըստ արդարութեան, ընդունել զնուէր նորա :

Ո՞ինչզեռ խորհէի ՚ի վերայ այսորիկ՝ Անպուհն Ա իլիէմ եմուտ ՚ի սենեակն, որում ծանուցի զստարակոյս իմ : Աարծիք նորա էր, զի որովհետեւ որդի իմ արգէն աիրացեալ էր ձոխ հարստութեան՝ ՚ի ձեռն ամուսնութեան իւրոյ,

՚ի գէալ էր ինձ ընդունել զնուէր նորա առանց տարակուսի :

Խնչելցէ՝ զործ իւր էր ազդ առնել ինձ, զի որովհետեւ յանցելում զիշերի յղեալ էր վասն վկայականաց և յամէն ժամն ժամն ակնկալէր

այնոցիկ, յուսայր եթէ ոչ հրաժարէի յայնո՞
առաւտօտու երջանիկ ամսել զամենեսին, Պայտակ
մի եմուտ մինչդեռ խօսէաքս, ասել՝ թէ գարձեալ
եկեալ էր պատգամաւորն. և՝ զի զայսու ժամանա-
կաւ պատրաստ էի, իջե ՚ի վայր. ուր գտի զբոլոր
ժողովեալմն ոյնքան զուարթ, որքան հարատու-
թիւն և անմեղութիւն առնել կարէին, Բայց և
այնպէս՝ որովհետեւ պատրաստէին այժմ առ կարի
իմն ահեղ խորհուրդ, ծիծաղ նոցա բոլորովին տը-
հաճեցուցանէր զիս: Ասացի նոցա զժանբաբարոյ,
զպատշաճաւ որ և զվեհ կերպարանէ՝ զոր պարտ
էին յանձին բերել յայսպիսի խորհրդաւոր գէպա.
և կարդացի առաջի նոցա զերկուս ճառս և զգրու-
թիւն մի յօրինեալ յինէն՝ առ պատրաստութիւն
նոցա: Աակայն տակաւին անսաստ երեկին և ան-
զուսալ: Կա՝ ՚ի զնացս իսկ յեկեղեցին, որում ես
առաջնորդէի, ծանրութիւն ամենայն բոլորովին
լքեալ էր զնոսա. և բազում անգամ սալբեցայ
դաւնալ ՚ի թիկունս կոյս ցամամբ: Հեկեղեցւոջ
մին նոր կնճիռն վեր երեեցաւ. որ ոչ դիւրեաւ
խոստանայր զլուծումն: Այս էր, որն յամնլաց
պիտէր նախ սպակիլ. հարսն որդւոյ իմոյ ուժգին
պնտէր՝ թէ Տիրուհին Թառնհիլ (որ պիտի լինէր)
պիտէր առաջնորդել. այլ՝ յայսմանէ հրաժարէր
միւսն հաւասար եւանդեամբ, վկայելով՝ թէ և ոչ
վասն համօրէն աշխարհի յանցաւոր զտանէր այդ-
պիսում բրտութեան: Զգեցաւ վէճն առ ժամա-
նակ մի հաւասարաչափ յամառութեամբ և քաղա-

քավարութեամբ ՚ի միջե երկոցունցն : Բայց՝ քանզի զըոլըր ժամանակն կանգնէի պատրաստ գրքով իմով, պարտասեցայ ՚ի վերջոյ լիով ընդ վեճաբանութիւնն . և խիելով զայն, “Տեսանեմ,” ասացի, “որ ոչ մին ՚ի ձէնջ միտք ունի ամուսնանարոյ . և կարծեմ բարւոք ևս եղիցի դառնալ յետո . քանզի թուի ինձ որ ոչ ինչ գործ վճարիցի աստե՞ն յաւուրս :” Այս զգաստացոյց զնոսա խսկոյն : Աւագուհն և տիկին իւր ամուսնացան նախ . և ապա որդիս և նազելի զուգակից իւր :

Յառաջագոյն պատուիրեալ էի յառաւօտուն առաքել զկաւա՞ իմ համեստ գրացի Փլամբօրօյայ և իւր ընտանեաց համար . որոյ աղագաւ ՚ի գարձի մերում ՚ի վանսն՝ ուրախ եղաք գտանել զերկոսին Օրիորդուն Փլամբօրօյոյ կալ առաջի մեր : Պարոն Պէնկինսն ձեռն ետ երիցուն, և որդի իմ Մովսէս էած զմիւմն . (և արդ գտանեմ՝ որ խկապէս յօժարեալ է ընդ աղջիկն . և զհաւանութիւն և զշնորհաբաշխութիւն իմ ունիցի՝ երբ ՚ի ձահ համարիցէ խնդրել զայն :) Խոկ և խսկ ընդ գտանալ մերում ՚ի վանսն, բազմութիւնք ժողովրդականաց խոյց՝ լսելով զյաջողութենէ իմմէ, եկին խնդակից լինել ընդ իս . այլ ՚ի միջի այլոց էին նոքա՝ որք յարուցեալ էին զերծուցանել զիս . և զորս յառաջ այնպէս խատիւ կշտամբեցի : Ասացի զպատմութիւնն Ա իլիէմ Անպուհոյ փեսայի խոյց, որ չոքաւ արտաքս և սաստկութեամբ մնածաւ յանդիմանեաց զնոսա . բայց զլսովին որտաքեկեալ գտանելով

զնոսին ՚ի խլատ յանդիմանութեանցն , ետ անձնիւրոցն զկէս զիննի ՚ի պարգև՝ ըմզել յողջութիւն իւր և զուարթանալ :

Վազվազակի յետ այսորիկ հրաւիրեցաք ՚ի Համագամմ ինչոյս , պատրաստեալ ՚ի խահարարէ Պարոն Թռառնհիլայ : Եշ ոչ անտեղի եղիցի նշանակել յաղազս պարնիս այսորիկ , զի բնակի արդորակէս զընկեր ՚ի տան միոյ յազդականաց իւրոց . քաջ սիրեցեալ և դուն երբէք նստելով յանջատ տրապղի , բայց եթէ տեղի չպուցէ ՚ի միւսումն . զի օտար չհամարի ՚ի միջի նոցա : Ճամանակ նորաքաջ զբաղեալ է ՚ի զուարձացուցանել զազգական իւր՝ որ փոքր մի սեւահազճոտ է , և յուսանիլ զեղչերափող Պազդիական : Բայց և այնպէս՝ յիշէ զնա տակաւին երէց դուստր իմ ցաւելով . և ասացեալ ևս է ինձ , թէ և կարի ծածուկ պահեմ զնոյն , թէ՝ յորժամմ ուղղիցի նա , կարեոր է ինքեան բերիլ կակլանալ : Այլ առ ՚ի գառնալ , զի ոչ յօժարիմ զայս օրինակ զարտուղիլ , յորժամմ բազմեաք ՚ի սեղան՝ զնային մեծարանք մեր նորողիլ միւս անզամմ : Խնդիրն էր , թէ՝ երէց դուստր իմ հինաւուրց ամուսին զոլով՝ չէր արգեօք նմաանի բազմիլ ՚ի վերոյ քան զերկոսին նորապսակ հարսուննն . այլ կարձեցաւ վէճ՝ ՚ի Պէտորգայ որդւոյ իմմէ , որ առաջարկեաց զի ամենեքին միւահազոյն բազմեսցին՝ անձնիւր պարոն առ տիկնաւ իւրով , Անձաւ գովութեամբ ընդունելի եղե այս յամնեցունց՝ բաց յամուսնոյ իմմէ . որ՝ կարէի

Նշմարել, չեր բոլորովին հաճեալ. զի ակն ունէք
բազմիլ ՚ի գլուխ սեղանոյն և բաշխել զկերակուր
ամենեցուն։ Օ խարդ և իցէ՝ անմարթ է նկարա-
զրել զզուարձութիւն մեր։ Զկարեմ ասել՝ ար-
գեօք առաւել քան զսովորականն խելք գոյր ՚ի
միջի մերում։ բայց հաստադ եմ՝ առաւել ծիծաղ
գոյր։ որ նոյնպէս ՚ի ձահ աջողէր։ Աստակ իմն
յատկապէս յուշ լինի ինձ։ ծերունին Պարոն
Ա իւմօթ ըմպելով լնդ Մովսիսի՝ որոյ գլուխ
զարտուղեալ եր յայլ կողմն, սլատասխանի արար
որդիս՝ Շնորհակալ եմ՝ տիկին։ Յոյր վերայ
ծերունի Պարոննեա ակնարկի առնելով երեխանին,
դիտեաց թէ զմուաւ ածէր նա զսիրուհւոյ իւրմէ։
Ընդ որ կատակ՝ կարծեցի թէ Օրիորդքն Փլամ-
բօրօյս մեռանէին առ ծաղու։ Խսկոյն յետ կե-
րակրոյ՝ ըստ հին սովորութեան իմում, խնդրեցի
հեռացուցանել զսեղանն, առ ՚ի զուարձանալ միւս
անդամ տեսանել զընտանիս իմ ողջոյն շուրջ զզու-
արձալի վառարանաւ։ Եցիոքին փոքրկունք իմ
նստան ՚ի վերայ ծնդաց իմոց, մնացեալքն առ լն-
կերօք իւրեանց։ Զմնայր ինչ այլ ինձ յայսր
կողմանէ գերեզմանին առ ցանկանալոյ։ ամենայն
հողք իմ վաղձանեալ և բերկրութիւն իմ անպա-
տում։ Մնայր արդ միայն, զի երախտագիտու-
թիւն իմ ՚ի յաջողութեան առաւելուցոյր՝ քան ըզ
խնարհութիւն իմ ՚ի չաջողութեան։

ՎԱՐՔ ՀԵՂԻՆԱԿԻՒՆ

ՀԱՆԴԵՐՈՐԴԻ որդի երեցուն Գոլգամիթայ էր Օլեվը, որ ծնաւի Պալատ յի Պալատ յի Տուլաննիս յամի Տեառն 1728 Նոյեմբերի 10, Անքաւական գոլովի հօրն ընձեռել նմա զբարեգոյն գաստիարակութիւն ի նուազութենէ եկամտին, առաջարիցաւ տալ զնա յուսումն առեւ տրական գործոց որ՝ ի ժամանակի այնմիկ, սակաւուց գիտութեանց պէտու ունէր՝ գրելոց, կարդալոյ և թուարկութեանց միայն և այսոքի՛ էին բովանդակ գպրութիւնքն առաջադրեալ վասն հանգերծեալ նկարագրիս վարուց և բարուց ազգի մարդկան:

Բթամիտ գոլով ի մանկութենէ՝ փոխէր ի միոյ դպրատանէ ի միւմն, և տգեղադուկմ ի պիսակէ՝ ծաղը լինէր աշակերտակցաց իւրոց Եսովլպոս մականուամը, Բայց և այնպէս՝ սոյն իսկ պակասութիւնք երկոքին պատճառ եղին յայտնութեան ընական հանձարոյն, որ զօղեալ կայր ի հոգի նորա: Զի փոխիսմամբ դպրոցաց պատահեալ վարժապետի ուրումն զինուորի՝ զմայլեցաւ նկարագրութեամբ զինուց և բանակաց, և յղացաւ զախորժակին ուղղնացութեան. և վասն տօկեղութեանն հալածանաց՝ պարտաւորեալ առանձնանալ միշտ ի սենեակ իւր՝ բուռն հարկանէր գրել զոտանաւորս. և համարեցաւ զանձն յարմարեալ ի Բնութենէ առանաստեղծութիւնն: Ի մէջ համայն ծանօթից և բնտանեաց նորուն՝ որք գրէին զնա առ ոչինչ պիտանացու, կարացին բարեւբաղդապէս մայր և հօրեղբայր նորա նշմարել զարշալոյն հանձարոյ ի միջի մառախզին, և պարտաւորել զնայրն՝ ընդուկմ կամաց և կարեաց իւրոց, առաքել զնա ի համալսարանն Երբորզութեան անուանեալ որ ի Գրբլին. առ որ և ընտանիքն ձեռնտուեղին մտսամբ ծախուցն:

Յետ սակաւուց վաղձանմամբ հօրն, կարի ի նեղ անկեալ սակս ծախուց, հնարի մանուկ բանաստեղծս լցուցանել զթերին յօրինամբ և վաճառմամբ Տաղերգութեանց. և այս է սկիթըն հեղինակութեան նորա: Այլ ոչ ամենայն հալածանք՝ զորս յանգութվարժապետէն, և ոչ կարօտութիւնն՝ զոր ի խիստ բաղդէն կրէր, կարացին իւրք ստնանել բարեսրտութեանն՝ որ ի բնուստ անդուստ ծնեալ երկար ընդ նմա: մինչև զիներկուս և զուակաւ հանգերծս անզամ զոր ունէր՝ բաշխել կարօտելոց ի կարօտութեան անդիւրում. որպէս ցուցցի յառաջիկայս պատմութեան: — Կոչեալ ի նախաճաշ յառաւօտու միում՝ յայտնեաց Օլեվը ի ներքուստ անտի սենեկին զանկարութենէ իւրմէ ի յառնել. յոյր վերայ խոր-

տակեալ զգուռո՞ն՝ գտանեն զնա պարանոցաթաղ ՚ի միջեւ անկաղնոյն , զորոյ աստառի զմի կողմն բացեալ մտեալ էր ՚ի մէջն ։ Քանզի՝ պատահեալ յերեկոյին տառապեալ կնոջ միոյ՝ որոյ այրն ՚ի հիւանդանոցի անկեալ և ինքն հինգ զաւակօք շուարեալ կայր ՚ի փողոցի՝ զուրկ և կարօտ ամենայնի , կոչէ զնա առ զուրս համալսարանին և տայ նմա զծածկաբանս անկողնոյ իւրոյ հանդերձ մասամբ զգեստուցն . մին՝ ՚ի պատսպարութիւն ՚ի ցըտոյն , և զմուսն՝ առ ՚ի զին պարինից ։ Յոյր սակա պարտաւորեալ առ ցըտոյն ՚ի զեշերի՝ ապաւ ինի ՚ի հնարն վերոյգրեալ ։ Այսքանս բաւ լիցի ՚ի յայտնել զհամայն գաղանիս կենաց Գոլգասմիթայ :

Յամի 1749 ել Օլեվը ՚ի համալսարանէ ։ և չաղողելով ՚ի ձեռասքերել զթահնանյայական կարգ , պարապեցաւ ՚ի կրթութիւնս գատաստանականս , և ապա յուսումն քժշկական . այլ՝ և յոչ միումն քաջ յառաջադիմութիւն կարելով առնել՝ մանաւանդ վասն պակասութեան փողոյ , ել ՚ի շրջագայութիւն աշխարհի՝ զողչեր անինչ և անօնինական ։ Քաջայարմար ձայն և փոքր ՚ի շատէ ծանօթութիւն երածշտական՝ էին մի միոյն աղջիւրք եկամտի՛ ուստի ակն ունէր օգնութիւն գտանելոյ յայսպիսի լայնածաւալ ձեռնարկութեան . զոր գեղեցիկս նկարազրէ ինքնին ՚ի Գլուխն ի . Փոխերեցուն Վէկիքիւրայ՝ յանձին Գէորգայ . Յետ շրջելոյ ընդ Ֆլանդէրս , մասն Գաղղիոյ և Գերմանիոյ , Զելվետիա , Խտալիա և դարձեալ Գաղղիա , զառնայ միւս անգամ յԱնգղիա յամի 1756. և պարապի ՚ի զանազան գործառնութիւնս՝ մանաւանդ գրականութեան . այլ կարի սակաւ յաջողութեամբ Բայց և այնպէս՝ հարեալ զոլով ՚ի սէր գրականութեան , շատանայր լոկ կեալ և աշխատիլ . զյոյս միայն պահելով յան այլոց , և ապրելով ծարաւով փառաց :

Զիարդ և իցէ անեղորդագոյն և բարեզոյն աւուրք յաջորդեցին , և ծանօւցեալ եղեւ համբաւաւոր զիանականաց ժամանակին . բայց և այնպէս՝ անդուլ ժրաջան աշխատութիւնք իւր ոչ իւրիք բարձաւաճէին զնա ՚ի ճոխութեան . զի ՚ի ժամանակի այնմիկ՝ կարի սակաւ վարձ հատանէր գրաւորական աշխատութեանց . ՚ի պատճառս անընդհատ աշխատութեանցն՝ վատացաւ առողջութիւն Գոլգասմիթայ . և պարտաւորեցաւ՝ սակա առողջարար օգոց , երթալ յիշլինգտըն . ուր գրեաց զառաջինն յաշխարհանալ գործոց իւրոց զՊատմութիւնն Անգղիոյ . որ ցարդ ՚ի գործ ածի զուարճախառն շայիկանութեամբ . Սակայն այսպիսի համբաւաւոր գործ՝ լոկ զիսուն Ստերլինս շահեցաւ առ ՚ի վարձ . որով մալթ է չափել զյարդ զրաւոր աշխատանաց ժամանակին . — ՚ի նոյն իսկ յիշլինգտըն դրեաց և զմիւս գերահոչակ զործ իւր զՓոխելէցն Վէկիքիւրայ :

Զամենայն երկասիրութիւնս սորա մի առ մի յիշատակելն ասատանօք՝ երկարեցուցէ յսք զբան մեր . շատ լիցի յիշել՝ զի արտաքոյ հասութիտուր զրուածոց հրատարակելոց ՚ի ժամանակակից Օրագիրս և Ծանմարանս , հրատարակեաց և զՄԵՊԱՆ՝ հետ զհետէ պայմանեալ ժամանակաւ , զՔաղաքացին ԱՀիարհն՝ ՚ի ձեւ նամակաց , զկատակերգութիւնս՝ Խոհարհն (կին) ուր ՚ի շաղեւել և Աշըն Բարեւինոյն , զՀամարոպաննիւն Զուգուշուոց Պլուդրուեա , զԱպրո Բօ (ՊՃՆասէր) Կաշայ , զԱպրո Պարնելայ , զԱպրո Բօլիգիբէիայ , զՃ՛նապարհորդն , զԱմոցակեաւ Գեօն՝ որ ՚ի միջոցի երից ամոց հնգից տպագրեցաւ և վաճառեցաւ , զՔերակիոն ԱՀիարհագրութեան , զՊարմութիւն ՄԵԼԵՆԻուրգոյ՝ ՚ի սկզբանէ անտի հասուածելոյ Ամնդալաց , զՊարմութիւն Երիշի և ԾՆՀաւոր Բնութեան , զՊարմութիւն Հառովնոց . և զՊարմութիւն Յունուոց . որ՝ հանդերձ քանի մի հակիրճ զբուածովք՝ յարձակ և յոտանաւոր , եղեն վիրջին երկասիրութիւնք Վարժապետիս Արհեստից . որ էր Ճառագիր՝ Պատմիչ՝ Թատրոիրզու և Բանաստեղծ միանգամայն :

Դիմուարութիւնք ՚ի չքաւորութենէ , աշխատութիւնք քան զլափին աւելի , և անանդորրութիւնք մտաց ՚ի պէսպէս պատճառաց՝ ական հատին առողջութեանն , բեկին զսիրան , և կանխեցին զմահն յԱմի 1774 յԱպրիլի 4. ՚ի հասակի 45 ամաց :

՚ի մահ սորա լացին անուանի զրագէտք ժամանակին՝ Զանուըն և Բնըրկ . իսկ Սեպտեմբեր Զօշուա Ուէննոլքս ՚ի բաց եկաց ՚ի սանտրելոյ զհերս իւր առ ժամանակ մի :

՚ի գանբանականին զոր զրեաց երեելին Զանուըն , կոչէ զիա “Բանաստեղծ” , Բնական իմաստասէր , և Պատմիչ . որ ոչ եթող զորք տեսակ գրութեան անհուպ և անշուք ՚ի զրչէ իւրմէ . ՚ի ծաղը կամ յարտասուս շարժել՝ էր հզօր , սակայն համբոյր իշխութ կրից . հանճարով վսեմ , աշխոյժ և զիւրափիթ . ՚ի բանս ազնիւ , մաքուր և վայելուչ : Ցիշատակ նորա տեսեցէ ցորքան ժամանակ Ընկերակացութիւն ունիցից զսէր , Բարեկամութիւն չեղիցի թափուր ՚ի ճշմարտութենէ , և Ընթերցողութիւն կացցէ ՚ի պատուի :” Ցաւելցուք յայսմ և զվիսյութիւն Վալտըր Սկաա Սեպտեմբեր , որ “ախսոսաց զվեսա զրականութեան՝ տարածամ մահուամբ զարդուս զրագիւտութեան :”—Նաև Վ. Անդրունի , որ զարձակ շարազրութիւն սորա կոչէ “ կանոն լիզուի (Անզղեացւո .) որում հասանիլ՝ բաղմաց ունայնասցին ջանք , և զիրազանցել՝ եղիցի յիմար ակնկալութիւն :”—Իսկ Բայրըն՝ որ զիւս միայն Ենէականին , Վիլտոնի , և Դրայդընի զբուածոցն գատեցաւ լաւ , զսորայն բուրովին լաւ վճառաց :



